

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԶՈՒԳԱՆԵՈԱԿԱՆՆԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Ա. 791

*Գիրքը հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Գրախոսներ՝ Բ. Գ. Թ., դոց. Լ. Թեյլան, Բ. Գ. Թ., դոց. Լ. Սարգսյան

Խմբագիր՝ Բ. Գ. Թ., դոց. Ա. Աբրահամյան

Ավետիսյան Յուրի Սրապիոնի

Ա. 791 Հայագիտության զուգահեռականներում/ Յուրի Սրապիոնի
Ավետիսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 340 էջ:

Գրքում զետեղված են հեղինակի՝ տարբեր տարիների հրատարակած հոդվածները: Դրանք, քիչ բացառություններով, տպագրվել են գիտական հանդեսներում: Նվիրված են հայագիտության զուգահեռականներում հայտնված ամենատարբեր իրողությունների՝ գրական հայերենի շրջանաբաժանում, ժամանակակից արևելահայերենի նորմավորում և արևմտահայերենի պահպանում ու մշակում, գրական և լեզվաբանական գործերի գնահատություն և այլն: Բոլոր այս իրողությունների քննարկումները ունեն ընդգրկումի և դիտարկումների որոշակի տեսանկյուն և շրջանակ, որոնք ժողովածուին տալիս են մենագրական աշխատանքի բնույթ ու բովանդակություն:

Նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-5-8084-2496-8

© ԵՊՀ հրատ., 2021

© Ավետիսյան Յու., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	5
------------------------	----------

ՄԱՍ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԸ.

ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՈՒՄ, ԿԱՆՈՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ	7
1.1. Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար	7
1.2. Լեզվական կանոն և զարգացում.....	45
1.3. Լեզվական նորմ. գրական լեզվի նորմավորման չափանիշները	54
1.4. Դիտարկումներ հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների վերաբերյալ	70
1.5. Ժամանակակից գրական արևելահայերենի լեզվական նորմը և Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» ձեռնարկը.....	101
1.6. Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բառակազմական և ձևակազմական հիմքերում	125
1.7. Ժամանակակից գրական արևելահայերենի անկանոն բայերի ուսումնասիրությունը եւ ուսուցումը	160

ՄԱՍ 2. ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԻՄՆԱԽՐԴԻՐՆԵՐԸ.....	185
2.1. Արևմտահայերենի դասագիրք.....	185
2.2. Արևմտահայերեն. խնդիրներ և հեռանկարներ.....	206

2.3. Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական տարբերություններ.....	220
2.4. Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական եղանակի համակարգում. անկատար ներկա և անկատար անցյալ	236
2.5. Հայրենադարձությունը և արևելահայերենի ու արևմտահայերենի մերձեցման ուղիները.....	267

ՄԱՍ 3. ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՐԺԵՔ ԵՎ

ԱՐԺԵՎՈՐՈՒՄ	279
3.1. Արշակ Չոպանյան (կյանքի և ստեղծագործության ուրվագիծ).....	279
3.2. Ընդդեմ թուրք գրաքննության պարտադրանքների.....	308
3.3. «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԼԲ	313
3.4. Ռ. Կ. Սաքապետյան. «Արևմտահայերեն-արևելահայերեն բացատրական-ուղղախոսական բառարան»	321
3.5. Ա. Մարգարյան. «Ստուգաբանություններ».....	331

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժամանակ առ ժամանակ անցած ճանապարհի հանգրվանները հետդարձի հայացքով տրվում են ուրվագծումների: Եվ դա, հավանաբար, խորհուրդ ունի: Մանավանդ երբ արվում է տարիների հեռվից: Այս գիրքը այդպիսի մի հանգրվանի արձանագրումներից է:

Մենագրություն է կամ ժողովածու: Բայց երևի ավելի շատ մենագրություն՝ գիտական հետաքրքրությունների և անցած ուղու հանրագումարով: Այդ ուղին չի կարող համակարգ կամ ամբողջական մի բան չլինել, երբ հետաքրքրությունների շրջանակը որոշակի է և զբաղեցնող: Այս գիրքը դա է՝ անցած և շարունակվող հետաքրքրությունների շրջանակ՝ գրական հայերենի շրջանաբաժանման և ժամանակակից արևելահայերենի նորմավորման հարցեր, արևմտահայերենի հիմնախնդիրներ, խոսքի մշակույթ, արևմտահայ գրականություն և այլն: Ինձ համար դրանք անբաժան արժեքներ են և իմ մտքում ու գիտական զգացողությունների մեջ ընդմիջտ գտնվում են գուգահեռականներում՝ առավել կամ նվազ խորությամբ, առավել կամ պակաս չափով:

Հոդվածների մեծ մասը գիտական հանդեսներում տպագրված նյութեր են: Երեքը («Արշակ Չոպանյան. կյանքի և ստեղծագործության ուրվագիծ», «Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար», «Գրական լեզվի նորմավորման չափանիշները») զետեղվել են մենագրություններում՝ էական փոփոխություններով: Մնացյալը պարզապես

տարբեր պարբերականներում/ժողովածուներում հրապարակված հոդվածներ են:

Դրանք գրքով ներկայացվում են որոշակի նկատառումներով. **նախ**, ի մի բերելու համար արված գիտական գործի այն մասը, որը, ինչպես ասվեց, հիմնականում զետեղված չէ գրքերում. **հետո**, հնարավորություն ընձեռելու համար հեղինակին կամ այլոց (ովքեր հետաքրքրված են) ձեռքի տակ ունենալու այստեղ բերված նյութը. **ապա**, ամփոփելու համար մեր գործի այն հատվածը, որը եղել է նվազ հրապարակային և իրավի կամ հանիրավի արժանացել է նվազ ուշադրության: Եվ **վերջապես**, նպատակ կա առիթով հեղինակիս ընծայելու համար մի բան, որը, կարծում ենք, անվերապահ արժեք է՝ **ԳԻՐԹ**:

Մ Մ Մ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԸ. ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՈՒՄ, ԿԱՆՈՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄ

1.1. ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՈՒ ՇՐՋԱՓՈԻԼԵՐԸ՝ ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ¹

Գիտության ցանկացած ոլորտում կան հարցեր կամ հարցերի շրջանակ, որոնք գիտական քննարկումներից և որոշակի լուծումներ ստանալուց հետո թվում է՝ նոր արծարծումների քիչ առիթներ պետք է ունենան, մանավանդ եթե ներկայացվում են ոլորտի գիտակի և մեծ համբավ ունեցող գիտնականի կողմից: Բայց գիտական առաջընթացի տրամաբանությունը հուշում է, որ դրանք ժամանակ առ ժամանակ օրյեկտիվորեն նետվում են քննարկումների թատերաբեմ՝ ակնկալելով վերլուծությունների և լուծումների նոր եղանակներ՝ նոր հայացքով և նոր մոտեցումներով կամ մեթոդաբանությամբ: Գրական հայերենի շրջանաբաժանման հարցը հարյուր և ավելի տարիներ շարունակ գիտական հետաքրքրությունների առանցքում է: Եվ այն տպավորությունը կա, թե հարցը վերջնական լուծում ստացավ 1951 թ. Գևորգ Ջահուկյանի զեկուցումով, որը հետագայում որոշ փոփոխություններով վերահրատարակվեց նրա այլևայլ աշխատություններում:

Շրջանաբաժանման հիմքում Գ. Ջահուկյանը դնում է երեք սկզբունք՝ 1. Լեզվի պատմությունը տվյալ լեզվի բոլոր տարա-

¹ Տպագրվել է «Հայագիտության հարցեր» հանդեսում (Եր., 2016, թիվ 1): Ծավալուն տարբերակը հրատարակվել է համանուն գրքույկով՝ «Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ զրաբար և աշխարհաբար», Եր., 2016:

տեսակությունների պատմությունն է: **2.** Շրջանաբաժանումը չպետք է հասկացվի բացարձակ իմաստով. «Այն առավել կամ պակաս չափով հարաբերական բնույթ ունի»: **3.** Լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ²: Այս մոտեցմամբ գրային շրջանում առանձնացվում է հայոց լեզվի պատմության երեք փուլ՝ հին շրջան (V-XI դարեր), միջին շրջան (XII-XVI դարեր), նոր շրջան (XVII դարից մինչև մեր օրերը): Գիտական շրջանառության մեջ դրված այս տեսակետը այսօր պաշտպանվում է առանց վերապահության: Սակայն շուրջ յոթ տասնամյակի պատմություն ունեցող մոտեցումները, մեր կարծիքով, որոշ բացատրությունների և ճշգրտումների պահանջ ունեն: Անդրադառնանք առաջին սկզբունքին, որը մեր տպավորությամբ ամենից կարևորն է: «Լեզվի պատմության շրջանաբաժանումը, – գրում է Գ. Ջահուկյանը, – պետք է արտացոլի լեզվի պատմության տարբեր շրջաններում այդ տարատեսակների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերը, որոնք արտացոլվում են լեզվի զարգացման օրենքների մեջ»³: Ասել է թե՛ լեզվաբանը չի փորձում տալ հայերենի միայն գրական արտահայտությունների պատմության շրջանաբաժանումը: Եվ այս մոտեցմամբ միանգամայն հասկանալի կարող էր լինել միջին հայերենի առանձնացումը որպես առանձին շրջափուլ, թեև բաց էր մնում լեզվի տարատեսակություններից, օրինակ, բարբառների խընդիրը. XV-XVI դարերում բարբառների ակտիվացումը արդյո՞ք առանձին շրջափուլ էր, թե՞ ենթաշրջան միջին հայերենի համակարգում: Բայց իր սկզբունքները շարադրելիս Գ. Ջահուկյանը անում է ևս մի վերապահություն. լեզվի գրային շրջանի մասին խոսելիս նա նկատում է. «Այնուամենայնիվ, մենք ստիպված ենք մեծ մասամբ սահմանափակվել գրական լեզու-

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 33-35:

³ Նույն տեղում, էջ 33:

ների պատմությամբ՝ այլ կարգի տվյալների խիստ սահմանափակության պատճառով»⁴: Այս մոտեցումը որդեգրելուց հետո, երբ հայոց լեզվի բոլոր տարատեսակությունների պատմության շրջանաբաժանման փորձը ի վերջո օբյեկտիվորեն հանգում է գրական լեզուների շրջանաբաժանման, լեզվաբանին այլ բան չէր մնում, քան միջին հայերենը տեղավորել հայոց գրական լեզուների պատմական շղթայի մեջ՝ նրան վերագրելով գրական լեզվի հատկանիշներ: Գ. Ջահուկյանը սրանով պայմանականորեն ընդլայնում է առհասարակ գրական լեզվի ըմբռնման սահմանները՝ նրա հիմնական հատկանիշ համարելով ավելի կամ պակաս նորմավորված լինելը և կայուն լեզվական որակ ունենալը: Այսօր խիստ հստակեցված են այդ սահմանները: **Գրական լեզուն** ազգային լեզվի պատմական գոյության ձև է, որը լեզվակիրառողի կողմից ընդունվում է որպես օրինակելի. ընդհանուր գործածական այնպիսի լեզվատարրերի և խոսքային միջոցների պատմականորեն ձևավորված համակարգ է, որոնք ազգային լեզվի կրթված կրողների ու խոսքի հեղինակավոր վարպետների կողմից տեքստերում (գրավոր և բանավոր) ենթարկվել են տևական մշակման⁵: Որպես գրական լեզվի հիմնական որակներ են նշվում մշակվածությունը, միասնականությունը, ավանդականությունը, գրավոր ամրագրումը, գրական լեզվի շրջանակներում խոսակցական և գրքային լեզվատարրերի համատեղ գործառնությունը, ոճական բազմազանությունը և ազատ կիրառելիությունը գործառական բոլոր ոճերում, զուգաձևությունների հաղթահարման միտումը, գործառական փոխներթափանցումները, առաձգական կայունությունը և այլն: Գրական լեզուն վերբարբառային իրողություն է և իր մշակվածությամբ «հակադրվում»

⁴ Նույն տեղում, էջ 34:

⁵ См. у «Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам)», М., 2009:

(Էլ. հասցե՝ http://methodological_terms.academic.ru/859/ЛИТЕРАТУРНЫЙ)

է բարբառայնությանը, հասարակաբանություններին ու ժարգոններին:

Գրական լեզվի բոլոր բնորոշումներում որպես հիմնական հատկանիշ է առանձնացվում **նորմավորվածությունը**: Դա նշանակում է, որ գրական լեզվի բառային կազմը հիմնականում ընտրված է ընդհանուր համաժողովրդական լեզվի բառազանձից, բառերի իմաստներն ու գործածությունները, արտասանությունը և ուղղագրությունը կանոնակարգված են, ձևակազմությունը և շարահյուսական կառույցները ենթարկվում են համընդունված օրինաչափություններին: Գրական լեզվի կանոնները համապարտադիր են բոլոր լեզվակիրառողների համար խոսքային հաղորդակցման բոլոր ասպարեզներում⁶: «Գրական լեզուն,– կարդում ենք դասագրքային սահմանումներից մեկում,– ազգային լեզվի պատմականորեն ձևավորված բարձրագույն ձև է, լեզվական միջոցների նորմավորված, կանոնակարգված, մշակված համակարգ, որը հանդես է գալիս որպես օրինակելի և ընդհանուր գործածական որակ ու ծառայում է իբրև հաղորդակցման միջոց հասարակական և անձնական գործունեության բոլոր ոլորտներում»⁷:

Միջին հայերենը ոչ մի կերպ չի տեղավորվում գրական լեզվի նորագույն ըմբռնման այս շրջանակներում: Միջին հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող բոլոր լեզվաբանները հատուկ շեշտում են այն միտքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը գրական լեզվի կարգավիճակի չհասավ: Գերմանացի հայագետ **Յոզեֆ Կարստը** միջին հայերենի առաջացման ու կազմավորման հարցերում հիմնականում պաշտպանում է իր նախորդների տեսակետները. միջին կամ կիլիկյան հայերենի

⁶ Տե՛ս նույն տեղը, նաև՝ **Д. Розенталь, М. Теленкова**, *Словарь-справочник лингвистических терминов*, 2-е изд., М., 1976:

(Էլ. հասցե՝ http://dic.academic.ru/dic.nsf/lingvistic/684/литературный_язык)

⁷ **А. Радугин**, *Русский язык и культура речи*, М., 2004, с. 50.

շրջան է համարում XI-XV դարերը, նոր հայերենի ժամանակաշրջանը սկսում է XV դարից: Միջին հայերենը դիտում է որպես հին և նոր հայերենների միջև ընկած ժամանակաշրջան: Տարբեր առիթներով նա շեշտում է այն հանգամանքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը իր լեզվական որակներով չի ներկայանում որպես միասնական և մշակված, միատարր լեզու և ունի անցման շրջանի լեզվի կամ շրջափուլի հատկանիշներ, աչքի է ընկնում բարբառային տարբերություններով⁸:

Գ. Սևակը, խոսելով IX-XIII դարերում ստեղծված աշխարհիկ գրականության մասին, նշում է, որ այդ գրականությունը ստեղծվում է նոր լեզվով, որը «**միջին հայերեն** ընդհանուր անունն է կրում, թեև միասնական չէ և նայած հեղինակի բարբառին, գրաբարագիտության չափին ու ճաշակին՝ ավելի կամ պակաս չափով մոտ է գրաբարին»⁹: **Մ. Ղազարյանը** միջին հայերենի նկարագրությանը նվիրած իր աշխատություններում գրավոր հայերենի այդ տարբերակը թեև անվանում է «իր օրինաչափությունները ունեցող գրական լեզու», «հայոց գրական լեզվի միջին շրջան», «գրական նոր լեզու»¹⁰ և իր տեսակետը փորձում է հիմնավորել այն փաստարկումով, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը չենք կարող նույնացնել ժամանակի խոսակցական լեզվի հետ, սակայն տարբեր առիթներով շեշտում է այն գաղափարը, որ այդ լեզուն միատարր չէ, աչքի է ընկնում ձևերի բազմազանությամբ և ի վերջո չի հասնում զարգացման անհրաժեշտ մակարդակի. լեզվաբանը միջին հայերենի բնութագրական ընդհանուր հատկանիշ է համարում այն, որ հայերենի զարգացման այս շրջափուլում «կիրառվում էին լեզվական միևնույն կանոնը արտահայտող

⁸ Տե՛ս «Ավանդներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 13-16 (այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 1 և էջը):

⁹ **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 52:

¹⁰ Տե՛ս **Մ. Ղազարյան**, Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 6-7, 96:

տարբեր ձևեր, որոնք ցույց էին տալիս, որ այդ լեզվի մշակման ու կայունացման պրոցեսը դեռևս չի ավարտվել»¹¹: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» հեղինակները թեև իրենց երկհատոր աշխատասիրության վերնագրում **միջին հայերեն**-ի կողքին զետեղել են **գրական** որակումը, բայց գրքի հենց ներածական մասում ու նաև շարադրանքում մի քանի անգամ հիշեցնում են, որ **գրական** անվանումը պայմանական է, որ կիլիկյան հայերենի գրական լինելը պետք է ընդունել որոշ վերապահությամբ, և որ այդ հայերենն իր գոյության ամբողջ շրջանում միօրինակ չի եղել: Նշվում են նաև հիմնավոր պատճառներ և ազդեցություններ: «Կիլիկիայում գրի առնված ժողովրդական հայերենը հնարավորություն չունեցավ մշակվելու և դառնալու կանոնավոր ու միասնական օրինաչափություններով գրական լեզու,– գրում է Հ. Մուրադյանը:– Դրան նախ՝ խանգարում էր նրա հիմքում ընկած խոսակցական լեզվի անմիօրինակությունը: Չնայած գրավոր լեզվի հիմքում ընկած բանավոր լեզվի ընդհանրություններին, այնուամենայնիվ, սնվելով ժողովրդական լեզվի ակունքներից, նա իր մեջ էր առնում նաև տարբերությունները, որոնք և առաջացնում էին անմիօրինակություններ: Մյուս կողմից՝ այդ տարբերությունները հաղթահարելու և դրանք միասնական գրական լեզվի մեջ ձուլելու համար պահանջվում էր երկարատև ժամանակ, որից սակայն զրկվեց գրական լեզուն՝ կիլիկյան պետականության վերացման հետևանքով» (Ա 1, 36-37): «Նորակազմությունների տարածման և անկանոնությունների մասնակի վերացման հետևանքով լեզվի համակարգը զգալիորեն ձգտում է պարզեցման,– գրում է Լ. Հովսեփյանը:– Սակայն նորմայի տեսակետից լեզուն դեռևս կայունացած չէ իր քերականական ձևերի մեջ: Այդ պատճառով էլ միջին հայերենի հոլովման համակարգը աչքի է ընկնում ներքին անմիօրինակու-

¹¹ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 204:

թյամբ, թեքույթների բազմազանությամբ և նրանց տարբերակների միջև փոխանցումների ազատությամբ: Միևնույն քերականական իմաստն ունեցող ձևույթների այդ բազմազանությունը ստեղծվում է ի հաշիվ գրաբարից և միջին հայերենի տարբեր բարբառներից եկող լեզվական իրակությունների խառն ու առանց ընտրության օգտագործման»¹²: Ինքը՝ **Գ. Ջահուկյանը** ևս, բուն միջին հայերենի շրջափուլի մասին խոսելիս մեկ անգամ չէ, որ ընդգծում է այդ միտքը. նրա համոզմամբ՝ միջին հայերենը «մշակման որոշակի հունի մեջ չի դրվել և անմիօրինակ է», միջին հայերենը այդպես էլ չկարողացավ հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին¹³:

Անմիօրինակությունները առկա են միջին հայերենի լեզվական բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունաբանությունից մինչև շարահյուսական կառույցներ: Վկայված բազմաթիվ իրողություններից թվարկենք ընդամենը մի քանիսը. **հնչյունական համակարգում** կան բառեր և բառաձևեր, որոնց մեջ հերթագայում են **ո/օ/ու** գրերը՝ **տումար/տաւմար/տօմար**, **կաթողիկէ/կաթաւղիկէ/կաթուղիկէ**, նմանապես՝ **կաթողիկոս//կաթաւղիկոս/կաթուղիկոս**, **Լամբրոն/Լամբրաւն/Լամբրուն/Լապրուն** (Ա 1, 85), առկա է **ե-ի** և **է-ի** գրության շփոթ (**զեղ/զեղ, աղէկ/աղեկ, քաւել/քաւէլ, ամէն/ամեն** և այլն), **ո-ի** երկգրություններ, օրինակ, ենթակայական դերբայում (**ծնող/ծնաւղ, ընթերցող/ընթերցաւղ**) (Ա 2, 65-67), եռագրություններ (**բաշ-**

¹² «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Եր., 1975, էջ 8 (այսուհետև՝ շարադրանքում՝ Ա 2 և էջը):

¹³ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 44-45: Գ. Ջահուկյանը հայոց լեզվի գրավոր ժամանակաշրջանի պատմության շրջանաբաժանման հարցերին և միջին հայերենի լեզվական որակի բնութագրությանը անդրադարձել է նաև այլ աշխատություններում՝ սկզբունքորեն պաշտպանելով և զարգացնելով տասնամյակներ առաջ արտահայտած իր տեսակետը. տե՛ս **Գ. Ջահուկյան**, Զրույցներ հայոց լեզվի մասին, Եր., 1992: **Նույնի**՝ Միջին հայերենը որպես լեզվական որակ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, թիվ 1, էջ 14-21:

խառղ, խաբող, գնող, առնող) (Ա 1, 314), սկզբնաղբյուրներում արձանագրվում են բառերի հնչյունափոխված բազմազան տարբերակներ՝ յուղարկէ, յղարկէ, դրկէ, ուղարկէ, յօղարկէ (Ա 2, 80), այգի, էգի, իգի (Ա 1, 93), առնել, արնել, այրնել, այնել, անել, էնել, ընել (Ա 2, 151), և այլն: Ձուգաձևությունները և տարբերակային ձևերի փոխանցումները չափազանց շատ են ձևաբանական համակարգում, մասնավորապես՝ հոլովական ձևերում ու հոլովումներում, հոգնակիի կազմության մեջ, գոյական դերանունների թեքված ձևերում, բայի խոնարհման համակարգում: Մեծ թվով անուններ փոխանցում են կատարում ի, ո, ու հոլովումների միջև՝ շատ հաճախ կազմելով եռաձևություններ, ինչպես՝ ամսի/ամսոյ/ամսու, առիծի/առիծոյ/առիծու, արևի/արևոյ/արևու, գետի/գետոյ/գետու, ուժի/ուժոյ/ուժու, ծովի/ծովոյ/ծովու, փողի/փողոյ/փողու, շահի/շահոյ/շահու, տեղի/տեղոյ/տեղու, օձի/օձոյ/օձու և էլի տասնյակ այլ բառեր, ինչպես նաև այլ տիպի փոխանցումներով՝ Գրիգորի/Գրիգորոյ/Գրիգորայ, ցորեկի/ցորեկոյ/ցորեկվան, ընկերի/ընկերոյ/ընկերոջ, գառնի/գառնոյ/գառան/գառին և այլն (Ա 2, 32-34): Գոյականի հոգնակին կազմվում է մեկուկես տասնյակից ավելի վերջավորություններով (-եր, -ք, -ներ, -նի, -ունք, -վի, -ստան, -այք, -որայք, -անի, -իք, -տի, -ան, -ար և այլն), որոնք տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների մոտ առավել կամ պակաս կենսունակությամբ են հանդես գալիս: Օրինակ՝ ակռա-ակռայք/ակռեր/ակռանի/ակռաներ, ոտք-ոտք/ոտեր/ոտնի/ոտվի/ոտներ, միրգ-միրգք/մրգեր/մրգունք/մրգանք, ծաղիկ-ծաղիկք/ծաղկունք/ծաղկներ/ծաղկնի/ծաղկունաք, իրք/իրվի/իրվան/իրվտանք, աչք-աչեր/աչք/աչվի/աչունք/աչվեր/աչվներ/աչվնի և այլն (Ա 2, 62): Ըստ որում, մի խումբ հոգնակերտներ կարող են գործածվել նաև միասնաբար, ինչպես՝ գետերք, մարդիկք, մանկտիկ, իրվտանք, աչվնի, իշվանք, գեղերայք և այլն (Ա 2, 38): Միջին հայերենին հատուկ՝ հիմնական և անհամեմատ ավելի գոր-

ծուն ձևերի կողքին մատենագրության մեջ հանդիպում են սահմանափակ կիրառություն ունեցող դերանվանական ձևեր՝ ստեղծելով գուգաբանությունների անմիօրինակ շարքեր. **մենք** դերանվան բացառականի տարբերակներից են՝ **ի մեզնե, ի մեզանե, մենե, մեզե, մեզնե, ի մենե**, կամ՝ **դու** դերանվան բացառականի տարբերակներից՝ **ի քեզնե, ի քեզմե, ի քեզե, ի քենե, ի քեզանե** (Ա 2, 90-93): Իսկ եթե սրանց ավելացնենք նաև ուշ միջնադարում ձևավորված գուգաձևերը (**մեզնե//մեզմե, մեզնից//մեզանից, քեզնե//քեզմե, քեզնից//քեզանից**), ապա հարացույցը շատ ավելի խայտաբղետ կլինի: Առանձին դերանունների դեպքում, եթե հաշվի առնենք նաև արմատի հնչյունական փոփոխականների առկայությունը, տարբերակային հոլովաձևերը հասնում են մեկ տասնյակի, ինչպես, օրինակ՝ **իրենք** դերանվան պարագայում՝ **յիրենցնե, իրմնցե, իրմնցնե, իրմնցնե, իրմնցմե, իրենցե, իրենցմե** (Ա 2, 89), ինչպես նաև՝ **իրենցնե, իրենցմե** և այլն:

Կարելի է անմիօրինակության բազմաթիվ այլ օրինակներ բերել միջին հայերենի նաև բայական համակարգից՝ բայի խոնարհման անմիօրինակ ձևերից, շարահյուսական կառույցներից, որոնցում համատեղ գոյակցում են գրաբարից, արևելահայ և արևմտահայ բարբառներից եկած շարահյուսական կապակցման եղանակների ու ձևերի ամենաբազմազան տարբերակներ: Իհարկե, ճիշտ է նկատված, որ առաջին հայացքից լեզվական իրականությունների որպես մի խառնակություն ներկայացող միջին հայերենը «ինչքան էլ անցումային մի օղակ լինի», այնուամենայնիվ «իր հերթին ունի իր քերականական համակարգը» (Ա 2, 300), որ թեև քերականական կարգերը դրսևորվում են հիմնականում հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերին հատուկ միջոցներով, այնուամենայնիվ «միջին հայերենի քերականական կառուցվածքը հանդես է բերում նաև միայն իրեն հատուկ առանձնահատկություններ» (Ա 1, 7):

Բայց այս ամենով հանդերձ՝ միջին հայերենը չունի գրական լեզվին հատուկ՝ վերը նշված հիմնական որակները. բավարար չափով մշակված և միօրինակ չէ, չունի դասական կոտ և ամբողջական կառուցվածք և այլն. ունի անցումային շրջանի լեզվին բնորոշ բոլոր հիմնական գծերը՝ անմիօրինակություն, նախորդող և հաջորդող լեզվափուլերի իրողությունների առատ գործածություն, բարբառային լեզվատարրերի խառնիխուռն և անհամաչափ կիրառություններ, լեզվական նույն իրողության տարբերակային ձևերի փոխանցումներ և այլն: Իր այս հատկանիշներով միջին հայերենը, առանց շատ մեծ պայմանականության, չի կարող հայերենի զարգացման շրջաթայում դրվել գրաբարի և աշխարհաբարի կողքին՝ որպես համարժեք երևույթ: Եվ ահա հարց է առաջանում. այդ դեպքում ո՞րն է միջին գրական անվանված հայերենի տեղը գրավոր հայերենի զարգացման պատմության մեջ: Ուզում ենք ուշադրություն հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա. արևելահայ բոլոր քերականները, ովքեր զբաղվել են հայերենի, այսպես կոչված, պերիոդիզացիայի հարցերով, ելակետ են ունեցել հիմնականում արևելահայերենի լեզվական նյութի տվյալները: Գ. Սևակը, ով առաջին լուրջ փորձը կատարեց գրական հայերենի գիտական շրջանաբաժանման, ի սկզբանե հայտարարում է, որ ինքը «անհրաժեշտ է համարում վերանայել մեր ազգային գրական լեզվի՝ **արևելյան գրական աշխարհաբարի** սկզբնավորման հարցը» (ընդգծումը – Գ. Ս.): Նրա «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ հարցին նվիրված բաժինը հենց այդպես էլ կոչվում է՝ «Արևելահայ գրական լեզվի պատմության պերիոդիզացիա»: Արևելահայ գրական լեզվի բուն պատմությունը նա սկսում է XVII դարից: Մի կողմ թողնելով լեզվաբանի այն վիճահարույց տեսակետը, թե մեր ազգային գրական լեզվի ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը, տարբեր լեզուներ են, ինչպես գրաբարը և միջին հայերենը, պետք է նկատել, որ այսօր միանգամայն արդիական է հնչում նրա այն կարծիքը, ըստ

որի՝ գրական հայերենի այդ երկու տարբերակները «իրենց ֆորմացիայի և ակունքների մեծ նմանություններով, փոխադարձ ուժեղ կամ թույլ ներազդեցություններով հանդերձ, ունեն բնույթի ու պատմական ճակատագրի խոշոր տարբերություններ, ուստի և ենթակա են առանձին ուսումնասիրության»¹⁴: Հարցին անդրադարձած արևելահայ մյուս լեզվաբանները՝ Ս. Ղազարյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Մուրադյանը, Հ. Կուսիկյանը և ուրիշներ, չեն դիտարկում տարբերակված մոտեցման խնդիրը և, որքան էլ տարօրինակ է, չեն քննարկում նաև Գ. Սևակի այդօրինակ մոտեցման պարագան: **Ս. Ղազարյանի** աշխատություններում¹⁵ հիմնականում պաշտպանվում է այն տեսակետը, որ գրաբարի և միջին հայերենի սահմանագիծը X դարն է, իսկ միջին հայերենինը և աշխարհաբարինը՝ XVII-ը: Նա չի պաշտպանում այն լեզվաբանների կարծիքը (Յ. Կարստ և ուրիշներ), թե եղել են միջին հայերենի տարբերակներ, որոնցից կիլիկյան հայերենը բարձրացավ գրականության աստիճանի և պահպանվեց՝ ի տարբերություն մյուսների: Նրա կարծիքով՝ միջին հայերենը մինչև կիլիկյան հայերենը արդեն իր հիմնական հատկանիշներով ուրվագծված էր, պարզապես կիլիկյան շրջանում ավելի մշակվեց ու զարգացավ: «**Միջին հայերեն** տերմինի տակ,– գրում է Ս. Ղազարյանը,– մենք հասկանում ենք 10-17-րդ դարերի գեղարվեստական, գիտական, այլև պատմական գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին: Լեզվական այդ ընդհանրությունը, ինչպես ամեն մի գրական լեզու, տարբեր ժանրերի գործերի մեջ ունեցել է իր

¹⁴ Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 15:

¹⁵ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1954: **Նույնի՝** Միջին հայերեն, գիրք Ա, 1960: **Նույնի՝** Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Եր., 1961:

ինքնատիպ արտահայտությունները, որոնք գրական երկի բովանդակության, հեղինակի ըմբռնումների, կրթական մակարդակի ու գրաբարին տիրապետելու աստիճանին համապատասխան ավելի նվազ կամ ուժեղ են ընդգծվել: Սակայն չնայած լեզվական տարրերի բազմազանությանը՝ միջին հայերենը ունեցել է զարգացման իր ընդհանուր օրինաչափությունները, որոնք այն տարբերել են գրաբարից և որոշել նրա կառուցվածքը իր բոլոր բաղադրիչներով: Միջին հայերենը իր այդ ընդհանուր վիճակով ուրվագծվում է 10-րդ դարից սկսած»¹⁶: Իր տեսակետը հաստատելու համար նա բերում է միջին հայերենը բնութագրող հնչյունական, բառային և քերականական բազմաթիվ վկայություններ ինչպես Արսեն Այտընյանի արձանագրած լեզվական փաստերից, այնպես էլ IX-X դարերի հայ մատենագրությունից և ձեռագրերի հիշատակարաններից: Դրանք հայերենի նոր շրջափուլի ամենավաղ վկայություններից են՝ միջին հայերեն-աշխարհաբար լեզվակառուցվածքի էական տարրերը, որոնք, սակայն, առավել տեսանելի դարձան և ընդհանուր ճանաչում գտան XII-XIII դարերից սկսած (մեր հետագա շարադրանքում դրանց կանդրադառնանք): **Հ. Կոսիկյանը**, հիմնականում հետևելով Գ. Ջահուկյանի ուրվագծած ժամանակագրական սխեմային, կատարում է հետևյալ շրջանաբաժանումը՝ հին շրջան՝ V-XII դարեր, միջին շրջան՝ XII-XVII, նոր՝ XVII-XIX, նորագույն՝ XIX-ից հետո¹⁷:

Արևելահայերենի փաստական նյութի տեսանկյունից արված այս դիտարկումներում միանգամայն համոզիչ է ներկայացվում գրաբար-միջին հայերեն-արևելահայ աշխարհաբար շրջանաբաժանումը, քանի որ վերջինը լեզվական որակի էական տարբերություններ ունի նախորդ շրջափուլից: Նույնը, սակայն, չի կարելի ասել գրական արևմտահայերեն և միջին հայերեն հարաբերակցության մասին: Միջին դարերում շատ

¹⁶ Մ. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 92-93:

¹⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 23:

ավելի հիմնավոր և հետևողական զարգացում ստացավ գրական աշխարհաբարի արևմտահայ տարբերակը: **Գրական արևմտահայերենի բոլոր իրողությունները կան միջին հայերենում**՝ որպես արևմտահայ բարբառների լեզվական իրողություններ, որոնց հիմքի վրա ձևավորվեց միջին հայերեն կոչված փուլի խոսակցական բանավոր և գրավոր տեսակը: Միջին հայերենը, գրաբարից զատ, ձևավորվեց գերազանցապես արևմտահայ բարբառների հիմքի վրա, որոշակիորեն մշակվեց ու զարգացավ այդ բարբառների լեզվական նյութով: Խոսելով կիլիկյան հայերենի մասին, որը, ինչպես գիտենք, միջին հայերենի ամենաբարձր՝ դասական արտահայտությունն է, «Ակնարկների» հեղինակները արձանագրում են, որ «...Կիլիկյան հայերենը փաստորեն գրի էր առնվում արևմտահայ բարբառների ընդհանրությունների հիման վրա: Հենց սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ այս նույն ժամանակներում Կիլիկիայից դուրս՝ բուն Հայաստանի արևմտյան շրջանների լեզուն, իր հիմնական առանձնահատկություններով այնքան մոտ է կիլիկյան հայերենին» (Ա 1, էջ 36-37):

Արսեն Այտընյանը «Աշխարհաբար կամ ժողովրդական ստորին լեզուի մը գոյութիւնը» հաստատող տարրերը փնտրում է V-VII և հետագա դարերի հայ մատենագրության մեջ: VII դարը նկատում է սահմանագիծ հին և նոր լեզուների՝ գրաբարի և «նախնեաց ռամկօրէնի» միջև: «Այս դարն իրօք դարագլուխ մըն է հայերէն լեզուին պատմութեանը մէջ,– գրում է նա,– մանաւանդ թէ սահմանագլուխ՝ հին հայերէնի, որուն գրաբար կ'ըսենք՝ եւ հին աշխարհաբարի մը մէջտեղը. այսինքն այն աշխարհաբարին զորն որ գործոյս ընթացքին մէջ **Նախնեաց ռամկօրէն** կը կոչենք»¹⁸: Ի դեպ, իր աշխատանքի մեջ նա **աշխարհաբար, ստորին դարուց ռամկօրէն** կամ **նախ-**

¹⁸ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 121:

նեաց հայերէն տերմինների փոխարեն գործածում է նաև **միջին հայերէն, միջին հայերէն լեզու** տերմինները¹⁹: Արևմտահայ լեզվաբանը այս կարծիքին է հանգում նախնյաց մատենագրական նյութի ուշադիր և հետևողական քննությամբ: Ըստ որում, քննական աղբյուրներում, որոնք հիմնականում VII-XII, նույնիսկ V դարի մատենագրության նմուշներ են, հետագոտողը փնտրում և հանգամանորեն ներկայացնում է արևելահայերենի և արևմտահայերենի համընկնող և կամ միայն արևմտահայ աշխարհաբարին բնորոշ լեզվատարբեր՝ նորանոր բառեր՝ **խիստ, փոխ, կարի, մոտեցան, փոխ, մերձեցան, փլան, փոխ, կործանեցան, շատ, փոխ, բազում, կամ՝ աղեկ, գեշ, աղուոր, ուրիշ, ճիտ, ատեն, հանաք, կաշիլ, ուզել, խղճալ, մտիկ ընել և այլն, բայերու նոր ձևեր՝ նեղացար (նեղեցար), չարծնուս (ոչ պրծանիս), հոլովական ձևեր՝ մեզնէ, մարդէն, ջրէդ, բերանէն, ձորակով, սրտով, ի գետերէն եւ նաւերէն, «ի և զ նախդիրներու անհետանալու սկիզբն տեսանք», «համաձայնութեան նկատմամբ գրաբարէն խոստորմունքն առհասարակ», ոչ և չ ժխտականներից երկրորդի ակտիվ կիրառությունը, որ-ի գործածվելը **զի** շաղկապի նշանակությամբ և այլն: Ի վերջո, քննելով նախնյաց մատենագրության լեզվական նյութը, Ա. Այտընյանը հանգում է այն համոզման, որ «հիմնական աշխարհաբարին (նկատի ունի XIX դարի կեսերի արևմտահայերենը – ՅՆԱ. Մ.) հետ ըլլալու համեմատությունը կը դիւրացընեն՝ միայն երբեմն երբեմն երեւան ելած եւ համարձակ գործածուած նորագոյն ձեւերն ու բառերը, որոնցմով կը տեսնուի որ **գրեթէ հիմնական լեզուն ըստ էական մասին ձեւացած էր ասկէ իբր 7 դար յառաջ**»²⁰ (ընդգծ. – ՅՆԱ. Մ.): Նա նոր հայերենի ձևավորման և հնից զատվելու ժամանակաշրջանը փաստորեն հասցնում է XII-XIII դարեր²¹: **Նախնեաց հայերէնի** ա-**

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 156:

²⁰ Նույն տեղում, էջ 151:

²¹ Ի դեպ, **նախնեաց ռամկօրէն**-ի առաջին հետազոտողներից Ղևոնդ Հովնանյանը միջին հայերեն կամ աշխարհաբար լեզվատարբերի գործածու-

մենաբնորոշ գծերից է համարում անմշակությունը և անմիօրինակությունը: Ինչպես արդեն ասվեց, լեզվաբանի ներկայացրած փաստական հարուստ նյութը վերաբերում է առավելապես արևմտահայ աշխարհաբարին: Ներկայի **կու (կը, կ')** մասնիկի գործածությունը Ա. Այտընյանը համարում է նոր լեզվի մեջ «գլխաւոր կերպարանափոխութիւն յառաջ բերող», այդ լեզուն գրաբարից զատող և առանձին կերպով աշխարհաբարի դրոշմ տվող հատկանիշներից²²: Աշխարհաբարի ձևավորման և զարգացման վերաբերյալ նրա գիտական հայացքների ամբողջ տրամաբանությունը հանգում է այն մտքին, որ միջին հայերեն կոչված շրջափուլի ձևավորման գործընթացը ի վերջո արևմտահայ աշխարհաբարի առաջացման ու կազմավորման պատմությունն է: Այդ միտքը արևմտահայ քերականագետը ձևակերպել է շատ պարզորոշ ու հստակ: Ավարտելով գրաբարի քերականության համառոտ բնութագրությունը՝ նա գրում է. «Այս իբր հինգ դարու միջոցի գրաբարին տեսութենէն ետքը դառնանք **աշխարհաբար լեզուին** պատմութեանը (ընդգծ.– Յու. Ա.): Միջին դարուն վերջերը և մասնաւորապէս Բագրատունեաց ժամանակները*՝ երբ արդէն մեր

թյան առաջին օրինակները արձանագրում է մեր վաղ մատենագրության մեջ՝ սկսած հինգերորդ դարից, իսկ **բուն ռամկական** լեզվով գրականության սկիզբ է համարում XII դարի կեսերը: «Հին գրութեանց ոմանց ժամանակին այս անորոշութեան, եւ այլ զորոց ժամանակին վրայ լիովի ապահովութեան պակասութեան պատճառաւ,– գրում է նա,– դժուարին է ճշդիւ եւ որոշակի սահմանել թէ ե՞րբ սկիզբն եղած է այս կերպ գրութեանց, ո՞վ զառաջինն ձեռնարկած է ի նոյն: Արդարեւ աստ անդ ակնարկեցինք թէ ըստ մեր տեսութեան՝ ԺԲ. դարուն երկրորդ կէսն կրնայ դրուիլ իբրեւ ժամանակ սկզբնաւորութեան, նոյն միջոցէն ըլլալով մեր ձեռքն հասած ամէնէն հին բուն ռամկական (եւ ոչ լոկ ռամկախոն) գրութիւնն՝ որոյ ժամանակն գէթ մերձաւորապէս որոշ է, եւ հնար չէ կասկածի ներքեւ ձգել» (**Ղ. Հովնանեան**, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ա., Վիեննա, 1897, էջ 53):

²² Տե՛ս նոյն տեղը, էջ 151-152:

* Նկատի ունի VIII-X դարերը, որ անվանում է **միջին դարեր**՝ «գրաբար մեռեալ լեզու և կերպաւորեալ աշխարհաբար հայերէն»:

գրաբարը իրենց ալ իրօք գրաբար էր, ձևացած էր կերպաւորեալ աշխարհաբար լեզու մը. կամ մանաւանդ դարերով ձևացած աշխարհաբարն սկսած էր նաև իբրև աշխարհաբար ի գիր առնուիլ. լեզու մը՝ որ ժամանակին մատենագրութենէն բոլորովին տարբեր բնութիւն ու կազմութիւն ունի»²³:

Հանգամանորեն քննելով կիլիկյան շրջանի միջին հայերենի լեզվական փաստերը՝ **Յ. Կարստը** վստահաբար հանգում է այն եզրակացության, որ դրանք իրենց հնչյունական վիճակով և քերականությամբ բնորոշ են հայ բարբառների **արևմտյան** խմբին: «Պատմական այդ ժամանակի համար Կարստը նույնիսկ ընդունում է միջին արևմտահայերեն մի խոսվածքի գոյությունը, որը եղել է եթե ոչ ամբողջ արևմտյան խմբի, ապա գոնե նրա բարբառների մի մասի մայրը» (Ա 1, 15):

Մանուկ Աբեղյանը հայերենի պարբերացման խնդրին հատուկ չի անդրադարձել: «Հայոց լեզվի տեսության» ներածության մեջ նա փորձել է համառոտակի ուրվագծել գրավոր հայերենի անցած ճանապարհը՝ հիմնականում հետևելով ընդունված կարծիքներին: Նա **հին** և **միջին գրական** լեզուների սահմանագիծ է համարում XII-XIII դարերը, իսկ **նոր գրական լեզվի** սկիզբը՝ XIX դարը՝ արևմտյան և արևելյան ճյուղերով²⁴: Բուն միջին դարերի մատենագրության լեզվական որակը նկարագրելիս Աբեղյանը գուսանական երգերի առիթով հետաքրքիր դիտարկում է անում միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի մասին. միջին հայերենը, գրում է նա, «իր հնչյունների դրությամբ և քերականությամբ պատկանում է արևմտյան բարբառներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը»²⁵:

²³ Նույն տեղում, էջ 140:

²⁴ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 58:

²⁵ **Մ. Աբեղյան**, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՄԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1972, թիվ 2-3, էջ 225:

Հրաչյա Աճառյանը հստակ գծված շրջանաբաժանում չի տալիս, չի անդրադառնում դրա սկզբունքներին, այսուհանդերձ լեզվի պատմական զարգացման և կրած փոփոխությունների վերաբերյալ նրա արտահայտած կարծիքների տրամաբանությամբ հայերենի զարգացման պատմության մեջ հստակորեն առանձնացվում է երկու շրջափուլ՝ գրաբար և աշխարհաբար: Միջին հայերենը և բարբառները դիտվում են որպես տարատեսակություններ և աշխարհաբարի ձևավորման ու զարգացման նշաձողեր: Զարգացման փուլերը առանձնացնելիս Հ. Աճառյանը նշում է, որ «ինչպես գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար»²⁶: Միայն խիստ պայմանականորեն նա **գ** նախդիրի բացակայությունը դիտում է որպես աշխարհաբարը միջին հայերենից զատող նշան: Եվ ուշագրավն այն է, որ իբրև այդ կարծիքի հակափաստարկ բերում է ոչ միայն տեքստի հեղինակի՝ գրաբարագիտության կամ գրաբարին հակված լինելու հանգամանքը, այլև այն, որ **գ** նախդիրի հաճախակի գործածությունը բնորոշ է արևմտահայ մի շարք բարբառների՝ Մուշի, Տիգրանակերտի, Պոլսի և այլն: Սա մեկ անգամ ևս վկայում է, որ միջին հայերեն և արևմտահայ աշխարհաբար սահմանաբաժանման միջև նշված փաստարկը, ըստ էության, լուրջ ապացույց չի կարող լինել: Աշխարհաբարի հնագույն նմուշները Հ. Աճառյանը փնտրում է XIV դարի մատենագրության մեջ և արձանագրություններում: Ա. Այտընյանի հետևողությամբ՝ հնագույն նմուշ է համարում Բջնիի արձանագրությունը (1358 թ.): Նշվում են նաև այլ օրինակներ: Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետը» (1478 թ.) երկի մասին գրում է. «Այստեղ ավելի լավ է զգում մարդ աշխարհաբարի շունչը»²⁷:

²⁶ **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1951, հ. 2, էջ 441:

²⁷ Նույն տեղում, էջ 442-443:

Արևմտահայերենի ձևավորման հարցերով զբաղվող այլ լեզվաբաններ, հետևելով Ա. Այտընյանի նշած շրջանաբաժանմանը, աշխարհաբարի ձևավորման սահմանները տանում են միջին դարերի սկիզբ:

XI դարից սկսված թուրք-թաթարական բարբարոսական արշավանքները, ապա XV դարից օսմանյան թուրքերի հաստատած տիրապետությունը ծանր պայմաններ ստեղծեցին նաև լեզվի ու մշակույթի պահպանման համար. ընդհատվեց հայերենի բնականոն զարգացումը: Ներկայացնելով պատմաքաղաքական այդ հանգամանքները՝ արևմտահայ աշխարհաբարի պատմության հետազոտողներից **Տ. Շահբազյանը** հանգում է այն եզրակացության, որ պատմաքաղաքական բարենպաստ պայմաններում լեզվի բնականոն զարգացումով ամբողջ հայության համար մենք կունենայինք մշակված ու կատարյալ մի լեզու տակավին XIV-XV դարերում: «Ուրեմն այդ բարբարոսական արշավանքները,– շարունակում է նա,– մեր լեզուն կանգնեցրին իր էվոլյուցիոն կանոնավոր զարգացման փուլ-գումների առաջ և առնվազն 3-4 դարով հետաձգեցին մեր աշխարհաբարի առաջացումն ու վերջնական ձևակերպումը, տեղի տալով բազմաթիվ բարբառների ու դրանց հետ կապված լեզվական իրակությունների յուրահատուկ բազմաթիվ ու բազմապիսի փոփոխությունների»²⁸:

Բերված կարծիքներն ու քննարկումները վկայում են, որ հետազոտողների շատ որոշակի մասի համոզմամբ միջին դարերում ձևավորվող լեզվական որակը սերտ կապի մեջ էր արևմտահայ բարբառների հետ, ձևավորվեց այդ բարբառների հիմքի վրա և իր հերթին հիմք հանդիսացավ արևմտահայ աշխարհաբարի ձևավորման ու զարգացման համար:

²⁸ Տ. Շահբազյան, Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Եր., 1963, էջ 56-57:

Միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի և լեզվական ակնհայտ ընդհանրությունների մասին է վկայում մեր լեզվի երկու ճյուղերը «սահմանագատող» հնչյունային, բառային և քերականական փաստերի ամենապարզ համադրությունն անգամ:

Այսպես: Միջին հայերենում առկա է գրական արևմտահայերենին հատուկ **հնչյունական-հնչյունափոխական բոլոր երևույթների աստիճանական զարգացումը:** Ըստ որում, դրանք ձևավորվում են կա՛մ գրաբարի ուշ շրջանում և կա՛մ վաղ միջնադարում: Ինչպես, օրինակ՝ **ա-**ի սղումը կամ անկումը բառական ուղիղ ձևերում՝ **հասկնալ, հավնել, մեռնիլ, ճանչնալ, սպաննել** (XIII դ.) (Ս 1, 74), կամ՝ «Վասն զի մաղձն **շատցաւ** ի յայս անդամս», «....ն այնկից ի վեր **թուլցաւ**», «....ն զիս **մոռցան**» (Ս 1, 334), **ու-**ի անկումը **ուղարկել** բառում՝ **դրկել** (XV դ.) (Ս 1, 80), **ե-**ի անկումը **գիտենալ** բառում՝ **գիտնալ** (Ս 1, 82), **այ>ա** պատմական փոփոխությունը՝ **զաղբարն** (XI դ.), **վար<վայր, աս<այս**, որ ավելի լայն տարածում է ստանում XIV-XV դարերում՝ **այն>ան, այսր>ասոր, այնր>անոր** (Ս 1, 91-92), հրամայականում գրաբարյան **-եա** վերջավորության փոփոխությունը է ձայնավորի՝ **խառնեա>խառնէ, մաղեա>մաղէ** (XII դ.), **սիրեա>սիրէ** (XIII դ.) (Ս 1, 100), արդեն մի քանի բառերում բառասկզբում արձանագրվում է **ա>ը** (**անկանել>ընկնիլ, անկողին>ընգողին**), որը XV դարից մատենագրության մեջ ներթափանցում է արևմտահայերենին հատուկ **ա>ը** հրնչյունափոխության այլ օրինակներով՝ **ընել** (**<անել<այնել<առնել**), **ըսել** (**<ասել**) (Ս 1, 76): XII – XIII դարերի մատենագրության մեջ համընդհանուր երևույթ է ձայնեղ հպականների շնչեղ խլացումը՝ **սուք, սարկաւաք, փափաք, հոքս** (Ս 1, 116), որի դրսևորումները Գ. Ջահուկյանը արձանագրում է տակավին X-XI դարերի հիշատակարանների լեզվում. այն արտահայտվում է մի շարք բառերի գրության մեջ, ինչպես՝ **յարհանռէ,**

**մանգունք, ընգերանցն, դաքաղ, երկրպաքեցաւ, քահակ-
ցի, Սարքսի** և այլն²⁹: Ս. Ղազարյանը միջին հայերենի հնչյու-
նաբանությանը նվիրված իր աշխատության մեջ բերում է
ձայնեղ և խուլ բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխության
բազմաթիվ օրինակներ X դարի ձեռագրերի հիշատակարան-
ներից (աստուածամաւրտ, ցանգալի, ընգղմեցայ, վաթթար,
Դաղէոս, Թաւթի, Բարթաղէմէոս և այլն) և XII-XIII դարերի
մատենագրությունից ու վանքերի արձանագրություններից
(խաբանէ, զանկակատանս, ընգալա, անգցի, ընձա, պարոն,
պատարաք և այլն)³⁰, միջին հայերեն-արևմտահայերեն համա-
կարգերին հատուկ հնչյունափոխական այլևայլ բազմաթիվ
երևույթներ՝ **հնչյուն(ներ)ի անկում** (արժան-աժան, ջրաղաց-
ջաղաց, ինքն-ինք/զինք), **հնչյուն(ներ)ի ամփոփում և հավելում**
(առնել-ընել, կանաչ-կանանչ, դու-դուն) (Ա 1, 143-162), **դրա-
փոխություն** (փետուր>թեպուր, թեփուր), **տառադարձումներ**
(Աշղղարիպ>Աշղղարիք, Աշուսահլ>Աշուսահլ, Ալ հասան>
Աշլ հասան)³¹ և այլն:

Բառային կազմի ընդհանրություններից է այն, որ գրական
արևմտահայերենին փոխանցվեցին բուն միջինհայերենյան մի
շարք բառեր: Ամենից առաջ նկատի ունենք այդ բառապաշա-
րի բնիկ բառերի շերտը, որը գործածվել է գրաբարի խոսակ-
ցական տարբերակում, բայց մեզ է ավանդվել միջին հայերենի
գրական հուշարձանների շնորհիվ³² և ամենայն հավանակա-
նությամբ մեծ մասով արևմտյան բարբառների սեփականու-
թյունն է, ինչպես՝ **մորձ** – ծառի դալար ճյուղ, **սարքինայ** – խա-

²⁹ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակա-
րաններում, Եր., 1997, էջ 12:

³⁰ Տե՛ս **Ս. Ղազարյան**, Միջին հայերեն, էջ 97-98:

³¹ Տե՛ս նույն տեղը, էջ 97:

³² Տե՛ս **Գ. Զահուկյան**, Բարբառային երևույթներ հայկական հիշատակա-
րաններում, էջ 63- 73:

դողի թառմա, **խածնել** – կծել, **սկըդել** – քերել, **սոթթել** – հավաքել, քշտել, **գոց** – փակ, **աղէկ** – լավ, **ցանցառ** – նոսր, **սուղ** – թանկ, **հեղ** – անգամ, **հոս** – այստեղ, **նէ** – եթէ: Քիչ չեն նաև միջին հայերենից ավանդված իմաստափոխությունները՝ **հասունիլ** (<հատանիմ) գրբ.՝ *կտրվել*, միջ. հայ. նաև՝ *վերջանալ*, **ցաթիլ** (<ցաթիլ) գրբ.՝ *թռչել* (ջրի), միջ. հայ. նաև՝ *ծագել* (արևի, լուսի), **բարակ** գրբ.՝ *նուրբ*, միջ. հայ. նաև՝ *մանրամասն*, ինչպես նաև՝ **քամի** – հողմ, **մրափ** – քուն, **կարգել** – ամուսնացնել, **տեսնել** – իմանալ, գիտենալ և այլն: Մատենագրության մեջ վկայված են արևմտահայերենը արևելահայերենից և գրաբարից տարանջատող բառային այլ միավորներ՝ **հոս**, **հոն**, **քով**, **ատեն**, **աղվոր** (XII-XIII դդ.) և այլն:

Միջին հայերեն-արևմտահայերեն կապի և ընդհանրության դրսևորումները ակնառու են **ձևաբանական մակարդակում**: Արևմտահայերեն ձևերի գործածություն է արձանագրվում դերանվանական հոլովման հարացույցում և գոյականի հոգնակի սեռականի կազմության մեջ. «**Քեզի** բերեմ հայու դըստրիկ»³³, «Հաստատեցէք զձեզ հետ **ինձի**» (ՀԴՔ, 85), «Ասցի. Հոգով հիւանդ եմ, ըզքեզ բըժիշկ **ինձի** գտա» (ՀԴՔ, 94), «Որ տերն այնէ **մեզի** վճար» (ՀԴՔ, 119), «Յաչաց լուսոյդ զձեռըդ լուա, **Ականջներուդ** դուռըն չի կայ» (ՀԴՔ, 112):

Շատ բնորոշ օրինակներ են վկայված բայական համակարգում. վաղակատար դերբայը **-ել**-ով ձևերին զուգահեռ, որը գրաբարի անցյալ դերբայի զարգացումն է (**-եալ>-ել**), ստանում է **-եր** վերջավորությունը՝ **լ>ր** ձայնորդների հնչյունափոխությամբ՝ «Իրք մի կայ ու ինքն է ջըրբեր, Հանց զինեխում մարդ **չէ տեսեր**», կամ՝ «Ի յերկնաւորաց դասուց սաղայել զերեսն **եր շրջեր** Ի յերկնից անդունդս **իջեր** Ի ի լուսոյն խաւար **մնա-**

³³ «Հայ դասական քնարերգություն», Եր., 1987, էջ 69: Այսուհետև շարադրանքում՝ ՀԴՔ և էջը:

ցեր....», «Դիաւճէնն ասէ, այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին **տագնապեր** և **տաքցեր է**, և իր տաքութենէն զայց ջերմս յերեւան է բերել» (Ա 1, 308-309), որպէս քերականորէն ամբողջացած երևոյթ՝ հարակատարը հանդես է գալիս նաև իբրև ժամանակակերտ դերբայ՝ «Ուղիղ ճամփէն եմ մոլորած, Եւ յանիհուն ծովս եմ անկած, Ի վիհ մեղացս եմ գլորած. Զարթո՛ղիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց»³⁴, կամ՝ «Ամենայն իրք, որ ինքն աջօք է տեսած, Հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած. Յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն են գոված, Յաշխարհիս հաւատով յերկինքն են ելած» (Ա 1, 310-311)³⁵: Սովորական է և տիրապետող օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի՝ ր-ի հնչյունափոխված ձևով սահմանական ներկայի կազմութիւնը՝ **չես լըսեր, չես երթար, չի ընկնիր, չի մնար, չես ուրանար** (XIII դ.), որը արևմտահայ գրականում

³⁴ Հովհաննէս Երզնկացի, Հայ քնարերգւոյան մատենաշար, Եր., 1986, էջ 58:

³⁵ «Ակնարկներ....»-ում կարծիք է արտահայտվում, որ միջին հայերենում հարակատար ժամանակներն ամբողջությամբ չեն նույնանում արևմտահայ գրականի հարակատար ձևերի հետ, քանի որ միջին հայերենում ներգործական սեռի բայերից հարակատար ժամանակներ չեն կազմվում, և որ «հարակատար դերբայը ներգործական սեռի բայերի դեպքում արտահայտում է կրավորական սեռի իմաստ՝ առանց կերպային դրսևորման» (տե՛ս Ա 1, 311): Մեր ձեռքի տակ եղած և հենց «Ակնարկներ....»-ում բերված որոշ բնագրային օրինակներում, սակայն, հանդիպում են գործածություններ, որոնց վերաբերյալ հազիվ թե «որոշակիորեն չի կարելի պնդել», որ դրանք ներգործական սեռի իմաստ ունեն, ինչպես՝ «Զինչ աշխարհը դաշինք ու ուխտ կա դրած, Ամենին կապն ամուր հաւատն է դրած: Ամենայն իրք, որ ինք աջօք չէ տեսած, հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած. յաստուծոյ սուրբքն ամէն հաւատն են գոված, յաշխարհէս հաւատով յերկինքն են ելած» (Հովհաննէս Երզնկացի, 68), «....Զերդ լոկնայ մարդն ջրով, որ խառնած է յինքն տաք իրք» (Մխիթար Հերացի) (տե՛ս Ա 1, 331): Բոլոր դեպքերում, ինչպես արևմտահայերենում, այնպես էլ միջին հայերենում հարակատարը հանդես է գալիս որպէս ժամանակակերտ դերբայ ոչ միայն կրավորական, այլև ներգործական ու չեզոք սեռի բոլոր բայերի հետ՝ անկախ նրանից, որ արևմտահայերենում առավելապես ներգործական սեռի բայերի հետ այդ ձևերն արտահայտում են վաղակատարի և անցյալ վաղակատարի նշանակություն:

ընդհանուր և միակ ձևն է. միջին հայերենի ուսումնասիրողները այս առիթով դարձյալ պիտի արձանագրեին, որ «Արևմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին: Նույնիսկ **ի** խոնարհման բայերի անցյալ անկատարի ժխտականի **ի>է** հնչյունափոխությամբ՝ **չէր փախչէր**» (Ա 1, 320): Միջին հայերենում օրինաչափ է եզակի հրամայականի՝ **եա>է** հնչյունափոխված վերջավորությամբ ձևերի օգտագործումը, մի բան, որ **ե**, **ի** լծորդության պարզ բայերի համար կանոնական դարձավ արևմտահայ գրականում՝ **շփէ՛, մաղէ՛** (XII դար), **պարզէ՛, խառնէ՛, յիշէ՛** (XIII դ.), պատճառական բայերի համար հանդես են գալիս գրական արևմտահայերենին բնորոշ ձևեր՝ **ցամաքեցո՛ւր, կերցո՛ւր** (Ա 1, 339): Տարածված կազմություններ են արգելական հրամայականի **մի՛ պահեք, մի՛ վառեք, մի՛ խօսիր** (XIII դ.), **մի՛ մնար, մի՛ օծանեք, մի՛ թողուր** (XII դ.) ձևերը (Ա 1, 357-358): Անկանոն բայերի անցյալ կատարյալի կազմության մեջ նկատելի է արևմտահայերենին հատուկ կազմությունների կայունացումը, ինչպես, օրինակ, **տալ** բայի հարացույցում է. «Տալ բայի անցյալ կատարյալում հետևողականորեն ունենք **տուի, տուիր, տուալ** խոնարհման ձևերը» (Ա 1, 351): Սահմանական ներկայի և անցյալի կազմության վերաբերյալ պիտի ասել հետևյալը. ներկայի **կու/կը, կ՛**-ով համադրական կազմությունը (**կու խօսիմ, կ՛աղօթե, կը բուժե** ձևերը արձանագրվում են որպես բարբառային-խոսակցական ձևեր. երեք բայերի դեպքում կանոնական է գրական լեզվում՝ **կու գամ, կու լամ, կու տամ**) միջին հայերենի բացարձակ հատկանիշն է: Ա. Այտընյանը, ինչպես նշվեց, դա համարում է լեզվական այն հիմնական նշանը, որով աշխարհաբարը զատվում է գրաբարից: «Միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, Երզնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները» (Ա 1, 322): Ավելորդ

չենք համարում քննարկվող ժամանակաշրջանի հայ մատենագրությունից բերել բնագրային մեկ-երկու օրինակ, որոնցում ակնառու են արևմտահայերենում և արևելահայերենում համընկնող կամ միայն արևմտահայերենին բնորոշ և գրաբարից տարբեր իրողություններ.

Աստղեր. Զառ ի վեր ջուրն է մեկնած,
Ներքոյ ամուր աւզով փակած,
Աւազն ամեն հրով լցած՝
Մի քան զմի պայծառացած: (Շնորհալի)

Կատու. Որպէս տիկին յուշիկ գնայ,
Պարան յետնն ի քարշ կուգայ,
Բազմի յոսկի բարձի վերայ,
Որսիկ առնէ քան զբազայ³⁶: (Շնորհալի)

Այծ. Յամէն շրջի ինքն ի քարեր.
Ունի ծախու մազէ քրքձեր,
Գինւոյ ունի աղուոր տըկեր,
Ի օծտէ ձրի դանկի կոթեր³⁷: (Շնորհալի)

- Ծո՛յ Յոհաննէս, ծո՛յ իմ տըղայ,
Դարձի՛ր ի տունն, ասա մեղայ,
Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըզքեզ օրհնել տամ քահանայ:
- Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Գէմ Աշային նըման չըկայ,
Աշան է թուխ, ունքն է կամար,

³⁶ Այս հանելուկը՝ որպէս աշխարհաբարի տարրերով լեզվական նմուշ, բերված է նաև **Տ. Շահբազյանի** «Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը» ուսումնասիրության մեջ: Սակայն հեղինակը կարծես ավելորդ ջանք է գործադրել նմուշի լեզուն «ավելի աշխարհաբարյան» դարձնելու համար. լեզվական երկու իրողություն «սրբագրել է» արևմտահայ աշխարհաբարով **յետնեն-չետնեն, կ'առնէ-առնէ** (հմմտ.՝ էջ 63):

³⁷ Տե՛ս **Շնորհալի**, Եր., 1968, էջ 35-40:

Քաֆիր եմ թե՛ զինքն ուրանամ:

- Ծո՛յ Յովաննէս, ծոյ ի՛մ տըղայ,

Դարձիր ի տուն, ասա մեղայ,

Աշան տաճիկ է անօրէն,

Այն քո հատտուն հետ կու ջանայ:

Լեզուն պիւլպիւլ, ձայնն դումրի,

Մեջքըն բարակ գէտ ֆռանկի:

Աշան նըստեր էր փէնճէրէն,

Ափն երեսին էր, խիստ կուլար,

Թ'այսօր ծեծեց իմ հայր դատին,

Թ'է՛ր կու սիրես հայուն որդին.

Տես թե՛ կելնէ մէկ մի կուգա՞յ,

Ականջըն խուլ Յովաննէսին:

Խեւ Յովաննէսն, երբ զայն լըսեց,

Բըռնեց զճամբան ի Եզընկին.

Ու գլխիբաց, զըտակն ափին,

Գնաց կանգնեց յառջև խանին³⁸: (Հովհաննէս Երզնկացի)

- Հայ իմ մարիկ մի՛ տըխմարնար,

Զըկայ նըման գէմ Աշային,

Քանի որ յիմ տեսուս զատեր՝

Կենաց ճարակն է ինձ հատեր,

Լացն ու հառաճն է զիս պատեր,

Հոգու քաղիլ ու սրտացաւ: (Կոստանդին Երզնկացի, ՀԴՔ, 92)

Բերված վկայությունները XII-XIV դարերի մատենագրություն-
նից են: Հետագա դարերում ավելի ընդգծվեցին նշված հատ-
կանիշները: Առանձին իրողություններ կայունացան: Բայց
շատերը մնացին չնորմավորված՝ երկընտրության կամ եռ-
ընտրության մեջ. «Երկընտրության երևույթը նկատելի է

³⁸ Հովհաննէս Երզնկացի, նշվ. աշխ., էջ 46-47:

...ընդհանրապես: Ասենք, միջին հայերեն լեզուն էլ, իր ամբողջության մեջ վերցրած, ունի լեզվաքերականական ձևերի բազմազանություններ, որոնք, իհարկե, լեզվի զարգացման ընթացքում պետք է կայունանային, նոր երևույթները պիտի ընդհանրանային, հները պիտի զիջեին ու մոռացվեին, սակայն Կիլիկիայի հայ պետականության խորտակման հետևանքով միջին հայերեն գրական լեզվի զարգացումը ևս իր բնական ու տրամաբանական վախճանին չհասավ» (Ա 1, 326): Ազգային և քաղաքական կյանքի վայրիվերումների պատճառով միջին հայերենի զարգացումը իր ավարտին չհասավ միջին դարերում: Դա տեղի ունեցավ շատ ավելի ուշ՝ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին:

Ինչ վերաբերում է գրական արևելահայերենին, ապա դրա մասին հարկ է ասել հետևյալը. XV-XVI դարերից սկսած, բարբառների ակտիվացմանը զուգահեռ, աշխուժանալ սկսեցին նաև արևելահայերենի լեզվատարրերը: Դրանք, իհարկե, առավելապես հանդիպում են **-ում** ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակների գործերում: Քննարկելով **-ում**-ի գործածության՝ հայագիտության մեջ հայտնի օրինակները³⁹,

³⁹ Իբրև այդպիսիք բերվում են հետևյալ երեք օրինակները. **ա)** «Ապա թե հիւանդին թպտիրն **մաշում** լինի, կերակուր չոր է պատեհ, նա ընծային այլ ցեղ նիւթ...» (**Մխիթար Հեթաղի** (XII դ.), Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832). Ա. Այտընյանը այս վկայությունը գնահատել է որպես **-ում** վերջավորությամբ անկատար դերբայի նախաձև, մինչդեռ մի շարք փաստերով ճշտվում է, որ **մաշում**-ը արաբերենից փոխառված բառ է **չարաղետ, չարագուշակ, չարաբաստիկ** նշանակությամբ (տե՛ս Ա 1, 304): **բ)** «Ասացի թէ. «զինչ քրիստոնէայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղոթք են առնում» (**Վարդան Արևելցի** (XIII դ.), Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861). ձեռագրերի նախնական տարբերակներում լեզվական այդ փաստը կա՛մ ավանդված չէ, կա՛մ վկայված է **«աղոթք են յառնում»** ձևով, և եզրակացությունը այն է, որ «իրական հիմք չկա **«աղոթք են առնում»** ձևը 13-րդ դարի լեզվական փաստ դիտելու կամ իբրև այդպիսին ճանաչելու համար» (տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 472, տե՛ս նաև՝ Ա 1, 304-305): **գ)** **«Գրում** ի, մուկն ցեղեց

Մամվել Անթոյանը հանգում է այն համոզման, որ դրանք «չեն կարող հիմք ծառայել պնդելու, որ **-ում** վերջավորությամբ անկատար դերբայ ու նրանով կազմված ժամանակներ են եղել այս շրջանի (նկատի ունի XII-XIV դարերը – *Յու. Ա.*) միջին հայերենի մատենագրության մեջ» (Ա 1, 305): Շատ ավելի ուշ՝ XVII դարից սկսած, երկու հեղինակներ (Նաղաշ Հովնաթանը և Զաքարիա Ագուլեցին) սկսեցին լայնորեն օգտագործել **-ում** և **-իս** վերջավորությամբ անկատար դերբայի և ներգոյական հոլովի ձևերը: «Այս վերապահությունից երևում է,– գրում է միջին հայերենի ուսումնասիրողը,– որ մյուս հեղինակների մոտ **-ում** և **-իս** դերբայական վերջավորությունների չենք հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ կիլիկյան բարբառի ներկայացուցիչներ են և ապրել ու ստեղծագործել են այդ բարբառի ազդեցության սահմաններից ներս» (Ա 1, 365): Ուշ միջնադարում արևմտահայերենին բնորոշ **-է** վերջավորությամբ տիրապետող ձևերին գուգահեռ (**խառնէ՛, տորդէ՛, ծեփէ՛, խօսէ՛** և այլն)՝ նկատելիորեն ակտիվանում է արևելահայերենի եզակի հրամայականի **-իր** վերջավորությունը (**ելի՛ր, գտի՛ր, հետևի՛ր, խոստովանի՛ր**), առավել շատ են օգտագործվում **ե** խոնարհման պարզ բայերում հոգնակի հրամայականի միայն արևելահայերենին հատուկ արմատական-հիմքային ձևերը (**կանչէ՛ք, խմէ՛ք, ծիծաղէ՛ք**), արևմտահայերենին հատուկ նորակազմ վերջավորությամբ ձևերին գուգահեռ (**խմացո՛ւր, ուրախացո՛ւր**)՝ սկսում են հանդիպել պատճառական բայերի եզակի հրամայականի՝ արևելահայերեն կամ արևելահայերենին մոտ կազմությունները՝ **եռցո՛ւ, կաթեցո՛ւ, խմցո՛ւ** (Ա 1, 390-391), գրավոր խոսքում կիրառության մեջ են հայտնվում

ի վերայ լուսանցին» («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Եր., 1958, էջ 358) (տե՛ս Ա 1, 305): Վերջին փաստը, որ համեմատաբար հավաստի է, ավանդված է ավելի ուշ շրջանի՝ XV դարի մատենագրությունից՝ Զաքեոս գրիչից (1474 թ., Վայոց ձոր): Դա մեկ անգամ ևս վկայում է, որ արևելահայերենին հատուկ քերականական այս իրողությունը համեմատաբար ուշ շրջանի երևույթ է:

բարբառային **էս-**, **էդ-**, **էն-**ը և դրանցով բաղադրված ձևերը, գործածական հաճախականությունն է ձեռք բերում **ոնց** բառը, որը միայն արևելահայերենին բնորոշ հատկանիշ է և այլն: Արևելահայերենը բնութագրող առանձին լեզվատարրեր, որոնք անմիջականորեն ածանցվում էին գրաբարից և ոչ թե արևելահայ բարբառներից (բացառականի **-ից-**ը, ներգոյականի **-ում-**ը, վաղակատարի **-ել-**ը և այլն⁴⁰) արդեն իսկ գործածվում էին վաղ միջնադարի մատենագրության մեջ: Պատահական չէ, որ դրանք առավելապես հանդիպում էին այնպիսի գրողների երկերում, «որոնց լեզուն հարազատ էր գրաբարին»⁴¹: Բայց դրանք էապես ակտիվացան ուշ միջնադարում:

Ըստ էության, ստացվում է այսպիսի պատկեր. գրաբարի ընդերքում աստիճանաբար և դանդաղ, իսկ XII-XIII դարերից սկսած՝ ավելի ակտիվ կերպով սկսում են ձևավորվել արևմտահայ աշխարհաբարի լեզվատարրերը: Այդ գործընթացը շարունակվում է մինչև XIX դարի վերջերը՝ մինչև գրական արևմտահայերենի նորմավորման փուլը: Իսկ ահա XV-XVI դարերից արևելահայերենի լեզվատարրերի աշխուժացումը աստիճանաբար տեսանելի է դարձնում արևմտահայ-արևելահայ կողմնորոշումը կամ, Է. Աղայանի խոսքերով ասած, «երկու հակադիր երևույթների բախումը»⁴², որը ի վերջո հանգեցնում է արևմտահայ աշխարհաբարից արևելահայ ճյուղի տարանջատմանը:

⁴⁰ Գրաբարի անեզական գոյականների բացառականի **-ից-**ը, որը հետո փոխանցվեց արևելահայերենին, ուներ նաև եզակիի իմաստ, ներգոյականի **-ում-**ը, որը արևելահայերենի հոլովական համակարգը սահմանազատող հատկանիշ է, նախդրավոր կազմությամբ սովորական գործածություն ունեցող գրաբար մատենագրության մեջ՝ ներգոյականի, երբեմն նաև տրականի իմաստներով, արևելահայերենի **-ել-**ով վաղակատարը գրաբարի անցյալ դերբայի պարզ զարգացումն է:

⁴¹ Տե՛ս Է. Մկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 139:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 12:

Կարծիք կա, որ XVII դարը **միասնական հայերենի** շրջանն է: Եվ միասնական գրական հայերեն ասելով՝ առաջարկվում է հասկանալ նոր ձևավորվող այն գրականը, որի մեջ **հավասարակշռում են** արևմտահայ և արևելահայ լեզվատարրերը, կամ, ըստ ուսումնասիրողի՝ «ընդհանուր առմամբ չկա արևմտահայ և արևելահայ լեզվամիջոցների ակնհայտ գերակշռություն»⁴³: Եղած արձակ և չափածո մատենագրության նմուշների լեզվական քննությունը այդպիսի եզրակացության առիթներ չի տալիս: XVII դարի հայ մատենագրության լեզուն միասնական անվանված հայերենն է այնքանով, որքանով համատեղում է արևմտահայերենի և արևելահայերենի կամ նրանց բարբառների լեզվատարրերը առավել կամ պակաս չափով⁴⁴:

XVIII դարը համարվում է այսպես կոչված **երկփեղկումի դարաշրջան**. մատենագրության այս կամ այն թևին պատկանող հեղինակների երկերում ակնհայտորեն երևում է արևելահայ կամ արևմտահայ կողմնորոշումը: Այսպես՝ Պաղտասար Դպիրի և Հովհաննես Կարնեցու աշխարհիկ երկերում գերակշռում են արևմտահայերենի տարրերը, իսկ Նաղաշ Հովնաթանի և Զաքարիա Ագուլեցու գործերում միանգամայն գերիշխող է արևելահայերենը: Գրական հայերենի պատմության երկու հիմնական փուլերի գոյության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ XIX դարում գրապայքարը ծավալվեց գրաբարի և աշխարհաբարի միջև և ոչ թե գրաբարի ու միջին հայերենի: Դա ըստ էության պայքար էր պաշտպանելու համար բնականոն ճանապարհով ձևավորված նոր հայերենի իրավունքները, որը միայն **պայմանականորեն կոչվել է միջին հայերեն**:

⁴³ Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Նոր գրական հայերենը XVII-XVIII դդ., Եր., 1979, էջ 89:

⁴⁴ Ավելի մանրամասն տե՛ս **Յու. Ավետիսյան**, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 19-23:

Անվանումների մասին պետք է ավելացնել հետևյալը. **գրաբար**-ը գրի բառ էր՝ գրքի խոսք, **աշխարհաբար**-ը աշխարհիկ խոսք էր՝ աշխարհի բառ և իր հասկացական նշանակությամբ հակադրվում էր գրաբարին: **Միջին հայերեն** անվանումը այս տրամաբանությանը չի ենթարկվում և ընդամենը պետք է ընկալվի որպես աշխարհաբարի նախապատրաստական շրջափուլի կամ վաղ աշխարհաբարի պայմանական անվանում: Միջնադարի շատ մատենագիրներ հենց այդպես էլ ընկալում էին իրենց գործածած լեզուն և այդ լեզվով ստեղծվող արժեքների գործառական նշանակությունը: Մխիթար Հերացուց, Ֆրիկից, Երզնկացիներից մինչև Գրիգորիս Աղթամարցի, Նաղաշ Հովնաթան և ուրիշներ այդ մտքով են տոգորված եղել, այն է՝ գրել **աշխարհիկ** կամ **աշխարհական լեզվով, գեղջուկ բարբառով, աշխարհի բառով, ռամկորեն** կամ **ռամկական** հայերենով, **ռամկաց խօսքով** և կամ պարզապես **աշխարհաբառով**⁴⁵: Իր «Անգիտաց անպետ» գրքի վերջում Ամիրդովլաթ Ամասիացին նշում է պատճառներ, որոնք դրդել են իրեն երկր գրելու աշխարհաբարով. «Եւ այլ ասենք, թէ էր եղաւ այս գիրքս աշխարհաբառ: Եւ այս երեք պատճառի: Ա այն է՝ որ ամենայն մարդ չկարէ քերական կարդալ, և կամ արտաքին գրեանք, որ յայս խրթին բառերն յիմանայ. այնոր համար եղաւ աշխարհաբառ....»⁴⁶:

Այսպիսով՝ գրական հայերենի պատմության համար առաջարկում ենք հետևյալ շրջանաբաժանումը՝ **գրաբար** (V-XII դարեր), **աշխարհաբար** (XII-ից մինչև այսօր): XII-XVIII դարերը աշխարհաբարի ձևավորման կամ **վաղ աշխարհաբարի** ենթաշրջանն են, որը խիստ պայմանականորեն կոչվել է կամ կարող է կոչվել նաև միջին հայերեն: XVIII դարից սկսվում է **երկ-**

⁴⁵ Տե՛ս նաև **Ղ. Հովնանեան**, Հետազոտությունք նախնեաց ռամկօրենի վրայ, Ա, Վիեննա, 1897, էջ 23-24:

⁴⁶ Տե՛ս **Է. Մկրտչյան**, նշվ. աշխ., էջ 26:

Ճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը, որը, ի դեպ, ոչ թե ավարտվում է 1920 թ., ինչպես ներկայացնում է Գ. Զահուկյանը⁴⁷, այլ շարունակվում է մինչև այսօր (այսօր ևս մենք ունենք մեկ ազգային լեզվի երկու տարբերակներ կամ ճյուղեր՝ արևելահայերեն և արևմտահայերեն): Ավելի ճշգրիտ լինելու համար այն կարելի է անվանել **երկճյուղ գրական աշխարհաբարի նորավորման ենթաշրջան**:

Հաջորդը, ինչպես առաջարկում է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը, կոչվում է **Ժամանակակից հայերենի ենթաշրջան**՝ 1920 թ. հետո: Այն կարող է կոչվել նաև **արդի հայերենի ենթաշրջան**: Երկու դեպքում էլ հարկ է նկատի առնել հայերենի երկու ճյուղերը՝ **արևելահայերենը** և **արևմտահայերենը**: Այս սահմանագծումները ևս բացատրության կարիք ունեն, քանի որ Գ. Զահուկյանը շատ համառոտ է բնութագրում այս ենթաշրջանը և առիթ տալիս տարակարծությունների:

Տասնամյակներ շարունակ հաճախակի գործածության և ավանդույթի ուժով հայ լեզվաբանության մեջ **Ժամանակակից հայերեն** կամ **Ժամանակակից հայոց լեզու** հասկացությունը նույնացվել է **գրական արևելահայերենին**. իբրև ապացույց վկայակոչենք մեր կեսդարյա լեզվաբանական ժառանգությունը, ակադեմիական քերականության և բուհական դասագրքերի վերնագրերը՝ «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Երևան, 1979, հ. 2, Երևան, 1974, հ. 3, Երևան, 1976, **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987, **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, **Գ. Գարեգինյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1991, **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1999: Կարելի է շարունակել

⁴⁷ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 64:

այս ցանկը: «Ժամանակակից հայոց լեզու» անվանված բոլոր այս աշխատությունները ներառում են բացառապես արևելահայերենի լեզվական նյութը: Ավելին: 1987 թ. հրատարակված «Հայերենագիտական բառարան»-ում ուղղակիորեն նշված է, որ **Ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով, ըստ էության, հասկանում ենք **արևելահայ գրական լեզուն**: Բառարանի համապատասխան բառահոդվածում կարդում ենք. «ԱՐԵՎԵ-ԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ.... ասում են նաև **Ժամանակակից** կամ **արդի արևելահայ գրական լեզու**, **արևելահայ գրական աշխարհաբար**, **գրական արևելահայերեն**, կամ պարզապես՝ **արևելահայերեն**.... այժմ մեզ մոտ սովորական է այն կոչել **Ժամանակակից՝ արդի գրական հայերեն** կամ **Ժամանակակից հայոց լեզու**»⁴⁸: Այս միտքը ընդգծվում է նաև բառարանի ՀԱՅԵՐԵՆ կամ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ հոդվածում. «Հայ ազգային լեզվի բոլոր էական գործառնությունները այժմ փաստորեն իրականացնում է արևելահայ գրական լեզուն, որը միտում է դառնալու ընդհանուր հայության գրական լեզուն: Այժմ **Ժամանակակից** կամ **արդի հայոց լեզու** ասելով ըստ էության հասկանում ենք այդ լեզուն»⁴⁹: Այլ կիրառություններում **արդի հայերեն**-ը՝ որպես արևելահայ և արևմտահայ տարբերակների միասնական անվանում, խիստ պայմանականորեն հակադրվել է **Ժամանակակից հայոց լեզու** հասկացությանը: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի «Առաջաբան»-ում է. Աղայանը փորձում է ներկայացնել գրքի համար իբրև խորագիր ընտրված **արդի հայերեն** հասկացության իր ընկալումներն ու մոտեցումները: Միանգամայն ընդունելի համարելով այն տեսակետը, որ «արդի հայերեն ասելով հասկանում ենք աշխարհաբար կամ նոր հայերեն գրական լեզուն իր երկու գրական տարբերակներով, որոնք մեր ազգային գրական լեզ-

⁴⁸ **Հ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 62:

⁴⁹ Նույն տեղում, էջ 333:

վի գոյության երկու ձևերն են», բառարանագիրը միաժամանակ առաջարկում է **Ժամանակակից հայերեն տերմինը գործածել միայն արևելահայերենի համար**: «Արևելահայերենը, – գրում է նա, – Հայաստանում սովետական իշխանության հաստատման ու պետականության ստեղծման շնորհիվ աննախընթաց կերպով ընդարձակեց իր գործառությունները, բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի համազգային լեզվի բարձունքը: Այս բնութագրությամբ, – շարունակում է Է. Աղայանը, – «արդի հայերեն» անվանումը տարբերակվում է «Ժամանակակից հայերեն» տերմինից, որով մեզ մոտ անվանում են մեր գրական և խոսակցական լեզուներից (ազգային լեզվի տարբերակներից) միայն մեկը՝ արևելահայերենը»⁵⁰: Բերված փաստերը վկայում են, որ պայմանականորեն թե անպայման գիտական շրջանակներում կա այդպիսի մոտեցում՝ **Ժամանակակից հայերեն տերմինով անվանվում է մեր ազգային լեզվի միայն մեկ տարբերակը՝ արևելահայերենը**⁵¹: Բայց այս դեպքում հարցի այսպիսի դրվածքը ջահուկյանական շրջանաբաժանումը, ըստ էության, տանում է փակուղի, քանի որ եթե **Ժամանակակից հայոց լեզու** ասելով՝

⁵⁰ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ VII-VIII:

⁵¹ Ի դեպ, կարելի է արձանագրել մի շատ ուշագրավ իրողություն. արևմտահայ քերականները, հավանաբար հետևելով ավանդույթին, հակված են արևմտահայերենին նվիրված իրենց աշխատասիրությունները, լինեն դրանք դասագիրք թե գիտական հետազոտություն, անվանակոչելու **արդի հայերեն, արդի հայ լեզու** և նման տերմինաբանությամբ, ինչպես՝ Ն. Ռուսինյան, Ուղղախոսություն արդի հայ լեզուին, Կ. Պոլիս, 1853: Ա. Այսրենյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866: Ս. Դաթեան, Տարրական քերականություն արդի հայերենի, Կ. Պոլիս, 1894: Զապէլ Ասատուր, Գործնական քերականություն արդի աշխարհաբարի, գիրք Ա-Բ, Կ. Պոլիս, 1900: Յովհ. Գազանճեան, Նոր քերականություն արդի հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910: Զ. Մելքոնյան, Գործնական քերականություն արդի հայերեն լեզուի, Պէրյուք, 1970: Կ. Առաքելյան, Արդի հայերենի քերականություն, գիրք 1, 2, 3, Պէրյուք, 1998 և այլն:

հասկանում ենք միայն արևելահայերենը, ապա այդ անվանումով հորջորջվող ենթաշրջանից դուրս է մնում արևմտահայերենը կամ այլ կերպ ասած՝ **սփյուռքահայերենը**, և նույն տրամաբանությամբ՝ 1920 թ. տեսականորեն ավարտվում է երկճյուղ աշխարհաբարի ենթաշրջանը:

Անշուշտ, քիչ հավանական է, որ Գ. Ջահուկյանը գրական հայերենի շրջափուլերը ուրվագծելիս, **Ժամանակակից հայերեն** ասելով, ի սկզբանե նկատի է ունեցել արևելահայերենը՝ արևելահայ գրական լեզուն՝ տուրք տալով ժամանակի (հիշենք, որ զեկուցումը կարդացվել է 1951 թ.) մտայնությանը: 1950-ական թվականներին այս մտայնությունը գիտական շրջանակներում ինչ-ինչ արծարծումներ ունեցավ. արևելահայերենը աննախադեպ զարգացումներ ունեցավ, արագորեն ընդլայնեց իր գործածության ոլորտները, հարստացավ և մշակվեց՝ Է. Աղայանի խոսքերով՝ «բարձրանալով պետական լեզվի աստիճանին և զարգանալով դեպի **համազգային լեզվի բարձունքը**» (ընդգծ. – *Յու. Ա.*): Արևմտահայերենը չունեցավ այդ հնարավորությունները: Եվ նրա հեռանկարի վերաբերյալ կարծիքները, մեղմ ասած, հուսադրող չէին:

Ուշագրավ է Հր. Աճառյանի տեսակետը: 1946-1948 թթ. զանգվածային ներգաղթը ազգային զարթոնքի հզոր ալիք էր բարձրացրել համայն հայության շրջանում: Ինքը՝ ճակատագրի բերումով նույնպես տարագիր Հր. Աճառյանը, հայրենադարձության առիթով դիմելով սփյուռքահայությանը, «Սովետական Հայաստան» թերթի 1945 թ. դեկտեմբերի համարներից մեկում գրում է. «Ձեր սրտի իդձը կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք հայրենիք վերադառնալու: Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված՝ սպասում ենք

ձեզ»⁵²: Եվ հայրենասիրական այս մտայնության հիմքի վրա հաճախ քննության էին առնվում նաև գիտության, լեզվի, մշակույթի հարցեր: Փորձում էին լուծումներ գտնել նոր ձևավորվող հարաբերությունների համակարգում: Դրանց մեջ, սակայն, ավելի շատ ընդհանուր ոգևորվածություն կար, քան գիտական մոտեցում: Հավանաբար տուրք տալով ժամանակի այս ընդհանուր տրամադրություններին՝ Հր. Աճառյանը, իբրև զանգվածային ներգաղթի հետևանք, **տխուր վախճան էր կանխատեսում արևմտահայերենի համար**: «Հայոց մեծամասնությունը հավաքված է Խորհրդային Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնակավայրը, – գրում է նա, – նրան կից է Կովկասի և Ռուսաստանի հայությունը, որ գործածում է արևելահայ գրական լեզուն: Նույնը նաև ամբողջ Պարսկաստանի հայությունը: Գաղութներից Ամերիկայի հայերը լեզուն կորցնելու նախօրյակին են: Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Տաճկաստանի և Եգիպտոսի հայ գաղութները փոքր թիվ են կազմում: Սիրիայի հայությունն էլ թեև բավական բազմաթիվ է, բայց էլի Երևանի կեսից ավելի չէ: Իսկ երբ, ինչպես ծրագրված է, սփյուռքի հայերը հայրենադարձ լինեին, կարճ ժամանակում նրանք էլ կամ նրանց որդիները կփոխեն իրենց լեզուն, և **արևելահայ գրականը միակ տիրույթ կդառնա** (ընդգծ. – *Յու. Ա.*)»⁵³: Հայրենադարձած հայությունը, իհարկե, թեև ոչ կարճ ժամանակում, բայց փոխեց իր լեզուն: Սակայն մեծ գիտնականի մյուս կանխատեսումները չիրականացան: Նախ՝ հայրենադարձությունը սպասվող կամ ենթադրվող ծավալները չունեցավ: Հետո՝ Սփյուռքի հայության ջանքերը և

⁵² Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 185:

⁵³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 553:

ազգային զարթոնքը հզոր դեր կատարեցին արտերկրում հայության ինքնությունը և ամենից առաջ լեզուն պահպանելու համար: Եվ ապա՝ ավելի ուշ, տեղի ունեցավ հակառակ գործընթացը՝ արտագաղթ դեպի սփյուռքահայ կենտրոններ, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Ակնհայտ դարձավ, որ արևմտահայերենը դեռ երկար ժամանակ կոչված է իրականացնելու իր գործառնությունները Սփյուռքում և մասամբ նաև հայրենիքում՝ որպես մեր ազգային գրական լեզվի տարբերակներից մեկը⁵⁴:

Կարծում ենք՝ հարցի տրամաբանական լուծման մեկ ճանապարհ կա. պետք է ընդունել, որ Գ. Ջահուկյանի կողմից ներկայացված շրջանաբաժանման մեջ **ժամանակակից հայերեն** տերմինը գործածված է լայն առումով՝ ներառելով արևելահայերենը և արևմտահայերենը:

Այժմ անդրադառնանք Գ. Ջահուկյանի որդեգրած երրորդ սկզբունքին, ըստ որի՝ **լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ**: Սրա էությունն այն է, որ լեզվի տարատեսակների առաջացման, նրանց փոխազդեցության ու առնչությունների փոփոխության հարցերը կապված են ժողովրդի պատմության ընթացքի հետ: Սա վեճ չընդունող ճշմարտություն է: Սակայն այդ կապի կոնկրետ դրսևորումները ցուցադրելու մեջ լեզվաբանը դժվարություններ ունի. «Մենք հնարավորություն չունենք մեր նպատակի սահմաններում մանրամասնորեն ցուցադրելու լեզվի և ժողովրդի պատմության կապը», – գրում է նա և առաջարկում է նկատել, որ իր ամբողջ շրջանաբաժանումը տոգորված է ժո-

⁵⁴ Տե՛ս նաև «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», Եր., 2008, էջ 169-170:

դովրդի պատմության հետ ունեցած կապով⁵⁵: Կոնկրետ կապեր և առնչություններ փնտրելը թերևս շնորհակալ գործ չէ և գիտականորեն ոչ այնքան հիմնավորված, սակայն հենց իր իսկ առաջարկած սահմանագծումներում այդպիսի կապի ու առնչության առանձին դրսևորումներ ակնառու են. այսպես՝ հայոց լեզվի գրային շրջանի պատմության սկիզբը հայոց պատմության հին շրջանի սկիզբն է (V դար), Կիլիկյան թագավորության շրջանը համընկնում է միջին հայերենի ծաղկման ժամանակաշրջանին (XI-XIV դարեր), աշխարհաբար կամ նոր հայերենի սկզբնավորման ժամանակաշրջանը հայոց պատմության նոր շրջանի սկիզբն է (XVIII-XIX դարեր), հայոց պատմության նորագույն շրջանը համընկնում է ժամանակակից հայերենի ենթաշրջանին (1920-ականներից մինչև մեր օրերը) և այլն: Շրջանաբաժանման սխեմայում մեր կողմից առաջարկվող ճշգրտումները դույզն չափով չեն խաթարում այդ կապի և առնչությունների տրամաբանությունը: Գ. Զահուկյանը մի քանի անգամ ընդգծում է իր շրջանաբաժանման պայմանական լինելը, այն միտքը, որ իր և առհասարակ այս կարգի ցանկացած շրջանաբաժանում հարաբերական բնույթ ունի, և որ սահմանագծումները ավելի կամ պակաս չափով պայմանական են, «որովհետև անցումը մի շրջանից կամ փուլից մյուսին տեղի է ունենում առանց որևէ «պայթյունի»»⁵⁶: Մեր կողմից առաջարկվող շրջանաբաժանումը չի խախտում նաև այդ պայմանը, ընդհակառակը՝ ևս մեկ անգամ հաստատվում է այն գաղափարը, որ այս կարգի շրջանաբաժանումները հարաբերական բնույթ ունեն:

⁵⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 34:

⁵⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 33:

Հայոց լեզվի գրային շրջանի պատմության շրջանաբաժանման՝ մեր կողմից առաջարկվող տարբերակը հիմնական գծերով համընկնում է հայոց պատմության շրջափուլերին. նախագրային հայերենի շրջան՝ մինչև մ. թ. V դար, հին շրջան կամ գրաբար՝ V-XII դարեր, նոր կամ աշխարհաբարի շրջան՝ XII դարից մինչև մեր օրերը: XII-XVIII դարերը վաղ աշխարհաբարի կամ, պայմանականորեն, միջին հայերենի ենթաշրջանն է, XVIII դարից մինչև 1920-ականները՝ երկճյուղ գրական աշխարհաբարի կազմավորման և նորմավորման ենթաշրջանը, 1920-ականներից մինչև մեր օրերը՝ ժամանակակից կամ արդի հայերենի ենթաշրջանը՝ երկու ճյուղերով՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

1.2. ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՆՈՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ⁵⁷

Վերնագիրը ենթադրում է, որ խոսքս վերաբերելու է արդի հայերենի **տեղաշարժերին**: Բայց պատեհ առիթը ունենալով՝ ձեր ուշադրությունը պետք է հրավիրեմ նաև մեր օրերում իրականացվող լեզվաքաղաքականության մի քանի այլ կողմերի վրա: Դրանք են՝ **գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերության հարցը, փոխառություններ և տերմինաշինություն, կրթական ծրագրեր և դասագրքեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ**:

1. Տեղաշարժեր: Լեզվի զարգացման ընթացքում ժամանակ առ ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կատարված փոփոխությունների ընտրության, մշակման և քերականության դասագրքերում դրանց ամրագրման: Դա անխուսափելի գործընթաց է, որի չիրականացման դեպքում ստեղծվում է անջրպետ նույն լեզվի գրական և խոսակցական տարբերակների միջև: Մեր լեզվի այդ տարբերակները զգալիորեն հեռացած են իրարից: Այդ տարանջատումը առկա է եղել ի սկզբանե՝ ձևավորման շրջանից սկսած: Գնալով այն ավելի է խորացել: Վերջին տասնամյակներին էական տեղաշարժեր են արձանագրվել հայերենի բոլոր մակարդակներում՝ սկսած արտասանությունից, բառապաշարից մինչև շարահյուսական համակարգ: Մինչդեռ գործող դասագրքերում և բառարաններում

⁵⁷ Որպես գեկուցում՝ կարդացվել է 2013 թ. փետրվարի 21-ին Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովում և փոքր-ինչ ծավալուն տարբերակով հրատարակվել է գեկուցումների համապատասխան ժողովածուում՝ «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ», Եր., 2013:

ամրագրված է դրանց մի աննշան մասը միայն: Կարծիքներն ու տեսակետները փոխանցվում են դասագրքից դասագիրք, բառարանից բառարան՝ երբեմն առանց դույզն փոփոխության:

Օրինակ՝ անվերապահորեն կարող ենք պնդել, որ այսօր արևելահայ գրական լեզվի ձայնեղ պայթականների արտասանության մեջ իշխող միտումը խուլ-ձայնեղ տեղաշարժն է. ոչ թե՝ **գար[ք]ացում, մեր[ց]ավոր, հաշման[թ]ամ, նվա[ք]ել, ար[ք]ելք**, այլ՝ **գար[գ]ացում, մեր[ձ]ավոր, հաշման[դ]ամ, նվա[գ]ել, ար[գ]ելք**, ինչպես հնչում է կենդանի լեզվում: Կամ՝ կ և չ քերականական մասնիկներից հետո հիմնականում արտասանվում է **վօ** կամ **յէ**. այսինքն՝ արդի արտասանությունն է ոչ թե՝ **կ[օ]րոշեն, կ[է]նթադրեն, չ[օ]րոնեն, չ[օ]ղջունեն**, այլ՝ **կ[ը-վօ]րոշեն, կ[ըյէ]նթադրեն, չ[ըվօ]րոնեն, չ[ըվօ]ղջունեն**: Կամ՝ առնվազն տարակուսելի է **իա, եա, իու** և նման ձայնավորական գուգորդումներում պահանջել **յ** ձայնակապի անպայման հստակ արտասանություն՝ **է[յ]ական, հի[յ]անալի, մի[յ]անալ**, կամ՝ դրանց՝ **յա**-ով արտասանությունը, օրինակ՝ **Անդր[յ]ասյան, քրիստոն[յ]ական**, որը թելադրվում է արդի լեզվական կանոնով ու դասագրքերով, բայց որը ակնհայտ հակասության մեջ է իրական արտասանության հետ:

Բայի խոնարհման համակարգում հնացած ու գործածությունից դուրս եկած շատ կազմություններ դասագրքերում և նույնիսկ բուհական ձեռնարկներում շարունակում են հիշատակվել ոչ միայն որպես գործածվող, այլև նախընտրելի ձևեր, ինչպես՝ **մի՛ մտնիր (մի՛ մտիր), մի՛ մոտեցնիր (մի՛ մոտեցրու), մի՛ կարդաք (մի՛ կարդացեք), մի՛ մոտենաք (մի՛ մոտեցեք)** և այլն:

Վերջին երկու տասնամյակում հայերենը հարստացել է մի քանի տասնյակ հազար **նոր բառերով** ու **բառիմաստներով**: Եղած բացատրական բառարանները իրենց հիմնական դերը

կատարել են: ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը ձեռնարկեց բացատրական նոր բառարանի հրատարակություն, բայց գործընթացը արդեն տասնամյակների պատմություն ունի:

Մի իսկական խառնաշփոթ է տիրում մեծատառերի ուղղագրության մեջ: Մի քանի տարի առաջ Հովհաննես Բարսեղյանի կատարած հապճեպ փոփոխությունները ավելի ծանրացրին իրավիճակը: Անհրաժեշտ են բացատրական, ուղղագրական-ուղղախոսական նոր բառարաններ: Արդի լեզվավիճակում բազմաթիվ են այս կարգի իրողությունները: Դրանք պետք է քննարկվեն, փոփոխությունները պետք է մշակվեն և ամրագրվեն նորմատիվ քերականության դասագրքերում: Դա պետք է կատարվի մասնագետների ձեռքով, խստորեն ընտրողաբար՝ իրականացնելով հավասարակշռված ու նպատակային քաղաքականություն:

2. Փոխառություններ և տերմինաշինություն: Հայտնի արտահայտություն կա. լեզվաքաղաքականության մեջ մաքրամոլությունը նույնքան վնասակար է, որքան օտարամոլությունը: Փոխառություններից խուսափելը և օտար բառերի անպայման հայացումը այսօր չունեն արդարացում: Չկա ուծացման վտանգ, և փոխառությունները չէ, որ պիտի խաթարեն մեր լեզվի կամ հայի ազգային որակներն ու հայեցի նկարագիրը: Բառագործածության մեջ հայերեն հաջող համարժեքը, անշուշտ, նախընտրելի է, ինչպես՝ **ինտերնետ-համացանց, կրեդիտ-արժենիշ, ամնիստիա-համաներում**: Բայց եթե հայերեն համարժեքը ճշգրտորեն չի արտահայտում հասկացության բովանդակությունը, կարճ ու բարեհունչ չէ, տերմինային համակարգում չունի գործառական հնարավորություններ, ուրեմն պետք է հրաժարվել դրանից. օրինակ՝ **բանկ, կոնսերվատորիա, տանկ, ֆինանսական բառերի հայերեն տարբերակները՝ դրամատուն, երաժշտանոց, հրասայլ, ելևմտային**, վերը նշված հատկանիշներով էապես զիջում են օտարալեզու տար-

բերականերին: Էլ չենք խոսում ժամանակ առ ժամանակ չգիտես ում ձեռքով հրապարակ նետված անհեթեթ նորակազմությունների ու տերմինների մասին: Խնդիրը դժվարին է և լուծման համար պահանջում է լեզվաբանների և այլ բնագավառի մասնագետների համատեղ ու հետևողական աշխատանք: Մեր լեզուն հարուստ է: Նաև ճկուն է ու գեղեցիկ: Բայց այդ որակները հայերենը, ցավոք, պահպանել է գործածության միայն որոշակի ոլորտներում՝ գեղարվեստական գրականություն, պարբերական մամուլ, առօրյա-խոսակցական լեզու: Պատկերը բոլորովին այլ է պաշտոնական գրագրություններում, գիտական գրականության մեջ: Տեխնիկական գիտությունների լեզվում հայերենի տերմինաբանությունը էապես կաղում է: Պետք է լրջորեն զբաղվել հայերեն համարժեքների ստեղծմամբ՝ բնավ չխորշելով փոխառություններից: Ժամանակին այս հարցերով զբաղվում էին լեզվի պետական տեսչությանը կից տերմինաբանական կոմիտեն, լեզվի բարձրագույն խորհուրդը: Այսօր, մեղմ ասած, բարձիթողի վիճակ է: Լեզվի բարձրագույն խորհրդի վերջին նիստը, եթե չեմ սխալվում, գումարվել է հինգ տարի առաջ:

Փոխառությունները հայերենի հարստացման կարևորագույն աղբյուր են և չեն սպառնում նրա ինքնությանը: Սպառնացող ավելի մեծ վտանգ կա այլ ոլորտներում՝ օտարալեզու դպրոցներ, քաղաքի փողոցները ողողած այլալեզու գովազդներ, էլեկտրոնային ցանցերում և բջջային կապի մեջ իշխող լեզվավիճակ, զանգվածային լրատվամիջոցների լեզուն, մասնավորապես հեռուստալեզուն. վերջինս լեզվադաստիարակության գործում ձեռք է բերել ազդեցության անմրցելի հնարավորություններ և լեզվական անճիշտ ու անվերահսկելի իր քաղաքականությամբ մի իսկական աղետ կարող է դառնալ հեռուստալսարանի, մանավանդ երիտասարդ սերնդի համար: Փողոցի լեզուն չպետք է ներխուժի հեռուստատեսություն կամ

մամուլ: Անհրաժեշտ են լեզվական օրենսդրության խստացումներ և վերահսկողություն: Հակառակ դեպքում մենք անվերադարձ կկորցնենք մեր ազգային լեզվի շատ որակներ:

3. Կրթական ծրագրեր և դասագրքեր: Հայեցի կրթության հիմքը դպրոցն է: Դպրոցական դասագրքերի դերը այս գործում բացառիկ է: Դրանք ուղենիշ են և անվերապահ չափանիշ: Փորձը ցույց է տալիս, սակայն, որ այս ոլորտում կան էական բացթողումներ՝ սկսած ծրագրերի մշակումից, դասագրքերի ընտրությունից մինչև ավագ դպրոցում կրթական գործընթացի ճիշտ կազմակերպում և ընդունելության քննություններ: Հանրակրթական դպրոցի ծրագրերը կազմվում են հապճեպ, առանց հիմնավոր փորձաքննության ու մշակման, դասագրքերի ճակատագիրը հաճախ կանխորոշվում է ի վերուստ, դասագրքերի մրցութային հանձնաժողովի անդամները ընտրվում են հետնաբեմերում: Ընդ որում, հանձնաժողովը ընտրում է դասագիրքը՝ ծանոթ լինելով դրա բովանդակության մի մասին: Մեզանում չի գործում նաև այլընտրանքային դասագրքերի համակարգը, մի բան, որ ընդունված է Ռուսաստանի Դաշնությունում և եվրոպական շատ երկրներում: Զգալի անհամապատասխանություն կա կրթական ծրագրերում ամրագրված նյութի և դասագրքերի ու շտեմարանների բովանդակության միջև: Կրթության մասին օրենքում հստակ ասվում է, որ դպրոցական դասագրքերի բովանդակությունը և քննական նյութը խստորեն պետք է համապատասխանեն գործող ծրագրերին: Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է: Ընդունելության քննությունների համար հրամցվող առաջադրանքների մի զգալի քանակ դուրս է դպրոցական ծրագրի շրջանակներից (օրինակ՝ հնացած կամ բարբառային բառապաշար, խոսքիմասային փոխանցումներ, կրկնասեռություն, բազմաբարդ նախադասություններ, ծրագրից դուրս անգիր հանձնարարվող բանաստեղծություններ և այլն):

Չեն պահպանվում օրենքով սահմանված նաև այլ նորմեր, այսպես՝ ըստ կանոնադրության՝ հնարավոր սկզբունքային սխալներից ու անճշտություններից խուսափելու համար քննական նյութերը պետք է ընտրվեն այն ձեռնարկներից, դասագրքերից ու ժողովածուներից, որոնք անցել են գործածության մեկ տարվա փորձաշրջան և փորձաքննության են ենթարկվել Կրթության ազգային ինստիտուտում: Հայոց լեզվի՝ վերջերս հրատարակված քննական շտեմարանից կարճ ժամանակում խոտանվեց կամ սրբագրվեց մոտ հարյուր առաջադրանք. հարյուրից ավելին էլ դեռ վերանայման կարիք ունի: Եվ պատճառը բնավ էլ միայն գործի նկատմամբ անփույթ ու թափթփված վերաբերմունքը չէ: Բոլոր դեպքերում, այսպիսի մոտեցումը լեզվի հանդեպ ստեղծում է կանխակալ վերաբերմունք, ընկնում է մայրենի լեզվի հեղինակությունը:

Այս ոլորտում քննարկման առարկա կարող է դառնալ նաև մեկ այլ հարց. որքանով է նպատակահարմար շտեմարան կոչվածի գոյությունը: Շտեմարանը վնասում է կրթական գործընթացին. ընկնում է դպրոցական կրթության հարգը, երկրորդ պլան են մղվում դասագրքերը, լայն դուռ է բացվում կրկնուսուցման համար, բթանում է ստեղծագործական միտքը՝ ի շահ սերտողաբար յուրացման: Պատահական չէ, որ շատ երկրներում հրաժարվել են այդ փորձից:

Հատուկ ուշադրության է արժանի բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայերենի դասավանդման խնդիրը: Այդ ֆակուլտետներում հայերենը ուսուցանվում է մեկ տարով՝ շաբաթական 2 դասաժամով: Նախկինում 2 տարով էր և 4 դասաժամով: Առարկան էլ այժմ կոչվում է **«Հայոց լեզու և գրականություն»**: Մա անընդունելի մոտեցում է. նախ՝ լեզուն և գրականությունը տարբեր առարկաներ են ու չեն կարող մատուցվել և ուսուցանվել միասնաբար, և երկրորդ՝ անհնար է այդ առարկաների ուսուցումը այդչափ ժամաքանակով: Ա-

ռարկան պետք է կոչվի «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» և դասավանդվի նպատակային կերպով՝ ծառայելով տվյալ մասնագիտության պահանջներին:

4. Եվ վերջին հարցը, որի մասին կուզեի խոսել՝ արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ: Այս հարցում մշակվող արդի լեզվաքաղաքականությունը, կարծում եմ, պետք է ունենա երկու հիմնական ուղղվածություն. **1.** պահպանել, մշակել և զարգացնել արևմտահայերենը, **2.** սկզբունքներ մշակել երկու գրականները հնարավորինս մերձեցնելու համար:

Արևմտահայերենով հաղորդակցության մեջ են տարբեր հաշվարկներով 1,5-2 մլն մարդ: Այդ թիվը օրեցօր նվազում է: Մեկ կենտրոնից ղեկավարվելու չգոյությունը, գերիշխող լեզուների ազդեցությունը, հայերենով կրթություն ստանալու անհետանկարը և էլի բազմաթիվ գործոններ Սփյուռքում ծանր պայմաններ են ստեղծում արևմտահայերենի պահպանման համար: Այս պայմաններում արևմտահայերենը կենդանի պահելու հիմնական կենտրոնը մնում է Հայրենիքը:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանում մեծ աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ. ստեղծվել են արևմտահայերենի դասագրքեր և ձեռնարկներ, հրատարակվել է արևմտահայերենի նոր բառարան, արևմտահայերենից պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի ատենախոսություններ, մի շարք բուհերում բացվել են արևմտահայերենի ուսուցման ընդհանուր և հատուկ դասընթացներ, ընթացքի մեջ է Սփյուռքի համար արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծումը, որ նախաձեռնել էր Սփյուռքի նախարարությունը, նոր ուսումնական տարում ԵՊՀ-ում կգործի արևմտահայերենի երկամյա մագիստրոսական ծրագիր: Բայց անելու դեռ շատ բան կա: Թույլ է, օրինակ, համագործակցությունը Սփյուռքի

հայերենագիտական կենտրոնների հետ, քիչ են փոխայցելությունները, լուծման դժվարություններ ունի ուսանողների փոխանակման խնդիրը, Հայաստանի հանրակրթական դպրոցներում համապատասխան և բավարար չափով չի ուսուցանվում արևմտահայերենը: Անհերքելի ճշմարտություն է, որ արևմտահայերենը պետք է պահպանել և զարգացնել ոչ միայն որպես զուտ լեզվական հարստություն, այլև որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործիք Սփյուռքում և Հայաստանում:

Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրը քննության առարկա է դարձել դեռևս 19-րդ դարի կեսերից՝ գրական լեզուների ձևավորման շրջանից սկսած: Ակտիվ քննարկումներ ծավալվեցին նաև 20-րդ դարասկզբին: Այսօր հարցը վերստին ասպարեզի վրա է, որովհետև նշմարվում են դրա լուծման նոր հնարավորություններ ու նոր գործոններ, ինչպիսիք են Սփյուռքի նախարարության և Սփյուռքին առնչվող գիտակրթական նոր կառույցների հիմնարկումը, Հայրենիք-Սփյուռք տնտեսական, մշակութային ակտիվ առնչությունները, փոխադարձ շփումներն ու այցելությունները, հարցի նկատմամբ ազգային-հասարակական աննախադեպ հետաքրքրությունը:

Մերձեցման հնարավորություններ առկա են լեզվական բոլոր մակարդակներում, հատկապես բառապաշարում: Երկու-երեք տասնամյակում արևմտահայերենից արևելահայերենին են անցել հազարից ավելի նոր բառեր ու բառիմաստներ: Մերձեցման բոլոր հնարավորությունները կարող են լինել քննարկումների առարկա:

Վերջին շրջանում «Մեկ ազգ, մեկ լեզու» կարգախոսով մերձեցման գլխավոր պայման ու գործոն է հռչակվում մեսրոպյան ուղղագրության վերականգնումը. ակնհայտ է, սակայն, որ

արևելահայերեն-արևմտահայերեն առնչություններում ուղղագրության տարբերությունը առկա տարբերությունների մի հատվածն է միայն և բնավ էլ ոչ հիմնական: Առավել մեծ տարբերություններ կան մեր լեզվի երկու ճյուղերի արտասանական համակարգերում ու քերականության մեջ: Այլ խնդիր է, որ հարցի ինչ-ինչ առումներ ու կողմեր կարող են քննարկվել՝ ի շահ երկու գրականների մերձեցման: Ընդ որում, այս կարգի բոլոր քննարկումները հենց սկզբից պետք է ընթանան մի կարևոր վերապահումով. ուղղագրության հարցը մասնագետների գործն է, և քաղաքական գործիչներն ու դիվետանտները հեռու պիտի մնան հարցը շահարկելու գայթակղություններից:

Ավարտելով խոսքս՝ ուզում եմ շեշտել հետևյալ միտքը. արդի լեզվաքաղաքականությունը իրականացնող կամ դրան մասնակից բոլոր օղակները՝ դպրոց թե լեզվի տեսչություն, բուհական ամբիոն թե գիտական կամ ուսումնական կենտրոն, անհատ թե կազմակերպություն, պետք է գործեն նպատակադիր ու հետևողական՝ համախմբված մի կենտրոնի շուրջ: Կառավարման առումով այդպիսի կենտրոն կարող է լինել ՀՀ նախագահին կամ Կառավարությանը առընթեր լեզվի բարձրագույն խորհուրդը: Յուրաքանչյուր օղակ պետք է ունենա գործի ու պատասխանատվության իր բաժինը և առաջնորդվի լեզվի գերակա շահով ու մեկ հիմնական սկզբունքով. այն է՝ լեզուն բացարձակ արժեք է, և նրան վերաբերող խնդիրները պետք է քննարկվեն ու լուծվեն ա՛յդ տեսանկյունից և ա՛յդ չափանիշներով:

1.3. ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ. ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ⁵⁸

Գրական լեզվի մշակման հարցերը մշտապես են եղել լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Եվ դա բնական է, քանզի լեզվական անընդհատ փոփոխությունների և լեզվի զարգացման ընթացքում ժամանակ առ ժամանակ խնդիր է առաջանում լեզվական իրողությունները կանոնակարգելու, գրական և խոսակցական լեզվի սահմանները հնարավորինս ճշգրտելու, լեզվական համապատասխան ձևերի ընտրությամբ ուղի հարթելու գրական լեզվի զարգացման համար:

Գործնականում լեզվի նորմավորման հարցերին այս կամ այն կերպ, այս կամ այն չափով առնչվել են բոլոր քերականները, ովքեր խոսք են ասել լեզվի զարգացման կամ լեզվի տարբերակային ձևերի մասին: Հարցը, սակայն, տեսական արծարծումների առարկա դարձավ ավելի ուշ՝ լեզու-խոսք, լեզվական համակարգ-լեզվի կառուցվածք փոխհարաբերությունների և հատկապես լեզվի գործառական ու տարբերակային ձևերի ուսումնասիրման առնչությամբ: Հարցի գիտական ուսումնասիրության գործում մեծ ծառայություններ ունեն ռուս և չեխ լեզվաբաններից Վ. Շչերբան, Վ. Վինոգրադովը, Գ. Վինոկուրը, Ս. Օժեգովը, Լ. Վեդենսկայան, Լ. Բոգդանովան, Ի. Գոլուբը և այլք: Հայ լեզվաբաններից հարցին անդրադարձել են Վ. Առաքելյանը, Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Թ. Ղարա-

⁵⁸ Տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն» հանդեսում, Եր., 2014, թիվ 2: Համառոտ տարբերակով գետեղվել է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» բուհական դասագրքում, Եր., 2016:

գյուլյանը, Լ. Եզեկյանը, Հ. Զաքարյանը, Զ. Աղաջանյանը և ուրիշներ:

Տարակարծություններ կան և՛ հարցի տեսական ըմբռնումներում, և՛ լեզվի կանոնարկման կոնկրետ չափանիշների նախընտրություններում: Բայց եղած տեսակետներում, այնուամենայնիվ, առանձնանում են որոշակի մոտեցումներ, որոնք հիմք են տալիս լեզվական նորմ հասկացությունը բնութագրելու մի քանի էական հատկանիշներով և նորմավորման չափանիշների համար սահմանելու որոշակի ընդհանրական սկզբունքներ:

Լեզվական նորմ հասկացությունը, լեզվական նորմի զարգացումը: Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության **համընդունված կանոններն** են: Լեզվի ձևավորման և պատմական զարգացման ընթացքում ստեղծվում ու մշակվում են օրինաչափություններ, որոնք ընդունելի և ընդհանուր են դառնում (համապարտադիր են) այդ լեզուն գործածող հանրության համար: «Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության կանոններն են, որ ընդունված են բոլորի կողմից»⁵⁹: Լեզվի նորմավորումը հասարակական և հոգեբանական պահանջ է: Դրա հիմնական նպատակը փոխադարձ ընկալման հասնելն է, իրար հասկանալի լինելը, հաղորդակցվելը:

Լեզվական կանոնը **կայուն** է որոշակի ժամանակահատվածի համար: Կանոնի այդ հատկանիշով է պայմանավորված լեզվական համակարգի կայունությունը: Առհասարակ լեզվական կանոնի կամ նորմի ձևավորումը և զարգացումը **հակասական** ու **բարդ գործընթաց** է:

Լեզուն **մի կողմից՝** ձգտում է պահպանելու մշակված, արդեն հաստատված կանոնը (նոր իրողությունները դժվար են մուտք

⁵⁹ **А. Радугин**, Русский язык и культура речи, М., 2004, с. 63.

գործում լեզվի համակարգ, դառնում հանրության սեփականությունը): Այս իմաստով՝ լեզուն պահպանողական է, ավանդապահ: Հանրալեզվաբանության հիմնադիրներից մեկը՝ Ճանաչված գիտնական Ե. Պոլիվանովը, նկատում է, որ լեզվի զարգացումը արտահայտվում է նրանով, որ այն հնարավորինս քիչ ենթարկվի փոփոխության: Կուլտուրական հանրության խնդիրը այն է, որ չարագացնի լեզվի փոփոխությունը: Որքան բարձր է հանրության քաղաքակրթական մակարդակը, այնքան ավելի քիչ է փոփոխվում լեզուն⁶⁰:

Մյուս կողմից՝ լեզվի բնականոն զարգացումը իր հետ օբյեկտիվորեն բերում է փոփոխություններ կամ տեղաշարժեր: Նորմավորման որոշակի չափանիշներ բավարարելու դեպքում դրանք անհրաժեշտաբար ամրագրվում են լեզվում՝ որպես լեզվագործածության նորմեր կամ կանոններ: Նշանակում է՝ լեզուն **հարաբերականորեն է կայուն**: Դա բխում է նրա՝ իբրև սոցիալական երևույթի բնույթից. լեզուն անընդհատ զարգացող, փոփոխվող իրողություն է: Ուղղախոսության և ուղղագրության մեջ փոփոխությունները առավելապես պայմանավորված են արտասանության և ուղղագրության մեջ ժամանակի ընթացքում կատարվող տեղաշարժերով, մասամբ նաև՝ օտար լեզուների ազդեցությամբ: Բառագիտական և շարահյուսական մակարդակներում նորմի փոփոխության հիմնական գործոնները հասարակական կյանքի զարգացումներն են, օտար լեզուների, ինչպես նաև լեզվի տարբերակային ձևերի (հայերենի դեպքում՝ գրական լեզվի երկու ճյուղերի՝ արևմտահայերենի և արևելահայերենի) ազդեցությունները:

Ձևաբանական մակարդակում դրանք առավելապես պայմանավորված են լեզվի ներկառուցվածքային փոփոխություններ-

⁶⁰ См. у Л. Богданова, Стилистика русского языка и культура речи, М., 2011, էջ 27:

րով՝ գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերությամբ, բարբառների ազդեցությամբ, լեզվի գործառական տարբերակների զարգացմամբ:

Այն, ինչ այսօր նորմ է, վաղը կարող է նորմ չհամարվել: Պատմական զարգացման ընթացքում լեզվում նույն իրողության դրսևորման համար ստեղծվում է այլ ձև (կամ ձևեր). նախկին նորմը կարող է չանհետանալ, բայց նրա կողքին առաջանում է նորը: Դա պայմանավորում է նորմի այնպիսի մի կարևոր հատկանիշը, ինչպիսին տարբերակայնությունն է՝ գուգահեռ ձևի գոյությունը: Այդ իսկ պատճառով երբեմն դժվար է այս կամ այն տեղաշարժը կամ փոփոխությունը միանշանակ գնահատել **ճիշտ է, սխալ է, մերժելի է** և նման այլ բնորոշումներով: Պետք է հաշվի նստել կատարված էական փոփոխությունների հետ և գնահատումներում գործածել ավելի ճկուն, ոչ «կատեգորիկ» բնորոշումներ, օրինակ՝ **թույլատրելի է, նախընտրելի է, հանձնարարելի է** և այլն: Դա չի խախտում նորմը, այլ այն դարձնում է ավելի նուրբ գործիք լեզվական միջոցների ընտրության հարցում: Լեզվի նորմավորմամբ չափից ավելի տարվելը հակասության մեջ է մտնում լեզվի «իրական կյանքի» հետ. «Անսահման նորմավորումը լեզվի համար աղետավոր է. այն ամլացնում է լեզուն՝ զրկելով նրան ճկունությունից»⁶¹ (Լ. Շչերբա):

Լեզվում էական՝ համակարգային փոփոխությունները, սակայն, կատարվում են մեծ ժամանակահատվածներում: Ապացույցներից է, օրինակ, այն փաստը, որ գրավոր հայերենը գոյության շուրջ 1500 տարիների ընթացքում անցել է զարգացման (այսինքն՝ քիչ թե շատ էական փոփոխությունների) երեք շրջափուլ: Կամ՝ հայերենի ուղղագրությունը էապես փոփոխության է ենթարկվել ընդամենը մեկ անգամ: «Ամեն լեզվի

⁶¹ Տե՛ս նույն տեղը, էջ 10:

մեջ,– գրում է Մ. Աբեղյանը,– լեզվական բոլոր իրողությունները (ֆակտերը), այսինքն հնչյունները, բառերի նշանակությունները և բառերի կապակցության, բառակազմության ու բառափոխության ձևերը որոշ օրենքներով միշտ և անընդհատ փոփոխվում են խոսողների բերանին խոսողների կամքից բխողովին անկախ: Այդ փոփոխությունը, սակայն, այնքան դանդաղ է կատարվում, որ խոսողների համար անզգալի է մնում. միայն առանձին անհատներ, որ սուր դիտողություն ունին և հետաքրքրվում են լեզվով, նույնպես և մասնագետ գիտնականները, նկատում են լեզվի մեջ իրենց կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները: Մարդկանց մեծ մասն ուշադրություն չի դարձնում իրենց խոսած լեզվի փոփոխությանը: Երկար ժամանակ և նույնիսկ դարեր անցնելուց հետո միայն՝ փոփոխությունն այնքան մեծ է լինում, որ լեզվի հին և նոր վիճակները խիստ տարբերվում են իրարուց»⁶²:

Ընդունված է ասել, որ լեզվի մեջ ամենից արագ փոփոխվող հատվածը բառապաշարն է, իսկ քերականական համակարգում փոփոխությունները տեղի են ունենում ավելի դանդաղ: Բայց նույնիսկ բառապաշարի հիմքը՝ բառային հիմնական ատաղձը, հաստատուն է, փոփոխվում է շատ դանդաղ:

Նորմը **համակարգային** երևույթ է և ունի իր **ենթահամակարգերը**: Օրինակ՝ հայոց լեզվի նորմը ունի իր ենթանորմերը՝ ըստ լեզվի տարբերակային ձևերի, ինչպես՝ արևմտահայերենի նորմ և արևելահայերենի նորմ, բանավոր և գրավոր խոսքի նորմեր, գրաբարի և միջին հայերենի կամ բարբառային խմբերի նորմեր և այլն: Այն, ինչ լեզվական այս կամ այն տարբերակում նորմ կամ կանոն է, այլ տարբերակ(ներ)ում կարող է նորմ չլինել: Օրինակ՝ արևմտահայերենի բառապաշարային համակարգի միավորներ են **հոս**, **ասանկ**, **էրիկ**, **աղեկ**, **աղվոր**

⁶² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 11-12:

և այլն, բայց դրանք դուրս են արևելահայերենի լեզվական կանոնի շրջանակներից: Կամ՝ արևելահայ բարբառներին հատուկ **ըստեղ, ընչի, հիմա, վռագ** հնչյունափոխական և բառային տարբերակները բնավ չեն կարող լեզվական կանոն համարվել գրական լեզվի համակարգում կամ արևմտահայ բարբառներում:

Լեզվական նորմը չի հորինվում: Կանոնները ձևավորվում են լեզվի բնականոն զարգացման արդյունքում: Նորմավորումը կամ, ավելի ստույգ, նորմերի կանոնակարգումը իրականացնում են մասնագետները հատուկ որոշումների միջոցով: Դրանք արձանագրվում են բառարաններում, տեղեկագրերում, լեզվի տեսչության հրատարակած տեղեկատու ժողովածուներում և այլուր ու ըստ ամենայնի ներկայացվում հանրությանը:

Լեզվի նորմավորման չափանիշները: Հարց է առաջանում՝ երբ է լեզվական այս կամ այն կանոնը դառնում օրինաչափություն, ինչ սկզբունքով պետք է առաջնորդվել տեղաշարժը որպես լեզվական կանոն արձանագրելիս: Այլ կերպ ասած՝ որո՞նք են լեզվի **նորմավորման** կամ **կանոնակարգման չափանիշները**: Մեզանում, ինչպես վերը նշվեց, հարցին հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Զարիկ Աղաջանյանը: Ի մի բերելով հարցի մասին օտարագգի և հայ լեզվաբանների կարծիքները՝ նա լեզվի նորմավորման օրենքներ կամ չափանիշներ է սահմանում հետևյալները. «Լեզվի նորմավորումը պայմանավորված է՝ ա) տվյալ երևույթի լեզվի համակարգին համապատասխան լինելու, բ) հաղորդակցության մեջ մշտապես և ընդհանուրի կողմից օգտագործվելու, գ) հասարակության կողմից հավանության արժանանալու, դ) կանոնական, օրինական ճանաչում ստանալու սկզբունքների հաշվառումով: Լեզվի նորմավորման մեծագույն ազդակը նրա ձգտումն է

դեպի ընդհանրացում և միօրինակացում»⁶³: Այլ լեզվաբաններ առաջնությունը տալիս են մեկ կամ մյուս սկզբունքին և կամ հավելում այլ չափանիշներ ու գործոններ:

Մեր կարծիքով՝ լեզվի նորմավորման չափանիշները կարելի է սահմանել հետևյալ կետերով.

1. Լեզվական նորմի բնորոշ նշաններից են լեզվական միջոցի գործածականությունը, հասարակական ճանաչումը և ընկալումը: Լեզվական այս կամ այն իրողությունը կանոնի վերածվելու համար անպայման պետք է ընդունվի հասարակության կողմից, տարածում գտնի հանրության մեջ: Դա հնարավոր է տևական գործածության ու աստիճանաբար տարածվելու շնորհիվ: Իսկ լեզվական իրականության տարածվելու, ընկալվելու և հասարակական ճանաչում ձեռք բերելու հիմնական պայմանը լեզվական գործունեության բուն կոչմանը ծառայելն է, որ է՝ հաղորդակցումը: Մանուկ Աբեղյանի համոզմամբ՝ լեզվի կանոնարկման խնդիրները, լեզվական իրողության պահպանությունը կամ կորուստը պետք է դիտարկվեն այս տեսանկյունից և այս առումներով: Լեզվական փոփոխությունների կամ տեղաշարժերի համար առանձնացնելով մի քանի հիմնական պատճառներ՝ «անհատների գիտակցաբար» միջամտությունը, «օտար լեզուների ազդեցությունը» և մանավանդ «ակամա և անգիտակից» փոփոխությունները, որոնց «շարունակ ենթակա են լեզվի բոլոր իրականությունները», որ ի վերջո լեզվի բնականոն զարգացման ճանապարհն է, Աբեղյանը լեզվի կանոնարկման էությունը հանգեցնում է միմյանց հասկանալի լինելու նպատակահարմարության պահանջին: «...Փոփոխության իսկական պատճառն ուրիշ բան չէ,– գրում է Աբեղյանը,– բայց եթե լեզվի սովորական գործունեությունը,

⁶³ Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 33:

որով սովորում և գործածում ենք լեզուն: Այստեղ արդեն չկա որևէ դիտավորված ներգործություն լեզվի վրա, որևէ ուրիշ նպատակ, բացի վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին: Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրականությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը»⁶⁴:

Նպատակահարմարության և տարածված լինելու հիմքով են, օրինակ, վերջին տարիներին մեր լեզվի բառապաշարում հաստատվել հազարավոր նոր բառեր և բառիմաստներ՝ **թափանցիկ** (վերահսկելի, արդար), **զամբյուղ** (սպառողական զամբյուղ), **համացանց**, **ընտրախախտում**, **հավաստագիր**, **ընտրազանգված**, **հեռուստախաղ**, **քարոզարշավ**, **ինքնիրավչություն**, **հրադադար**, **այլընտրանքային** և այլն: Ավելին, շատ գործածվելու և տարածվելու հետևանքով երբեմն լեզվական կանոնի և օրինաչափության ուժ են ստանում նաև տվյալ նորմի տեսակետից բառային սխալ տարբերակներ, բառաձևեր ու քերականական կառույցներ, ինչպես՝ **արձագանք** (փոխ.՝ արձագանգ), **երկխոսություն** (փոխ.՝ երկախոսություն), **կայանալ** (փոխ.՝ տեղի ունենալ), **սնօրինություն** (дирекция իմաստով, փոխ.՝ **սնօրենություն**), **շերամ** (փոխ.՝ **շերաս**), **տանից** (փոխ.՝ **տնից**) և այլն:

Ասվածը բնավ չի նշանակում, որ լեզվական իրողությունը եթե տարածում գտավ, անպայման պիտի դառնա նորմ, ճանաչվի որպես լեզվական կանոն: Բանավոր խոսակցական հայերենում գործածական են շատ իրողություններ, որոնք տեղ չու-

⁶⁴ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 12-13:

նեն և առաջիկայում չեն էլ կարող տեղ ունենալ գրական լեզվի համակարգում: Դրանք գոեհկաբանություններ են, հասարակաբանություններ, օտար բառեր, քերականական անճիշտ ձևեր ու կառույցներ: Լավագույն օրինակը խոսակցականում գործածական դարձած՝ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի բարբառային ձևն է (գործածվում է նաև որպես հանգույց)՝ **գնում ա, երգում ա, լավ ա, նա լյա, երեխա լյա** և այլն: Նախ՝ այդ **ա**-ն խիստ անբարեհունչ է **եմ** օժանդակ բայի համապատասխան ձևի համեմատությամբ (**գնում է, երգում է, լավ է, նա է, երեխա է**): Բացի այդ՝ **ա**-ի դեպքում ակնհայտորեն խախտվում է հարացույցի և՛ արտասանական, և՛ ձևային կազմը: Ներկայի շարքում՝ **եմ [էմ], ես [ես], ա [ա]** (փոխ.՝ **է**), անցյալի շարքում՝ **էի [էի], էիր [էիր], էր [էր]**: Ժխտական ձևերում **եմ**-ի դեպքում գործում է հստակ նորմավորված հարացույց՝ **չեմ, չես, չի (չէ)**: Այնպես որ, այդ **անախորժ ա**-ն (Հր. Աճառյանի բնորոշումն է) վերականգնելու բոլոր փորձերը առայժմ դատապարտված են և հակասում են լեզվի զարգացման ընդհանուր տրամաբանությանը:

2. Համապատասխանությունն լեզվի կառուցվածքին, լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին: Լեզուն համակարգ է, որի տարրերն ու բաղադրիչները սերտ առնչությունների ու փոխադասարկված կապի մեջ են: Այդ կապը ամրագրված է որոշակի և համեմատաբար կայուն օրինաչափություններով: Դա նշանակում է, որ զարգացման գործընթացում տեղաշարժերը էական հակասության մեջ չեն կարող մտնել գործող օրինաչափությունների հետ, քանի որ կխախտվի լեզվի բուն կառուցվածքը: Լեզվական տեղաշարժերը հիմնականում օբյեկտիվորեն հանգում են այդ օրինաչափությունների հաստատմանը: Շատ բնորոշ օրինակ են հայերենի բայի խոնարհման համակարգում վերջին տասնամյակներում կատարվող տեղաշարժերը: Նշենք դրանցից մեկ-երկուսը: Մի շարք

անկանոն բայերի անցյալ կատարյալի գուգաձևերից գրական հայերենում գնալով սկսում են գերակշռող դառնալ կանոնավոր բայերին բնորոշ կամ դրանց մոտ տարբերակները, ինչպես՝ **բերի//բերեցի→բերեցի, դրի//դրեցի→դրեցի, տվի//տվեցի→տվեցի** և այլն: Կամ՝ հայերենի բայական համակարգում գործող կանոն է հրամայականի դրական ձևերից արգելականի կազմությունը (**գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա**). սոսկածանցավոր և պատճառական բայերի արգելականի գուգաձևերից գրական լեզվում այսօր ակնհայտորեն հաստատվել են այդ ընդհանուր օրինաչափությամբ ձևավորված կազմությունները (**մի՛ մտնիր//մի՛ մտիր→մի՛ մտիր, մի՛ մոտենար//մի՛ մոտեցիր→մի՛ մոտեցիր, մի՛ խոսեցնիր//մի՛ խոսեցրու→մի՛ խոսեցրու**) և այլն: Առաջանում են նաև, ինչպես վերը տեսանք, առանձին շեղումներ, բայց դրանք որևէ էական դեր չեն կատարում լեզվի ընդհանուր զարգացման գործընթացում:

3. Լեզվական կանոնի հաստատման մեջ կարևոր դերակատարում ունի նաև լեզվական ավանդույթը: Տարիներով, ինչո՞ւ չէ, նաև դարերով հաստատված լեզվական կանոնը պահպանվում է երբեմն ավանդույթի ուժով. դժվար է լինում հրաժարվել դրանից գիտականորեն տրվող համոզիչ փաստարկումների դեպքում անգամ: Դա նաև հոգեբանական խնդիր է. ավանդախախտությունը հասարակական և անհատական հոգեբանության բնորոշ գիծ չէ: Օրինակ՝ մոտ մեկ տասնամյակ առաջ ՀՀ լեզվի պետական տեսչության որոշումը՝ **ԶԼՄ** (Զանգվածային լրատվության միջոցներ) հապավումի փոխարեն գործածել **ԶՏՄ**-ն (Զանգվածային տեղեկատվության միջոցներ)⁶⁵, այդպես էլ կիրառություն չգտավ, քանի որ նախկին տարբերակը ավանդույթի ուժով հաստատուն գործածություն ուներ մեզանում: Ավանդականությամբ և սովորույթի ուժով են պայմանա-

⁶⁵ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 227:

վորված ուղղագրական բազմաթիվ նորմեր, մասնավորապես ձայնեղ բաղաձայնների ուղղագրությունը, մեծատառերի գրությունը, քերականական մի շարք իրողությունների գործածությունը և այլն:

Էդուարդ Աղայանը, լեզվի կանոնական մակարդակը (կանոնը) համարելով խոսքային միավորների ընդհանուր և վերացարկված լեզվական համակարգ, որը «գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ», հակված է լեզվի տարրերի ու կանոնների նկարագրությունը վերացական հայեցակետով հանգեցնելու այն գործոնների նկարագրությանը, որոնք ավանդական են, պատմականորեն ձևավորված և պայմանական որակներ ունեն: «Այն, որ արդի գրական հայերենի կանոնական համակարգում,– գրում է նա,– ճիշտ է **մարդու** և ոչ՝ **մարդի**, որ է հնչյունն ունի գերազանցապես բաց արտասանություն և ոչ՝ փակ, ուստի այդ արտասանությունն է ճիշտ, արդարանում է միայն լեզվի ավանդականությամբ»⁶⁶: Քննարկելով բայի խոնարհման համակարգում «անկանոն» ձևերի կանոնական գործածությունը (**կերա-ուտեցի**) գրական լեզվում՝ Գ. Սևակը դրա հիմնական նախապայման է ընդունում սովորույթի ուժը: «Որովհետև այսպես է ընդունված լեզվի մեջ,– գրում է նա,– այդ է թելադրում մեր լեզվի ավանդությունը, որ ճիշտ կլինե՞ր կոչել «նյութի պահպանման օրենք»»⁶⁷: «Որքան էլ լեզվական նորման սահմանվում է հրահանգի, կարգադրության, երբեմն նաև պարտադրանքի թույլ աստիճանով,– շարունակում է Լ. Եզեկյանը,– այնուամենայնիվ այն հենվում է սովորույթի վրա, գործածության սովո-

⁶⁶ Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 15-16:

⁶⁷ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 28:

րությի և ընդունված ձևերի վրա»⁶⁸: Գ. Սևակը, սակայն, անում է նաև հաջորդ քայլը. ավանդականությունը որքան էլ հզոր գործոն է, նկատում է նա, այնուամենայնիվ միակը չէ, և հաճախ ավանդախախտությունն է առաջ մղում լեզվի զարգացումը և պարտադրում նորմավորման գործառություններ: «Ավանդությունը խոշոր գործոն է լեզվի մեջ, սակայն ոչ ամենակարող և միահեծան.... Իհարկե, ճիշտ է այն պնդումը, թե մենք այսպես ենք խոսում (և գրում), որովհետև այսպես են խոսել (և գրել) մեր ծնողները, որովհետև այդպես են խոսում (և գրում) ուրիշները, այլապես մենք չենք հասկանա ոչ միայն մեր ծնողներին, այլև մեր հասակակիցներին: Սակայն ավելի ճիշտ կլինի, եթե ասենք, թե մենք խոսում (և գրում) ենք այնպես և միաժամանակ ոչ այնպես, ինչպես խոսել (և գրել) են մեր ծնողները, ինչպես խոսում (և գրում) են ուրիշները: Այս «այնպես» հրամայականորեն պարտադիր է ավանդության անողոր օրենքի համաձայն, ժառանգության անխուսափելի օրենքի համաձայն, սակայն այդ օրենքի կողքին, նրա հետ միասին և նրանից անջատ գոյություն ունի և մի ուրիշ օրենք՝ նույնքան կարևոր և նույնքան պարտադիր: Այդ երկրորդ օրենքը առաջինի բացասումն է, նրա հակադրությունը. սա ավանդախախտությունն է, որ ճիշտ կլինե՞ր կոչել «նյութի նորոգման օրենք»: Այս երկու տարամերժ օրենքները գործում են յուրաքանչյուր լեզվի մեջ և առաջ տանում նրա զարգացումը»⁶⁹:

4. Այլ չափանիշներ: Գործում են նաև չափանիշներ, որոնք առավել բնորոշ են լեզվական այս կամ այն մակարդակին: Այսպես՝ **նորակագմություններում** (բառային մակարդակ) ոչ միայն գործում է բառաբարդումներում հայերենին հատուկ

⁶⁸ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007, էջ 95:

⁶⁹ Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 28-29:

բառակազմական ներքին օրինաչափությունը (բաղադրիչների լրացում-լրացյալ հարաբերությունը), այլև կարևոր գործոններ են դառնում մի շարք այլ չափանիշներ՝

ա. Հասկացության բովանդակությունը հստակորեն արտահայտելը: Չափանիշը առավելապես վերաբերում է նոր ստեղծված բառերին: Օրինակ՝ **ընտրազանգված, համաներում, տարածաշրջան** բառերը հստակորեն արտահայտում են իրենցով նշանակվող հասկացությունների իմաստները և ուստի արագ հաստատվեցին լեզվի բառապաշարում: Հակառակը՝ **արհեստավարժ, սպայանոց, երաժշտանոց, հրասայլ** բառերը կարծես այդ հատկանիշը չունեն և դժվարությամբ են մուտք գործում լեզվի բառապաշար: Հնից ավանդված շատ բառերում այդ հատկանիշը չի գիտակցվում կամ հստակորեն արտահայտված չէ: Օրինակ՝ **հրացան** բառը իր նախնական իմաստով նշանակել է **հուր ցանոդ, ատրճանակ**-ը՝ **կրակով սպանել**, սակայն այսօր դրանք ընկալվում են այլ իմաստներով, բայց դա չի խանգարում հաղորդակցմանը:

բ. Բառի տարածվելու և համագործածական դառնալու տեսակետից չափազանց կարևոր են բառի նաև **ձևային-արտասանական հատկանիշները:** Նոր կազմված կամ փոխառյալ նորաբանությունը նախընտրելի է, որ լինի կարճ և բարեհունչ: Օրինակ՝ **այլուրեքություն** բառը փոխարինելու է գալիս օտար **ալիբի** բառին: Սակայն առաջինը ակնհայտորեն երկար է ու անբարեհունչ, թեև հասկացության իմաստը կարծես հստակ է արտահայտում, հայ մարդու համար հասկանալի է և ընկալելի: Օտար բառի արտասանությունը չի հակասում հայերենի արտասանական հատկանիշներին. չկա բաղաձայնների կուտակում, ձայնային զուգորդումները անբնական չեն և այլն: Հայերեն համարժեքը տևական ժամանակ է՝ տերմինային համակարգում չի դառնում ընդհանուր գործածական: Կամ՝ նույն պատճառներով **կիլոգրամ, կիլոմետր, ֆուտբոլ, լավա**

բառերի փոխարեն բնավ չի խրախուսվում **հազարագրամ, հազարամետր, ոտքագնդակ, հրափրփուր** արտահայտությունների գործածությունը:

Եթե **ֆիզիկա, մաթեմատիկա, տերմին, բյուջե, կադաստր, ալիմենտ** և նման փոխառությունները հայերենում դյուրին են արտասանվում և գրվում, ապա ոչ միայն հայերենով չեն ստուգաբանվում, այլև դժվար արտասանվող ու գրվող, դժվարընկալելի, ուստի և դժվարհիշելի են **տետրաէդր, կոնգրուենտ, կոմպլանսար, իդենտիֆիկացիա** և նման բառերը: Դրանց հայերեն համարժեքները նախընտրելի են՝ **քառանիստ, համընկնելի, համահարթ, նույնականացում**:

գ. Նոր բառը, լինի դա փոխառություն թե նորակազմություն, պետք է ունենա **գործառական ճկունություն, արտադրողականություն**: Երբեմն փոխառյալ բառը լինում է ավելի արտադրողական, ունենում է բառակազմական ճկուն հնարավորություններ, հեշտ է գործածվում բառակապակցություններում: Օրինակ՝ **բիզնես** բառի համարժեք է առաջարկվում **գործարարություն**-ը, որը, սակայն, որոշչային կիրառություններում բնավ էլ չունի իր օտար տարբերակի գործառական հնարավորությունները. չեն հնչում **գործարար(ական) ծրագիր (բիզնես ծրագիր), գործարար(ական) քարտ (բիզնես քարտ), գործարար(ական) փաթեթ (բիզնես փաթեթ)** կամ **գործարարական նախագիծ** արտահայտությունները: Իսկ ինչպե՞ս վերակոչել **Հայբիզնեսբանկ**-ը: Նմանապես գործառական ճկունություն չունեն, օրինակ, **բանկ**-ի փոխարեն **դրամատուն**-ը (**Հայխնայդրամատուն**←**Հայխնայբանկ**), (**դրամատնային**←**բանկային**), **կոռուպցիա**-ի փոխարեն **կաշառում**-ը (**հակակոռուպցիոն, կոռումպացված**), **ռադիո**-ի փոխարեն **ձայնասփյուռ**-ը (**ռադիոընդունիչ, ռադիոֆիզիկա, ռադիոհեռագիր, ռադիոսիրող, ռադիոհեռուստատեսություն**) և այլն:

դ. Նորմավորման չափանիշ կարելի է համարել նաև **լեզվական նշանի** (բառ, բառաձև, քերականական կառույց և այլն) **գործածությունը ճանաչված և հեղինակություն վայելող անձի կամ սոցիալական այս կամ այն խմբի կողմից**: Երևույթը դարձյալ առավել հատուկ է բառային կազմին. այս ճանապարհով են բառապաշար մուտք գործում հեղինակային նորակազմությունները, որոնք ստեղծում և շրջանառության մեջ են դնում լեզվական նուրբ զգացողություն ու ճաշակ ունեցող գրողը, լեզվաբանը, լրագրողը, պետական, քաղաքական կամ մշակութային գործիչը և այլք, օրինակ՝ **ամենազգաստ, ամենազդեցիկ** (Նարեկացի), **ոսկեհուր, ոսկեփրփուր** (Թումանյան), **արևահամ, հեզաճկուն** (Չարենց), **առաջապահ, նշանոց, վերջապահ** (Աբեղյան), **գետանց, կրակահերթ, շրջանցել, փոխհրաձգություն** (մամուլ) և այլն: Նոր բառեր ստեղծելու համար լեզվական ճաշակ ու զգացողություն է պետք: Հաճախ նոր ստեղծված ոչ միայն դիպվածային բառերը, այլև հանրական նորակազմությունները չեն գոհացնում հասարակության լեզվական պահանջները և դուրս են մնում գործածությունից, նույնիսկ եթե կերտված են ճանաչված հեղինակի կողմից: Օրինակ՝ ի տարբերություն Մ. Աբեղյանի ստեղծած մի շարք հաջող կազմությունների՝ այդպես էլ հայերենի բառապաշար չանցան նրա իսկ կերտած ռազմական առանձին տերմիններ՝ **ձիգ** (выстрел), **բաժնյակ** (дивизион), **ինքնեկ** (автомат), **մեկնազեն** (партизан): Անհաջող նորակազմություններ են նաև հետևյալները՝ **անասնաշենք / անասնոց** (=գոմ), **երաժշտանոց** (=կոնսերվատորիա), **կորիզաբան** (=ատոմագետ), **կորիզային բնագիտություն** (=միջուկային ֆիզիկա), **հանրակառք** (=տրամվայ), **հրասայլ / մարտասայլ** (=տանկ), **հրասայլավոր / հրասայլորդ** (=տանկիստ), **սպայանոց / սպայախումբ** (=շտաբ), **ուժանիվ** (=հեծանիվ) և այլն, որոնք, ըստ էության, չեն բավարարում նորմավորման մյուս չափանիշները:

Լեզվական նորմը մշակված և ամրակայված լեզվական կանոնն է **լեզվի բոլոր մակարդակներում**: Այս մոտեցմամբ էլ առանձնացվում են լեզվի հիմնական նորմերը՝ **արտասանական, բառապաշարային, քերականական**: Այդ մակարդակներում առանձնացվում են նաև **ենթանորմեր**, ինչպես, օրինակ՝ ուղղախոսության և ուղղագրության նորմեր, բառակազմական նորմեր, նախադասության կազմության օրենքներ ու օրինաչափություններ և այլն: Դրանցից յուրաքանչյուրը բնորոշվում է նաև նորմավորման իրեն յուրահատուկ չափանիշներով, բայց դա արդեն առանձին ուսումնասիրության նյութ է:

Այսպիսով, լեզվական իրականությունների նորմավորման դրսևորումները որքան էլ բազմազան են, այնուամենայնիվ դրանցում առանձնանում են որոշակի չափանիշներ, որոնք հետազոտողի համար կարող են հիմք դառնալ լեզվական տեղաշարժերը գնահատելու, մշակելու և նորմատիվ քերականության դասագրքերում դրանք արձանագրելու համար: Այդ գործընթացը պետք է կատարվի պարբերաբար, հակառակ դեպքում էական խզում կարող է առաջանալ լեզվի խոսակցական և գրական տարբերակների միջև, ինչը իր հերթին կարող է ներագդել գրական լեզվի բնականոն զարգացման ընթացքի վրա:

1.4. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա) ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ⁷⁰

2006 թ. հրատարակվեց վեցերորդ տերմինաբանական տեղեկատուն, որը ամփոփում է նախկին տերմինաբանական կոմիտեի և նրան հաջորդած՝ Հայերենի բարձրագույն խորհրդի գործող որոշումները՝ անհրաժեշտ մեկնաբանություններով: Այդ որոշումները ունեն հայոց լեզվի ուղղագրությունը, ուղղախոսությունը, կետադրությունը և տերմինաշինությունը, մասամբ նաև քերականությունը նորմավորող նշանակություն և պարունակում են անհրաժեշտ օրինակներ ու բառացանկեր:

Նախորդ տեղեկատուի հրատարակումից (1988 թ.) հետո ընդունված որոշումների մի մասն այս տեղեկատուում ընթերցողին է ներկայացվում առաջին անգամ⁷¹:

Բազմաթիվ առողջ և գիտականորեն միանգամայն հիմնավորված որոշումների կողքին, ցավոք, նոր նախագծերով ընդունվել են կամ նախորդ տեղեկատուներից մեխանիկորեն փոխանցվել են և կամ փոփոխության են ենթարկվել նաև այնպիսի որոշումներ, որոնք հիմնականում օբյեկտիվ պատճառներով (հասարակական կյանքի տեղաշարժեր, օտար լեզուների ազդեցության գոտիների փոփոխություն, լեզվի զարգացման ներքին միտումներ և այլն) չեն արտահայտում արդի գրական

⁷⁰ Տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» հանդեսում, Եր., 2016, թիվ 3:

⁷¹ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006: Այսուհետև շարադրանքում՝ Տեղ. և էջը:

հայերենի զարգացման և կանոնարկման հիմնական միտումները: Դրանք վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ ուղղախոսությունից, ուղղագրությունից մինչև շարահյուսական կառույցներ ու կաղապարներ:

ՈՒՂՂԱՄՈՍՈՒԹՅՈՒՆ: Այս ոլորտն ընդգրկող որոշումներից առավելապես քննարկման առարկա կարող են լինել ձայնեղ բաղաձայնների և ձայնավորական զուգորդումների արտասանությանը, տառադարձությանը, ինչպես նաև օտար բառերի շեշտադրությանը վերաբերողները:

• **Ձայնեղ բաղաձայնների արտասանությունը:** 1969 թ. Հ. Բարսեղյանի նախագծով որոշում ընդունվեց **բ**-ից, **դ**-ից և ձայնավորներից հետո **բ**, **գ**, **դ**, **ձ**, **ջ** տառերի արտասանության մասին: Լեզվում տեղի էին ունեցել ակնհայտ տեղաշարժեր, և անհրաժեշտություն կար բաղաձայնների արտասանությունը աստիճանաբար գրությանը մոտեցնելու և առաջացած ուղղագրական սխալները վերացնելու հանձնարարականների: Հիմնական սկզբունքը ճիշտ էր ընտրված. բոլոր այն դեպքերում, երբ նշված բաղաձայնների արտասանության մեջ առկա է երկակիություն, պետք է նախապատվությունը տալ դրանց գրային արտասանությանը: Բայց ահա բառաշարքերի և օրինակների ընտրության և կատարված առանձին նշագրումների վերաբերյալ որոշման նախագիծը մեր օրերում դուռ է բացում քննարկումների և անհամաձայնությունների: Հիմնական պատճառը թերևս վերջին տասնամյակներին (նկատի ունենք որոշմանը հաջորդած հիսնամյա ժամանակաշրջանը) եռաշարք բաղաձայնների արտասանության մեջ կատարված տեղաշարժերն են: Այսպես. ներկայացվող բառացանկերում իբրև երկակի արտասանություն ունեցող (**բ**, **գ**, **դ**, **ձ**, **ջ** ձայնեղներն արտասանվում են նաև որպես խուլեր՝ **փ**, **ք**, **թ**, **ց**, **չ**) բառեր են մատնանշվում նաև այնպիսիք, որոնց գրային արտասանությունը այսօր երկբայության առիթ չի տալիս: Օրինակ՝ ա) **Թորգոմ**-

Թոր[ք]ում, արգելք-ար[ք]ելք, մեներգ-մեներ[ք], մարգագետին-մար[ք]ագետին, գուգահեռ-գու[ք]ահեռ, գուգընթաց-գու[ք]ընթաց, հեգ-հե[ք], մոգ-մո[ք], մոգպետ-մո[ք]պետ, նվագ-նվա[ք], մոգական-մո[ք]ական, ք) աճուրդ-աճուր[թ], արդի-ար[թ]ի, երիտասարդ-երիտասար[թ], թակարդ-թակար[թ], կախարդ-կախար[թ], մակարդակ-մակար[թ]ակ, նավասարդ-նավասար[թ], վառող-վառո[թ], գ) աջակցել-ա[չ]ակցել, հաջողություն-հա[չ]ողություն և այլն: Արդի գրական հայերենի կենդանի արտասանության մեջ հիշված բառերը գործածվում են գրային արտասանությամբ գրեթե առանց բացառության, և դրանք արտասանական տարբերակներով ներկայացնելը այսօր ժամանակավրեպ է և ոչ գիտական: Եվ հակառակը. բերված օրինակներում կան բառեր, որոնք այսօր չունեն գրային արտասանություն՝ որպես տարբերակ, ինչպես՝ **որ[ջ]** (Տեղ., 199), **միր[զ]** (Տեղ., 197):

● **Հապավումների գործածության մասին:** Վերջին տասնամյակներին խորհուրդը ընդունել է որոշում «Հայերենի տառային հապավումների մասին»⁷²: Որոշմամբ փորձ է արվում վերացնելու հատկացուցչի պաշտոնում տառային հապավումների մեկ **ի** հոլովական վերջավորությամբ, մեկ առանց դրա գործածելու գուգահեռությունը: Նշվում է, որ տառային հապավումը հատկացուցչի պաշտոնում ուղիղ է գործածվում, եթե չի արտասանվում իբրև սովորական բառ, այլ «կարդացվում է տառերի (ամբողջական կամ մասնակի) անկախ հեգումով» (Տեղ., 190): Բերված օրինակները, սակայն, ենթադրել են տալիս, որ տառային որոշ հապավումների արտասանությունը կանոնական չէ, շեղվում է գրական լեզվի արտասանական նորմերից, ինչպես՝ **ԱՄ[ը]Ն**, **Խ[ը]Ս[ը]Հ[ը]Ս[ը]**. հնարա-

⁷² «Հայերենի տառային հապավումների գործածության մասին» որոշման նախագիծը կազմել են Գ. Ջահուկյանը և Հ. Բարսեղյանը: Հաստատվել է տերմինաբանական կոմիտեի 1975 թ. նոյեմբերի նիստում (տե՛ս Տեղ., 203):

վոր է՝ որոշման նախագիծը կազմելիս արտասանական այս տարբերակները գործել են, սակայն մեր օրերում այդպիսի արտասանությունը գրական լեզվի ոգուն և կանոններին խորթ է: Ճիշտ և հանձնարարելի է՝ ԱՄ[ը]Ն[ը], Խ[ը]Մ[ը]Հ[ը]Մ, և դրան համապատասխան՝ հատկացուցչի պաշտոնում գրավոր խոսքում հանձնարարելի են ուղիղ ձևերը՝ ԱՄՆ *Կոնգրես*, ԽՄՀՄ *բնակչությունը* և այլն: Ըստ որում, դրանք արտասանվում են այնպես, ինչպես գրվում են:

● **Օտար բառերի շեշտադրությունը:** 1960-ական թթ. արդեն բառարաններից և լեզվի գործածության ցանկացած ոլորտից կարելի էր օրինակներ քաղել՝ ցույց տալու համար, որ հայերենում ոչ միայն անձերի օտար հատուկ անունները և տեղանունները, այլև օտար հասարակ անունները գործնականում պահում էին հայերենին խորթ իրենց մայրենի շեշտադրությունը: Տերմինաբանական կոմիտեն որոշման նախագիծ է մշակում «Ռուսական և օտարազգի հատուկ անունների շեշտադրության մասին»: Որոշման մեկնաբանություններում կարդում ենք. «Օտար շեշտադրությունը համարելով հայերենի հնչերանգին խորթ, նրա խոսքի առոգանության ու ռիթմի ազգային բնույթը խաթարող երևույթ՝ տերմինաբանական կոմիտեն իր որոշումը սահմանափակել է հատուկ անձնանունների վերաբերյալ՝ այն էլ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևերում, այսպես՝ **Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Չիկոբա՛վա**, բայց՝ **Լերմոնտովի՛, Մայակովսկո՛ւ, Չիկոբավայի՛**» (Տեղ., 185): Անցել է ավելի քան հինգ տասնամյակ: Արտասանական տեղաշարժերը կատարվել են ի շահ օտար շեշտադրության: Վիճակագրական բոլոր տվյալներով՝ կենդանի լեզվում օտար և՛ հատուկ, և՛ հասարակ անուններում ու դրանց թեքված ձևերում գործում է փոխատու լեզվի շեշտադրությունը: Այդ ծավալումների դեմ որոշումը ունի փաստարկումներ, որոնք այնքան

Էլ հիմնավոր ու համոզիչ չեն: Հարաշեշտությունը, որը գրաբարի հնչյունական հատկանիշներից էր, մասամբ բնորոշ է նաև արդի գրական հայերենին. հայերեն մի շարք բառերում շեշտը վերջնականկային չէ, ինչպես՝ **մա՛նավանդ, մի՛ թե, գրե՛թե, մի՛միայն, ո՛րերորդ, քանի՛ երորդ, ո՛րևէ** և այլն: (Արևմտահայերենում երևույթը ավելի շեշտված դրսևորումներ ունի՝ **ի՛նչպես, ի՛նչու, հավա՛նաբար, միա՛նգամայն, միա՛սնաբար** և այլն): Հետևաբար դժվար է պնդել, որ այդ շեշտադրությունը խորթ է հայերենի հնչերանգին կամ խաթարում է նրա խոսքի առոգանության ու ուղիղի ազգային բնույթը: Հարցի վերաբերյալ շատ հետաքրքիր դիտարկում է արվում հայերենի կանոնարկման ընդհանուր սկզբունքներում. որոշման մեջ կարդում ենք. «Եթե հայերենի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս, այդ դեպքում բառի հայերեն ձևավորումը ըստ հնարավորին պետք է մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը» (Տեղ., 23): Արդի հայերենը այդ հնարավորությունը միանգամայն ընձեռում է. մնում է կատարել հաջորդ քայլը՝ բառի հայերեն ձևավորումը ըստ հնարավորին մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը, որը նաև կենդանի լեզվի պահանջն է: Բացի այդ՝ եթե որոշումը վերապահություն է անում հատուկ անձնանունների վերաբերյալ՝ հնարավոր համարելով անվան օտար շեշտադրությունը պահպանել միայն նրա ուղիղ ձևերում, և դա չի խաթարում հայերեն խոսքի առոգանության ու ուղիղի ազգային բնույթը, ապա նույն վերապահությունը ինչո՞ւ չի կարող տարածվել առհասարակ բոլոր օտար բառերի վրա: Մանավանդ որ բնագրի շեշտադրությունը կենդանի լեզվում նույնքան հաջողությամբ գործում է նաև հասարակ օտար անուններում (**Ֆի՛զիկա, մաթեմա՛տիկա, կիբեռնե՛տիկա, օ՛պերա, օկտա՛վա, կոնսերվատո՛րիա** և այլն) և օտար հատուկ ու հասարակ անունների թեքված ձևերում (**Լե՛րմոստովից, Ֆրա՛նսիայի, Ֆի՛զիկայի, մաթեմա՛տիկայից, կիբեռնե՛տիկայով, կոնսերվատո՛րիայից** և այլն): Կարելի է

խոսել նաև այդ բառերի արտասանության մեջ առկա կրկնաշեշտության երևույթի մասին. թույլ շեշտվում է նաև վերջավանկը, բայց դա, մեր կարծիքով, սկզբունքորեն չի փոխում հարցադրման բովանդակությունը:

● **Տառադարձություն:** Լեզվի բառապաշարի հարստացման և գործնական իրացման ամենաարդյունավոր ուղիներից է օտար բառամիավորների փոխառումը: Այդ գործընթացի դժվարություններից մեկը փոխանցվող օտար բառի տառադարձության (արտասանությանը հետևելով) կամ գրադարձության (գրությանը հետևելով) խնդիրն է, որը սովորաբար կարգավորվում է հատուկ որոշումներով: Հայերենի լեզվական որակները լայն հնարավորություններ են ընձեռում օտար բառամիավորների արտասանական յուրահատկությունները հայերենին փոխանցելու համար: Ոլորտը կարգավորելու նպատակով Հայերենի բարձրագույն խորհուրդը մի շարք հաջողված նախագծեր է ընդունել (հեղ.՝ Գ. Ջահուկյան, Ա. Խաչատրյան, Վ. Փոթեյան, Ն. Վարդապետյան և այլք): Բայց շատ հարցեր մնում են քննարկման և լուծումների կարոտ: Այսպես:

ա) Ըստ կանոնի՝ օտար **ռ**-ն (ռուսերենի **р**-ն) բառասկզբում և բառամիջի արմատական բաղադրիչում տառադարձվում է **ռ**՝ **[ռ]աղիռ**, **[ռ]ուրի**, **Բելա[ռ]ուս**, բառամիջում՝ **ր**՝ **պ[ր]ոֆեսոր**, **Սանկտ Պետե[ր]բուրգ**, **լ**, և ձայնորդներից առաջ՝ **ռ**՝ **Բե[ռ]նարդ**, **Կա[ռ]լեն**: Հաջորդող տասնամյակներին նախագծում կատարվել են մասնակի փոփոխություններ, որոնց հիման վրա անվանացանկերում արվել են որոշ ճշգրտումներ. **Կոպերնիկոս/Կոպեռնիկոս** և **Կորնելիոս/Կոռնելիոս** երկգրություններից հանձնարարվել են երկրորդները: Սակայն նախկինի պես՝ որոշ անուններ մնում են հին արտասանությամբ՝ որպես բացառություններ՝ **Կա[ր]լ**, **ինտե[ր]նացիոնալ**. սրանց վերաբերյալ նախագիծը չունի հիմնավոր բացատրություններ: Բացի այդ՝ գործնականում անլուծելի է մնում մի քանի գործա-

ծական անունների հարցը. հակում կա, ավանդույթին հետևելով, գործածության մեջ նախապատվություն տալու **Կալիֆո[ռ]նիա** անվան **ռ**-ով տառադարձությամբ: Ենթադրվում էր, որ նույն հիմքով **Նիդե[ռ]լանդներ**-ը պիտի տառադարձվեր **ռ**-ով, սակայն պետությունների անվանումների վերաբերյալ Կառավարության հատուկ հանձնարարականով, ոչ այնքան հիմնավոր պատճառաբանության (ստուգաբանական հիմքով), բառը տառադարձված է **ր**-ով՝ **Նիդե[ր]լանդներ**: Սրանց վերաբերյալ բնականաբար ճիշտ կլիներ կոնկրետ որոշումներ ընդունել:

բ) Կրկնակ բաղաձայնները սովորաբար հայերենում արտասանվում են իբրև մենաբաղաձայն և այդպես էլ գրվում են, ինչպես՝ **congressman** – կոնգրեսմեն, **alligator** – ալիգատոր, **ammonium** – ամոնիում, **classicizm** – կլասիցիզմ, **communist** – կոմունիստ, **collective** – կոլեկտիվ: Հայերենում երկար կամ ուժգին արտասանության դեպքում գրվում են կրկնակ բաղաձայնով՝ վաննա, վիլլա, Աննա, վատտ, բրուտտո, կրկնակ **օօ**-ն՝ **ռռ**՝ կոռպերատիվ, կրկնակ **րր**-ն (ռուս.՝ **рр**) ի ձայնավորից առաջ՝ **ր**՝ բարիկադ, մնացած դեպքերում՝ **ռ**՝ Մառ, Պյոտռոս, Կառլոս: Շատ հաճախ, սակայն, դժվար է լինում կողմնորոշվել, թե կրկնակ բաղաձայնների երկար կամ ուժգին արտասանության չափը արդյոք բավարարում է դրանց գրությունը կրկնակ բաղաձայններով ամրագրելու համար: Այդ անհստակությունը պատճառ է դառնում, որ առանձին փոխառություններ տառադարձվեն երկգրությամբ: Կարծում ենք՝ հարցի լուծման լավագույն միջոցը համապատասխան բառացանկը հնարավոր ամբողջականությամբ կազմելն է:

գ) Հայերենի բարձրագույն խորհուրդը ոչինչ չի ասում այսօր գործածական դարձած մի շարք օտար անունների տառադարձության վերաբերյալ, և լեզվակիրառողին մնում է միայն ավանդույթով կամ սեփական կողմնորոշումներով՝ առաջնորդվել դրանց գրության հարցում. օրինակ, ասենք՝ հաշվի

առնելով մի շարք հատուկ անուններում բաղադրող հիմքի գրությունը՝ բառամիջում **օ**-ով գրել հետևյալ օտար անունները՝ **Բելօգերսկ, Բելօգերով, Ղասաբօղյան, Դավութօղլու, Չարչօղյան** և այլն: Կամ՝ առանձին անձնանունների վերաբերյալ կան հանձնարարականներ, օրինակ՝ հավասարապես ընդունելի տարբերակներ են համարվում՝ **Սոկրատես/Սոկրատ, Դոն Կիլոտ/Դոն Քիշոտ, Լենկթեմուր/Լանկթեմուր** և այլն (Տեղ., 56-65): Բայց մի շարք անձնանունների տառադարձումը որևէ կերպ չի արձանագրվում, ինչպես՝ **Բելառուս, Էյնշտեյն** (այժմ նաև՝ **Այնշտայն, Էրբեմն՝ Այնշթայն**), **Արգիշտի** (այժմ՝ **Արգիշթի**) և այլն⁷³:

դ) Վերջին շրջանում մեր գրականության մեջ և մամուլում ակնհայտ հակում է նկատվում օտար բառերի և հատուկ անունների տառադարձությունը ավելի մոտեցնելու փոխատու աղբյուրի արտասանական առանձնահատկություններին: Դա հատկապես նկատելի է անգլերեն բառերի և անգլերենում գործածվող հատուկ անունների տառադարձության մեջ: Նպատակ ունենալով միասնականացնելու նշված բառերի տառադարձության սկզբունքները՝ Հայերենի բարձրագույն խորհուրդը հանձնարարում է ղեկավարվել հետևյալ կանոններով.

1. Անգլերեն **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն տառադարձել բառասկզբում **փ, թ, ք**, մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձել մեկ բաղաձայնով,

⁷³ Ի դեպ, ռուսերեն համարժեքներ չունեցող հայերենի հնչույթները տառադարձելիս հանձնարարվում է դրանք տառադարձել ըստ հնարավորին առավել մոտ հնչույթներ արտահայտող տառերով: Բերված բառերի շարքում նշվում է նաև **Թադևոս** անձնանունը. բառի արտասանության հիմքում ամենայն հավանականությամբ դրվել է արտասանական հնացած տարբերակը՝ **Թա[թ]ևոս**, որն էլ առաջ է բերել տառադարձման անճիշտ տարբերակ՝ **Та[т]евос** (Տեղ., 81)՝ փոխանակ բնագրին մոտ՝ **Та[д]евос** տարբերակի:

ինչպես՝ [Թ]աֆտ (Taft), [Թ]եյլոր (Taylor), [թ]ենիս (tennis), [Ք]արտեր (Quarter), [Ք]ենեդի (Kennedy), [թ]եստ (test), բայց ավանդաբար՝ Նյու Յորք [ք] (փոխ.՝ Նյու Յորկ), Մարկ [Տ]վեն, [կ]ոնգրեսմեն և այլն:

2. Անգլերենի **w(h)**–ն տառադարձել ու (**wa**–ն՝ **ու**), բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու **ու** (**wu**, **wo**, **woo**). այս դեպքում գրել և արտասանել **վու**, օրինակ՝ [Ու]այտ (White), [Ու]այլդ (Wilde), [Ու]ոլտոն (Walton), Դ[ու]այտ (Dwight), բայց ավանդաբար՝ [Վ]աշինգտոն (Washington), [Դ]արվին (Darwin), [վ]ատտ (Watt), [Վ]իլյամ (William) և այլն (Տեղ., 178-183): Այս կետը ամբողջանալու համար թերևս երկու լրացում պիտի ունենա: Նախ՝ պետք է որևէ կարգով լուծվի բացառությունների հարցը. կարելի է նոր սկզբունքով տառադարձել նաև ավանդաբար եկածները, և երկրորդ՝ անգլերենի **p**, **t**, **k**–ն և **k** արտասանվող **c**–ն տառադարձել **փ**, **թ**, **ք** բոլոր այն դեպքերում, երբ արտասանությունը հարազատ է մնում փոխատու լեզվի արտասանությանը և չի խաթարում հայերենում դրանց համար ընդունված գրության և տառադարձության ընդհանուր կանոնները, այսինքն՝ այն, ինչ կատարվում է այսօր գործնականում կամ նույնիսկ մինչև որոշում ընդունելը, այսպես՝ Taft–[Թ]աֆ[թ], test–[թ]ես[թ], Carter–Քար[թ]եր, Lippman–Լի[փ]ման, Manchester–Մանչես[թ]եր// Մանչես[թ]ր, Scott–Ս[ք]ոթ[թ], mister–միս[թ]եր, badminton–բադմին[թ]ոն:

ՈՒՂՂՍԳՐՈՒԹՅՈՒՆ: Հայերենի բարձրագույն խորհուրդը պարբերաբար վերախմբագրում է ուղղագրությանը վերաբերող որոշումները: Հաճախ քննարկվող խնդիրներից են մեծատառերի գործածությունը, տողադարձը և **ի վայր** (վար), **ի վեր** հետադրություններով կազմված բառակապակցությունների և բառերի գրությունը:

● **Մեծատառերի գործածությունը:** Նպատակ ունենալով բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը

նը հեշտացնել և դրանց գրության մեջ միօրինակություն հաստատել՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության բարձրագույն խորհուրդը 2003 թ. մարտի 8-ին հրապարակեց որոշում, որով վերանայվում էր 1963 թ. հունվարին տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշումը: Նոր որոշումը, սակայն, մի շարք կետերում ավելի է խճճում մեծատառերի գործածության արդեն իսկ առկա անհստակությունները: Այսպես:

ա) Մի քանի բաղադրյալ հատուկ անունների երկրորդ բաղադրիչները հանձնարարվում է գրել մեծատառով՝ հաշվի առնելով զանազան աղբյուրներում դրանց այդ կարգով գրությունը և նաև այն հանգամանքը, որ իբր դրանք փոխաբերական առումով են գործածված: Նույն տրամաբանությունը չի գործում, սակայն, նույն կարգի այլ բաղադրյալ հատուկ անուններում՝ **Վայոց ձոր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս** և այլն: Նախագծի հեղինակի փաստարկումները այս կետերի վերաբերյալ հիմնավոր չեն, քանի որ բաղադրական նույն կազմություններն ունեցող հատուկ անուններում (**Գեղամի դաստակերտ, Տրդատի թախտ, Հավուց թառ, Անահտա աթոռ, Բաղակի քար** և այլն) երկրորդ բաղադրիչները առաջարկվում է թողնել փոքրատառ գրությամբ ընդամենը այն հիմնավորմամբ, որ «այս հարյուրավոր տեղանունների անվանական ուղղագրությունը դեռևս պիտի պահպանվի», կամ՝ իբր **Վայոց ձոր** աշխարհագրական տեղանունը հարյուրամյակների գործածություն ունի, և որ այստեղ «ձորը», ի տարբերություն **Հայկական պար, Մեծ արջ** բաղադրյալ անունների երկրորդ բաղադրիչների, «շարունակում է պահել իր բառային նշանակությունը»:

բ) Ճշգրտում է կատարվել ՀՀ կենտրոնական ղեկավար բարձրագույն մարմինների անվանումների ուղղագրության մեջ՝ ըստ դրանց կատարած գործառնությունների կամ վերահսկո-

ղական և ոչ վերահսկողական դերի: Այդպիսով՝ **ՀՀ Վճռաբեկ դատարան**-ը գրվում է մեծատառով, **վերաքննիչ**-ը՝ փոքրատառով, **ՀՀ Ազգային ժողով**-ը և **Նախարարների խորհուրդ**-ը (**Կառավարություն**-ը)՝ մեծատառով, **դատախազություն**-ը՝ փոքրատառով և այլն, և այլն:

զ) Առաջարկվում է **Հայկ Նահապետ**-ի երկրորդ բաղադրիչը գրել մեծատառով այն հիմնավորմամբ, որ «բոլոր Հայկերը չէ, որ Հայկ Նահապետ են»: Նույն տրամաբանությամբ, օրինակ, կարելի է ասել՝ բոլոր **Թորգոմները** չէ, որ **Նահապետ** են (Թորգոմ Նահապետ): Մինչդեռ վերջինը չի հանձնարարվում գրել մեծատառով:

դ) Ի տարբերություն ազգային մյուս հաստատությունների՝ բացառություն է համարվում **Գիտությունների ազգային ակադեմիան**՝ «այդ հաստատության անվան մեծատառ գրությամբ» (Տեղ., 237):

Ինչպես տեսնում ենք, բաղադրիչների փոխաբերական-ոչ փոխաբերական առումների վերաբերյալ բացատրությունները համոզիչ չեն: Գրության սկզբունքը հաստատության գործառական ինչ-ինչ սկզբունքներով հիմնավորելը, պետականորեն սահմանված գերագույն իշխանությունների աստիճանականությունը և կամ բացառություններ սահմանելը հազիվ թե նպաստում են մեծատառերի գործածությունը հեշտացնելուն և դրանց գրության մեջ միօրինակություն հաստատելուն: Ուրոշումը ակնհայտորեն կարիք ունի վերանայման և հստակեցման: Մեծատառերի գործածությունը ի վերջո պայմանավորվածության հարց է և կարող է լուծվել լեզվակիրառողի համար ավելի հեշտ սկզբունքներով և արդի գրավոր խոսքում լեզվական կանոնարկված ավանդույթին համապատասխան:

• **Ի վայր (վար), ի վեր** հետադրություններով կազմված բառակապակցությունների և բառերի գրությունը: Հարցի վերաբեր-

յալ որոշումը (1992 թ.), որը վերախմբագրմամբ հաստատվել է 2000 թ. և կոչված էր դրանց գրության մեջ առաջացած ավելորդ զուգաձևությունները վերացնելուն, ըստ էության չծառայեց նպատակին նրանում առկա որոշ հակասությունների պատճառով: Այսպես. որոշման 1-ին կետի **դ** ենթակետով սահմանվում է, որ բառային անկախությունն ունեցող շեշտակիք գոյականներով կամ մակբայներով և **ի վայր (վար)** ու **ի վեր** հետադրություններով կազմված կապակցությունները գրվում են անջատ կամ հարադրությամբ, ինչպես՝ **գետն ի վայր, կիրճն ի վեր....** և այլն: Իսկ նույն որոշման երկրորդ կետը հանձնարարում է անանջատ կամ համադրությամբ գրել մեկ բառային շեշտ ունեցող «բարդ բառերը»՝ **երեսնիվայր(վար), հիմնիվայր(վար)** և այլն: Եվ վերջապես, նույն կետի **Ծանոթություններով** նույն բնույթի բարդությունների համար թույլատրելի է համարվում երկակի գրությունը՝ **երեսն ի վայր/երեսնիվայր, հիմն ի վեր/հիմնիվեր** և այլն, և անհանձնարարելի՝ **լեռնիվայր, լեռնիվեր, սարնիվեր** և այլն, որը ի վերջո ենթադրում է զուգահեռություն: **Նախ**՝ հատուկ կետով բառերի որոշ խմբի համար գրության միակ ճիշտ ձև է սահմանվում բաղադրիչների անանջատ գրությունը (**երեսնիվայր** և այլն), բայց **Ծանոթությամբ**՝ թույլատրելի՝ նաև դրանց անջատ գրությունը (**երեսն ի վայր** և այլն): **Հետո**՝ 1-ին կետի **դ** ենթակետում նշված բառերը (**գետն ի վայր, փողոցն ի վար** և այլն) և 2-րդ կետի մի շարք բառեր (**երեսնիվայր, հիմնիվեր** և այլն) ունեն նույն հատկանիշը. երկու դեպքում էլ «առաջին բաղադրիչը նույնությամբ անկախ գործածություն ունի»: Մինչդեռ որոշումը դրանց համար սահմանում է գրության տարբեր սկզբունքներ: Կարծում ենք՝ որոշումը վերախմբագրման կարիք ունի: Դա կարող է իրականացվել, օրինակ, հետևյալ տարբերակներով.

ա) Ի վայր (վար), ի վեր հետադրությամբ գոյականներով կամ մակբայներով կազմված կապակցությունների բաղադրիչները

գրվում են անջատ, եթե դրանք ունեն բառային անկախություն, այսինքն՝ ունեն նույնությամբ անկախ գործածություն, ինչպես՝ սարն ի վեր, պատն ի վայր, լեռն ի վայր, գետն ի վեր, հիմն ի վեր, երեսն ի վայր, հնուց ի վեր, դարեր ի վեր, փողոցն ի վար, Մասիսն ի վեր, Ազատն ի վայր և այլն: Մյուս բոլոր դեպքերում բաղադրիչները գրվում են անանջատ, ինչպես՝ զառիվար, զառիվեր, դարիվեր (դարուփուս-ի դար-ն է), բերանքսիվայր, փոքրիշատն և այլն:

բ) Անանջատ են գրվում գոյականներով և ի վայր (վար), ի վեր հետադրություններով բաղադրված բարդ բառերի բաղադրիչները, ինչպես՝ լեռնիվեր, սարնիվեր, պատնիվեր: Անջատ են գրվում, եթե գոյականը հատուկ անուն է (Մասիսն ի վեր), դրված է հոգնակի թվով (դարեր ի վեր), կամ եթե առաջին բաղադրիչը բառակապակցություն է (բարձր լեռն ի վեր), մակբայ է կամ էլ առանձին շեշտվող գոյական (վաղուց ի վեր)⁷⁴: Վերջին ձևակերպումը՝ առանձին շեշտվող գոյական է, փոքրինչ անորոշ է և կարող է սուբյեկտիվ մոտեցումների դուռ բացել:

2006 թ. տեղեկատուն որոշումներ չի պարունակում մի շարք հարցերի վերաբերյալ, որոնք առկա են առանձին ոլորտներում: Դրանցում կատարվող էական տեղաշարժերը կարոտ են քննարկումների, եղած կանոնների վերանայման կամ նոր կանոնների սահմանման: Այդպիսի հարցերից են, օրինակ, ձայնավորների և ձայնավորական զուգորդումների արտասանությունը, հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով կազմությունները, առանձին բաղադրյալ հատուկ անունների գրությունը և այլն:

● **Ձայնավորների և ձայնավորական զուգորդումների արտասանությունը:** Ըստ գործող կանոնի՝ եթե բաղադրյալ բառերի՝

⁷⁴ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ա-Ֆ, Եր., 2001, էջ 16:

ո-ով և **ե**-ով սկսվող բաղադրիչներին նախորդում է ձայնավոր, ապա, որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա, համապատասխանաբար **ո**-ն արտասանվում է **վո (ամենա[վո]-րակյալ, բազմա[վո]ճ, իսկ ե-ն՝ յէ (ամենա[յէ]րնելի, կիսա[յէ]գրափակիչ)**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ո**-ն արտասանվում է **օ՝ բարձր[օ]րակ, բազմ[օ]տանի, իսկ ե-ն՝ է (համ[է]րկրացի, դարձ[է]րես)**: Պետք է նկատել, սակայն, որ սահմանված կանոնը ժամանակակից հայերենի ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում: Ան ժխտական նախածանց ունեցող բառերի մի որոշ մասում (հատկապես գրական-գրքային երանգ ունեցող բառերում) գործում է արտասանական գուգահեռ տարբերակ. **է**-ի փոխարեն հաճախ արտասանվում է նաև **յէ**, իսկ **օ**-ի փոխարեն՝ **վո**, ինչպես՝ **ան[է]րկյուղ//ան[յէ]րկյուղ, ան[է]կամտաբեր//ան[յէ]կամտաբեր, ան[է]նթակա//ան[յէ]նթակա, ան[է]ռանդ//ան[յէ]ռանդ, ան[օ]ղնաշարավոր//ան[վո]ղնաշարավոր, ան[օ]ղջամիտ//ան[վո]ղջամիտ, ան[օ]ռոզելի//ան[վո]ռոզելի, ան[օ]յսակալ//ան[վո]յսակալ, ան[օ]րդի//ան[վո]րդի, ան[օ]տնահարելի//ան[վո]տնահարելի** և այլն (բայց՝ **ան[է]րես, ան[է]զական** և այլն): Էական փոփոխություն է տեղի ունեցել **կ** և **չ** քերականական մասնիկներին հաջորդող **ե**-ի և **ո**-ի արտասանության մեջ: Գրական լեզվի կանոնով սահմանված արտասանությունը՝ **ե>է (կ[է]րագեն, կ[է]ռապատկեն, չ[է]րնակայեն, ո>օ՝ կ[օ]րոշեն, չ[օ]րոնեն, չ[օ]ռոզեն)**, այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների՝ **յէ** և **վո** արտասանությանը: Ըստ որում, այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ **[յէ]ռապատկեն – [կրյէ]ռապատկեն, [յէ]րնակայեն – [չրյէ]րնակայեն, [վո]րոնեն – [չրվո]րոնեն, [վո]ռոզեն – [չրվո]ռոզեն**: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ ունենք արտասանական գուգաձևեր, որոնցից արդի խոսակցական նորմի շրջանակներում գործող տարբերակը միտված է դառնալու գրական լեզվի արտասա-

նական կանոն: Գրական լեզվի արտասանական կանոնով՝ ձայնավորական զուգորդումները (կից ձայնավորների միացությունը՝ **առ, ու, առու, իու, իո** և այլն) մի շարք բառերում արտասանվում են յ ձայնակապի հավելումով (**կարճ յ**)՝ **ան[եյ]անալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, պի[յ]ոներ**, կամ վերածվում են յ-ի՝ **օվկ[յ]անոս, Անդր[յ]աս**: Սակայն լեզվի զարգացմամբ պայմանավորված՝ որոշակի տեղաշարժ է նկատվում ձայնական այդ զուգորդությունների արտասանության մեջ. դրանք արտաբերվում են կիսահունչ յ-ով: Գրական լեզվի համար գործում է նաև արտասանական այդ տարբերակը՝ **անե[յ]անալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, օվկ[յ]անոս**, ըստ որում, որոշ բառերում թույլ հընչում է նաև յ-ին նախորդող ձայնավորը՝ **Անդր[եյ]աս, հր[եյ]ա, Մար[իյ]ամ, պ[իյ]ոներ, քրիստոնե[յ]ական**:

• **Հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով կազմություններ**: Դրանց մի շարք դրսևորումների վերաբերյալ կան էական տարակարծություններ: Տասնամյակներ առաջ գիտական գրականության մեջ արձանագրված շատ իրողություններ արդի գրական լեզվի կանոններով և լեզվագործածությամբ չեն հաստատվում: Օրինակ՝ նախորդ դարի հիսունականներին նշվել է, որ հոգնակի թվի կազմության մեջ և հոլովման ժամանակ նախընտրելի է **բուրդ** բառի անհնչյունափոխ տարբերակը⁷⁵: Այսօր **Արևակ** (Արևելահայերենի ազգային կորպուս)-ի տվյալներով ունենք հետևյալ պատկերը՝ **բուրդի**⁷⁶, 26 գործածություն, **բրդի**⁷⁶, 768: Կամ՝ ասվում է, որ սովորական է **լուր** բառի հնչյունափոխված հիմքով հոլովածներ՝ **լրի**⁷⁶, մինչդեռ ըստ **Արևակ**-ի՝ **լուրի**⁷⁶, 378, **լրի**⁷⁶, 12: Կամ՝ սեռական-տրականում երկակի հոլովածներ ունեցող **սնունդ** և **կորուստ** բառերից առաջնությունը տրվել է չփոփոխված ձևերին, փոփոխ-

⁷⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, Աշխարհաբարի հնչյունափոխական օրինաչափությունները, Եր., 1951, էջ 68:

⁷⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 69: Նաև՝ Գ. Զահուկյան և այլք, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 142:

վածները համարվել են հնացած⁷⁷. ըստ **Արևակ-ի՝ սննդի՝ 5516, սնունդի՝ 150, կորստի՝ 1296, կորուստի՝ 336**: Եվ կամ՝ **մշակույթ** բառահիմքով կազմված **մշակութային** և **մշակութային** տարբերակներից անվերապահորեն նախապատվությունը տրվել է անհնչյունափոխ հիմքով կազմությանը. մյուսը համարվել է արհեստական, որը իբրև թե հետագայում պիտի դուրս մղվեր գործածությունից: Մինչդեռ և՛ արդի հայերենի բառարանների տվյալներով⁷⁸, և՛ կենդանի լեզվագործածության օրինակներով հաստատվում է հակառակը. բառարաններում միակ տարբերակ է նշվում **մշակութային**-ը⁷⁹, իսկ **Արևակ**-ը տալիս է տարբերակների գործածության հետևյալ հաճախականությունը՝ **մշակութային՝ 91, մշակութային՝ 14 897**: Ձևակազմական և բառակազմական մի շարք բաղադրական հիմքերում տարբերակային ձևերը գործածական են, ինչպես՝ **բարիություն//բարություն, բռնցքի//բռնցքի, գործառության//գործառության, խելացիություն//խելացություն, կիսաեզրափակիչում//կիսաեզրափակչում, հատույթային//հատութային, կամ մակուկաձև//մակուկաձև, մրցութային//մրցութային, սովորութային//սովորութային, վայրկյանապես//վայրկենապես, տիրութային//տիրութային, քննիչի// քննչի** և այլն: Եվ նորմավորողի խնդիրն էլ այս դեպքում այն է, որ ոչ թե պատրաստի դեղատոմս առաջարկի, այլ պարզապես արձանագրի լեզվավիճակը և լեզվակիրառողին հնարավորություն տա կողմնորոշվելու դրանց՝ նախընտրելի կամ հանձնարարելի տարբերակներում:

Այս իրողությունների վերաբերյալ Հայերենի բարձրագույն խորհրդի լուծությունը վկայում է այն մասին, որ նա ընդունում է ոլորտում գործող նորմերը, որոնք արձանագրված են նորմա-

⁷⁷ Տե՛ս **Գ. Զահուկյան** և այլք, նշվ. աշխ., էջ 143:

⁷⁸ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Եր., 1974: **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

⁷⁹ Տե՛ս **Գ. Զահուկյան** և այլք, նշվ. աշխ., էջ 147:

տիվ քերականության մեջ, և վերանայելու առիթներ չի տեսնում: Այդ մասին են խոսում նաև տեղեկատվություն այլևայլ առիթներով բերված օրինակները: Այսպես. խոսելով **եա, եռ, իա, իե, իու** տառակապակցություն ունեցող բառերի տողադարձի մասին՝ որոշման մեկնաբանություններից մեկում ասվում է, որ «հայերենում *պրեմիեր, պրեմիերա, ռեփեֆ, ֆելիետոն, Պովովիե, Վիետնամ, Մոլիեր* և այլ հատուկ և հասարակ անուններում *յե* արտասանվող հնչյունակապակցությունը գրվում է *իե* տառակապակցությամբ» (Տեղ., 43), մեկ այլ առիթով՝ «հիմնականում դրանց *ե* և *ի* բաղադրիչներն արտասանվում են *յ* (*ոյալիզմ, Նապոլյոն, սոցյալիզմ, հեքյաթ, ֆելյետոն, չեմպյոն, կալցում* և այլն): Ուրեմն ձայնավորին նախորդող *ե, ի* գրերը, արտասանվելով *յ*, առանձին վանկ չեն կազմում...» (Տեղ., 248): Այսինքն՝ լռելայն ընդունվում և հանձնարարվում են արտասանական վիճահարույց տարբերակներ:

• Բաղադրյալ հատուկ անունների գրության վերաբերյալ որոշման նախագծի առաջին կետը սահմանում է. «Բոլոր բառերն սկսել մեծատառով. ա) Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում...» (Տեղ., 286): **Առաջին, երկրորդ** կամ, ասենք, **հինգերորդ** որոշիչները (Հայաստանի առաջին Հանրապետություն, Ֆրանսիայի երրորդ Հանրապետություն և այլն) պետության պաշտոնական անվան բաղադրիչներ չեն, և ենթադրվում է, որ մեծատառով չպետք է գրվեն: Բայց ահա տեղեկատվի խմբագիր-հեղինակը որոշումների մեկնաբանություններում դրանք գործածել է մեծատառերով՝ «...երբ ստեղծվեց Հայաստանի Առաջին, ապա՝ Երկրորդ Հանրապետությունը» (Տեղ., 9): Բնականաբար, սա կարող է շփոթության մեջ գցել լեզվակիրառողին:

• Համառ լռության է մատնված ազգանուններում գաղտնավանկ **ը**-ի գրության հարցը: Առանձին դեպքերում ազգանունները ճիշտ արտաբերելու համար պետք է գրության մեջ արտահայ-

տել գաղտնավանկը՝ տարընթերցումից խուսափելու համար, օր.՝ **Չալըմյան** ազգանվան մեջ **ը**-ի չգրությունը կարող է դուռ բացել անճիշտ արտասանության. չգրվող **ը**-ն կարող է ոչ ճիշտ տեղում հնչել կամ սղվել, ասենք՝ **Չալմ[ը]յան**, որը հեռու է բառի ճշգրիտ արտասանությունը լինելուց: Նմանապես՝ **Պլըտյան**, ոչ թե՝ **Պլտըյան**, **Այտընյան**, ոչ թե՝ **Այտնըյան**, **Բրայըն**, ոչ թե՝ **Բրայն**, **Չալըխյան**, ոչ թե՝ **Չալխըյան** կամ **Չալխյան** և այլն:

Ուղղախոսության և ուղղագրության ոլորտում կան քննարկման և կանոնարկման ենթակա նաև այլ խնդիրներ, օրինակ՝ չակերտների գործածությունը, համառոտագրության սկզբունքները և այլն: Կարծում ենք՝ այս և վերը քննարկված հարցերը նոր կամ վերախմբագրված որոշումներով լուծելու անհրաժեշտությունը ունեն, քանի որ կենդանի լեզուն անընդհատ զարգանում և փոփոխվում է, և պարբերաբար առաջացող գուգաձևությունները վերացնելու, գրական լեզուն կենդանի լեզվի տրամաբանությամբ մշակելու միակ ուղին ժամանակ առ ժամանակ որոշումներով դրանց անդրադառնալն է:

Բ) ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄ ԵՎ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ⁸⁰

Քննարկվող տեղեկատուն շատ ուշագրավ որոշումներ է ամփոփում արդի գրական հայերենի բառային կազմի կարգավորման և քերականական իրողությունների նորմավորման վերաբերյալ: Դրանց շնորհիվ հայերեն նոր բառացանկերի հաստատումով մեծապես համալրվել է հայերենի բառապաշարը, ճշգրտվել են հայերենի տերմինակազմության սկզբունքները, հստակեցվել են ձևաբանական կազմություններ և խնդրառական իրողություններ: Այսուհանդերձ, նույն այս ի-

⁸⁰ Տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» հանդեսում, Եր., 2017, թիվ 3:

րողությունների առանձին դրսևորումների վերաբերյալ կան տարակարծություններ, որոնք կարիք ունեն հստակեցման, նոր քննարկումների և մոտեցումների:

ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄ: Հայերենի բառապաշարի հարստացման ուղիները և տերմինակազմության սկզբունքները կարծես թե ճշգրտված են. հիմնական ուղին մեր լեզվի բառաստեղծման հարուստ ու բազմազան միջոցներն են, օժանդակ աղբյուրներ են գրաբարի և բարբառների բառապաշարը, կատարվող իմաստափոխությունները, ինչպես նաև արևմտահայ լեզվի բառային կազմը: Մյուս կարևոր ուղին այլ լեզուներից կատարված փոխառություններն են՝ օտար բառերն ու բառապատճենումները: «Դարերով վիճել են և շարունակում են վիճել, թե մայրենի բառերի կողքին որտեղ և ինչ չափով կարելի է գործածել օտար բառեր: Քանի կան տարբեր լեզուներ ու լեզվական ազդեցություններ, կլինեն և այս վեճերը: Եթե կան մարդիկ, որոնք այս թեմայի շուրջը գրում են այդ վեճերին վերջ տալու նպատակով, ապա իզուր են գրում» (Տեղ., 13):

Դժվարություններ և տարակարծություններ են ծագում մասնավորապես երկրորդ դեպքում՝ փոխառությունների հարցում: Ավելորդ չենք համարում ստորև համառոտ ներկայացնել օտար լեզուներից փոխառություններ կատարելու կամ դրանց հայերեն համարժեքների կազմության ու գործածության սկզբունքները, որոնք ընդհանուր գծերով ներկայացված են տերմինաբանական կոմիտեի որոշումներում⁸¹: ա) Թույլ չտալ հայերեն այնպիսի բառերի / տերմինների փոխարինումը օտար բառերով / տերմիններով, որոնք մտնում են բառային

⁸¹ «Հայոց լեզվի կանոնարկման ընդհանուր սկզբունքները» նախագիծը կազմել է Գ. Սևակը (հաստ. է տերմ. կոմիտեի 1955 թ. հուլիսի նիստում), իսկ «Հայերենի տերմինակազմության սկզբունքները»՝ Գ. Զահուկյանը (հաստ. է տերմ. կոմիտեի 1986 թ. հունիսի նիստում). վերջինով վերահաստատվում և մասամբ լրացվում են նախորդ նախագծի հիմնադրույթները:

կազմի գործուն մասի, հատկապես բառային հիմնական ֆոնդի մեջ: **բ)** Փոխառել այնպիսի բառեր, որոնց համարժեքը հայերենում չկա և հայերենի բառակազմական միջոցներով հաջող կազմել հնարավոր չէ: **գ)** Փոխառություններ կատարել՝ դրանց տալով հայերենի արտասանական և ուղղագրական ձև. սակայն եթե հայերենի լեզվական միջոցները հնարավորություն են տալիս, այդ դեպքում բառի հայերեն ձևավորումը հնարավորին պետք է մոտեցնել փոխառու լեզվի արտասանությանը: **դ)** Պատմական ժառանգորդությունը չխախտելու նպատակով լայն գործածության մեջ գտնվող տերմինները այլ տերմիններով փոխարինել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում: **ե)** Գիտությունների մեծ մասում գործածվող միևնույն ծագման օտար տերմինի դիմաց նոր տերմին ստեղծել միայն ամենաանհրաժեշտ դեպքերում, երբ տվյալ գիտության մեջ գործածվող իմաստը խիստ պայմանականորեն է կապվում այլ գիտությունների մեջ գործածվող համապատասխան տերմինի առաջնային / սկզբնական իմաստին:

Իսկ բուն տերմինակազմական տարբերակների հնարավորության դեպքում հանձնարարվում է ընդհանրապես խուսափել խիստ երկար, բազմաբաղադրիչ և դժվարարտասանելի տերմինների ստեղծումից. առավելություն տալ այն տարբերակին, որը մնացած պայմանների հավասարության դեպքում ավելի կարճ է, դյուրահունչ: Խուսափել նաև որևէ տեսակետից առավելություն չունեցող հավելությունային ու նույնանիշ տերմինների ստեղծումից (տե՛ս Տեղ., 22-44):

Որպես ելակետ ունենալով հայերենի բառային կազմի մշակման ու զարգացման այս սկզբունքները՝ տերմինաբանական կոմիտեն մեծ գործ է կատարել հայերենի տերմինային համակարգը նորակազմ բառերով ու բառիմաստներով հարստացնելու, ըստ անհրաժեշտության՝ նաև օտար բառեր ու տերմիններ ներմուծելու առումներով. ճշգրտվել ու հաստատվել են

ռուսերենում և հայերենում տարբեր գրություն և արտասանություն ունեցող աշխարհագրական մոտ 800 անունների ու պատմական անձնանունների տառադարձությունը (1958 թ.), կերակուրների, տարբեր տեսակի ուտելիքների ու մթերային ապրանքների մոտ 750 անուն (1959 թ.), հաստատել է աշխարհագրական, երկրաբանական և այլ կարգի մասնագիտական մոտ 150 բառ ու բառակապակցություն տերմին, վերացրել է 58 օտար բառերի ու տերմինների և սրանց հայերեն նույնանիշ ձևերի գործածության զուգահեռությունը, հաստատել է 40 ռուսերեն և այլ օտար հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական և մարզական տերմինների հայերեն թարգմանությունը (1961 թ.), ընդունել է մաթեմատիկական տերմիններին վերաբերող վեց որոշում, որոնցում հայերենացված կամ ճշգրտված ու վերահաստատված են 300-ից ավելի բառ ու բառակապակցություն տերմիններ, ճշգրտվել է տեխնիկական ավելի քան 70 բառ ու բառակապակցություն տերմինների հայերեն տառադարձությունը (1974-1987 թթ.): ՀՀ Կառավարությանն առընթեր հայերենի բարձրագույն խորհուրդը 1990-2003 թթ. ընդունել է որոշումներ, որոնցով կարգավորվել են տարբեր գիտաճյուղերի և ոլորտների վերաբերող մի քանի հարյուր բառեր և տերմիններ և այլն (տե՛ս նույն տեղը): Սակայն, ինչպես տեսնում ենք, շուրջ մեկ տասնամյակից ավելի է՝ այդ ոլորտում ակտիվ աշխատանքներ չեն իրականացվում: Վերջին որոշումներն ընդունվել են 2000-ականների սկզբին:

Լեզուների պատմության մեջ լինում են շրջաններ, երբ ազդեցության ավելի մեծ ոլորտներ ունեցող լեզուների ներգործության չափը օբյեկտիվորեն ընդլայնվում է, այլ լեզուների համար առանձնապես է անհրաժեշտություն առաջանում դիմելու օտար բառերին: Օրեցօր աճող և աննախադեպ ծավալներ առնող տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումները իրենց հետ բերում են հազարավոր օտար տերմիններ,

հազարավոր նոր բառերի ստեղծման անհրաժեշտություն: Վերջին երկու տասնամյակներին էական տեղաշարժեր են կատարվել գրական հայերենի բառային կազմում. այն հարըստացել է տասնյակ հազարավոր նոր բառերով ու բառիմաստներով, բառ և բառակապակցություն տերմիններով, առաջացել են գուգահեռություններ, օտար տերմինների համար տարերայնորեն ստեղծվել են և գործածության մեջ են մտել հայերեն համարժեքներ, ձևավորվել են օտար բառերի տառադարձության տարբերակներ և այլն: Նոր բառերն ու տերմինները շատ արագ են տարածվում հանրության մեջ: Լեզվակիրառողի համար առաջանում են լուրջ դժվարություններ դրանք արագ յուրացնելու և ըստ ամենայնի գործադրելու համար:

Տերմինաբանական կոմիտեն / Հայերենի բարձրագույն խորհուրդը պիտի արձագանքի այս փոփոխություններին ու զարգացումներին: Սա ենթադրում է նախ՝ օտար բառ տերմինների մշակում և ճշգրտում, և երկրորդ՝ տերմինակազմության գիտական սկզբունքների մշակում, ազգային լեզվի բառանյութից նոր բառ և բառակապակցություն տերմինների ստեղծում: Հաջող փոխառությունը անփոխարինելի հարստություն է, բայց հայերեն համարժեքը ունի մի անուրանալի առավելություն. դա հասկանալի լինելն է. եթե **կոնգրուենտ, սպելեոլոգիա, հելիոզ, դերմատիտ** տերմինները ոչինչ չասող լեզվամիավորներ են շատերի համար, ապա դրանց համարժեք **համընկնելի-ն, անձավագիտություն-ը, արևահարություն-ը, մաշկաբորբ-ը** միանգամայն հասկանալի տերմիններ են:

Այսօր խիստ անհրաժեշտություն կա՝

ա) ճշգրտելու և հաստատելու մեր կենցաղ մուտք գործած կերակուրների, տարբեր տեսակի ուտելիքների ու մթերային ապրանքների բազմաթիվ օտար անունների գրությունը և արտասանությունը՝ **բրատֆուրսթ, կարրիֆուրսթ, կորնդոք, համ-**

բուրգեր, հոթորք, շաուրմա, չիգբուրգեր, պիցցա, սենդվիչ, սպագետտի, սուշի, տակո, ֆրի և այլն, կամ ստեղծելու դրանց հայերեն համարժեքները,

բ) հաստատելու ռազմական, իրավաբանական, մաթեմատիկական, աշխարհագրական, բժշկագիտական, քաղաքագիտական, տեխնիկական և այլ կարգի մասնագիտական հայերեն (նոնակակոծում, ականակոծում, ալեհավաք, նույնականացում, այլագիր, համաներում, այլախոհ, համատիրություն, գործարկ և այլն) և օտար բառ ու բառակապակցություն տերմիններ (ակտուար, ատկատ, շոու, կիքս, ինտերիեր, էքստերիեր, շոկ, պունկցիա, ֆլեշմոբ, ֆոտոարխիվ, խարիզմատիկ, տանդեմ, քարտ-բլանշ, օմբուդսմեն, օֆշորային, ֆրոստրացիա, սմարթֆոն, պլանշետ և այլն)՝ հնարավոր համարելով նաև դրանց մի մասի զուգահեռ գործածությունը, ինչպես՝ արխիվ//պահոց, քսենոֆոբիա//օտարամերժություն//օտարասոցություն, ալիմենտ//սննդավճար//ապրուստավճար, էթիկետ//վարվեցողություն, դիզայներ//գեղարար, բիզնես//գործ//գործարարություն, բրենդ//ապրանքանիշ, թելետոն//հեռուստադրամահավաք, ինաուգուրացիա//ձեռնադրում//պաշտոնակալում//երդմնակալություն, ինդեքս//դասիչ//ցուցիչ, ֆիտոթերապևտիկ//բուսաբուժական և այլն,

գ) վերացնելու օտար բառերի ու տերմինների և սրանց հայերեն նույնանիշ ձևերի (կամ հայերեն տարբերակների) գործածության զուգահեռությունը. օտար բառ և հայերեն համարժեք՝ էֆթանագիա//բարեսպանություն, ալիբի//այլուրեքություն, կրիմինալոգ//քրեաբան, վերբալ//բանավոր, ագրեման//համաձայնություն, ագրեսիա//նախահարձակում, և այլն, նույնանիշ ձևեր՝ բոնագավթում//բոնատիրում (անեքսիա), վնասապահանջ//բողոքագիր (ռեկլամացիա), իրավարար//հաշտարար (արբիտոր), դիտորդում//դիտարկում//մշտադիտարկում (մոնիթորինգ),

դ) ճշգրտելու և հաստատելու անգլերեն և այլ օտարալեզու հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական, տնտեսագիտական և մարզական տերմինների հայերեն թարգմանությունը (**աճուրդավար, ամրագոտի, անվաշղթա, առաջնագիծ, ռազմաբեմ, առևտրատնտեսական, առևտրամիջնորդ, աստիճանաշնորհում, արժեհամակարգ, արտահանձնում, բուժհաստատություն, վարակաբան, վերելակավար, մեծամասնական, համամասնական, իրավապահպան, երկքաղաքացիություն, ինքնագնահատական, ինքնալուծարվել, տոկոսադրույք, սառցուղյակ, սամբիստուհի, սպորտանավորդ, վարժասարք, տեխնոնում, տնտեսվարող, տեսացույց, տալիչ, տնօրենուհի, բուպեավճար** և այլն)⁸²,

ե) ընդունելու ինֆորմատիկային, համակարգչային տերմինաբանությանը և առհասարակ տեխնիկական գիտություններին վերաբերող որոշումներ, որոնցում հայերենացվեն կամ ճշգրտվեն ու վերահաստատվեն նոր բառ ու բառակապակցություն տերմիններ՝ **առցանց/օնլայն, սենսոր (զգիչ), պորտալ, ֆեյսբուք, այփադ, նոութբուք, պլանշետ** և այլն:

Այս ճանապարհին անխուսափելի են նաև սխալներն ու աղավաղումները: Նշված ոլորտներում տերմինաբանական կոմիտեի հաստատած բառացանկերում միշտ չէ, որ տեղ են գտել անհրաժեշտ ու հարմար օտար բառեր և կամ դրանց հայերեն անհրաժեշտ համարժեքներ: Առանձին օտար բառեր տարիների ընթացքում արդեն իսկ դուրս են մղվել կենդանի խոսքից, և հակառակը. առանձին համարժեքներ այդպես էլ չեն հաստատվել կենդանի լեզվում՝ իմաստային և գործառական ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված:

⁸² Հայերեն նորաբանությունները վերցված են Մ. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան (Եր., 2002) և «Նոր բառեր. Ա պրակ» (Եր., 2015) գրքերից:

Այսպես.

ա) Հայերեն նույնանիշներից կոմիտեն նպատակահարմար է համարում գործածել **շրթներկ** և **շրթնաներկ** տարբերակները (Տեղ., 121), մինչդեռ արդի գրական հայերենում հաստատուն գործածություն ունի առաջինը՝ **շրթներկ**-ը:

բ) Մի շարք օտար բառերի համար հանձնարարվում են հայերեն համարժեքներ, որոնք այսօր գործածական չեն: **Տրաս(ա)** բառի համարժեքներ են նշվում՝ 1. **ուղեգիծ**, 2. **ուղի** բառերը (Տեղ., 123): Մինչդեռ այսօր այդ օտար բառի գործածական համարժեքներից է նաև **մայրուղի**-ն, որը առանձին բառարաններում նշվում է որպես օտար տարբերակի չորս իմաստներից առաջնայինը կամ հիմնականը. «ՏՐԱՍՍԱ. 1. Մայրուղի՝ ճանապարհի, ջրանցքի..... 2. Ուղեգիծ..... 3. (ռազմ.) Ուղի, ճանապարհ, ուղեգիծ: 4. Սահուղի»⁸³: **Ռահվիրա**-ի համար հայերեն տարբերակ է նշվում **նախագնաց**-ը (Տեղ., 127), սակայն այսօր հավասարապես, եթե ոչ ավելի շատ, գործածական է արևմտահայերեն **առաջամարտիկ**-ը. լավագույն տարբերակը առայժմ այդ երեքի զուգահեռությունը հանձնարարելն է՝ **ռահվիրա//առաջամարտիկ//նախագնաց**: **Европейское экономическое сообщество** անվան համար գործածվող տարբերակներից՝ **Եվրոպական տնտեսական համագործակցություն//Եվրոպական տնտեսական միավորում** (ԵՏՄ), առաջարկվում է գործածել երկրորդը, մինչդեռ վերջին տասնամյակում այդ միավորման համար գործածական է դարձել **Եվրոպական տնտեսական միություն** անվանումը⁸⁴:

գ) Առանձին բառերի համար կոմիտեն սահմանում է օտար տարբերակների գործածություն (Տեղ., 123), մինչդեռ դրանց

⁸³ Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Եր., 2011:

⁸⁴ Տե՛ս Մ. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

հայերեն համարժեքը ունի եթե ոչ գերիշխող, ապա գուգահեռ (բալետմայստեր/դերուսույց, դիրիժոր/նվագավար, կոմպոզիտոր/երգահան), իսկ առանձին դեպքերում՝ ակնհայտորեն գերիշխող գործածություն՝ աշխատակարգ (ռեզլամենտ), մարզադաշտ (ստադիոն), համույթ (երժշտ.՝ անսամբլ), զբոսաշրջություն (տուրիզմ) և այլն:

Այսպիսով. բառային կազմի մշակումը, կարծում ենք, պիտի ընթանա երկու հիմնական ուղղությամբ. 1. չխուսափել անհրաժեշտ փոխառություններից, 2. ըստ ամենայնի օգտագործել ազգային բառակազմական հնարավորությունները: Իսկ հնարավոր սխալներն ու վրիպումները պիտի մղեն ոչ թե օտար անհասկանալի ու անհարմար տերմինը գործածելուն, այլ դրա հայերեն ճիշտ ու անհրաժեշտ համարժեքը ստեղծելուն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Քերականությունը, մասնավորապես ձևաբանությունը, տեղաշարժերի և փոփոխությունների առումով անհամեմատ ավելի պահպանողական և կայուն համակարգ է, և բնական է, որ սրանց վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի կատարած ճշգրտումներն ու հաստատումները նկատելիորեն քիչ լինեն: Սակայն, այնուամենայնիվ, դրանք չափազանց կարևոր են լեզվի կառուցվածքային և իմաստային ընդհանուր զարգացումների տեսանկյունից, հետևաբար նույնքան արժանի են քննարկումների և կանոնարկման: Կան իրողություններ, որոնց վերաբերյալ ընդունված որոշումները կարիք ունեն վերանայման ու ճշգրտման, և իրողություններ՝ տեղաշարժեր և զարգացումներ, որոնց նկատմամբ լեզվի կանոնարկման հարցերով զբաղվող մարմինը իր վերաբերմունքը պիտի ձևակերպի: Տերմինաբանական կոմիտեի վերջին որոշումներից մեկը ժամանակակից հայոց լեզվում **Լռոի**, **Գյումրի** տեղանունների հոլովական գուգաձևությունները վերացնելու և հարացույցը միօրինակացնելու մասին է (2000 թ.): Որոշվում

է. «Այսուհետև գրական լեզվում հանձնարարել սեռական-տրական հոլովի **ու-ով՝ Լոռու, Գյումրու** ձևերը» (Տեղ., 280): Որոշման մեջ թեև ոչինչ չի ասվում մյուս թեքված ձևերի կազմության մասին, սակայն նույն երևույթի մեկնաբանությունների մեջ հոլովական հարացույցում հանձնարարվում են նաև **Լոռուց-Լոռով-Լոռում, Գյումրուց-Գյումրով-Գյումրում** ձևերը: Իսկ չհնչունափոխված հիմքով կազմությունների (Լոռիից-Լոռիով-Լոռիում, Գյումրիից-Գյումրիով-Գյումրիում) մասին ասվում է, որ «սրանք բարբառային, անհանձնարարելի ձևեր են, թեև այդպես հաճախ լսում ենք շատերի բերանից» (Տեղ., 229): Նախ՝ դժվար է այսօր միանշանակ պնդել, որ անհնչունափոխ կազմությունները բարբառային են և հաճախ չեն գործածվում գրական գրավոր խոսքում: Հետո՝ **ու-ով** ձևերը ակնհայտորեն աղավաղում են բառի պատկերը, նաև անբարեհունչ են. երկրորդները՝ **Գյումրիից, Գյումրիով, Լոռիից, Լոռիով** և այլն, նախընտրելի են և՛ բառապատկերը պահպանելու, և՛ արտասանական առումով: Եվ վերջապես՝ ինչո՞ւ է որոշման նախագիծը ներառում միայն այդ երկուսը, երբ նույն կազմության տեղանունները հայերենում բազմաթիվ են և նույնպես հոլովական ձևերում կանոնարկման կարիք ունեն, ինչպես՝ **Էրեբունի, Վեդի, Նաիրի, Անի, Բջնի, Արենի, Արտենի, Բերկրի, Փարպի, Նոր Գեղի, Շուշի** և այլն:

Դժվարություններ կան հապավումների արտասանության և դրանց թեքվող ձևերի կիրառություններում: Լեզվական կանոնը սահմանում է, որ վանկի արժեք չունեցող տառային հապավումները կարդացվում են տառ առ տառ: Օրինակ՝ **ԿԳՆ [կըգընը], ԱԳՆ [ազընը]**, նմանապես ճիշտ արտասանություն է **ԱՄ[ը]Ն[ը], ՀԱՊ[ը]Կ[ը]**: Կանոնը նաև սահմանում է, որ ուղիղ ձևով են գործածվում հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին-առանձին (բաղաձայն-

ներն ուղեկցվում են չգրվող ք-ով), օրինակ՝ **ԱԺ նստաշրջան, ՀՀԿ խմբակցություն, ԱՊՀ երկրներ, ՀԱՊԿ անդամ երկրներ, ԵՊՀ աշխատակից, ԵՊՀ ուսխորհուրդ**: Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տառային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օրինակ՝ **ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև, ՀՀ-ից արտաքսված, ԵՊՀ-ի հետ գործակցությունը, ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան**⁸⁵:

Կան քերականական բազմաթիվ իրողություններ, որոնք առհասարակ դուրս են մնացել քննարկումների ծիրից: Ձևաբանական համակարգում էական տեղաշարժեր են գրանցվել՝ **ա)** գոյականի հոգնակիի կազմության մեջ. առաջացել են զուգաձևություններ՝ **• գամփռեր/գամփռներ, արկղեր/արկղներ, անգղեր/անգղներ, • -պետ և -նիշ** գոյական վերջնաբաղադրիչներով բառերի մեծ մասը հանդես է գալիս տարբերակային ձևերով՝ **համարանիշ-ներ// -եր, թաղապետներ// -եր** և այլն, **•** տարակարծություններ են առաջացել **մատ և հարս** բառերով վերջացող բաղադրյալ կազմություններում՝ **ցուցամատ-եր/-ներ, նորահարս-ներ/-եր** և այլն, **բ)** արգելական հրամայականի կազմություններում, **•** գործածությունից դուրս են մղվել և արդեն հնացած են համարվում **մի** մասնիկով և անորոշի հիմքով կազմությունները (եզակիում անորոշի վերջին լ-ն փոխվում է **ր-ի**)՝ **մի՛ մոտենար, մի՛ կարդար, մի՛ հասնիր, մի՛ կարդաք, մի՛**

⁸⁵ Տառային հապավումների սխալ արտասանությունը կարող է տեղիք տալ բանավոր և գրավոր խոսքում դրանց սեռական-տրականի ձևերի սխալ կիրառության. եթե արտասանվում է, օրինակ, ոչ թե **ԱՄ[ը]Ն[ը]**, այլ **ԱՄՆ** (ինչպես ենթադրել է տալիս տերմինաբանական տեղեկատվություն բերված նկարագրությունը (տե՛ս Տեղ., 203-204)), ապա հատկացուցչի պաշտոնում այն պետք է ունենա թեքված ձև՝ **ԱՄՆ-ի** (փոխ.՝ **ԱՄՆ**) *Կոնգրես*: Նմանապես **ՀԱՊ[ը]Կ[ը]**-ի սխալ արտասանությունը՝ **ՀԱՊԿ**, հանգեցնում է նրա սխալ գործածության՝ **ՀԱՊԿ-ի** (փոխ.՝ **ՀԱՊԿ**) *նշանակությունը Հայաստանի համար*:

մոտենաք, մի՛ խոսեցնեք և այլն⁸⁶, • մի շարք բայեր հնացել և գրական լեզվում դարձել են անգործածական. **կենալ, զարկել, գիտենալ** բայերը փոխարինվել են **մնալ, խփել (հարվածել), իմանալ** նույնիմաստ տարբերակներով, • **չ** ներածանց ունեցող **սառչել** և **ուռչել** բայերը սկզբնաձևում հանդես են գալիս նաև **սառել** և **ուռել** աններածանց տարբերակներով՝ խոնարհման հարացույցում դրսևորելով նոր յուրահատկություններ: Ձևաբանության մեջ առկա են այս կարգի նաև այլ տեղաշարժեր, որոնք արժանի են դիտարկումների:

Շարահյուսության մեջ կատարվող փոփոխությունները առավելապես վերաբերում են խնդրառությանը և կետադրությանը:

ա) Առանձին բայերի համար արդի հայերենում առաջ են եկել խնդրառական զուգաձևեր՝ **կարոտել հայրենիքին/հայրենիքը, դավանել սկզբունք/սկզբունքի, կրակել մեկի վրա/մեկին, մեկից/մեկին հինգ է պակաս, կառչել բազրիքից/բազրիքին, կախել պատին/պատից, տիրել երկրին/երկիրը, բավարարել պահանջները/պահանջներին, շնորհակալ եմ ձեզանից/շնորհակալ եմ ձեզ, փոխանցել կառավարություն/կառավարությանը** և այլն⁸⁷: Դրանցից մի քանիսը պարզապես խոսակցական երանգ ունեն կամ հնացած են, ինչպես՝ **խոչընդոտել զարգացմանը, ուրախ եմ քո գալուն, կրակել մեկին, ձեռնարկել**

⁸⁶ Այս ձևերը՝ որպես կանոնական կազմություններ, ներկայացված են՝ **Է. Աղայան, Հ. Քարսեղյան**, Հայոց լեզու: Դասագիրք V-VII դասարանների համար, Եր., 1989, էջ 229: **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն: Ձևաբանություն, Եր., 2004, էջ 486-487: **Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատրյան**, Հայոց լեզու: Դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Եր., 2006, էջ 100-101 և այլն: Բայի խոնարհման համակարգում կատարված այս և այլ տեղաշարժերի մասին տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Եր., 2011, էջ 29-86:

⁸⁷ Տե՛ս **Լ. Մարգարյան**, Բայերի սեռային անցումներ արդի արևելահայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», Եր., 2014, № 3, էջ 45-54:

գործի, բավարարել պահանջներին, խթանել զարգացմանը և այլն: Մյուսների վերաբերյալ, կարծում ենք, հանձնարարականներ տալու անհրաժեշտությունը կա:

բ) Դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցներում դերբայական մասը, թեքված ձևով գործածվելու փոխարեն, վերջին շրջանում գրավոր և բանավոր խոսքում ավելի հաճախ հանդես է գալիս ուղիղ ձևով՝ անկախ դիմավոր բայ-ստորոգյալի սեռից և բառական իմաստից, ինչպես՝ **«Տրամադրված եմ աշխատելու/աշխատել», «Հրաժարվում է ցուցմունք տալուց/ցուցմունք տալ», «Կարիք չկա հիշեցնելու/հիշեցնել»:** Գրական լեզվի կանոնը հանձնարարում է թեքված ձևերը՝ **«Հրաժարվում է հանդիպելուց/հանդիպումից», «Դրդում են հանցագործություն կատարելու/հանցագործության», «Կարիք չկա վրդովվելու/վրդովմունքի»** և այլն: Մասնագիտական գրականության մեջ հիմնավորված փորձեր են արվում կանոնական համարելու նաև անորոշ դերբայի ուղիղ ձևով կիրառությունները: Ուղիղ ձևերը, ի դեպ, շատ ավելի հարմար են գործածելու համար պաշտոնական գրագրություններում, մանավանդ կարգադրական բնույթի փաստաթղթերում: Բոլոր դեպքերում, հարցի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տարակարծությունները⁸⁸ լեզվակիրառողի համար ստեղծում են ընտրության դժվարություններ:

գ) Զգալի տեղաշարժեր ու փոփոխություններ կան արդի հայերենի **կետադրության համակարգում**.

1) Կանոնակարգված ու ճշգրտված չեն մի շարք իրողություններ՝

- շաղկապից առաջ տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը («Մոտեցավ՝ զենքը ձեռքին(,) և սպառնաց»),
- վերաբերականների կետադրությունը («Բնականաբար(,) դա

⁸⁸ Տե՛ս **Լ. Թեյան**, «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», Եր., 2015, № 3, էջ 43-54:

ենք պահանջում»), • մեկնական բառերից հետո բութի, ստորակետի և միջակետի գործածությունը («Պիտի լուծվեն մի շաբթ խնդիրներ, ինչպես(,) օրինակ՝(,) ջրահեռացման հարցը....»), • անջատման, միացման և տողադարձի գծիկի, • կախման կետերի (...) և բազմակետերի (....) գործածության կանոնները և այլն⁸⁹:

2) Վերջին շրջանում կետադրական որոշ նշաններ գործածության մեջ են մտել նոր նշանակությամբ, օրինակ՝ թեք գիծը երբեմն գործածվում է նաև լեզվական միավորի գուգահեռությունը նշելու և կամ բացատրություն տալու համար, ինչպես՝ «Ի տարբերություն «համալսարանական» պսակների, որոնց պարագային ամուսնական զույգը ուսումը/պրակտիկան/մասնագիտացումը ավարտելու համար....» և այլն:

Ամփոփում: Արդի հայերենի բառային կազմում և քերականական համակարգում կատարվող տեղաշարժերը ենթադրում են այս ոլորտների կարգավորման վերաբերյալ որոշումները վերանայելու և վերահաստատելու անհրաժեշտություն, իսկ առանձին նոր իրողությունների վերաբերյալ՝ նոր որոշումների նախագծերի մշակում և հաստատում:

⁸⁹ Տե՛ս **Հ. Զաքարյան**, Կետադրական բառարան, Եր., 2013:

**1.5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ՆՈՐՄԸ ԵՎ Մ. ԱՍՏԱՏՐՅԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ
ԼԵԶՈՒ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՁԵՌՆԱՐԿԸ⁹⁰**

Նախորդ դարի 70-80-ականները հայերենի բուհական դասագրքերի ստեղծման արդյունավետ շրջաններից մեկն էր: Այդ տարիներին լույս ընծայվեց նաև քերականագետ Մանվել Ասատրյանի ձևաբանության բուհական ձեռնարկը (1983 թ.), որը վերահրատարակվել է 2004 թ.⁹¹ առանց փոփոխությունների:

Ավանդական հայերենագիտության և արդի քերականագիտության ձեռքբերումների հիման վրա ստեղծված այդ աշխատասիրության մեջ քննարկվում և ներկայացվում են ձևաբանության տեսությունը և արևելահայերենի խոսքի մասերի համակարգը: Ձեռնարկը տասնամյակներ շարունակ հաջողությամբ ծառայել է իր նպատակին՝ լինելով գրական արևելահայերենի ձևաբանությանը նվիրված լավագույն աշխատանքներից մեկը:

Սակայն այսօր մի շարք օբյեկտիվ հանգամանքներ առիթ են տալիս քննարկման առարկա դարձնելու այդ ձեռնարկը, երբ չափանիշ և ելակետ ենք ընդունում արդի գրական արևելահայերենի ձևաբանական նորմը:

Նախ⁹²՝ հայտնի է, որ լեզուն կենդանի օրգանիզմ է. անընդհատ ենթակա է փոփոխությունների ու տեղաշարժերի: Լեզվի ձևաբանական համակարգը այդ փոփոխությունների ուղղակի

⁹⁰ Տպագրվել է «Հայագիտության հարցեր» հանդեսում, Եր., 2019, թիվ 2:

կրողն է՝ մյուս մակարդակների համեմատության մեջ առավել կամ պակաս չափով: Ձևաբանական նորմի վրա էականորեն կարող են ազդել խոսակցական լեզվի տարածվող ձևաբանական իրողությունները՝ մի կողմից, մյուս կողմից՝ արդեն գործածության մեջ եղած իրողությունների իմաստափոխությունները⁹¹:

Մ. Ասատրյանի ձեռնարկը ունի ավելի քան երեսունհինգ տարվա պատմություն: Այդ ընթացքում արևելահայերենի քերականությունը կրել է որոշակի փոփոխություններ, որոնք բնականաբար չէին կարող արձանագրվել հիշյալ դասագրքում. դա վերաբերում է, օրինակ, առանձին գոյականների հոլովական ձևերի հնացմանը, բայական առանձին կազմությունների՝ գործածությունից դուրս գալուն և այլն:

Բացի այդ, դասագրքի հեղինակը միշտ չէ, որ ձևաբանական առանձին իրողությունների վերաբերյալ տալիս է հանգամանալից բացատրություններ, կամ, միգուցե, այդ շրջանում դրա անհրաժեշտությունը չի եղել: Դա վերաբերում է ինչպես տեսական հարցադրումներին, այնպես էլ գործնական իրողություններին: Թեև մյուս կողմից էլ՝ մի շարք երևույթներ ներկայացվում են հանիրավի մանրամասնությամբ:

Հետո՝ այսօր լեզվական իրողությունների վիճակագրական նկարագրությունը տալու տեսակետից մեծ հնարավորություններ է ընձեռում **Արևակ** (Արևելահայերենի ազգային կորպուս) կայքէջը՝ վիճակագրական առատ փաստերով: Վերջինը վիճակագրության համար հարուստ և անփոխարինելի շտեմարան է (110 մլն բառամբերք), իր տեսակով լինելով նոր ժամանակների ծնունդ՝ լեզվական շատ ու շատ իրողությունների վրա նոր լույս է սփռում և հնարավորություն է ընձեռում

⁹¹ Տե՛ս **Զ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:

դրանց վերաբերմամբ նոր մոտեցումներ և գործնականում նոր լուծումներ առաջադրելու: **Արևակ**-ը ամփոփում է մեծ ժամանակահատվածի գրական-լեզվական նյութ (XIX դարի վերջից մինչև 2009 թ.): Մենք ներկայացրել ենք այդ ամբողջ ժամանակաշրջանից ընտրված լեզվական փաստերը՝ առանց ժամանակագրական կամ այլ տարբերակման, քանի որ, որպես կանոն, մեր դիտարկումները հաստատվում են նաև անկախ այդպիսի տարբերակումից: Ավելին. այդ վիճակագրության ժամանակային, բովանդակային, թեմատիկ և ժանրային մանրամասնությունները բացում են շատ հետաքրքիր իրողություններ, որոնք վերստին հաստատում են և ավելի են շեշտում վիճակագրական ընդհանուր փաստերի հավաստիությունը: Այսպես՝ տարակարծություններ կան, օրինակ, **երկրաշարժ** գոյականի հոգնակիակազմության վերաբերյալ՝ **երկրաշարժներ**, թե՛ **երկրաշարժեր**: **Արևակ**-ի վիճակագրությամբ՝ 72 տեքստում 53 անգամ գործածված է **-եր**-ով տարբերակը, 8 տեքստում՝ 5 անգամ՝ **-ներ**-ովը: Երկրորդ դեպքում 8 տեքստերից 4-ը Նոր կտակարանից է, 1-ը՝ Խորենացու «Հայոց պատմություն»-ից: Ակնհայտ է, որ արդի գրականում անվերապահորեն գերակշռում է **երկրաշարժեր** ձևը: Մեկ ուրիշ օրինակ՝ վիճակագրությամբ՝ **դարի** – 2583, **դարու** – 327. տարբերությունը ակնառու է: Դրանով հանդերձ՝ զուգաձևերից երկրորդ՝ հնացած տարբերակը հանդիպում է գերազանցապես արևմտահայերեն կամ էլ դրան առնչվող տեքստերում: **Ընկերից** հոլովածնի 35 կիրառությունների մեծագույն մասը XIX դարի հեղինակների (Պռոշյան, Բաֆֆի, Շիրվանզադե, Մուրացան և այլք) երկերում է, իսկ **ընկերոջից** տարբերակի գործածությունները՝ համեմատաբար նոր շրջանի գործերում՝ 166 տեքստում 130 գործածություն: Բոլոր դեպքերում, **Արևակ**-ին հղելիս մենք բերում ենք վիճակագրական ընդհանուր տվյալները⁹²:

⁹² Ի դեպ, որոշ անճշտություններ ծագում են նաև տեխնիկական պատճառ-

Եվ վերջապես՝ կա նաև երրորդ հանգամանքը, որը պայմանավորում է մեր այս քննարկման նպատակահարմարությունը. արդի քերականագիտական մտքի զարգացումները, մի շարք ձևաբանական կոնկրետ հարցերի վերաբերյալ ավելի տրամաբանական մոտեցումներ որդեգրելը հնարավորություն են տալիս ձևաբանական ինչ-ինչ խնդիրներ քննարկելու այլ հարթության մեջ և փոքր-ինչ այլ տեսանկյունից: Խոսքը կարող է վերաբերել, օրինակ, դերանունների ներխուսքիմասային դասակարգմանը կամ անկանոն բայերի քերականագիտական նկարագրությանը, որը, մեր տպավորությամբ, բավարար չափով ներկայացված չէ քննարկվող դասագրքում կամ կարող է ներկայացվել նոր մոտեցմամբ:

Նախ՝ տեսական մի քանի հարցադրումների նկարագրության մասին:

1) Քերականագիտության մեջ ընդունված է խոսքի մասերը դասակարգելիս առանձնացնել չորս հիմունք կամ սկզբունք՝ **իմաստային, ձևակազմական** կամ **բառակազմական** (որը հայերենին բնորոշ չէ), **ձևաբանական** և **շարահյուսական**: Մ. Ասատրյանը առանձնացնում է երեք հիմունք՝ **ա)** բառի ընդհանուր իմաստը, **բ)** բառի ձևավորումն ու ձևաբանական առանձնահատկությունները, **գ)** բառի շարահյուսական կիրա-

ներով: Օրինակ՝ **աներ** բառի **աների** ձևի (քերականության առանձին ձևանարկներում նշվում է որպես **աներոջ** հոլովածի հնարավոր զուգահեռ տարբերակ. այդ մասին կխոսվի) 20 գործածություններից, որ տալիս է **Արևակ**-ը, միայն մեկն է **աներ** գոյականի սեռականը, մնացածը այլ բառերի բաղադրիչներ են կամ տեխնիկական անճշտության արգասիք՝ **տ-ների > աների, սխեմ աների, դիրեկցի աների** և այլն: Կամ՝ **տալ**-ի հոլովածի (որպես **տալոջ**-ի զուգաձևություն) մեկ համատեքստի 10 կիրառություններից միայն մեկն է **տալ** գոյականի սեռականը, մյուսները **տալ** բայի բայաձևեր են՝ **ձեռ է տալի, խոսք է տալի** և այլն:

ռությունները⁹³: Այլ կերպ ասած՝ բառակազմական և ձևաբանական առանձնահատկությունները նա դիտարկում է մեկ հիմունքի կամ սկզբունքի համակարգում: Մինչդեռ, կարծում ենք, բառի ձևավորումը և ձևաբանական առանձնահատկությունները պետք է քննարկվեն առանձնաբար, քանի որ դրանք, վերաբերելով լեզվի տարբեր մակարդակներին (մի դեպքում՝ բառագիտությանը, մյուս դեպքում՝ քերականությանը), մի տեսակ հստակ չեն ցուցադրում բառերի խոսքիմասային խմբակարգման պատճառաբանվածությունը: Թեև ձեռնարկի հեղինակը այս մոտեցումը հավանաբար որդեգրել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերենում խոսքի մասերի դասակարգման բառակազմական հիմունքը կամ ձևավորման հարցը գործում է միայն որոշ դեպքերում. նախ՝ հայերենում հատուկ ձևավորում ունի միայն բայը (բոլոր բայերի անորոշ դերբայը արևելահայերենում կազմվում է **-ել** կամ **-ալ** մասնիկով), և երկրորդ՝ կան ածանցներ, որոնք հատուկ են միայն այս կամ այն խոսքի մասին (գոյականակերտ՝ **-ություն**, **-մունք**, **-ստան**, **-ուիի** և այլն, մակբայակերտ՝ **-բար**, **-պես**, **-որեն** և այլն, ածականակերտ՝ **-եղ**, **-ոտ**, **-ե//յա**, **-գույն** և այլն): Ի դեպ, հարցի քննարկման այս մոտեցումն է թերևս հիմք տալիս հետազոտողին մյուս խոսքի մասերի համեմատությամբ բայի ամենից ցայտուն ձևաբանական առանձնահատկությունը համարել այն, որ բայը բաղադրյալ և պարզ լինել չի կարող, այսինքն՝ միշտ բաղադրյալ է, ինչպես՝ **գր-ել**, **գր-ող**, **կարդ-ալ**, **կարդ-աց-ած** և այլն (207): Դժվար չէ նկատել, որ խոսքն ըստ էության բայի բառակազմական նկարագրության մասին է և ոչ ձևաբանական:

⁹³ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 29: Այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ. կնշվի միայն էջը:

2) **Ձևակազմական հիմք** թեման ներկայացնելիս Մ. Ասատրյանը այն բնորոշում է հետևյալ կերպ. «Հիմքը բառի այն մասն է, որին ավելանում են վերջավորությունները՝ տվյալ բառի մաստի այս կամ այն քերականական նշանակությունն արտահայտելու համար» (24): Մինչդեռ հայտնի է, որ քերականական իմաստի արտահայտիչները միայն վերջավորությունները չեն, և որ հիմքին քերականական մասնիկ կարող է ավելանալ նաև սկզբից (**կ+գր+եմ, չ+խոս+եց**), որը միայն խիստ պայմանականորեն կարող է վերջավորություն համարվել: Հիմքի այլ՝ ճշգրիտ ձևակերպումներ կան. «Հիմքը լեզվական բաղադրյալ միավորի մի մասն է, լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը»⁹⁴, կամ՝ հիմքը բառի իմաստակիր այն մասն է, «որը բառակազմության կամ ձևակազմության մեջ ելաձև է»⁹⁵ և այլն:

3) Ընդունված է **ա հոդակապը** համարել «իմաստագուրկ» ձևույթ (19): Մ. Ասատրյանը, պաշտպանելով այս տեսակետը, համապատասխան օրինակների կողքին (դասամատյան, ջրատար, սևասիրտ, նաև՝ անձնանվեր/անձնվեր, հուզաարտահայտական/հուզարտահայտչական) չի նշում նաև **ա-ի** իմաստագատիչ դերով օրինակներ (**արջաորս** (արջի որս)//**արջորս** (արջ որսացող), **բանավոր** (ոչ գրավոր)//**բանվոր** (գործավոր), **հրաձիգ** (կրակող)//**հրձիգ** (դրդիչ, հրահրող)): Իմաստագուրկ ձևույթ է համարում նաև **ե, ա ձայնավորները** անորոշ դերբայի (նաև անցյալ կատարյալի, ըղձական եղանակի և այլ ձևերի) մեջ, ինչպես՝ **գրել, կարդալ, գրեց, կարդաց, գրեմ, կարդամ** և այլն (20): Մինչդեռ հայտնի է, որ առանձին բայե-

⁹⁴ Մ. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2003, էջ 107:

⁹⁵ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 378:

րում այդ ձայնավորները կատարում են իմաստագատիչ դեր, ինչպես՝ **ծխ-ել** (ծխախոտ ծխել) և **ծխ-ալ** (ծուխ արձակել, այրվել), **թվ-ալ** (երևալ, պատկերանալ) և **թվ-ել** (թվարկել), **ծփ-ալ** (ալեկոծվել, ալիք տալ) և **ծփ-ել** (հարել):

4) Խոսելով խոսքի մասերի փոխանցումների մասին՝ Մ. Ասատրյանը չի ընդգծում այն միտքը, որ բառը, մի խոսքի մասից անցնելով մյուսին և ձեռք բերելով տվյալ խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկություններ, նաև կարող է պահպանել նախկին իմաստը: Օրինակ՝ **հակառակ** (հակառակ կողմ – ածական//**հակառակ** ինչ-որ բանի – կապ), **համապատասխան** (համապատասխան վերաբերմունք – ածական//դրան համապատասխան – կապ), **ծնող** (ծնող պատճառներ – դերբայ), **ծնող** (ծնող լինել – գոյական) և այլն:

5) Միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող գոյականների թվակազմության յուրահատկությունները քննարկելիս Մ. Ասատրյանը մի քանի անգամ գործածում է **բարդ բառեր** արտահայտությունը և օրինակներ է բերում բացառապես բարդ կազմություն ունեցող բառերից՝ **ածխահանք-եր, անձրևաջր-եր, ազգասեր-ներ, պատմագիր-ներ** և այլն (56): Մինչդեռ հայտնի է, որ կանոնը վերաբերում է ոչ միայն կազմությամբ բարդ բառերին, այլև, օրինակ, ածանցավոր կազմություններին: Օրինակ՝ **ստորակետ, ենթակետ** բառերը հոգնակի թիվ կազմում են նույն սկզբունքով, ինչ **վերջակետ-ը**, կամ՝ **ենթակարգ** և **համակարգ** ածանցավոր բառերը հոգնակի են կազմում նույն սկզբունքով, ինչ բարդաձանցավոր **վարչակարգ-ը**. սկզբունքը վերջնաբաղադրիչի բայականական կամ գոյականական լինելն է (գոյական է կամ ընկալվում է որպես այդպիսին, բայականական է կամ ընկալվում է որպես այդպիսին): Ձևակեր-

պումը, կարծում ենք, ճշգրիտ կլինեն, եթե **բարդ բառեր** տերմինի փոխարեն գործածվեր **բաղադրյալ բառեր** տերմինը:

6) Առանձին երևույթների վերաբերյալ գրքի հեղինակը չի տալիս ավարտուն և վստահ ձևակերպումներ, թեև դրա ակնհայտ հիմքերը ներկայացնում կամ քննարկում է: Օրինակ՝ **տոհմ, խմբակցություն** ցույց տվող գոյականների մասին խոսելիս հեղինակը **մերոնք** և **ձերոնք** բառերը քննարկում է այդ շարքում, բայց խուսափում է դրանց խոսքիմասային պատկանելությունը հստակ նշելուց. ասում է՝ «Կան նաև **ոնք** ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովաձևերից՝**մերոնք, ձերոնք**» (53):

Առանձին դիտարկումներ կամ ձևակերպումներ, որոնք չեն համընկնում գրական հայերենի լեզվական նորմին, ամենայն հավանականությամբ պարզապես վրիպանքի արգասիք կամ հետևանք են, ինչպես, ասենք, ձևակերպումը հարակատար դերբայի կազմության վերաբերյալ, ըստ որի՝ հարակատարը կազմվում է **ՄԾ** մասնիկով, որը, այլևայլ բայերից բացի, որոնք ձեռնարկում թվարկվում են, **դրվում է պարզ բայերի անկատարի հիմքի վրա՝ գրել – գր-ած, կատարել – կատար-ած** (254): Ճշգրիտ ձևակերպման մեջ պիտի շեշտվեր պարզ բայերի՝ **ե** լծորդության պատկանելու հանգամանքը (**ե** խոնարհման պարզ բայերի անկատարի հիմքի վրա), քանի որ **ա** խոնարհման պարզ բայերի դեպքում գործում է անցյալի հիմքը՝ **կարդալ – կարդաց-ած, խաղալ – խաղաց-ած**:

Ձևաբանական նորմում կատարվող փոփոխությունները շատ ավելի ակնառու են բուն քերականական ձևերի փոփոխության մեջ: Նկատի ունենք մասնավորապես գոյականի հոլովական և հոգնակիի կազմության ձևերում և բայի խոնարհման հարացույցում առկա փոփոխությունները: Ինչպես արդեն

ասվեց, Մ. Ասատրյանը օբյեկտիվորեն չէր կարող արձանագրել այդ փոփոխությունները, և դա պատճառ է դարձել որոշ անհամապատասխանությունների, որոնք առաջացել են գրական արևելահայերենի գործող ձևաբանական նորմերի և քրննարկվող ձեռնարկում ներկայացված լեզվական նյութերի միջև: Երբեմն բերվում են ոչ բավարար չափով համոզիչ օրինակներ, կամ շրջանցվում են օրինաչափություններից շեղումները՝ դարձյալ պայմանավորված գրական արևելահայերենի շուրջ քառասունամյա զարգացման տեղաշարժերով:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Ա) **Գոյական խոսքի մասի** վերաբերյալ ունենք հետևյալ դիտարկումները.

1. Ձեռնարկում բազմաթիվ օրինակներ են բերվում բայական կամ գոյականական միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բաղադրյալ գոյականների հոգնակիի կազմությունից՝ հաստատելու օրինաչափությունը, սակայն գրեթե ոչ մի օրինակ չի բերվում շեղումներից կամ մթագնած իմաստով բաղադրիչ ունեցող կազմություններից (ասենք՝ **տեսակետ-ներ, մանրէ-ներ, ծովահեն-ներ, թիկնագոր-ներ, ծխամորճ-ներ, ծխախոտ-ներ**), և կամ չեն բերվում գուգահեռությունների օրինակներ և բնականաբար դրանք նաև չեն բացատրվում, ինչպես՝ **երկրաշարժ-ներ/--եր, փառատոն-եր/--ներ** և այլն:

2. Հանգամանորեն չի նկարագրվում այն փոխառյալ (օտար) բառերի հոգնակիի կազմությունը, որոնք փոխատու լեզվում միավանկ են, սակայն արդի հայերենում ընկալվում են որպես երկվանկ բառեր. սրանց հոգնակին կազմվում է **-ներ** վերջավորությամբ՝ **շտաբ-ներ, բլանկ-ներ, ֆրակ-ներ, սպա-ներ, սլայդ-ներ** և այլն: Նույն սկզբունքով՝ փոխատու լեզվում բաղադրյալ կազմությամբ բառերը հայերենում գիտակցվում են

կազմությամբ պարզ բազմավանկ բառեր, ուստի դրանց հոգնակին կազմվում է **-ներ** մասնիկով, ինչպես՝ **կադաստր-ներ, բլոգեր-ներ, կոմիտե-ներ, դինոզավր-ներ, նոութբուք-ներ** և այլն⁹⁶:

3. Ձեռնարկում երբեմն որպես տեսական պնդումը հաստատող օրինակներ են բերվում հնացած, գործածությունից դուրս եկած կամ բարբառային-խոսակցական քերականական ձևեր.

ա) Գոյականի հոգնակիի ձևեր: Հաջորդող գաղտնավանկ ունեցող բառերի շարքում **ոսկր** բառի համար նշվում է **ոսկրներ** (55) գուգաձևը, որը, սակայն, այսօր գրական լեզվում գործածական չէ: **Արևակ**-ի տվյալները ցույց են տալիս, որ իսկապես այս ձևը հնացած է կամ դուրս է մղվում գրական լեզվից՝ **ոսկրներ՝ 8, իսկ ոսկորներ՝ 221:**

բ) Հոլովական ձևեր: Որպես հավասարապես գործածական գուգաձևեր են նշվում հոլովաձևեր, որոնց մի տարբերակը ակնհայտորեն հնացած է կամ բարբառային. ձեռնարկում չի մատնանշվում դրանցից մեկի կամ մյուսի խոսակցական, բարբառային կամ քիչ գործածական լինելը, ինչպես՝

• **Մեռական-տրականի ձևեր՝** անվան//անունի, դարի//դարու//դարվա, արյան//արյունի, այրու//այրիի, ձյան//ձյունի (86). **Արևակ**-ի տվյալներով՝ առաջին տարբերակները գործածության հաճախականությամբ էապես գերազանցում են երկրորդներին՝ անվան՝ 21.208//անունի՝ 165, դարի՝ 8.917//դարու՝ 620//դարվա՝ 6, արյան՝ 10.001//արյունի՝ 282, այրու՝ 250//այրիի՝ 90, ձյան՝ 3.243//ձյունի՝ 861:

• **Բացառականի ձևեր՝** ընկերոջից՝ 166//ընկերից՝ 44, աներոջից՝ 14//աներից՝ 6 (անորից՝ 0), շնից՝ 138//շանից՝ 33, պատա-

⁹⁶ Տե՛ս Թու. Ավետիսյան, Լ. Թեյլան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան, Ուղեցույց հայոց լեզվի, Եր., 2017, էջ 144:

նուց՝ 40//պատանիից՝ 1, այրուց՝ 12//այրիից՝ 3, Անիից՝ 162// Անուց՝ 6:

• *Գործիականի ձևեր*՝ ապակիով՝ 79//ապակով՝ 21, մատանիով՝ 78//մատանով՝ 2, ուղիով՝ 1.334//ուղով՝ 111:

• *Ներգոյականի ձևեր*՝ կամրջում՝ 4//կամուրջում՝ 3, Լոռիում՝ 218//Լոռում՝ 39, Շուշում՝ 32//Շուշիում՝ 417:

• Անի բառի համար Անի և Անու տարբերակներից կանոնական է համարվում Անու ձևը, և դրան իբրև գուգահեռ, Անիի ձևը նշվում է հնարավոր՝ չբացատվող տարբերակ. կարդում ենք. «Չի բացատվում նաև ի-ով վերջավորվող հայերեն բառերի Ի հոլովումը, օրինակ՝ Մեղրի-Մեղրիի, Անի-Անիի, այրի-այրիի և այլն» (73): Մեկ այլ առիթով դարձյալ առաջին, այսինքն՝ նախընտրելի տարբերակ է նշվում Անու ձևը՝ Անիի փոխարեն (86): Մինչդեռ այսօր Անիի տարբերակը հենց գրական կանոնական ձևն է, իսկ Անու-ն վաղուց դուրս է եկել գործածությունից: Դա հաստատվում է նաև Արևակ-ի տվյալներով. Անիի՝ 1.961//Անու՝ 48:

• Զուգաձևություններ են կազմում նաև այլ հատուկ անուններ՝ Մեղրու//Մեղրիի, Վեդու//Վեդիի, Լոռու//Լոռիի, Գյումրու//Գյումրիի և այլն: ՀՀ լեզվի տեսչությունը, ինչպես ասել ենք, Լոռի, Գյումրի տեղանունների համար սահմանում է հետևյալը. «ժամանակակից հայոց լեզվում Լոռի, Գյումրի տեղանունների հոլովական գուգաձևությունները վերացնելու և հարացույցը միօրինակացնելու նպատակով՝ այսուհետև գրական լեզվում հանձնարարել սեռական-տրական հոլովի ու-ով՝ Լոռու, Գյումրու ձևերը» (Տեղ., 280): Մ. Ասատրյանը ընդհանրապես չի անդրադառնում Գյումրի-ի, Լոռի-ի ձևերին՝ գործածական համարելով միայն Գյումր-ու և Լոռ-ու ձևերը (73): Մինչդեռ Արևակ-ի տվյալներով՝ Լոռիի ձևը նույնպես գործածական է՝ Լոռու՝ 2.514, Լոռիի՝ 87: Իսկ ահա Գյումրի տեղանվան դեպ-

քում շատ ավելի գործուն է **-ի**-ով կազմությունը. **Արևակ**-ում **Գյումրիի** ձևը հանդիպում է **3.280**, **Գյումրու**՝ **1.072**:

• Մ. Ասատրյանի ձեռնարկում ժամանակ ցույց տվող գոյականների սեռական-տրականի համար **-վա** վերջավորությամբ տարբերակային կանոնական ձևեր են սահմանվում նաև **գարունք** և **աշունք** գոյականների՝ **գարունք-վա**, **աշունք-վա** ձևերը: Ապա հավելվում է նաև, որ «**ՎԱ** ձևով կարող են հոլովվել նաև ժամանակային իմաստով գործածվող այլ բառեր, օրինակ՝ **գատիկ – գատկՎԱ**, **պաս – պասՎԱ**, **ճաշ – ճաշՎԱ** և այլն» (75): Մինչդեռ նշված կազմությունները արդի լեզվագագոթությամբ ընդգծված խոսակցական-բարբառային երանգ ունեն և գրական լեզվի նորմերից դուրս են: Դրանց համար կանոնական են **ի**-ով ձևերը՝ **գատկի/գատիկի**, **պասի**, **ճաշի**, իսկ **գարունք** և **աշունք** խոսակցական սկզբնաձևերի պարագայում՝ **գարունքի** և **աշունքի**: Թեև պետք է նաև հավելել, որ նշված սկզբնաձևերը՝ որպես բարբառային տարբերակներ, դուրս են մղված գրական լեզվի բառապաշարից. գործածական են միայն **գարուն** և **աշուն** սկզբնաձևերի **գարնան** և **աշնան** տարբերակները: **Արևակ**-ի տվյալները՝ **գարնան**՝ **4.642**//**գարունքվա**՝ **41**, **աշնան**՝ **2.941**//**աշունքվա**՝ **42**, **գատկի**՝ **470**//**գատկվա**՝ **31**, **պասի**՝ **221**//**պասվա**՝ **15**, **ճաշի**՝ **3.081**//**ճաշվա**՝ **65**: Մ. Աբրահամյանը, անդրադառնալով այս բառերին, իրավացիորեն նշում է. «**Գարունքվա**, **աշունքվա** ձևերը **աշունք**, **գարունք** բարբառային բառերի ձևերն են և գրական չեն»⁹⁷:

• Ձեռնարկում **դար** բառի սեռական-տրականի տարբերակ է նշվում **դարու**-ն՝ **դարի/դարու**, որը, սակայն, այսօր ակնհայտորեն հնացած կազմություն է:

• Մ. Ասատրյանը նշում է, որ **կայսր** և **դուստր** բառերի պարագայում գործուն են **ի**-ով ձևերը՝ **կայսրի**, **դուստրի**: Հեղինակը

⁹⁷ Մ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 155:

հնարավոր է համարում նաև **կայսեր, դստեր** ձևերի գործածությունը: Ի դեպ, այս կարծիքը պաշտպանվում է նաև հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ. «...**կայսր** և **դուստր** բառերը ևս ժամանակակից հայերենում ենթարկվում են **ի** հոլովման»⁹⁸: Պարզ վիճակագրությունը ցույց է տալիս, սակայն, որ վերջինները՝ **դստեր** և **կայսեր** ձևերը, շատ ավելի գործածական են, քան **կայսրի** և **դուստրի** տարբերակները. դա հաստատվում է նաև **Արևակ**-ի տվյալներով՝ **դստեր՝ 1.643 – դուստրի՝ 3, կայսեր՝ 1.638 – կայսրի՝ 375**: **Դստեր** և **կայսեր** ձևերի գործածությանը առավելապես ոճական-արտահայտչական պատճառաբանվածություն է վերագրում Ս. Աբրահամյանը. դրանք, ըստ նրա, հիմնականում գործածվում են պատմական կոլորիտ կամ հանդիսավորություն ստեղծելու նպատակով⁹⁹:

• Գրաբարում **ն** վերջնամասնիկ ունեցող և արդի հայերենում **-ան** հոլովման ենթարկվող միավանկ գոյականների շարքում ձեռնարկը հիշատակում է նաև **կուռ** բառը՝ **կռան** սեռական-տրական տարբերակով (79): Պիտի ասել, սակայն, որ բառը արդեն գործածական չէ գրական հայերենում, և նման բառերի կամ բառաձևերի քննարկությունները անհարկի ծանրաբեռնում են ձեռնարկում զետեղված լեզվական նյութը:

• **Ոջ** հոլովման պատկանում են իմաստային նեղ խումբ ընդգրկող որոշ բառեր՝ **աներ, սկեսուր, տեգր, տալ, ընկեր, տեր**, որոնք ունեն նաև **ի**-ով զուգահեռ ձևեր, ինչպես՝ **աներ–աներոջ //աների//անոր, սկեսուր–սկեսոր/կեսոր/սկեսորոջ/սկեսուրի, տեգր–տեգրոջ/տեգրի/տեգոր, տալ–տալոջ/տալի, ընկեր–ընկերոջ/ընկերի** (75): Մ. Ասատրյանը այս զուգահեռ ձևերից որևէ մեկին գործածական առավելություն չի տալիս կամ չի

⁹⁸ «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն», Եր., հ. 2, 1974, էջ 89:

⁹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 151:

առանձնացնում գրական և խոսակցական կամ բարբառային և հնացած տարբերակները, մինչդեռ մեր դիտարկումներով՝ այդ ձևերից մի քանիսը արդի գրական արևելահայերենից աստիճանաբար դուրս են մղվում. այսօր կենդանի գրական լեզվում, ըստ որում, և՛ գրավոր, և՛ բանավոր տարբերակներում գրեթե գործածական չեն **կեսոր, սկեսոր, անոր** ձևերը: Իսկ մյուս զուգահեռ ձևերից մեկը կամ մյուսը գործածական հաճախականությամբ էապես զիջում է մյուսներին: **Արևակ**-ի տվյալներով ունենք հետևյալ պատկերը՝ **կեսոր՝ 5 – սկեսոր՝ 10 – սկեսորոջ՝ 178 – սկեսուրի՝ 72; տեգրի՝ 1 – տեգրոջ՝ 7; տալի՝ 2.341 – տալոջ՝ 24; ընկերի՝ 239 – ընկերոջ՝ 3.540**: Նույն երևույթի մասին Ս. Աբրահամյանը նշում է, որ երկրորդաբար **ի** հոլովման են ենթարկվում **տեգր** և **տալ** բառերը, «որոնց **Ի** հոլովման պատկանելը ավելի օրինաչափական է»¹⁰⁰, իսկ **աներ, տեգր** բառերի **անոր, տեգոր** հոլովածները չի համարում գրական¹⁰¹: Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ **աներ, տեգր** և **տալ** բառերի համար կանոնական են համարվում **-ոջ**-ով ձևերը՝ **աներոջ, տեգրոջ, տալոջ**: **Տալ** և **տեգր** բառերի համար՝ նաև **-ի**-ով տարբերակները՝ **տալի, տեգրի**, իսկ **տեգոր** ձևը համարում է ժողովրդախոսակցական¹⁰²: Ա. Մարգարյանը գրական լեզվում գործածական տարբերակ է համարում նաև **ընկերի** ձևը՝ որպես **ընկերոջ**-ի զուգահեռ¹⁰³, սակայն **սկեսոր, անոր** կամ **աների** ձևերը չի նշում որպես գործածական տարբերակներ:

- Դասական քերականագիտության մեջ ընդունված է հայերենի զարտուղի հոլովումների շարքում առանձնացնել **-յան** մաս-

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 156:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 158:

¹⁰² Տե՛ս նույն տեղը, էջ 99-100:

¹⁰³ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 144:

նիկով կազմություններ՝ որպես զուգաձևություն՝ **հանգիստ–հանգստի/հանգստյան, գալուստ–գալստի/գալստյան** և այլն: Ձեռնարկում նշված բառերի շարքում որպես օրինակ են բերվում նաև **փախուստ** և **թաքուստ** սկզբնաձևերի **փախստյան, թաքստյան** հոլովաձևերը (75): Նախ՝ մեր դիտարկումներով՝ երկրորդը՝ **թաքուստ** բառը, դուրս է մղվել արդի գրական հայերենից և ըստ էության ունի հնաբանության արժեք. հետևաբար անգործաձական է նաև դրա հոլովական ձևը՝ **թաքստյան**ը: **Փախուստ**–ը գրական հայերենի համագործաձական բառապաշարից է, սակայն դրա **փախստյան** հոլովաձևը հազիվ թե կարող է հավասարապես գործաձական դիտվել **փախուստի** տարբերակին զուգահեռ: Ա. Մարգարյանը նույնպես նախափորձն է համարում **թաքուստ**–ը և դրա հոլովական զուգաձևերը՝ **թաքստյան/թաքստի**, գործաձական, բայց այս շարքում չի հիշատակում **փախուստ**–ը¹⁰⁴: **Արևակ**–ի տվյալները այսպիսին են՝ **փախստյան՝ 24/փախուստի՝ 2.003, թաքստյան՝ 5/թաքստի՝ 29**:

Բ) Դերանվանական համակարգ.

- Որպես **ինքը** դերանվան հոգնակիի տարբերակներ՝ նշվում են զուգաձևեր՝ **իրենք** և **ինքները** (181-182): Երկրորդը, մեր կարծիքով, գրական լեզվում այլևս անգործաձական է, և գրավոր աղբյուրները դրա վերաբերյալ արձանագրում են խիստ սակավ գործածություն:
- Դերանունների շարքում հիշատակվող **ինչևե/ինչևիցե** բառերը այսօր ընկալվում են որպես վերաբերականներ. ձեռնարկում բերված օրինակներում այդպիսին էլ դրսևորվում են. «**Ինչևե/ինչևիցե** անցնենք հարցի կոնկրետ քննարկմանը»,

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 149:

«**Բնչե/ինչնիցե**, անցածը վերադարձնել հնարավոր չէ» (204): Մ. Ասատրյանն ինքն էլ այդ կարծիքին է, սակայն ավանդույթի ուժով՝ ձեռնարկում դրանք ներկայացրել է դերանունների մեջ. «Չնայած որ համարվում են դերանուններ,– դրանց մասին կարդում ենք ձեռնարկում,– բայց փաստորեն եղանակավորող բառերի արժեք ունեն» (204):

Գ) Բայական համակարգ.

• Մ. Ասատրյանը ներկայացնում է **ՉԵԼ** կազմությամբ հետևյալ բայերը՝ **դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել**: Այս բայերից անդրադառնում է միայն երեքին՝ նշելով, որ **ՉԵԼ** ձևերը տեղի են տալիս **ՆԵԼ** ձևերին, ինչպես՝ **թռչել - թռնել, կպչել - կպնել, փախչել - փախնել** (198): Արդի գրական լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **չել**-ով կազմությունները ակնհայտորեն գերակշռում են, և **նել**-ով տարբերակները գերազանցապես գործածվում են խոսակցական բանավոր լեզվում: Գրավոր խոսքի տվյալներով, որ քաղված են **Արևակ**-ի բնագրերից, պատկերն այսպիսին է՝ **թռչել՝ 978 - թռնել՝ 65, կպչել՝ 156 - կպնել՝ 33, փախչել՝ 2.271 - փախնել՝ 35**: Այս կարծիքն է պաշտպանվում նաև, այսպես ասած, նորագույն հետազոտություններում: Անդրադառնալով հարցին՝ Ջ. Աղաջանյանը նկատում է, որ թեև անցյալ դարի սկզբներին այս զուգաձևություններում երկու տարբերակներն էլ նորմատիվ էին, բայց այսօր գրական են **Չ**-ով ձևերը. հակադիր եզրերը բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին¹⁰⁵: Մ. Ասատրյանը չի անդրադառնում նաև **թաքչել/թաքնվել, հալչել/հալվել, փլչել/փլվել** զուգաձևերին, որոնցում արձանագրվել են ակնհայտ տեղաշարժեր. **թաքչել**-ը՝ որպես սկզբնաձև, դուրս է մղված արդի գրական արևելահայերենից, գրեթե անգործածական է: Դրան փոխարինել է **թաքնվել** սկզբնաձևը: **Հալչել** և

¹⁰⁵ Տե՛ս **Ջ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 257:

փլշել սկզբնաձևերը աստիճանաբար փոխարինվում են **հալվել** և **փլվել** ձևերով: Եվ դա արձանագրվում է նաև գրական գրավոր խոսքում: **Արևակ**-ի վիճակագրությունը այսպիսին է. **թաքչել 6 - թաքնվել 1.236, հալչել 18 - հալվել 391, փլչել 9 - փլվել 317**: Ուռչել բայի ոչ ցոյական՝ արմատական ձևերը՝ **ուռա, ուռաք** և այլն, գործածությունից դուրս են մղվում. ակնհայտորեն տարածում են ստանում այդ բայի ցոյական հիմքով կազմությունները՝ **ուռեցի, ուռեցիր, ուռեց, ուռեցինք, ուռեցիք, ուռեցին**: Կարծիք կա, որ գործածական են նաև ներկայի հիմքից կազմված խոսակցական ձևերը՝ **ուռչեցի, ուռչեցիր**¹⁰⁶, որը մեր ուսումնասիրություններով չի հաստատվում: **Մառչել** բայի համար ցոյական՝ **սառեցի, սառեցիր, սառեց, սառեցինք, սառեցիք, սառեցին** ձևերը ավելի գործածական են, քան արմատական ձևերը՝ **սառա, սառաք, սառավ** և այլն¹⁰⁷:

• Կրավորակերպ բայերի մասին խոսելիս ձեռնարկի հեղինակը դրանցում **վ**-ն համարում է «ձևական նշանակություն» ունեցող ածանց, ըստ որում, հստակ չի ասվում՝ դա քերականական¹⁰⁸, այսինքն՝ կրավորական¹⁰⁹ ածանց է, թե՞ բառակազմական. հարցի պատասխանը ձեռնարկում մնում է բաց: Բացի այդ, «մի քանի» կրավորակերպ չեզոքների համար արձանագրվում են առանց **վ**-ի ձևեր, որոնց շարքում մատնանշվում են այնպիսիք, որոնք իրականում այդպիսի կազմություն արդի գրական արևելահայերենում չունեն, ինչպես՝ **հակառակել** (<հակառակվել), **մոլորել** (<մոլորվել), **մոայլել** (<մոայլվել), **հրաժարել** (<հրաժարվել), **նմանել** (<նմանվել): Դրանց վերաբերյալ Ասատրյանը գրում է. «Գրական լեզուն երբեմն գերադասում է **Վ**-ով, իսկ երբեմն էլ առանց **Վ**-ի ձևեր» (238-239):

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 285:

¹⁰⁷ Մանրամասն տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր արդի գրական արևելահայերենում, Եր., 2011, էջ 63-64:

Արդի գրական լեզուն գերադասում է, ավելի ճիշտ՝ գործածում է սրանց միայն վ-ով ձևերը՝ **հակառակվել, նմանվել, հրաժարվել** և այլն:

• Հայտնի է, որ պատճառական **-ցն-** ածանցը գործածվում է **-ն-** և **-չ-** սուկաձանցով բայերի դեպքում՝ **հագնել - հագցնել, բուսնել - բուսցնել** (ավելի սովորական է՝ **ծլել - ծլեցնել**), **կայչել - կայցնել, փախչել - փախցնել** և այլն: Բայց կան շեղումներ կամ բացառություններ: Բացի **իջնել** բայից, որը շեղվում է ընդհանուր կանոնից (<**իջեցնել**, փոխ.՝ **իջցնել**), որի մասին սովորաբար հիշատակվում է ուսումնասիրություններում ու ձեռնարկներում, կան մի շարք բայերի՝ ընդհանուր կանոնից շեղվող կազմություններ, որոնք առավելաբար առաջ են եկել (կամ սկսվել) են) վերջին տասնամյակներին՝ **լեզվի զարգացման արդյունքում, ինչպես՝ հալչել (//հալվել) - հալեցնել, սառչել (//սառել) - սառեցնել, ուռչել (//ուռել) - ուռեցնել, պրծնել - պրծեցնել, համընկնել - համընկեցնել**: Առաջին երեքի դեպքում երևույթը պայմանավորող գործոնն այն է, որ այդ բայերի սկզբնաձևերը աստիճանաբար դադարում են ածանցավոր լինելուց. **հալչել, սառչել, ուռչել** բայերը գրական բանավոր, ինչպես նաև գրավոր խոսքում այսօր իրենց տեղը զիջում են աններածանց **հալվել, սառել, ուռել** սկզբնաձևերին, և հետևաբար դրանց պատճառականները ձևավորվում են աններածանց բայերի նման, ինչպես՝ **խոսել - խոսեցնել, հիշել - հիշեցնել, նմանապես նաև՝ հալվել - հալեցնել, սառել - սառեցնել, ուռել - ուռեցնել**: Իսկ ինչ վերաբերում է մյուս երկու բայերին՝ **պրծնել, համընկնել**, ապա պիտի նկատել, որ դրանցից առաջինը գործածվում է միայն խոսակցական լեզվում ու նաև խոսակցական է սկզբնաձևում (գրական համարժեքը՝ **ավարտել**), իսկ երկրորդի պատճառական ձևը՝ **համընկեցնել**, գրական լեզվում ունի խիստ սակավ գործածություն: Կարծում ենք, որ այս քննարկումները առավել ամբողջական կարող են դարձնել երևույթի նկարագրությունը բուհական ձեռնարկում:

• Արդի հայերենում երկրորդ ապառնի դերբայների մեջ որպես ընդհանուր տեղաշարժային երևույթ զարգանում է թանձրացական-առարկայական նշանակությունը, և, այդպիսով, մի շարք բայերի ապառնիի այդ ձևերը, աստիճանաբար զրկվելով իրենց բայական նշանակությունից, վերածվում են գոյականների: Որպես այդպիսիք՝ Մ. Ասատրյանի բնութագրմամբ՝ որպես «մաքուր գոյականներ» նշվում են հետևյալները՝ **գիտելիք, ծխելիք, հիշելիք, պատկանելիք, սպասելիք, հագնելիք, ըմպելիք, գալիք** (257): Մինչդեռ այս շարքում ոչ բոլոր բառերն են, որ կարող են «մաքուր գոյականներ» համարվել, ինչպես՝ **հիշելիք, պատկանելիք, հագնելիք** ձևերում ավելի զգալի է բայական իմաստը՝ գործողության՝ ինչ-որ բան անելու իմաստը:

4. Հարադրական բայերի խոնարհումը ներկայացնելիս Մ. Ասատրյանը նշում է, որ խոնարհվող բայաձևերի վրա է դրվում նաև արգելական հրամայականի **ՄԻ** մասնիկը, օրինակ՝ **դուրս մի՛ գնա, դուրս մի՛ գնացեք**: Ապա ավելացնում է, որ առանձին դեպքերում **ՄԻ** մասնիկը կարող է դրվել նաև հարադրական բայի վրա սկզբից՝ որպես մի ամբողջության, օրինակ՝ **մի՛ դուրս գնա, մի՛ դուրս գնացեք** (331): Սակայն մեր կարծիքով՝ այս ձևերը ժամանակակից գրական հայերենում գործածական չեն:

Այժմ մի քանի խոսք անկանոն բայերի մասին:

1. Մ. Ասատրյանը **ասել** անկանոն բայի համար նշում է, որ անցյալ կատարյալի համար ունենք՝ **ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին** ձևերը, բայց հաճախ խոսակցական և գրավոր լեզվում գործածվում են **ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին** ձևերը (321-322): Մ. Ասատրյանը, սակայն, չի նշում **ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին** տարբերակները, որոնք, ինչպես ցույց են տալիս դիտարկումները, հաճախակի գործածություն ունեն խոսակցականում:

Նա չի խոսում նաև **ասացե՛ք, ասե՛ք** ձևերի մասին, որոնք գրական լեզվում **ասել** բայի հոգնակի հրամայականի գործածական միակ տարբերակներն են:

2. Մ. Ասատրյանը անկանոն բայերի շարքում նշում է նաև **գարկել** բայը, որը մեր վիճակագրությամբ իր տեղը զիջում է **խփել** և **հարվածել** բայերին (322): **Արևակի**-ի տվյալներից պարզ է դառնում, որ **խփել** բայի ձևերը առավել շատ են գործածվում, քան **գարկել**-ինը՝ **խփեցիր** - 81, **գարկիր** - 79, **գարկեցիր** - 23; **խփեց** - 3.332, **գարկեց** - 1.338; **խփեցինք** - 64, **գարկինք** - 12, **գարկեցինք** - 21; **խփեցին** - 545, **գարկին** - 160, **գարկեցին** - 183:

3. Նմանապես, **գիտեմ** պակասավոր բայի խոնարհման հարացույցը ներկայացնելիս որպես հավելավոր բայ է տրվում **գիտենալ**-ը, որը, սակայն, մեր դիտարկումներով, աստիճանաբար դուրս է մղվում գրական լեզվից և փոխարինվում է հոմանշային **իմանալ** բայով: **Արևակ**-ի տվյալներով նույնպես **գիտենալ**-ը (505 կիրառություն) իր տեղը զիջում է **իմանալ**-ին (7.735):

4. Գրական լեզվից դուրս են մղվում նաև Մ. Ասատրյանի ներկայացրած **կենալ** բայի խոնարհված ձևերը՝ **կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան** և այլն: Ըստ որում, բայի նկարագրությունը տրվում է **կենալ** սկզբնաձևով, բայց հարացույցը ներկայացվում է հարադրությամբ՝ (**վեր**) **կացա, կացար** և այլն (349): Բոլոր դեպքերում, առանձնաբար ներկայացվող **կենալ** բայը և դրա խոնարհված ձևերը արդի գրական լեզվում գործածական չեն և փոխարինվում են մնալ բայով և դրա համապատասխան ձևերով՝ **մնացի, մնացիր, մնաց, մնացինք, մնացիք, մնացին**: Գրական լեզվի գործածության շրջանակներից աստիճանաբար դուրս է մղվում նաև ձեռնարկում պակասավոր բայերի շարքում ներկայացված **ցանկալ** բայը, որն իբրև թե ունի ըղձական և սրանից կազմվող ենթադրական ու հարկադրական եղանակի ձևեր՝ **ցանկամ, կցանկամ, չեմ ցան-**

կա, պիտի//պետք է ցանկամ, չպիտի//չպետք է ցանկամ և այլն: Բայը փոխարինվում է **ցանկանալ** բայով և դրա համապատասխան խոնարհման ձևերով:

5. Մի քանի անկանոն բայերի համար ձեռնարկում նշվում են ենթակայական դերբայի՝ ներկայի և անցյալի հիմքերից կազմվող զուգաձևեր՝ **տանել//տարող, անել//արող, դնել//դրող, լինել//եղող** (347): Առաջին երեքի դեպքում անցյալի հիմքից կազմվող ձևերը մեր դիտարկումներով դուրս են մղվել գրական լեզվից, իսկ վերջինի դեպքում նույն հիմքով կազմված տարբերակը՝ **եղող**-ը, գործածականությամբ ակնհայտորեն գերազանցում է **լինող**-ին: Ա. Մարգարյանը, օրինակ, գործածական է համարում միայն **լինել** բայի՝ անցյալի հիմքից կազմվող ձևը՝ **եղող** (**/լինող**)¹⁰⁸: **Տալ, անել, դնել** բայերի համար բեական հիմքով ենթակայական դերբայի կազմություններ չի արձանագրում նաև հայոց լեզվի ակադեմիական հրատարակությունը¹⁰⁹: Մյուս բայերի համար ենթակայականի զուգաձևեր չի նշում: **Արևակ**-ի տվյալները այսպիսին են՝ **անող - 1.723, արող - 28; տանող - 4.441, տարող - 2; եղող - 768, լինող - 120**:

6. Ինչ վերաբերում է **ելնել** անկանոն բային, ապա Մ. Ասատրյանը **ե՛լ** եզակի հրամայականի համար որպես զուգահեռ և հավասարապես գործածական ձև է ներկայացնում **ելի՛ր**-ը (323), սակայն **Արևակ**-ի տվյալներով **ե՛լ**-ը անհամեմատ շատ է գործածվում, քան **ելի՛ր**-ը՝ **ե՛լ՝ 6.030 - ելի՛ր՝ 242**:

7. Այսօր դժվար է միանշանակ պնդել, որ **լվալ**-ը «բարբառային բայ» է, և իբրև թե դրա կանոնավոր ձևերը համընկնում են ներածանցավոր **լվանալ** գրական բայի անկանոն ձևերին՝ **լվանալ - լվացի, լվացիր** և այլն (349): Դրանք իրապես կարելի է

¹⁰⁸ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, էջ 408:

¹⁰⁹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», էջ 429-430:

համարել **ա** խոնարհման աններածանց **լվալ** բայի կանոնավոր ձևեր, ինչպես՝ **լվալ - լվացի, լվացիր, լվաց** և այլն, հրամայականը՝ **լվա՛, լվացե՛ք**: **Լվալ**-ը պակասավոր անկանոն բայ է այնքանով, որ դրա առանձին խոսակցական ձևեր լրացվում են **լվանալ** բայի գրական կանոնավոր ձևերով, ինչպես՝ **լվում եմ - լվանում եմ, լվում էի - լվանում էի, լվալու եմ - լվանալու եմ, կլվամ - կլվանամ** և այլն:

8. Անկանոն բայերի շարքում Ասատրյանը չի նշում **բացել** բայը: Հավանաբար գործում է այն տրամաբանությունը, որ **բանալ** սկզբնատիպ բային փոխարինած **բացել**-ը ձեռք է բերել կանոնավոր բայերին բնորոշ նկարագիր¹¹⁰: Սակայն **բացել**-ը այնուամենայնիվ ունի **ե** խոնարհման բայերի հարացույցից շեղում եզակի հրամայականում. կանոնավոր **բացի՛ր** ձևին գուգահեռ՝ այն ունի նաև **բա՛ց** գործածական տարբերակը՝ **բա՛ց//բացի՛ր**: Հետևաբար **բացել**-ը՝ որպես անկանոն բայ, պետք է ներկայացվեր դրանց շարքում:

9. Հայտնի է, որ արդեն տասնամյակներ շարունակ **ե** խոնարհման աններածանց բայերի հոգնակի հրամայականը ունի գուգահեռներ՝ ներկայի և անցյալի հիմքերից՝ **գրե՛ք//գրեցե՛ք, խոսե՛ք//խոսեցե՛ք**: Հայտնի է նաև, որ ներկայի հիմքից կազմվող ձևերը, որոնք ծագել են արևելահայ խոսակցական լեզվից, աստիճանաբար տարածվում են նաև գրական գրավոր լեզվում: (Արևմտահայերենում այդ ձևերը կանոնական չեն): Այսօր կարելի է ասել, որ հավասարապես գործածական են երկու տարբերակներն էլ՝ մեկը խոսակցական երանգավորվածությամբ, մյուսը՝ գրական-գրքային: Մ. Ասատրյանը, հավանաբար առաջնորդվելով իր ժամանակի լեզվագագացողությամբ և լեզվա-

¹¹⁰ Հայ քերականագիտության մեջ կա այդպիսի կարծիք, տե՛ս **Հ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 306: «Ժամանակակից հայոց լեզու», էջ 428: **Զ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, էջ 319:

գործածության փաստերով, չի քննարկում դրանց գործառական յուրահատկությունները և իրողությանն առնչվող քերականական տեղաշարժերը: Հրամայականի կազմություններում, որքան էլ զարմանալի է, **ե** խոնարհման աններածանց բայերի եզակի հրամայականի (**գր-իր, խոս-իր, երգ-իր**) տարբերակ է նշում առանց **ր**-ի խոսակցական ձևը (**գր-ի, խոս-ի, երգ-ի**. նույնը նաև արգելականում՝ **մի՛ գր-ի, մի՛ խոս-ի, մի՛ երգ-ի**. 354), որը հազիվ թե գրական լեզվի շրջանակներում ունեի ակտիվ կիրառություն անգամ ձեռնարկի ստեղծման շրջանում: Այդ կազմության գործառական նկարագիրը սկզբունքորեն այնպիսին էր, ինչպես այսօր է:

Նույն կազմությամբ բայերի հրամայականի վերաբերյալ ձեռնարկում առկա է նաև մեկ այլ ձևի արձանագրում, որը այլ ձեռնարկներում ու դասագրքերում գրեթե չի հանդիպում: Խոսքը վերաբերում է **ե** խոնարհման աններածանց բայերի հոգնակի արգելականի կազմությանը, որը կազմված է անցյալի հիմքով բաղադրված դրական հրամայականից՝ **մի՛ գրեցեք, մի՛ խոսեցեք**: Ըստ որում, դա ներկայացվում է որպես նախընտրելի տարբերակ իր գուգահեռի (**մի՛ գրեք, մի՛ խոսեք**) համեմատությամբ (355): Արգելականի այդպիսի կազմությունը որպես հնարավոր տարբերակ է ներկայացված նաև Ա. Մարգարյանի ձեռնարկում՝ **մի՛ գրեք/մի՛ գրեցեք**¹¹¹: Մինչդեռ արդի գրական հայերենում այդ ձևը այլևս անգործածական է և տեղը զիջել է իր գուգահեռին: Հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ այդպիսի կազմություն չի նշվում: «Արգելական հրամայականի հոգնակին, – կարդում ենք գրքում, – կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով **եք**..., այսպես՝ **մի՛ գրեք, մի՛ վագեք, մի՛ խմեք, մի՛ ջրեք**...»¹¹²:

¹¹¹ Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, էջ 453:

¹¹² «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, էջ 417:

Այսպիսով: Մ. Ասատրյանի ձեռնարկն ունի տասնամյակների պատմություն: Այդ ընթացքում արևելահայերենի ձևաբանության նորմերը կրել են որոշակի փոփոխություններ: Դրանք առկա են մասնավորապես գոյականի և բայ խոսքի մասի համակարգում հատկապես գործնական նյութի դրսևորումներում: Դրանք բնականաբար չէին կարող արձանագրվել քննարկվող ձեռնարկում: Այս բոլորով հանդերձ՝ Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» ձեռնարկը անվերապահորեն հաջողված դասագիրք է և տասնամյակներ շարունակ ծառայել է բուհական համակարգին: Գրական նորմի և ձեռնարկում ներկայացված քերականական նյութի անհամապատասխանությունները գերազանցապես ունեն օբյեկտիվ պատճառներ:

**1.6. ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՎԱԾ ԵՎ ԱՆՀՆՉՑՈՒՆԱՓՈԽ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՒՄ**¹¹³

Գրական լեզվի զարգացումը բարդ ու հակասական գործընթաց է: Կատարվող փոփոխությունների ու տեղաշարժերի մի մասը, որպես կանոն, ենթարկվում է լեզվական օրինաչափություններին և լեզվի զարգացման տրամաբանությանը: Օրինակ՝ գրական հայերենում ձայնեղ բաղաձայնների համար սովորական է դառնում գրային արտասանությունը: Կամ՝ գոյականի հոլովումը ակնհայտորեն միտում է **-ի** հոլովումի առավել ընդհանրական դառնալուն. այլ հոլովումների ենթարկվող գոյականների մի զգալի մասը ունի **-ի**-ով զուգաձևեր՝ **օրվա//օրի, կայսեր//կայսրի, շարժման//շարժումի, զինու//զինիի, սգո//սգի, ձյան//ձյունի** և այլն: Տեղաշարժերի արդյունքում բոլոր բայերի արգելականը կազմվում է դրականի ձևերից՝ **մի՛ մասնիկի միջոցով** (կարդա՛ – **մի՛ կարդա**, մտի՛ր – **մի՛ մտիր**, մոտեցի՛ր – **մի՛ մոտեցիր** և այլն): Անկանոն բայերի մի շարք շեղումներ միտում են կանոնարկման: Օրինակ՝ **բերել** բայի անցյալ կատարյալի անկանոն ձևերը իրենց տեղը զիջում են կանոնավորներին (**բերի<բերեցի, բերին<բերեցինք**) և այլն, **բառնալ**-ը և **բանալ**-ը ձեռք են բերում կանոնավոր բայի հատկանիշներ (**բառնալ>բարձել** – բարձեցի, բարձեցինք, **բանալ>բացել** – բացեցի, բացեցինք և այլն), **ասել** բայը անցյալ կատարյալում ստանում է կանոնավոր ձևավորում (**ասացի//ասեցի** և այլն), **չ** ներածանց ունեցող սահմանափակ թվով բայերից մի

¹¹³ Տպագրվել է «ՎԷՄ» համահայկական հանդեսում, Եր., 2017, թիվ 1:

քանիսը աստիճանաբար ձեռք են բերում **է** լծորդության պարզ բայերի նորմատիվ հատկանիշներ (**կառչել**, **մաքտնչել**, **երկնչել** և այլն, նաև՝ **սառչել**/**սառել**, **ուռչել**/**ուռել** և այլն): Օրինակներ կարելի է բերել նաև հնչյունական, բառային և շարահյուսական մակարդակներում կատարված այլ տեղաշարժերից, որոնք միտում են օրինաչափությունների հաստատման:

Բայց կա նաև հակառակ երևույթը. փոփոխությունների ու տեղաշարժերի մյուս մասի վարքագիծը միշտ չէ, որ ունի սպառիչ բացատրություններ ու հիմնավորում: Օրինակ՝ խոսակցական լեզվում լայնորեն տարածվում է **խոսել** բայի հարակատարի անկանոն կազմությունը՝ **խոսացած**, փոխ.՝ **խոսած**: Կամ՝ գրական լեզվում սովորական է դառնում և գործածական մեծ հաճախականություն է ձեռք բերում **դիմավոր բայ + անորոշ դերբայ** կառույցում վերջինիս ուղիղ ձևը, որը տարբեր է գոյականով արտահայտված անդամի թեքված կանոնական ձևերից (**ձգտում է հանդիպման** – **ձգտում է հանդիպել**, փոխ. **ձգտում է հանդիպելու**): Եվ կամ՝ խոսակցականում լայնորեն տարածվում են պատճառական բայերի՝ **րեական + ցոյական** հիմքերով կազմությունները՝ **խոսեցր + եց**-ի, **մոտեցր + եց**-ի և այլն: Կարելի է բերել նաև այլ օրինակներ:

Հաճախ դժվար է լինում որոշակի կանոններ ու օրինաչափություններ սահմանել հատկապես հնչյունափոխական իրողությունների վերաբերյալ: Ավելին: Թե ինչու է առհասարակ լեզվի մեջ հնչյունափոխություն կատարվում, ինչ գործոններով ու հանգամանքներով է այն պայմանավորված, լեզվաբանության մեջ սպառիչ մեկնաբանություն կարծես թե չկա: «Ումանք ուշադրություն են հրավիրում արտասանական էներգիայի տրնտեսման («նվազագույն ճիգերի») սկզբունքի վրա, – կարդում ենք «Հայերենագիտական բառարանում», – որ խոսողը միտում ունի դեպի հեշտ, սահուն արտասանությունը և հակում է ցուցաբերում գեղեցիկ ու հաճելի արտասանության նկատմամբ

(գեղագիտական միտում): Ոմանք էլ ընդգծում են սերունդների փոփոխության խնդիրը, երբ, ասենք, գոյանում են արտասանական տարբերությունները՝ սերունդների հաջորդականությամբ պայմանավորված: Երբեմն մեջ են բերում այլ գործոններ, ինչպես՝ հնչարտաբերության բնակլիմայական հանգամանքները, տնտեսական-քաղաքական, նույնիսկ աշխարհագրական (տարածական) պայմանները և այլն»¹¹⁴:

Այլ հետազոտողներ առաջնությունը տալիս են սերնդափոխությանը. «Այդ գործընթացում ամենից առաջ կարևոր դեր է խաղում սերունդների՝ միմյանց հաջորդելու հանգամանքը, գրում է Ա. Մարգարյանը:– Լեզվի ընդհանուր զարգացմամբ պայմանավորված՝ հնչյուններն իրենց արտասանությամբ, անշուշտ, սերնդից սերունդ ճիշտ նույնը չեն մնում և, խիստ ասած, մեկի հնչարտաբերությունը ինչ-որ չափով տարբերվում է մյուսի հնչարտաբերությունից: Ընդ որում՝ ժամանակով և հաջորդումներով ինչքան մոտ են նրանք իրար, այնքան էլ այդ տարբերությունը չնչին է ու աննշան, և, ընդհակառակը, ինչքան հեռու են իրարից, այնքան դա մեծ է ու խիստ զգալի: Այդ է հաստատում մեր հին գրական լեզուն՝ գրաբարը, որ մենք այսօր կարդում ենք աշխարհաբարյան արտասանությամբ»¹¹⁵: Ա. Մարգարյանը առանձնացնում է նաև այլ գործոններ՝ արտասանական բազան, հնչյունների և հնչունակապակցությունների բնույթը, դրանց դիրքը բառում, ձայնի և աղմուկի հարաբերակցությունը, շեշտը, բառի ձևաբանական և բառակազմական աճումներն ու փոփոխությունները, բնակլիմայական, տնտեսական, աշխարհագրական և մի շարք այլ հանգամանքներ¹¹⁶:

¹¹⁴ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 391:

¹¹⁵ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997, էջ 86:

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 83:

Հարցի պատմության համառոտ ակնարկ: Հնչյունափոխությունը հայոց լեզվի ուսումնասիրված բնագավառներից է: Հարցին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը, Հ. Աճառյանը, Վ. Առաքելյանը, Ա. Մարգարյանը և ուրիշներ: Սակայն, դրանով հանդերձ, հնչյունափոխական շատ իրողություններ բավարար չափով չեն ուսումնասիրվել և ըստ անհրաժեշտության չեն լուսաբանվել, իսկ առանձին խնդիրներ, որոնք ծագել են լեզվի զարգացման ընթացքում, ընդհանրապես քննարկումների առարկա չեն դարձել: Հարցի վերաբերյալ Ա. Մարգարյանի՝ շուրջ երկու տասնամյակ առաջ կատարած դիտարկումից հետո հարցի ուսումնասիրության բնագավառում շատ բան չի փոխվել: «Իր զարգացման ճանապարհին, – գրում է նա, – հայ լեզվաբանական միտքը զգալի նվաճումներ է ձեռք բերել հայոց լեզվի հնչյունափոխության ուսումնասիրության բնագավառում և նշանավորվել ինչպես տեսական, այնպես էլ գործնական արժեք ունեցող մի շարք դրույթներով: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե այն բոլոր կողմերով կամ ամբողջապես սպառիչ լուծում է ստացել և նոր քննության կամ նկարագրության կարիք չի զգում. ամեննին»¹¹⁷:

Ամենահանգամանալից ուսումնասիրությունը, որում փորձ է արվում երևույթի մեջ հնարավոր օրինաչափություններ ու օրենքներ հաստատելու, գրվել է շուրջ կես դար առաջ, ապա՝ փոփոխություններով վերահրատարակվել երեք տասնամյակ անց¹¹⁸: «Մեր ուսումնասիրության նպատակն է, – գրում է ուսումնասիրության հեղինակ Վ. Առաքելյանը, – դուրս բերել ընդ-

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Խոսքը **Վ. Առաքելյանի** «Աշխարհաբարի հնչյունափոխության օրինաչափությունները» ուսումնասիրության մասին է, որը սկզբնապես հրատարակվել է 1951-ին «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» ժողովածուում (Խմբ. Գր. Ղափանցյան, հատ. 1, Եր., 1951), ապա՝ «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր աշխատության առաջին հատորում

հանուր կանոններ և այդ ընդհանուր կանոնից տարամիտող բացառությունների բոլոր հնարավոր պատճառները»¹¹⁹։ Ժամանակակից հայերենի հնչյունափոխության օրենքների ուսումնասիրության հաջող փորձերից են Ա. Մարգարյանի և Ա. Սուքիասյանի բուհական ձեռնարկները, որոնցում նույնպես շեշտի ազդեցությամբ կատարվող (դիրքային, ավանդական, ժառանգորդական) հնչյունափոխության վերաբերյալ արվում են ընդհանրացումներ, սահմանվում են ինչ-ինչ օրինաչափություններ¹²⁰։

Քննարկման առարկա են դարձել ինչպես հնչյունափոխության պատճառները, այնպես էլ հնչյունափոխական իրողություններում ձևավորված կանոններն ու օրինաչափությունները։

Ընդունված տեսակետներից մեկն այն է, որ արդի հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունը հիմնականում պայմանավորված է գրաբարի ավանդույթով։ «Շեշտի հետևանքով կատարված փոփոխությունները մեր նոր գրական լեզվի համար գործող օրինաչափություն չեն,– կարդում ենք ուսումնասիրություններից մեկում,– դա հատուկ է եղել գրաբարին, մեր հին խոսվածքներին ու բարբառներին, որոնցից նոր գրական լեզուն ոչ միայն փոփոխված ձևեր է ժառանգել, այլև հոլով-

(Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Եր., 1979), իսկ հետո՝ որոշ փոփոխություններով՝ «Հայոց լեզու» գրքի առաջին հատորում (Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան և այլք, I մաս, Ա պրակ, Եր., 1980)։

¹¹⁹ Վ. Առաքելյան, Աշխարհաբարի հնչյունափոխության օրինաչափությունները, «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ», հ. 1, Եր., 1951, էջ 86։

¹²⁰ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2008։ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997։ Տե՛ս նաև Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Եր., 1974։ Հ. Սուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Եր., 1982։ Ռ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Եր., 1983 և այլն։

ման, հոգնակիի կազմության, բառակազմության պատրաստի կադապարներ է վերցրել, որոնք հնչյունափոխական այլևայլ միտուներով մշակված ձևեր էին»: Այս կարծիքը հաստատելու համար բերվում են լեզվական հետևյալ փաստերը. **գես** բառից ունենք **գիսավոր**-ը, որ գալիս է հնից. փոփոխությունը կատարվել է հնում, մինչդեռ այսօր բառը հոլովվում է անհնչյունափոխ հիմքով՝ **գեսի** և ոչ թե **գիսի**, որը գրաբարում պարտադիր էր: Կամ՝ **թիմ** բառի սեռականը արդի հայերենում **թիմի** է, մինչդեռ գրաբարի դիրքային հնչյունափոխության համաձայն՝ պետք է լիներ **թմի**: Եվ կամ՝ եթե առաջնորդվեինք արդի հայերենի հնչյունափոխության / անհնչյունափոխության կանոններով, ապա **սեր** բառը կունենար **սերի** և ոչ թե **սիրո** տարբերակը, որը պատրաստի փոխառված ձև է գրաբարից: «Այս նշանակում է, – գրում է հետազոտողը, – որ գրաբարի դիրքային հնչյունափոխությունը այժմ մեծ մասամբ դարձել է պատմական»¹²¹:

Նույն միտքը զարգացվում է մեկ այլ աշխատության մեջ. «Մովորաբար ընդունված է ասել, որ հնչյունափոխական երևույթները կապված են շեշտի հետ, բայց այս օրենքը ճիշտ է այնքանով, որքանով հնչյունափոխված ձևերը անցել են մեր լեզվին գրաբարից և բարբառներից, այսինքն՝ հիշյալ օրենքը ներհատուկ է եղել նրանց, իսկ գրական լեզվին այդ օրենքը հատուկ չէ. եթե գրական լեզվում հնչյունափոխված են որոշ բառեր, որ գրաբարում կամ բարբառներում հնչյունափոխված չեն. ապա այդ կատարվել է ոչ թե շեշտի օրենքով, այլ անալոգիայով»¹²²:

Այս դիտարկումները ի վերջո հանգում են մի եզրակացության,

¹²¹ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 128:

¹²² «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Գր. Ղափանցյան), հ. 1, Եր., 1951, էջ 63:

ըստ որի՝ ժամանակակից հայերենի դիրքային հնչյունափոխությունը ավանդվել է գրաբարից և եթե ոչ ամբողջապես, ապա գերազանցապես ունի պատմական բնույթ:

Գրաբարում շեշտը ավելի ուժեղ է եղել: Բառի աճման կամ փոփոխության դեպքում նույնիսկ փոխառություններում ձայնավորները հիմնականում ենթարկվել են փոփոխության: Որ գրաբարի հնչյունափոխական այդ իրողությունները իրենց ուժեղ ազդեցությամբ փոխանցվել են արդի արևելահայերենին, հաստատվում է նաև այլ փաստերով. հնից ավանդված բառերում զգալի է գրաբարի հնչյունափոխության ավանդույթը, նորակազմություններում այդ ազդեցության չափը ակնհայտորեն մարում է: Սակայն այս պնդումը, այնուամենայնիվ, չի սպառում հնչյունափոխական մի շարք կոնկրետ իրողությունների նկարագրությունը: Նախ՝ **նոր գրական հայերեն** հասկացությունը այս դեպքում պիտի գործածել միայն արևելահայերենի վերաբերմամբ, քանի որ գրական արևմտահայերենի հնչյունափոխությունը ենթակա է որոշակիորեն տարբեր օրինաչափությունների՝ պայմանավորված արևմտահայ բարբառների և միջին հայերենի ազդեցություններով: Երկրորդ՝ դիրքային հնչյունափոխությունը ժամանակակից արևելահայերենի հնչյունական համակարգի հիմնական օրինաչափություններից է՝ անկախ այն հանգամանքից՝ այդ օրինաչափությունը պատմական բովանդակություն ունի, թե՞ միաժամանակ նաև արևելահայ բարբառների ազդեցության արգասիք է: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ դիրքային հնչյունափոխության հիմնական սկզբունքները գործում են նաև նոր բառերի բառակազմական հիմքակազմության մեջ՝ համաբանությամբ կամ այլ հիմքերով: Բնչպես՝

● **ձայնավորների հնչյունափոխություն՝** **հ** – **անիվ** – անվ/աշղթա, անվ/ասայլակ, **դեղին** – դեղն/օրոր, **խնդիր** – խնդր/ահարույց, **մոխիր** – մոխր/աթև, **հ→ը** – **զիծ** – զծ/ատեր, **խիտ** –

խտ/ասալիկ, **կիրթ** – կրթ/ավարձ, **միս** – մս/ատեսակ, **միտ** – մտ/ավարժանք, **ուղ** – **անուրջ** – անրջ/ատենդ, **խում** – խմ/ուրյուն, **եղ** – **դեմ** – դիմ/ահայելի, դիմ/ապակի, դիմ/ափայլ, **զեն** – զին/հաշմանդամ, **ծես** – ծիս/ագործում, **կես** – կիս/ալքված, **հանդես** – հանդիս/ավար, **մեջ** – միջ/բուհական, **ուղ** – **խունկ** – խնկ/ագուրկ, **քուրդ** – քրդ/ախոս, **քուն** – քն/ակարոտ,

• **Երկհնչյունների հնչյունափոխություն՝ ուղ→ու – բույժ** – բուժ/հաստատություն, **բույս** – բուս/աթեյ, **թույն** – թուն/աբաժին, **լույս** – լուս/ագույն, **կառույց** – կառուց/աշար, **ցույց** – ցուց/անակակիր, **ույժ** – **կապույտ** – կապտ/աթն, կապտ/ակող, **յուղ** – **ձյուն** – ձն/ամած և այլն¹²³:

Հարցի ուսումնասիրությամբ զբաղվողներից Ա. Մարգարյանը նույնպես հակված է չպաշտպանելու Գ. Սևակի և հետագայում Վ. Առաքելյանի կողմից զարգացվող տեսակետը, թե «Հընչյունափոխության բոլոր այս դեպքերը գրաբարից են փոխանցվել արդի լեզվին և այսօր ժառանգորդական ուժ ունեն, կենդանի ու գործուն չեն» (Գ. Սևակ), կամ՝ «Դրանք մնում են գործածության սովորությամբ և ոչ թե բխում են մեր լեզվի գործող օրինաչափություններից» (Վ. Առաքելյան): «Ամենին էլ ո՛չ, գրում է Ա. Մարգարյանը.– հայ նոր գրական լեզուն ևս ունի իր շեշտափոխական հնչյունափոխությունները, որոնք կենդանի են ու գործուն և հիմնականում էլ բխում են նրա գործող օրինաչափություններից»¹²⁴:

Շեշտափոխական հնչյունափոխության ընդհանուր օրինաչափություններ: Արդի հայերենի շեշտափոխական հնչյունափոխության օրինաչափությունները ընդունված է սահմանել որոշակի կանոններով: Դրանցից մեկն այն է, որ բառի աճման

¹²³ Նորաբանությունները ներկայացված են ըստ «Նոր բառեր, Ա պրակ» բառարանի, Եր., 2015:

¹²⁴ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 89:

կամ զարգացման (բառափոխության) ժամանակ թույլ դիրքում գտնվող ձայնավորը ենթարկվում է փոփոխության: Այդպիսի սահմանումներից մեկում, օրինակ, կարդում ենք. «Ժամանակակից լեզվաբանությունը հնչյունափոխությունը բնութագրում է որպես հարացուցային հարաբերություն լեզվի միատեսակ (միևնույն մակարդակի) միավորների միջև, որոնք ընդունակ են փոխարինելու մեկը մյուսին **առավել խոշոր միավորների կազմում**» (նկատի ունի բառի աճումը – *Յու. Ա.*)¹²⁵: Սա համընդհանուր կանոն է և, իբրև այդպիսին, սկզբունքորեն ունի գոյության իրավունք: Սակայն դրա, այսպես կոչված, մասնավոր իրացումներում դրսևորվում են զգալի շեղումներ, որոնք երբեմն դժվար է լինում բացատրել սահմանվող ընդհանուր կարգով:

Նախ՝ շեշտով կամ արտասանական ուժգնության չափով պայմանավորված՝ **ձայնավորները ենթարկվում են հնչյունափոխության ինչպես բառափոխության ժամանակ, այնպես էլ դրանից անկախ**. պարզապես շատ գործածական որոշ բառերի ուղիղ ձևերում թույլ դիրքում գտնվող ձայնավորը կրում է փոփոխություն, ինչպես՝ գտանել – **գտնել**, ելանել – **ելնել**, սպանանել – **սպանել** (արևել.) – **սպաննել** (արևմտ.), մոռանալ – **մոռնալ** (արևմտ.) և այլն: Ապա՝ երկու դեպքում էլ՝ և՛ բառի ուղիղ ձևերում, և՛ բառափոխության ժամանակ, ավելի հաճախ այդ փոփոխությունը տեղի չի ունենում. օրինակ, ասենք՝ **ելանել, մտանել, գտանել, հասանել, հատանել, մոռանալ, գիտենալ** և էլի բազմաթիվ այլ բառեր պատմական զարգացման ընթացքում հնչյունափոխվել են (**ելնել, մտնել, գտնել, հասնել, հատնել**, արևմտ.՝ **մոռնալ, գիտնալ**), իսկ, օրինակ, ասենք՝ **բարձրանալ, խոստանալ, մոտենալ** և բազմաթիվ այլ բառեր չեն ենթարկվել հնչյունափոխության: Կամ՝ որդեգրված սկզբ-

¹²⁵ Տե՛ս **Ֆ. Խլդաթյան**, Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Եր., 2009, էջ 37:

բունքով գիտական սպառիչ բացատրություն չունի այն իրողությունը, որ **ի** ձայնավորը մի քանի միավանկ-վերջափակ բառերում (իդձ, ինչք) կամ մի շարք միավանկ-երկփակ (սիրտ, գիծ, գիր) և կամ երկվանկ-բազմավանկ բառերում (արճիձ, նարինջ) հնչյունափոխվում է (ինչպես՝ **ըղձալի, սրտի, գծի, գրի, նարնջի**), իսկ նույն հնչյունադիրքերում այլ բառերի մեջ չի ենթարկվում հնչյունափոխության (**իր**>իրեր, իրական, **կիրձ**>կիրճի, **դիրք**>դիրքային, **մատիտ**>մատիտի և այլն): Նույնը կարելի է ասել **ու** ձայնավորի մասին. հնչյունափոխվում է **մուր** (մրից, մրոտ), **կատու** (կատվի, կատվաձագ), **մեղու** (մեղվի, մեղվաճանձ), **կամուրջ** (կամրջի), **բազուկ** (բազկի, բազկերակ) սերող հիմքերում, բայց չի հնչյունափոխվում նույն կազմության **լուր** (լուրի, լուրեր), **արու** (արուի, արուեգ, արուեգություն), **դասատու** (դասատուի, դասատուական), **բուհ** (բուհի, բուհական), **ռուս** (ռուսի, ռուսամետ), **հուն** (հունի), **անուրջ** (անուրջի), **թզուկ** (թզուկի, թզուկանման) բառահիմքերում: Անհնչյունափոխ հիմքեր հանդիպում են նույն կազմության շատ քիչ բառերում՝ **աճուրդ** – աճուրդավոր, **կորիզ** – կորիզագուրկ, **ձյուն** – ձյունամաշկ, ձյունածեփվածք:

Իրենք՝ օրենսդիրները, բազմաթիվ օրինակներ են բերում, որոնք շեղվում են առաջադրված սկզբունքներից: Օրինակ՝ խոսելով այս կարգի բառերի հոգնակիի անհնչյունափոխ հիմքերով կազմությունների (բինտ – **բինտեր**, գինդ – **գինդեր**, ծիլ – **ծիլեր**, հիմ – **հիմեր**, տիկ – **տիկեր** և այլն) նախընտրության մասին՝ բերում են նաև **չիր** բառը՝ իր ձևակազմական զուգաձևություններով՝ **չիրեր/չրեր**, որոնցից իբրև թե առաջնությունը տրվում է չփոխված՝ **չիրեր** ձևին: Մինչդեռ մեր ուսումնասիրությունները, որոնք հիմնված են կենդանի գրական լեզվի փաստերի և հայտնի **Արևակ** համացանցային ծրագրի նյութերի վրա, վկայում են հնչյունափոխված հիմքով տարբերակի գերազանցության մասին: Այսպես՝ համացանցային ծրագրի

տվյալներով՝ այդ բառաձևի 11 գործածություններից 4-ը չիքնչյունափոխված, իսկ 7-ը փոխված տարբերակով են: Մա ցույց է տալիս, որ արդի արևելահայերենում գերիշխում են այդ բառաձևի հնչյունափոխված տարբերակները:

Մասնագիտական գրականության մեջ փորձ է արվել նաև գտնելու ձայնավորների հնչյունափոխության որոշակի օրինաչափություններ՝ պայմանավորված բառի կազմության կամ բառի վերջամասնիկների ինչ-ինչ հատկանիշներով: Նշվում են ածանցներ և տառակապակցություններ, որոնցով վերջավորվող բառերը ենթարկվում են այս կամ այն կանոնին: Ինչպես, օրինակ՝ ասվում է, որ չեն հնչյունափոխվում **-իլ, -իք, -իդ, -ինչք, -իկ, -իթ, -իռ** և նման այլ տառակապակցություններով վերջավորվող բառերը (**կարծիք, քղամիդ, փանդիռ, նախատինք, տորմիդ, խորտիկ, հատիկ** և այլն), կամ՝ հնչյունափոխվում են **-իճ, -իֆ, -իշ, -իմ, -իս**-ով վերջացող բառերը (**ճահիճ, մտերիմ, թավիշ, ամիս** և այլն): Կամ՝ **-իլ, -իք, -իկ, -իդ, -իջ, -իռ** և այլ նման տառակապակցություններով վերջավորվող բառերի մասին ասվում է, որ սրանք հոլովվելիս չեն հնչյունափոխվում: Եվ միանգամայն համոզիչ օրինակների կողքին (**բաղնիք, նախատինք, սանիկ** և այլն) բերվում են նաև շատ վիճելի օրինակներ (**տավիդ, շառավիդ**, անգամ՝ **բջիջ**): Առաջին երկուսը, ըստ հետազոտությունների, ունեն գուգաձևեր՝ **տավիդի//տավդի, շառավիդի//շառավդի**, իսկ **բջիջ**-ի փոխված հիմքով հոլովաձևերը (**բջջի, բջջով** և այլն) շատ ավելի գործածական են, քան չփոխվածը (**բջիջի, բջիջով** և այլն):

Նույն մոտեցումը հետազոտողը փորձում է կիրառել նաև բառակազմության մեջ՝ առանձնացնելով որոշակի բառապատկերային կամ որոշակի մասնիկներով կազմված բառեր, այսպես՝ չհնչյունափոխվող բառեր՝ **կարիք-ավոր, ալիք-ավոր, թափանցիկ-ություն, գերազանցիկ-ություն, կորիզ-ավոր, կնճիթ-ավոր, սերկնիլ-ենի, ապրիլ-յան** և այլն: Այս մոտեցմամբ են

տարբերակվում նաև **ու** ձայնավորի և երկհնչյունների բառակազմական հիմքերով կազմությունները:

Բառապատկերի կամ բառի կազմության հիմունքով բառերի այսպիսի դասակարգումը, սակայն, հարցը ընդամենը մասամբ է լուծում: Նախ՝ որովհետև գործնականում անհնար է լեզվի բառապաշարի համար այդպիսի կայուն խմբեր առանձնացնելը, և երկրորդ՝ նույն բառապատկերն ունեցող միավորները դրսևորում են տարբեր յուրահատկություններ, ինչպես՝ **փոքրիկ** – փոքրիկի-փոքրիկանալ-փոքրիկություն, բայց՝ **ծաղիկ** – ծաղկի-ծաղկավետ, **փանդի** – փանդիի, փանդիոային, բայց՝ **վճիռ** – վճռի, վճռաբեկ, **տորմի** – տորմիղի-տորմիղային, բայց՝ **տավի** – տավիղի-տավղահար, **բագին** – բագինի, բայց՝ **մարմին** – մարմնի և այլն:

Եվ վերջապես, հնչյունափոխված ու անհնչյունափոխ խմբերը դասակարգելիս ուսումնասիրողները հաճախ դիմում են ընդհանուր ու անորոշ ձևակերպումների՝ «Կան բառեր....», «Կան մի շարք բառեր....», «Բառեր կան, որոնցում....», «Այդ կանոնը ևս բացարձակ բնույթ չի կրում....» և այլն:

Այդպիսով, հիմք ընդունելով այս կամ այն հատկանիշը, փորձեր են արվել հնչյունափոխության ընդհանուր գործընթացում որոշակի կանոններով կամ գործոններով առանձնացնելու բառախմբեր, որոնք բնութագրվում են հնչյունափոխական նման կամ նույն բնավորություններով: Սահմանվել են օրինաչափություններ, որոնք թեն աչքի են ընկնում շեղումների կամ զարտուղի ձևերի առատությամբ, բայց երևույթի մեկնաբանություններում առավել կամ պակաս չափով ունեն իրենց դերակատարությունը:

Տեղաշարժերը պայմանավորող հնչյունափոխական օրինաչափություններ: Տարբերակային ձևերի առաջացման և դրանցում նկատվող տեղաշարժերի հետ կապված՝ մեր տպավորու-

թյամբ առանձնանում են մի քանի հիմնական օրինաչափություններ, որոնք կարելի է սահմանել հետևյալ կետերով.

1. Սովորաբար հնչյունափոխվում և տարբերակային ձևեր են կազմում այն բառերի բառակազմական և ձևակազմական հիմքերը, որոնք ունեն գործածական մեծ հաճախականություն¹²⁶:

Դրանք առօրյա խոսքում, ամենօրյա հարաբերությունների ժամանակ գործածվող բառեր են: Ի տարբերություն դրանց՝ գրական-գրքային բառերը կամ գրական ճանապարհով փոխառվածները քիչ գործածական լինելու պատճառով ձևակազմությանը մասնակցում են առավելապես անհնչյունափոխ հիմքերով: Հարցի ուսումնասիրողներից Վ. Առաքելյանը անում է ուշագրավ մի դիտարկում. ճիշտ է, նա խնդիրը փոքրինչ մասնավորեցնում է՝ նկատի ունենալով միայն **ի** և **ու** ներփակ ձայնավորներով միավանկ բառերի հոգնակիների կազմությունը, սակայն, մեր կարծիքով, բնորոշումը կարող է վերաբերել առհասարակ գրական կամ փոխառյալ բառերի հիմքակազմությանը. «**Ի** և **ու** ձայնավորները հոգնակի կազմելիս փակ միավանկում չեն հնչյունափոխվում, – գրում է նա, – եթե

¹²⁶ Վարագ Առաքելյանի՝ շուրջ վեց տասնամյակ առաջ կատարած ուսումնասիրություններում շատ ու շատ ճշգրիտ դիտարկումների և համոզիչ օրինակների կողքին տեղ են գտել ժամանակի լեզվագործածությամբ կամ երկ-ձյուղ աշխարհաբարի ենթաշրջանի գրականությամբ և կամ ինչ-ինչ այլ հանգամանքներով թելադրված օրինակներ, որոնք ոչ միայն չեն համընկնում արդի լեզվագործածությանը, այլև սկզբունքորեն խորթ են արդի գրական հայերենի ոգուն, ինչպես՝ ճիշտ համարվող կամ հեղինակի դիտարկումներով՝ ճիշտ ենթադրվող հետևյալ բառերն ու բառաձևերը՝ դահլճի – **դահլճի**, անիծ – **անծի**, դպիր – **դպրի**, պարսիկ – **պարսկի**, աղջիկ – **աղջկի**, կարկին – **կարկնի**, դիրք – **դրքեր** և այլն, կամ իբրև թե **կալճի** բառաձևը բարբառային է, **երկրներ**-ը՝ «սխալ արտասանությամբ» տարածում գտած ձև և այլն: Տե՛ս «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Գր. Ղափանցյան), հ. 1, Եր., 1951, էջ 65-72:

բանավոր խոսքի մեջ չեն գործածվել հնում, այլ գրականության միջոցով են անցել մեր գրական լեզվին: Այստեղ պետք է հաշվի առնել մի քանի հանգամանք *ևս*. ա) դրանք պետք է լինեն նոր փոխառություններ, բ) հոգնակին պետք է կազմված լինի գրականության մեջ, անալոգիայի չպետք է ենթարկված լինի»¹²⁷:

Այսպես՝ բառակազմական նույն պատկերը ունեցող երկու խումբ բառերից, որոնք բերվում են ստորև, **առաջինները** (**ա** – տրվում են համեմատաբար գործածական բառեր) ձևակազմության, մասաբ նաև բառակազմության մեջ բաղադրվում են փոխված ձևով, իսկ **երկրորդները** (**բ** – տրվում են քիչ գործածական կամ գրական-գրքային տարբերակները)՝ անփոփոխ, ինչպես՝

Ի ձայնավորով՝

ա) **այգի** – *այգու*, **գրիչ** – *գրչի*, **երգիչ** – *երգչի*, **նկարիչ** – *նկարչի*, **կավիճ** – *կավճի*,

բ) **արփի** – *արփիի*, *արփիացնցուղ*, **անդրի** – *անդրիի*, **հուր** – *հուրեր*, **գուռ** – *գուռի* / *գուռեր*, **հարիչ** – *հարիչի* / *հարիչներ*, **բրիչ** – *բրիչի*, **ծրիչ** – *ծրիչի*, **վարիչ** – *վարիչի* / *վարիչներ*, **վտարանդի** – *վտարանդիի*, **բազին** – *բազինի* / *բազիններ*, **դպիր** – *դպիրի* / *դպիրներ*, **վտիտ** – *վտիտի* / *վտիտներ*, **հտպիտ** – *հրտպիտի* / *հտպիտներ*, *հտպիտություն*, **ամիճ** – *ամիճի*:

Ու ձայնավորով՝

ա) **ջուր** – *ջրի/ջրեր*, **նուռ** – *նռան/նռներ*, **դուռ** – *դռան / դռներ*, **թթու** – *թթվի*, **բու** – *բուեր / բվեր*,

բ) **դուր** – *դուրի / դուրեր*, **ուրու** – *ուրուի / ուրուներ*, **գուռ** – *գուռի / գուռեր*, **կուղբ** – *կուղբի / կուղբեր*:

Երկինչուններ՝

¹²⁷ Տե՛ս «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Գր. Ղափանցյան), հ. 1, Եր., 1951, էջ 66:

ա) անկյուն – *անկյան/անկյունի*, **սյուն** – *սյան/սյունի*, **հանգույց** – *հանգուցավոր*,

բ) մրջյուն – *մրջյունի / մրջյուններ*, **ավյուն** – *ավյունի / ավյուններ*, **կորյուն** – *կորյունի / կորյունանման*, **պատրույզ** – *պատրույզավոր*, **խույր** – *խույրաձև*:

Ավելին: Միևնույն բառի համանունը կամ տարբեր իմաստները կարող են յուրահատկություններ դրսևորել՝ **պայմանավորված գործածականությամբ**: Օրինակ՝ **բուր** բառի՝ գործածական հաճախականություն ունեցող իմաստները (1. ոչ սուր, 2. ոչ սրամիտ լինելը, 3. անընդունակ) բառակազմական հիմքերում սովորաբար իրացվում են հնչյունափոխված տարբերակով (բթություն, բթանալ, բթամիտ, բթադեմ, բթակտուց, բթահայաց), իսկ քիչ գործածականները (որպես տերմին՝ եռանկյան բուր անկյունը)՝ անհնչյունափոխ (**բութանկյուն** եռանկյունի), ձևակազմության մեջ նաև **բութ**-ը կետադրական նշանի մաստով՝ **բութի**, **բութով**, **բութեր** և այլն:

Ըստ որում, գործածական հաճախականություն ունեցող բառերը հնչյունափոխական ակտիվություն են դրսևորում ոչ միայն բառակազմության, այլև ձևակազմության մեջ, թեև, բոլոր դեպքերում, առավել ակտիվ են բառակազմական տարբերակները:

Ձևակազմության մեջ տարբերակային ձևեր են ունենում հիմնականում հետևյալ բառերն ու բառախմբերը:

ա) Է-ով սկսվող բառերից հոլովման ժամանակ **էշ**-ը՝ **էշի/իշի**, **էշից/իշից**, **էշով/իշով** և այլն¹²⁸: Գրական հայերենում ակնհայտորեն ակտիվ գործածություն ունեն առաջինները՝ անհնչյունափոխ տարբերակները. ժամանակակից գրականութ-

¹²⁸ Այսուհետև օրինակներից կտրվեն միայն սեռական-տրականի ձևերը, եթե մյուս հոլովաձևերը յուրահատկություններ չեն դրսևորում:

յան մեջ և պարբերական մամուլում սեռական-տրականի գուգահեռների 1.174 կիրառություններից **էշի** ձևով հանդիպել է 845, իսկ **իշի** ձևով՝ 329 օրինակ¹²⁹:

բ) **Ի**-ով վերջացող մի շարք բազմավանկ բառեր: Դրանց թեքված ձևերից գրական լեզուն նախապատվությունը տալիս է **ի/ու** հերթագայությամբ (գարի//գարու, շոգի//շոգու, ոսկի//ոսկու, ուղի//ուղու, փոշի//փոշու, քամի//քամու, քենի//քենու և այլն) կամ **ի**-ի անկումով կազմվածներին (ուղի//ուղով, գարի//գարով, քամի//քամով, ոսկի//ոսկով, փոշի//փոշում, կոզի//կոզում, որդի//որդով, գինի//գինով, հոգի//հոգով, տարի//տարով, մորթի//մորթով, քենի//քենով, շոգի//շոգով, քեռի//քեռով և այլն):

Մի քանիսի (**որդի, մորթի, քենի, շոգի** և **գինի**) հնչյունափոխված հիմքով գործիականները ունեն գործածության որոշ յուրահատկություններ. առաջին չորսը՝ **որդով, մորթով, քենով, շոգով**, համանունություն են կազմում **որդ** (ճիճու), **մորթ** (մորթելը), **քեն** (ոխ), **շոգ** (տապ) բառերի գործիականների հետ և հետևաբար որոշ գործածություններում անհարկի շփոթությունից խուսափելու համար նախընտրելի են անհնչյունափոխ հիմքով կազմությունները: Վերջինը՝ **գինով**-ը, ձեռք է բերել նաև նոր իմաստ՝ **գինովցած, գինով արբած**, և ուստի ըստ անհրաժեշտության՝ հաճախ իր տեղը զիջում է անհնչյունափոխ **գինիով** կազմությանը:

Ընդհանուր առմամբ, սակայն, նկատելի է, որ այս բառերի գործիականի գուգահեռներից ակտիվանալու միտում են դրսևորում **ի**-ով կազմությունները, ինչպես՝ **գյումրեցիով, լոռեցիով, բանալիով, Էրեբունիով** և այլն:

գ) Ներփակ **ի**-ով բազմավանկ բառերի մի մասը (հոլովաձևերում)՝ **անիվի/անվի, բջիջի/բջջի, գործիչի/գործչի, կավիճի/կավճի, ճահիճի/ճահճի, նարինջի/նարնջի, շառավիղի/շա-**

¹²⁹ Տե՛ս www.eanc.net/EANC/search/?interface_language=am

ռավդի, չամիչի//չամչի, տավիդի//տավդի, փրկիչի//փրկչի և այլն: Կարծիք կա, որ նշվածներից **գործիչ, արձիճ, կավիճ** բառերի հնչյունափոխված ձևակազմական հիմքերը (գործչ-ի, արձճ-ի, կավճ-ի) արդեն խորթ են, **բջիջ, նարինջ** բառերինը տեղի են տալիս չհնչյունափոխվածներին (բջիջ-ի, նարինջ-ի), **մարզիչ**-ը փոփոխված հիմքով բառակազմության մեջ այլևս չի կարող մտնել և այլն: Եվ կամ՝ **դահլիճ** բառը հոլովակազմության մեջ ներկայացվում է հնչյունափոխվող բառերի շարքում¹³⁰: Այս կարծիքը մեր ուսումնասիրությամբ այսօր չի հաստատվում: Ընդհակառակը: Վերը նշված բառերի մի զգալի մասի հնչյունափոխված հիմքերը տակավին կենսունակ են և ունեն կիրառական շատ ավելի մեծ հաճախականություն: Այսպես՝ **գործիչ** բառի սեռականի 1.490 կիրառություններից **գործիչի** ձևով է 67-ը, իսկ **գործչի**՝ 1.423-ը: **Մարզիչ** բառի սեռականի 616 կիրառություններից **մարզիչի** տարբերակը ունի 91, իսկ **մարզչի** ձևը՝ 6 անգամ ավելի՝ 525 կիրառություն: Այդպես նաև՝ **բջիջ** բառի սեռականի 946 կիրառություններից՝ **բջիչի**՝ 260, **բջջի**՝ 686: Առանձին բառերի դեպքում մեծ չէ տարբերության գործակիցը. ինչպես՝

ԱՆՀՆՅՈՒՆԱՓՈՒՄ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾԱԾ. ՀԱՃԱՄ.	ՀՆՅՈՒՆԱՓՈՒՄ- ՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾԱԾ. ՀԱՃԱՄ.
բացահայտիչի	2	բացահայտչի	1
լինդի	8	լնդի	6
խարխսի	30	խարսխի	59
շավիդի	34	շավդի	44
շապիկի	325	շապկի	347
ոսկերիչի	48	ոսկերչի	57
ցուցիչի	49	ցուցչի	34

¹³⁰ Տե՛ս «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Գր. Ղափանցյան), Եր., 1951, էջ 69: Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 134:

Մասնագիտական գրականության մեջ գուգահեռներ են նշվում նաև ի-ով ներփակ մի շարք միավանկ գոյականների համար՝ **բինտեր-բնտեր, զիստեր-զստեր, ծիլեր-ծլեր, հիմեր-հմեր, հինգեր-հնգեր, ճիտքեր-ճտքեր, պինչեր-պնչեր, չիթեր-չթեր, տիկեր-տկեր, քիվեր-քվեր** և այլն: Առաջարկվում է դրանցից նախապատվությունը տալ հնչյունափոխված ձևերին: Սա այնքան էլ ընդունելի չէ արդի հայերենի նորմի տեսակետից: Դրանցից մեկ-երկուսը ժամանակակից հայերենում առհասարակ խիստ հազվադեպ գործածություն ունեն, այսպես՝ **ծիլեր՝ 159//ծլեր՝ 16, շիվեր՝ 115//շվեր՝ 6, բինտեր՝ 10//բնտեր՝ 1**: երկրորդների գործածությունը գրական լեզվում հազիվ թե սովորական եղած լինի նաև վեց տասնամյակ առաջ: Դրանք, մեր դիտարկումներով, այսօր անգործածական են և հնացած: Այս շարքում նշվող միայն **ճտքեր, չրեր** և **չթեր** ձևերն են, որ ըստ գործածության հաճախականության որոշ գերազանցություն ունեն անհնչյունափոխ տարբերակների նկատմամբ, այսպես՝ **ճիտքեր՝ 1, ճտքեր՝ 2, չիրեր՝ 4, չրեր՝ 7, չիթեր՝ 4, չթեր՝ 12**: Դրանք էլ, ինչպես տեսնում ենք, այսօր գործածական հաճախականություն չունեն և թերևս գործածական են եղել անցյալում կամ խոսակցական լեզվում և այսօր պահպանում են իրենց ավանդական կիրառությունները: Մյուսներում առավել կամ պակաս չափով ավելի գործածական են անհնչյունափոխ հիմքերով կազմությունները: Ըստ **Արևակի** տվյալների՝ այդ բառերի տարբերակային ձևերի գործածության վիճակագրությունը այսպիսին է. **զիստեր՝ 3//զստեր՝ 1, հինգեր՝ 38//հնգեր՝ 35, ճիվեր՝ 3//ճվեր՝ 2, պինչեր՝ 15//պնչեր՝ 4, տիկեր՝ 14//տկեր՝ 0, թիմեր՝ 498//թմեր՝ 0** (նաև՝ **թմային՝ 0**) և այլն:

Առանձին հետազոտություններում ներկայացվող որոշ գուգահեռություններում թեև չեն առանձնացվում նախընտրելի կամ հանձնարարելի տարբերակներ, սակայն դրանցում տարբերակներից մեկը, սովորաբար հնչյունափոխվածը, ակնհայտ-

րեն հնացած կամ անգործածական կազմություն է (դրանք ընդգծված են), ինչպես՝ **ճիչ – ճչի/ճիչի, ճչեք/ճիչեր, նիշ – նշեք/նիշեր, հինգ – հնգի/հինգի, լինգ – լնգի/լինգի, լնգեք/լինգեր** և այլն¹³¹, **գեղեցիկ – գեղեցկի/գեղեցիկի, խորտիկ – խորտկի/խորտիկի** և այլն¹³²:

ե) **Ու** ներփակ ձայնավոր ունեցող մի քանի միավանկ բառեր հոլովական ձևերում և հոգնակիակազմության մեջ՝ **խունկ – խնկի/խունկի, խնկեք/խունկեր, հունձ – հնձի/հունձի, հունձեք/հնձեր, քուրմ – քրմի/քուրմի, քուրմեք/քրմեր**:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվող բառախմբերում («կան բառեր էլ» արտահայտությամբ) հնչյունափոխված հիմքով հոգնակիի և անհնչյունափոխ հիմքով հոլովաձևերի կազմություններում սովորական և անսովոր ձևերի առանձնացումը այնքան էլ համոզիչ չէ: Այսպես, օրինակ, նրշվում է, որ «**թուք – թքի** (լավ է՝ **թուքի**), բայց՝ **թուքեր, լուր – լրի**, բայց անպայման **լուրեր, խունկ – խնկի-խունկեր, հունձ – հնձի-հունձեր, քուրմ – քրմի-քուրմեր, քուն – քնի**, բայց՝ **քուններս, քուղ – քղի-քուղեր, քուրձ – քրձի-քուրձեր**»¹³³: Ակնհայտ է, որ բերված օրինակները անհամասեռ են և շարքում դժվար են դասակարգվում. **թուք** բառի համար արդի արևելահայերենում սովորական է ոչ թե **թքի**, այլ **թուքի** ձևը, **լուր**-ի սեռականը փոփոխված տարբերակով խիստ հազվադեպ կիրառություն ունի (բնական ու կանոնական է **լուրի** ձևը (**լրի՝ 378/12** հարաբերությամբ)), **խունկի, հունձի, քուրմի, քուղի, քուրձի** ձևերը սովորական են: Եվ ապա՝ ուսումնասիրողի այն եզրակացությունը, թե «Հոլովման ժամանակ ևս առաջնությունը պետք է տալ

¹³¹ Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, էջ 95:

¹³² Տե՛ս նույն տեղում, էջ 98:

¹³³ **Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան** և այլք, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 142:

հնչյունափոխված ձևերին»¹³⁴, անհասկանալի է դարձնում առնվազն **լուր** և **քուղ** բառերի հոլովական ձևերի (**լրի-լրից-լրով-լրում**, **քղի-քղից-քղով** և այլն) գործածության արդարացումները:

Եվ կամ՝ **ու** ձայնավորով բառերի մասին ասվում է, որ փոփոխվածները հնացած են՝ գործածությունից դուրս եկած, և **փախուստ** բառի հնչյունափոխված **փախստի** կողքին որպես քիչ գործածական տարբերակներ նշվում են նաև բառաձևեր (**սննդի**, **բլրի**, **կորստի**, **մածնի**, **կրնկի**), որոնք, սակայն, իրականում ունեն գործածական մեծ հաճախականություն և այլն. **ծննդի**, **սննդի**, **բազկի**, **բլրի**, **մածնի**, **կորստի** փոփոխված ձևերը համարվում են «հնացած»¹³⁵:

Փակ վանկի **ե** ունեցող բառերից **մեջ** բառի սեռականի **միջի** ձևի համար իբրև զուգաձևություն է նշվում անհնչյունափոխ հիմքով **մեջի** տարբերակը¹³⁶, որը, սակայն, մեր ուսումնասիրություններով և վիճակագրությամբ չի հաստատվում:

Ե) **Յու** երկհնչյունով **սյուն**, **ձյուն**, **արյուն**, **անկյուն** բառերը: Սեռական-տրականում սովորաբար հանդես են գալիս հնչյունափոխված տարբերակներով՝ **արյուն//արյան**, **անկյուն//անկյան**, **սյուն//սյան**, **ձյուն//ձյան**: Առաջին երկուսի համար սովորական են նաև գործիականի՝ հնչյունափոխված հիմքով կազմությունները՝ **արյամբ**, **անկյամբ**: Մինչդեռ նույն երկհնչյունը ունեցող **ավյուն**, **կնյուն**, **հերյուն**, **բախյուն** քիչ գործածական բառերը հակված են նույն ձևերը կազմելու միայն անհնչյունափոխ հիմքերով՝ **ավյունի//ավյունով**, **կնյունի//կնյունով**, **հերյունի//հերյունով**, **բախյունի//բախյունով** և այլն:

¹³⁴ Նույն տեղում:

¹³⁵ Նույն տեղում, էջ 143:

¹³⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 133:

Ընդհանուր առմամբ, գործածականությամբ պայմանավորված՝ հնչյունափոխվելու և զուգաձևեր կազմելու, ինչպես նաև հնչյունափոխված տարբերակներում ակտիվություն արձանագրելու միտումը նկատվում է նաև համապատասխան դիրքերում **ի** և **ու** ձայնավոր ունեցող մի շարք այլ բառերի վիճակագրության մեջ: Ըստ որում, պակաս համոզիչ օրինակների դեպքում պետք է նկատի ունենալ, որ դրանց մի մասի գործածական հաճախականությունը գերազանցապես ունի պատմական բնույթ, օրինակ, ասենք՝ գործածական է եղել անցալում և նույն հաճականությունը չի պահպանել այսօր, սակայն ավանդաբար շարունակում է հանդես գալ առավելապես հնչյունափոխված տարբերակով: Այսպես՝ հնչյունափոխված տարբերակը առավել գործածական է հետևյալ բառաձևերում՝

ԱՆՀՉՑՈՒՆՓՈՒՍ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾ. ՀԱՃԱՆ.	ՀՆՉՑՈՒՆՓՈՒՍ- ՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾ. ՀԱՃԱՆ.
ածուխի	283	ածխի	714
արծիվի	13	արծվի	1016
բաժինի	26	բաժնի	9592
երգիչի	29	երգչի	927
լուսավորչի	50	լուսավորչի	878
խնդրի	32	խնդրի	8356
խորհուրդի	725	խորհրդի	20529
ծաղիկի	160	ծաղկի	1636
ծուխի	71	ծխի	1635
կամուրջի	922	կամրջի	1533
կացինի	4	կացնի	360
կերակուրի	140	կերակրի	570
կշիռի	13	կշռի	611
հովիվի	37	հովվի	718
հովիտի	81	հովտի	714
հունձի	36	հնձի	537

մարմինի	54	մարմնի	12982
մոխիրի	53	մոխրի	457
մուրի	76	մրի	128
նկարիչի	55	նկարչի	1871
շատավիդի	30	շատավդի	133
պռունկի	3	պռնկի	22
պտուղի	72	պտղի	804
վճիռի	12	վճռի	1247

Հետևյալ բառերում առավել գործածական է չհնչյունափոխված տարբերակը՝

ԱՆՀՅՑՈՒՆԱՓՈՒՍԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾ. ՀԱՃԱՆ.	ՀՆՅՑՈՒՆԱՓՈՒՍՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾ. ՀԱՃԱՆ.
անուրջի	45	անրջի	2
բռունցքի	452	բռնցքի	10
կտուցի	113	կտցի	66
ճիչի	99	ճչի	5
մութի	583	մթի	224
մուրճի	449	մրճի	1
ոջիլի	34	ոջլի	8

Այս վիճակագրությունը մեկ անգամ ևս վկայում է, որ ձևակազմության մեջ հնչյունափոխվելու հակում են դրսևորում և տարբերակային ձևեր են բաղադրում տարբեր ժամանակներում գործածական հաճախականություն ունեցող բառերը: Նույն օրինաչափությունը առավել ակնառու է բառակազմության մեջ:

2. Ձևակազմական և բառակազմական հիմքերից հնչյունափոխության մեջ առավել մեծ ակտիվություն են դրսևորում և տարբերակային ձևեր են կազմում երկրորդները՝ բառակազմական հիմքերը: Սա հատուկ է ներփակ կամ աննեփակ

ձայնավոր ունեցող բոլոր բառերին: Ընդ որում, **յա** և **ույ** երկ-
հնչյունները բառաձևերում՝ հոլովման և հոգնակիի կազմույթ-
յան մեջ, առհասարակ չեն ենթարկվում հնչյունափոխության,
ինչպես՝ **մատյան-ի, -ներ, հոբելյան-ի, -ներ, սենյակ-ի, -ներ,**
պաշտոնյա-(յ)ի, -ներ, զրույց-ի, -ներ, մշակույթ-ի, -ներ, գույն-ի,
-ներ և այլն (բացառություն է **բույն-ը՝ բնի, բնից** և այլն):

Անհնչյունափոխ հիմքերի առկայությունը սովորական է ներ-
փակ **ի** կամ **է** ձայնավոր ունեցող միավանկ բառերի ձևակազ-
մության մեջ, մասնավորապես հոգնակի ձևերում, ինչպես՝

Ի ձայնավորով՝ **բինտ-եր, գիպս-եր, դիրք-եր, դիրտ-եր, թիմ-
եր, լիցք-եր, խիղճ-եր, խիժ-եր, ծիլ-եր, կիրճ-եր, կինճ-եր, հինգ-
եր, գինդ-եր, կիր-եր, կիրթ-եր:**

Է (ե) ձայնավորով՝ **դեզ-եր, կես-եր, վեր-եր, տեր-եր, գեր-եր,**
մեջ-եր, վրեժ-ներ, նվեր-ներ, հրավեր-ներ, շեն-եր, վեպ-եր,
տեզ-եր և այլն:

Մինչդեռ սրանց մեծագույն մասը բառակազմության մեջ են-
թարկվում է հնչյունափոխության, ինչպես՝ **խղճ-ալի, ծլ-ար-
ձակում, հնգ-ամյակ, գնդ-ասեղ, հն-ամյա, կրթ-ություն, դիզ-ել,**
վիր-ակապ, կիս-ատ, հրավիր-ատում և այլն: Այս տեսակե-
տին են նաև այլ հետազոտողներ, երբ քննարկում են մասնակի
խնդիրներ: «Մեծ մասամբ հնչյունափոխվում է փակ վանկի **ե-**
ն (հին **է**), սակայն միայն բառակազմության ժամանակ: Հոլով-
ման և հոգնակիի կազմության դեպքում այն մնում է անփո-
փոխ. օրինակ՝ **վրեժ-վրեժի, հրավեր-հրավերի, վրեժներ, հրա-
վերներ:** Բացառություն են **տեր-տիրոջ, սեր-սիրո, մեջ-միջի**
(մեջի). սրանց հոգնակին մնում է անփոփոխ. **տեր-տերեր,**
սեր-սերեր, մեջներս»¹³⁷:

¹³⁷ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու,
Եր., հ. 1, 1979, էջ 130:

Ըստ որում, եթե ձևակազմության մեջ միավանկ բառերը հընչ-յունափոխվում են, ապա նրանք հնչյունափոխվում են նաև բառակազմության մեջ: Օրինակ՝ **գիր** – *գրի-գրավոր*, **դուռ** – *դռան-դռնապան*, **էշ** – *իշի-իշատեր*, **խիդճ** – *խդճի-խդճատանք*, **կարմիր** – *կարմրի-կարմրագույն*, **հին** – *հնի-հնագույն*, **միտ(ք)** – *մտքի-մտահայեցողություն*, **վիզ** – *վզի-վզկապ*, **սուր** – *սրի-սրամիտ*, **սեր** – *սիրո-սիրակեզ* և այլն:

Հնչյունափոխական ձևակազմական հիմքը առավել ակտիվ է հոլովակազմության մեջ: Օրինակ՝ **երգիչ**-երգչի, բայց՝ **երգիչ**-ներ, **ամիս**-ամսի, բայց՝ **ամիս**-ներ, **ծնունդ**-ծննդի, բայց՝ **ծրնունդ**-ներ, **գարուն**-գարնան, բայց՝ **գարուն**-ներ, **պանիր**-պանրի, բայց՝ **պանիր**-ներ: Ըստ որում, հոլովաձևերի և հոգնակիի կազմության մեջ հիմքերի վարքագծի ուսումնասիրությունը վեր է հանում մի հետաքրքիր օրինաչափություն. **հոգնակիի կազմության մեջ չհնչյունափոխվող հիմքերը հոլովակազմության մեջ կա՛մ չեն հնչյունափոխվում, կա՛մ հանդես են գալիս գուգահեռ տարբերակներով**, որոնցից գրական են և առավել գործածական չհնչյունափոխվածները (**դեր** – դերեր-դերի, **գույժ** – գույժեր-գույժի, **գուռ** – գուռեր-գուռի, **հույն** – հույներ-հույնի, **ձյուն** – ձյուներ-ձյունի// ձնի//ձյան, **ճիչ** – ճիչեր-ճիչի//ճչի, **վիթ** – վիթեր-վիթի, **հունձ** – հունձեր-հունձի//հնձի, **սուրճ** – սուրճեր-սուրճի//սրճի), և հակառակը՝ հոգնակիի մեջ հնչյունափոխվածները սովորաբար հնչյունափոխվում են նաև հոլովներում (**բույն** – բներ-բնի, **բուռ** – բուր-բուռն//բոի, **գին** – գներ-գնի, **դուռ** – դռներ-դռան, **հին** – հներ – հնի, **նուռ** – նռներ-նռան, **ջուր** – ջրեր-ջրի, **սուր** – սրեր-սրի և այլն):

Երկու դեպքում էլ, որպես գրական տարբերակներ, ակնհայտորեն գերակշռում են և սովորական են չհնչյունափոխված ձևերը՝ **դահլիճ**-ի, **մասնիկ**-ի, *-ավորում*, **կարծիք**-ի, *-ավորված*, **մայիս**-ի, *-յան*, **խորտիկ**-ի, *-եղեն*, **կորիզ**-ի, *-ային* և այլն: Ավել-

լին, հոգնակի կազմելիս չեն հնչյունափոխվում, ինչպես՝ **դահ-լիճներ, մասնիկներ, երգիչներ, ուսուցիչներ, պանիրներ** և այլն. բացառություն է **երկիր** բառը՝ **երկր-ի, -ներ, -ային**, սա էլ հավանաբար կարելի է բացատրել դրա գործածական մեծ հաճախականությամբ:

Կան բառեր, որոնց հոլովական ձևերում և բառակազմության մեջ նորմատիվ են փոխված հիմքերը, իսկ հոգնակի կազմություններում՝ չփոփոխված, ինչպես՝ **բջիջ – բջջի, բջջային**, բայց՝ **բջիջներ, կավիճ – կավճի, կավճապատ, կավճանման**, բայց՝ **կավիճներ, նկարիչ – նկարչի, նկարչական, նկարչատուն**, բայց՝ **նկարիչներ, շառավիղ – շառավղի, շառավղային**, բայց՝ **շառավիղներ** և այլն:

Ինչպես ասվեց, մի շարք բառեր առհասարակ միտում չունեն ձևակազմության մեջ հնչյունափոխվելու, սակայն բառակազմության մեջ ենթարկվում են հնչյունափոխության կամ գուգաձևություններ ձևավորելու ավելի մեծ հակումներ են դրսևորում: Բառերից մի քանիսի համար սովորական են անհնչյունափոխ հիմքով ձևերը (**գիպսապատ, դիրքային, թիմային** և այլն), մյուսների համար՝ հակառակը (**բրտորեն, գնանկում, գնդասեղ, խղճալիորեն, հնտտի** և այլն), և շատ քիչ դեպքերում են գործում բառակազմական տարբերակները **բիրտորեն//բրտորեն, ծիլարձակում//ծլարձակում, հինգական//հնգական**, ըստ որում, դրանցից անհնչյունափոխ կազմությունները հազվադեպ գործածություն ունեն կամ շեշտված խոսակցական երանգով են:

Է-ով սկզբնավորվող **էջ** բառի դեպքում ինչպես ձևակազմության մեջ, այնպես էլ բառակազմական հիմքերում գործածական են անհնչյունափոխ տարբերակները՝ **էշատեր/իշատեր, էշաբար/իշաբար, էշայծյամ/իշայծյամ, էշություն/իշություն**

(բացառությամբ **Էշուկ**/**իշուկ** տարբերակի. **Էշուկ**` **1**/**իշուկ**` **23**):
Դրանք առավելապես հատուկ են գրական լեզվին:

Ի-ով վերջավորվող բազմական կ մի քանի բառերից (**խնամի**, **խելացի**, **մորթի**, **վաղեմի**, **կատարելի**, **կղզի**, **ոսկի** և այլն) բաղադրված կազմություններում, որպես կանոն, գրական լեզվում գործածական են դրանց հնչյունափոխված տարբերակները՝ **բարություն**//բարիություն, **մորթապաշտ**//մորթապաշտ, **վաղեմություն**//վաղեմիություն, **ոսկեփայլ**//ոսկիափայլ: Առանձին կազմությունների համար սովորական են անհնչյունափոխ ձևերը. հնչյունափոխվածը խոսակցական է կամ հնացած, ինչպես՝ **կղզիաբնակ**//կղզեբնակ, **խնամիություն**//խնամություն, **խնամիանալ**//խնամանալ, **խելացիություն**//խելացություն, **վանեցիություն**//վանեցություն:

Ույ երկհնչյուն ունեցող մի շարք բազմական բառերում գրական-գրքայինները բառակազմության մեջ իրացվում են հիմնականում անհնչյունափոխ հիմքով, ինչպես՝ **առույգ**-առույգանալ, **արույր**-արույրե, **խույր**-խույրանման, **ծխնելույզ**-ծխնելույզային, **հատույթ**-հատույթային, հատույթավորված, **ձևույթ**-ձևույթային, **մակույկ**-մակույկավոր, մակույկաձև, **ողկույզ**-ողկույզաբեր, **պարբերույթ**-պարբերույթային, **տիրույթ**-տիրույթային, **քույր**-քույրական, իսկ համեմատաբար հաճախական գործածություն ունեցողները՝ երկու տարբերակով, որոնցից անհնչյունափոխ ձևերը (ստորև բերվածներում՝ առաջինները), այնուամենայնիվ, ունեն գրական երանգավորվածություն, ինչպես՝ **բարդույթավորված**-բարդութավորված, **գործառույթային**-գործառութային, **երևութական**-երևութական, **ընկույզ**-կոտրիչ-ընկուզկոտրիչ, **մշակութային**-մշակութային, **մրցույթային**-մրցութային, **ողկույզանման**-ողկուզանման, **սովորույթային**-սովորութային:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **մշակույթ** հիմքով բաղադրված բառերի պարագան: Հարցին նվիրված մեզ հայտնի ուսումնասիրության մեջ, որը, ինչպես ասվեց, շարադրված է նախորդ դարի կեսերին, **մշակութային** բառի վերաբերյալ ասվում է, որ «այդ նոր կազմությունը բացարձակ արհեստական է. պետք է լինե՞ր **մշակույթային**»¹³⁸: Այլ կազմությունների մասին չի խոսվում: Այդ «արհեստական» նորակազմությունը (մշակութային) հետագայում ներառվեց բացատրական բառարաններ՝ որպես միակ հանձնարարելի տարբերակ¹³⁹. գործածական համարված անհնչյունափոխ տարբերակը արձանագրված չէ նշված բառարաններում: Դրանցում հավելված է մեկական բառահոդված՝ **մշակութապես**¹⁴⁰ և **մշակութություն**¹⁴¹՝ դարձյալ հնչյունափոխված հիմքերով: Վերջին տասնամյակներին այդ բառահիմքով ստեղծվել են երկու տասնյակից ավելի նոր բառեր, և ուշագրավն այն է, որ դրանք բոլորն էլ բաղադրված են հնչյունափոխված հիմքից, ինչպես՝ **մշակութաբան**, **մշակութաբանություն**, **մշակութաբանական**, **մշակութաբանորեն**, **մշակութայուսավորչական**, **մշակութականացվել**, **մշակութամտածողություն**, **մշակութանպաստ**, **մշակութառճ**, **մշակութասպանություն**, **մշակութաստով**, **մշակութացում**, **մշակութաքաղաքական** և այլն¹⁴², ինչպես նաև՝ **մշակութակերտ**, **մշակութակիր**, **մշակութահենություն**, **մշակութանվեր**, **մշակութապահպան**, **մշակութասեր**, **մշակութաստեղծ**,

¹³⁸ Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան և այլք, Հայոց լեզու, էջ 147:

¹³⁹ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 3, Եր., 1974:

¹⁴⁰ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ.:

¹⁴¹ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Եր., 1974:

¹⁴² Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

մշակութաստեղծում, մշակութատիպաբանական¹⁴³: Միայն մեկ բառ (մշակույթազվարճային) բերված է անհնչյունափոխ հիմքով, որը առավելաբար դիպվածային կազմությունն է, ինչպես նախորդ շարքում բերվածներից մեկ-երկուսը¹⁴⁴:

Նորակազմությունների այդ քանակը վկայում է, որ գործ ունենք կենսունակ հիմքի հետ, և որ **մշակույթ** բառն ինքը նոր ժամանակներում ունի գործածական մեծ հաճախականություն: Մեր ներկայացրած սկզբունքի համաձայն՝ երևույթը բնավ էլ պատահական չէ. որպես գրական-գրքային կազմություն՝ սկզբնապես գործածական է եղել բառի անհնչյունափոխ տարբերակը, ապա, ձեռք բերելով գործածական հաճախականություն, ենթարկվել է հնչյունափոխության՝ գործող **ույ>ու** հրնչյունափոխական օրինաչափությամբ, ինչպես նաև արտասանական էներգիայի տնտեսման օրենքով. հնչյունափոխված տարբերակը ժամանակի ընթացքում դուրս է մղել անհնչյունափոխ տարբերակին: Հնչյունափոխված հիմքով մյուս կազմությունները՝ նորակազմ բառերը, բաղադրվելիս ի սկզբանե հիմք են ունեցել արդեն լայն գործածության մեջ եղած բառը. ստեղծվել են **մշակութային**-ի համաբանությամբ:

Այս օրինաչափությունը հաստատում են նաև մեծ գործածականություն ունեցող այլ բառեր: Խոսելով, օրինակ, **հանգույց** և **գրույց** հիմքերի մասին՝ Վ. Առաքելյանը հակված է պաշտպանելու բառակազմության մեջ դրանց անհնչյունափոխ տարբերակների կենսունակությունը: Նրա կարծիքով, օրինակ, վերջիվերջո հաղթելու են **հանգույցային, հանգույցավոր** ձևերը: «Արդյո՞ք նախընտրելի չեն՝ **գրույցասեր, գրույցարան, գրույցընկեր** ձևերը»,– գրում է լեզվաբանը¹⁴⁵: Ժամանակը, սակայն,

¹⁴³ Տե՛ս «Նոր բառեր, Ա պրակ», Եր., 2015:

¹⁴⁴ Տե՛ս Ս. Էթյան, նշվ. աշխ.:

¹⁴⁵ Տե՛ս «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (Խմբ.՝ Գր. Ղափանցյան), հ. 1, Եր., 1951, էջ 83:

աշխատեց հնչյունափոխված տարբերակների օգտին. նշված ձևերը ոչ միայն տեղ չգտան հետագայում հրատարակված հայտնի բացատրական բառարաններում, այլև դրանցում, ինչպես նաև նոր բառարաններում արձանագրվեցին միայն հնչյունափոխված հիմքերով տասնյակ նորակազմություններ՝

գրույց բառահիմքով՝ **գրուցաբան, գրուցաբանել, գրուցաբանություն, գրուցագիրք, գրուցընկեր, գրուցակից, գրուցակցել, գրուցակցություն, գրուցամոլություն, գրուցապատում, գրուցասեր, գրուցասիրություն, գրուցավեպ, գրուցատար, գրուցատեղ, գրուցատեղի, գրուցարան, գրուցարար, գրուցել, գրուցընկեր, գրուցկան, գրուցում, նոր բառերից՝ գրուցատաղավար, գրուցային, գրուցաբան,**

հանգույց բառահիմքով՝ **հանգուցալուծում, հանգուցակայան, հանգուցակայարան, հանգուցակար, հանգուցակետ, հանգուցահարուստ, հանգուցաձև, հանգուցային, հանգուցանման, հանգուցաշատ, հանգուցաշատություն, հանգուցավոր, հանգուցել, հանգուցիչ, հանգուցում** և այլն:

Կարծում ենք՝ բառակազմության մեջ հնչյունափոխված միջարք հիմքերի ակտիվությունը դարձյալ հիմնականում պայմանավորված է դրանց գործածության հաճախականությամբ, մասամբ նաև ավանդույթով, ինչպես՝

ԱՆՀՆՅՈՒՆԱՓՈՒՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾԱԾ. ՀԱՃԱՆ.	ՀՆՅՈՒՆԱՓՈՒՆ- ՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ	ԳՈՐԾԱԾ. ՀԱՃԱՆ.
այլուրադաց	3	այրադաց	146
այլուրաթաթախ	1	այրաթաթախ	24
արյունաթոր	1	արնաթոր	9
արյունահամ	2	արնահամ	13
ժանյակագարդ	11	ժանեկագարդ	38
եղջյուրավոր	43	եղջերավոր	1083
երկճյուղանի	4	երկճղանի	29

ձյունագնդի	4	ձնագնդի	125
վայրկյանական	22	վայրկենական	363
վայրկյանապես	41	վայրկենապես	637

Եվ հակառակը. համեմատաբար քիչ գործածականները կամ գրական-գրքային ծագումով բառերը ավելի հաճախ անհնչյունափոխ տարբերակներով են հանդես գալիս, ինչպես՝ **արյունախառն՝ 31//արնախառն՝ 9, եղջյուրակիր՝ 11//եղջերակիր՝ 2, կապուտաչյա՝ 252//կապտաչյա՝ 65, ձյունաթաթախ՝ 24//ձնաթաթախ՝ 0, մակույկաձն՝ 8//մակուկաձն՝ 1** և այլն:

Առանձին դեպքերում այդ տարբերությունը մեծ չէ, քանի որ զգալի չէ բառաձևերի գրական-գրքային և խոսակցական տարբերակվածությունը, և սերող բառի գործածության հաճախականությունը համեմատաբար մեծ չէ, ինչպես՝ **արյունահոտ՝ 4//արնահոտ՝ 5, արյունաշաղախ՝ 133//արնաշաղախ՝ 177, ընկույզկոտրիչ՝ 7//ընկուզկոտրիչ՝ 6, ժանյակահյուս՝ 3//ժանեկահյուս՝ 4, ժանյակաձն՝ 2//ժանեկաձն՝ 1, ժանյակավոր՝ 50//ժանեկավոր՝ 39, ձյունակոլով՝ 13//ձնակոլով՝ 13, ձյունակույտ՝ 8//ձնակույտ՝ 2, վայրկյանաչափ՝ 6//վայրկենաչափ՝ 15, ողկույզագարդ՝ 3//ողկուզագարդ՝ 1** և այլն:

Կան բառեր, որոնց փոփոխված և անփոփոխ հիմքերով բառակազմական տարբերակները երևան են հանում իմաստային տարբերություններ: Օրինակ՝ **ուղիղություն** – ուղիղ լինելը / **ուղղություն** – այն կողմը, դեպի ուր ուղղվում է գործողությունը, **վարչություն** – հիմնարկի՝ տնտեսության ղեկավար մարմինը / **վարիչություն** – վարիչ լինելը, վարիչի պաշտոնը, **դասատություն** – դասատու լինելը / **դասատվություն** – դաս տալը, **հուշագիրներ** – հուշագրությունների հեղինակ / **հուշագրեր** – դիվանագիտական փաստաթղթեր..., նոթեր, **մատենագիրներ** – մատյան գրող հեղինակ / **մատենագրեր** – մատենա-

գրի գրվածքը, գիրք, **կատարելություն** – կատարյալ, անթերի լինելը, զարգացման բարձր աստիճանի վրա գտնվելը / **կատարելիություն** – կատարելի լինելը, **հղանալ** – որևէ միտք ծագել / **հղիանալ** – հղի դառնալ և այլն:

Այս դեպքում իմաստային շփոթից խուսափելու համար միտում կա ըստ գործառնման պահպանելու երկու տարբերակներն էլ, օրինակ՝ «գրողների միության **վարչություն**» – «նրա **վարիչության** օրոք», «ներկայացվել են նոր **հուշագրեր**» – «**հուշագիրներից** ոմանք» և այլն:

Իմաստային տարբերակներ են առաջացել հատկապես **ա** ձայնավորի փոփոխության հետևանքով: Դրանք բարբառներից և խոսակցականից փոխանցված իրողություններ են, որոնք գրական լեզվում արդեն օրինականացել են, ինչպես՝ **բանավոր** (բերանացի, ոչ գրավոր), **բանվոր** (գործավոր), **աշակերտ** (սան, ուսանող), **աշկերտ** (արհեստավորի աշակերտ, օգնական (արևմտ.)), **համարիչ** (մաթ. տերմին՝ կոտորակային թվականի բաղադրիչ մասը), **համրիչ** (հաշվիչ), **դադարած** (ավարտված), **դադրած** (հոգնած, ընդարմացած), **անցավոր** (անցողիկ), **անցվոր** (ճամփորդ) և այլն: Հասկանալի է, որ երկու տարբերակներն էլ ունեն գոյության իրավունք և օբյեկտիվորեն հարստացնում են մեր լեզվի բառապաշարը:

Բառակազմության մեջ հիմքերում հնչյունափոխված տարբերակների ակտիվությունը, ավանդույթով թե այլ հանգամանքներով պայմանավորված, գործում է նաև արդի հայերենում: Դրա հիմնական պատճառներից մեկը թերևս արտասանական էներգիայի տնտեսումն է կամ բարեհնչունությունը, որի մասին կիսովի ստորև:

3. Տարբերակների ընտրության և գործածականության մեջ էական դեր են կատարում արտասանական էներգիայի տնտեսումը, սահուն, հեշտ և գեղեցիկ արտասանելու հանգա-

մանքը: Օրինակ՝ սրիչ, ծրիչ, դրդիչ, հարիչ, ամբարձիչ, հղի, եզրափակիչ, փանդիո, բամբիո, ամբարիշտ բառերի ձևակազմական, մասամբ նաև բառակազմական հնչյունափոխված հիմքերը ակնհայտորեն անբարեհունչ են և դժվար են արտասանվում բաղաձայնների կուտակման պատճառով, հմմտ. սրչի/սրիչի, վարչի/վարիչի, փոխարկչի/փոխարկիչի, փոխարկչային/փոխարկիչային, ամբարձչի/ամբարձիչի, ամբարձչային/ամբարձիչային, տկի/տիկի, հղու/հղիի, եզրափակչում/եզրափակիչում, կեղևջարդչի/կեղևջարդիչի, բամբոի/բամբիոի, բամբոահար/բամբիոահար, ամբարշտություն//ամբարիշտություն և այլն: Իրենց հնչյունափոխված տարբերակների համեմատությամբ ակնհայտորեն ավելի բարեհունչ են, օրինակ, գործիական հոլովի՝ անհնչյունափոխ հիմքով հետևյալ կազմությունները՝ գարիով, մատանիով, գոտիով, խնամիով, քեռիով, գոլորշիով, կամ՝ կարիճով, արճիճով, անիվով, դահլիճով, նորոգիչով, տորմիդով, եղանակիչով, հոգնակիով, որոշիչով, բացահայտիչով, հատկացուցիչով և այլն:

Գրական լեզվից աստիճանաբար դուրս են մղվում և սովորական չեն մի շարք բառերի հնչյունափոխված հիմքերը՝ որպես համեմատաբար անբարեհունչ կազմություններ, ինչպես՝ **դասավոր>դասատուի, երկվանալ>երկուանալ, կացնավոր>կացինավոր, խնամանալ>խնամիանալ, խնամություն>խնամիություն, ոխերմություն>ոխերիմություն:** Ակնհայտ է նաև, որ բերված օրինակներում անհնչյունափոխ ձևերը ավելի մաքուր են պահում բառի պատկերը. բառի իմաստային և կառուցվածքային ընկալումը դառնում է ավելի մատչելի և դյուրին:

Ի-ով վերջացող մի քանի բազմավանկ բառերի գործիական և ներգոյական հոլովաձևերից հնչյունափոխված տարբերակները գրական լեզվում աստիճանաբար իրենց տեղը զիջում են անհնչյունափոխներին՝ որպես առավել բարեհունչ տարբերակների (գարիով/գարով, քամիով/քամով, քենիով/քենով, քեռիով/քեռով և այլն):

Ի-ով վերջավորվող մի շարք բազմավանկ բառեր գործիական հոլովաձևում սովորաբար չեն հնչյունափոխվում, ինչպես՝ **առածանի-ով, ազատանի-ով, բարդի-ով, մորի-ով, թեղի-ով, բորենի-ով, նախնի-ով, անդրի-ով, գոտի-ով, սպի-ով, ամուրի-ով, պատանի-ով, հղի-ով, մատանի-ով, արփի-ով, վայրենի-ով, մայրենի-ով, նարդի-ով** և այլն: Սրանց մի մասը բացառականում ունի գուգաձևեր (բարդիից//բարդուց, գոտիից//գոտուց, պատանիից//պատանուց և այլն), որոնցից առավել գործածական են **ի-ի** անկումով ձևերը: Ակնհայտ է, որ այստեղ գործում է ոչ միայն գրական-գրքային բառերին բնորոշ անհնչյունափոխության պարագան (առածանի-ով, ազատանի-ով, բարդի-ով, մորի-ով, թեղի-ով, բորենի-ով, անդրի-ով, ամուրի-ով, արփի-ով, վայրենի-ով և այլն), այլև արտասանական բարեհնչության սկզբունքը, հմմտ. *առածանի-ով / առածան-ով, ազատանի-ով / ազատան-ով, թեղի-ով / թեղ-ով, անդրի-ով / անդր-ով, գոտի-ով / գոտ-ով, սպի-ով / սպ-ով, նարդի-ով / նարդ-ով* և այլն:

Նմանապես ավելի բարեհունչ են որոշ բառերի անհնչյունափոխ բացառականները, հմմտ. *առածանի-ից / առածան-ուց, անդրի-ից / անդր-ուց, հղի-ից / հղ-ուց, նարդի-ից / նարդ-ուց* և այլն: Ի դեպ, արտասանական էներգիայի տնտեսում ասելով՝ չպետք է հասկանալ անպայման կարճ բառերի կամ ձևերի նախընտրությունը: Խոսքն ավելի շատ վերաբերում է թեթև ու սահուն, առանց ավելորդ ճիգի ու լարման արտասանելու հնարավորությանը: Հետաքրքիր է հետևյալ իրողությունը. նոր խոսել սովորող երեխան **տատի** բառը **մամա** և **պապա** բառերի համաբանությամբ արտասանում է **տատա**, որը չնայած սխալ կազմություն է, բայց ավելի հեշտ է արտաբերվում, քանի որ ձևավորվում է նույն հնչյունների կրկնությամբ: Կամ՝ **ձեռն-պահ** բառը խոսակցականում արտասանվում է **ձեռն[ը]պահ**,

բռն[ը]կվել, փոխ. **ձեռ[ը]նպահ**-ի, **բռ[ը]նկվել**-ի, քանի որ **ն**-ից հետո **ը**-ի արտասանությունը ավելի քիչ լարում և էներգիա է պահանջում: Հոդակապով համադրական բարդությունները բառապաշարում անհամեմատ գերակշռում են. դրանք ավելի սահուն են արտասանվում: Ավելին: Առանձին քերականական երկար ձևեր նվազ ճիգով են արտասանվում, քան դրանց հոմանշային տարբերակները. **խոսած** ճիշտ ձևը, ի տարբերություն **խոսացած** սխալակազմության, դժվար է արտաբերվում անսովոր լինելու և մտքի լարումով ձևավորվելու պատճառով: Ակնհայտորեն քիչ լարում և հետևաբար նաև քիչ էներգիա է պահանջվում արտասանելու համար, օրինակ, **եզրափակիչում**, **ամփարձիչով**, **փոխարկիչով** ձևերը, քան **ամփարձչով**, **եզրափակչում**, **փոխարկչով**. Երկրորդ դեպքում բաղաձայնների կուտակումը դժվարացնում է արտասանությունը:

4. Որպես կանոն՝ և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ հնչյունափոխության չեն ենթարկվում օտար բառերը և տերմինները, ինչպես՝ **այլումին**, **անալզին**, **անարխիստ**, **ասպիրին**, **գիպս**, **դեֆին**, **թիմ**, **կարկին**, **կոմունիստ**, **մանդարին**, **մարգարին**, **մարքսիստ**, **միֆ**, **սուպ**, **վանելին**, **տերմին**, **տիֆ**, **ցինկ** և այլն: Պատճառը հավանաբար ոչ միայն նոր գրական հայերենի ընդհանրական միտումն է դեպի անհնչյունափոխ բաղադրական հիմքերը, այլև լեզվի հակումը դեպի արտասանական առավել սահուն ու ներդաշնակ տարբերակները: Որոշակի դեր է կատարում նաև օտար բառի պատկերը չաղճատելու հոգեբանական գործոնը: Այս դեպքում, որպես կանոն, հիմքի տարբերակային ձևեր չեն արձանագրվում:

5. Կարելի է որոշակի բառերի ու բառախմբերի համար մատնանշել հնչյունափոխական վարքագծի նաև այլ կանոններ.

ա) Բայերը, որպես կանոն, բաղադրվում են հնչյունափոխված հիմքից, ինչպես՝ **անեծ(ք)** – **անիծել**, **ապավեն** – **ապավինել**, **գեր** –

գիրանալ, սեր – սիրել, սուր – սրել, կերակուր – կերակրել, վրեպ – վրիպել, զեն(ք) – զինել, հրավեր – հրավիրել, էգ – իգանալ, էջ – իջնել, հանդես – հանդիսանալ, ապավեն – ապավինել, օրեն(ք) – յօրեն(ք) – հորեն – հորինել, սեգ – սիգալ, բույր – բուրել, գույժ – գուժել, սույր – սուրալ, վարագույր – վարագուրել, պարույր – պարուրել և այլն:

բ) Նոր բառեր կազմելիս չեն հնչյունափոխվում այն բառերը, որոնց հնչյունափոխված հիմքը խորթ է կամ չի գործել գրաբարում և ավանդաբար չի փոխանցվել մեզ, ինչպես՝ **քարտեզ** – քարտեզագրություն, **ժապավեն** – ժապավենանման, **օդահեն** – օդահենություն և այլն:

գ) Չեն հնչյունափոխվում **-եղեն** և **-վետ** ածանցները՝ **հոտավետները**, **բուրավետները** (ծաղիկներից), **ամանեղեններ**, **ուկեղեններ** և այլն¹⁴⁶:

Այս կետում նշված բառերի բաղադրական հիմքերը տարբերակային ձևեր չեն ունենում:

Ամփոփում: Արդի գրական հայերենում հնչյունափոխվող և անհնչյունափոխ բառակազմական և ձևակազմական հիմքերում կատարվող տեղաշարժերը և տարբերակային ձևերի առաջացումը որոշակիորեն կապվում են հնչյունափոխական օրինաչափությունների հետ կամ պայմանավորված են դրանցով: Հիմքերի տարբերակներով են հանդես գալիս հիմնականում գործածական հաճախականություն ունեցող բառերը: Եվ, ինչպես ենթադրվում է, դա առավելապես դրսևորվում է բառակազմական հիմքերում: Տարբերակային դրսևորումներ սովորաբար չեն ունենում օտար բառերը և տերմինները, որոնք, ինչպես տեսանք, և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ սովորաբար չեն ենթարկվում հնչյունափոխության:

¹⁴⁶ Տե՛ս նաև «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» (խմբ.՝ Գր. Ղափանցյան), հ. 1, Եր., 1951, էջ 79-80:

1.7. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆԻ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ¹⁴⁷

Մուտք: Կան բայեր, որոնք բայերի մեծամասնության խոնարհման (կանոնաւոր) ձեւերից ունեն որեւէ շեղում: Այդպիսի բայերը կոչւում են **անկանոն**: Դրանք են՝ **գալ, լալ, տալ, ասել, ուտել, զարկել, բացել, բերել, դառնալ, վեր կենալ, անել, դնել, տանել, ելնել, լինել, առնել, տեսնել, թողնել**: Անկանոնության իւրայատուկ դրսեւորում է որոշ բայերի պակասաւոր լինելը: Ասել է թէ՛ կան բայեր, որոնք ունեն խոնարհման ոչ բոլոր ձեւերը: Որպէս **պակասաւոր բայեր**՝ ընդունուած է առանձնացնել հետեւեալները՝ **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ, յուսալ, ցանկալ, լուալ, լուանալ, կենալ**:

Անկանոն բայերի ուսումնասիրութիւնը քերականագիտութեան առանցքային խնդիրներից է: Ոչ միայն որովհետեւ խնդիրն առնչւում է բային, որը ձեւաբանական համակարգի առանցքն է, այլեւ որովհետեւ անկանոն բայերը ամենից գործածական շերտն են բայ խօսքի մասի բառային կազմում: Բացի այդ՝ որպէս գործածական լեզուական միաւորներ՝ դրանք առաւելապէս են ենթարկուում փոփոխութիւնների, եւ, ինչպէս լեզուական բոլոր տեղաշարժերի պարագայում, այնպէս էլ այս դէպքում ժամանակ առ ժամանակ անհրաժեշտութիւն է առաջանում անդրադառնալու խնդրին, ճշգրտումներ կատարելու փոփոխութիւնների մէջ, ինչու չէ, նաեւ յանձնարարականներ

¹⁴⁷ Տպագրվել է «Հայկազեան հայագիտական հանդէս»-ում, Պէյրութ, 2019, հ. 39:

առաջարկելու դրանց նպատակային ուսումնասիրութեան եւ ուսուցման համար:

Անկանոն բայերի քննութեանը հայ քերականագիտութեան մէջ պարբերաբար անդրադարձել են. հանգամանօրէն ներկայացուել են խոնարհման ընդհանուր կանոններից շեղումները, դրանց զարգացումը, փոփոխութիւնները: Դրանք, սակայն, ինչպէս ասուեց, անհրաժեշտութիւնը ունեն մշտապէս քննարկումների առարկայ լինելու: Մանաւանդ եթէ նկատի ուենանք այն հանգամանքը, որ զարգացումներն ու փոփոխութիւնները միշտ չէ, որ ուշադրութեան կենտրոնում են, եւ յաճախ իրողութիւնները գրքից գիրք են փոխանցում մեքենաբար. հնացած ու գործածութիւնից դուրս եկած շատ լեզուական փաստեր, որոնք կենդանի գրական գրաւոր եւ բանաւոր խօսքում չեն արձանագրում, քերականութեան ձեռնարկներում չեն երեւում: Բերենք օրինակներ ընդամենը մէկ հեղինակից: Ա. Մարգարեանը ծաւալուն եւ յաջողած ուսումնասիրութիւն է նուիրել արդի արեւելահայերէնի ձեւաբանական համակարգի ուսումնասիրութեանը: Հանգամանօրէն անդրադարձել է նաեւ մեզ հետաքրքրող հարցին՝ անկանոն բայերի խոնարհմանը: Սակայն արդի գրական արեւելահայերէնի կանոնի տեսակէտից անկանոն բայերին վերաբերող մի շարք փաստեր, որ ներկայացնում է հեղինակը, այսօր քննութեան չեն դիմանում: Այսպէս. անկանոն բայերի շարքում թուարկում են նաեւ **բանալ**, **բառնալ**, **կենալ** բայերը, ապա ներկայացւում է դրանց խոնարհման յարացոյցը՝ կանոնաւոր եւ անկանոն ձեւերով. առաջին երկուսի համար շեղուող ձեւեր են համարւում համապատասխանաբար **բացել** եւ **բարձել** սկզբնատիպ բայերի կազմութիւնները՝ **բացեցի**, **բացեցիր**, **բացեց**; **բարձեցի**, **բարձեցիր**, **բարձեց** եւ այլն: Երրորդի համար կանոնակարգուած ձեւեր են ներկայացւում **կացայ**, **կացար**, **կացաւ**; **կա՛ց**, **կացե՛ք**; **կեցել** եւ,

կեցել էք եւ կաց կամ կեց հիմքով կազմուող նման ձեւերը¹⁴⁸: Հեղինակը կանոնական է համարում արդի գրականում անգործածական նաեւ այլ բայաձեւեր՝ մի՛ առնէք, մի՛ ասացէք, մի՛ թողիք/մի՛ թողնիք, մի՛ ելնիք, մի՛ անիք, մի՛ անէք, մի՛ դառ, մի՛ դառէք, դրեցէ՛ք, տուեցէ՛ք, մի՛ տանէք, մի՛ ուտիք, լուացի՛ր, մի՛ լուաք եւ այլն¹⁴⁹: Հասկանալի է, որ այսպիսի մօտեցումը հիմնականում առարկայական պատճառներ ունի. դա լեզուի բնականոն զարգացումն է, երբ կանոնական շատ կազմութիւններ կարող են ժամանակի ընթացքում հնանալ, դառնալ անգործածական, փոխարինուել այլ ձեւերով կամ տարբերակներով: Այդ իսկ պատճառով չափազանց կարելոք է դառնում հարցի պարբերաբար ուսումնասիրութիւնը¹⁵⁰:

Բացի այդ՝ ուսումնասիրութիւնները տարուել են առաւելապէս նոյն մեթոդաբանութեամբ, եւ ուսուցումը իրականացուել է ըստ այդմ. անկանոնութիւնները ներկայացուել են ըստ լծորդութեան եւ բայակազմական տիպերի՝ **ե** եւ **ա** լծորդութեան պարզ բայեր, ածանցաւոր բայեր եւ այլն: Մինչդեռ այս մեթոդաբանութիւնը, որը փոխանցուել է գրքից գիրք, ձեռնարկից ձեռնարկ¹⁵¹, հնարաւորութիւն չի տալիս համակարգուած ներկայացնելու անկանոնութիւնները. տրուում են բայերից իւրաքան-

¹⁴⁸ Տե՛ս **Ա. Մարգարեան**, Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն, Եր., 2004, էջ 468-474:

¹⁴⁹ Տե՛ս նոյն տեղը, էջ 468-480:

¹⁵⁰ Բղէպ, որքան էլ տարօրինակ է, անկանոն բայերը ներկայացուած եւ նկարագրուած են դպրոցական ոչ բոլոր դասագրքերում. տե՛ս, օրինակ, **Լ. Եզեկեան, Ա. Մարգարեան, Ռ. Մաքսպետոյեան**, Հայոց լեզու. դասագիրք աւագ դպրոցի ընդհանուր եւ բնագիտամաթեմատիկական հոսքերի 11րդ դասարանի համար, Եր., 2010:

¹⁵¹ Մ. Ասատրեանը իր բուհական ձեռնարկում, օրինակ, համեմատութեան կարգով պարզապէս մեթոդաբանական յղում է անում **Յ. Բարսեղեանի** 1953 թ. հրատարակած ուսումնասիրութեանը («Արդի հայերէնի բայի եւ խոնարհման տեսութիւն», Եր., 1953)՝ յուշելով ընթերցողին, որ ինքը առաջնորդուում է հարցի նկարագրութեան նոյն սկզբունքով, տե՛ս **Մ. Ասատրեան**, Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, Եր., 1983, էջ 346:

չիւրի խոնարհման առանձնայատկութիւնները, պարզապէս թուարկում են շեղումները, եւ սովորողին «պարտադրում» է ուղղակի կարդալ եւ մտապահել դրանք: Յաճախ նոյնիսկ կանոնաւոր եւ անկանոն ձեւերը ներկայացնում են առանց տարբերակման¹⁵²: Թուլանում է նիւթի քննութեան ու մատուցման գիտականութիւնը:

Նիւթի ուսումնասիրման մեթոդաբանական հետաքրքիր լուծում է առաջարկում լեզուաբան Ջ. Աղաջանեանը: Նա անկանոն բայերի զուգաձեւութիւնները յարմար ներկայացնելու համար դրանցում առանձնացնում է երեք խումբ՝ **ա)** նոյնարմատ անկանոն բայեր (առնել, ասել, բերել, զարկել, ելնել, տեսնել, թողնել). անկանոն ձեւերում պահպանում են նոյն արմատը՝ **ա՛ռ, ե՛լ, թո՛ղ, թողի՛ք/թողեցի, ասա՛, տե՛ս, մի՛ տես, բե՛ր, բերի եւ այլն; բ)** տարարմատ անկանոն բայեր (գալ, լինել, ուտել). անկանոն ձեւերը կազմում են արմատի փոփոխութեամբ՝ **եկայ, եկ՛, եկած, եկող; եղայ, եղի՛ր, եղած, եղող, եղել է; կերայ, կերած, կե՛ր, կերել է եւ այլն, գ)** այլաբուն անկանոն բայեր (**անել, բանալ, բառնալ, դառնալ, լալ, կենալ, տալ, տանել**). անկանոն ձեւերը կազմում են արմատի փոփոխուած ձեւերով՝ **անել – արեցի, արած, արա՛; բանալ – բացել եմ, բացած, բա՛ց; դառնալ – դարձի՛ր, դարձած, դարձել է եւ այլն**¹⁵³:

¹⁵² Ժամանակակից հայոց լեզուի ակադեմիական հրատարակութեան մէջ, օրինակ, կրկնութիւններից խուսափելու համար խնդիր է դրում տալ «մի-այն այն բայաձեւերը, որոնք շեղում են խոնարհման ընդհանուր կարգից»: Սակայն, որքան էլ տարօրինակ է, մի շարք դէպքերում զուգահեռ ներկայացնում են նաեւ կանոնական ձեւեր: Բերենք մէկ օրինակ. **զարկել** բայը բնութագրելիս նշում են դրա անցեալ կատարեալի եւ հրամայականի նաեւ կանոնաւոր կազմութիւնները (զարկեցի, զարկեցիր, զարկեց....; զարկի՛ր, զարկեցե՛ք, մի՛ զարկիր, մի՛ զարկէք եւ այլն)՝ առանց որևէ մեկնաբանութեան: (Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Եր., 1974, էջ 427-428):

¹⁵³ Տե՛ս **Ջ. Աղաջանեան**, Ձեւաբանական նորմ եւ խօսքի մշակոյթի հարցեր, Եր., 2007, էջ 314-324:

Այս մեթոդը թերեւս շատ յարմար է անկանոն բայերի յարա-
ցոյցում ամօլայ զուգաձեւութիւնները ներկայացնելու համար,
ինչը հէնց ուսումնասիրողի գիտական նպատակն է, սակայն
այն ակնհայտօրէն հնարաւորութիւն չի տալիս ամբողջութեամբ
եւ համակարգուած ի ցոյց դնելու անկանոնութեան բոլոր դըր-
սեւորումները. քննարկումից սկզբունքօրէն դուրս են մնում մի
շարք անկանոնութիւններ, ինչպէս, օրինակ՝ **գալ, լալ, տալ** բա-
յերի՝ համակատարով անկանոնութիւնները՝ **գալիս է, լալիս է, տալիս է**,
ենթակայականի ձեւերը՝ **եկող, տուող, դնող, դար-
ձող**, պակասաւոր բայերի մեծ մասի շեղումները եւ առհասա-
րակ բոլոր այն անկանոնութիւնները, որոնք չունեն զուգահեռ
տարբերակներ:

Անկանոն բայերի խոնարհման նկարագրութեան սկզբունքօ-
րէն տարբեր եւ համակարգուած մօտեցում է առաջարկում
լեզուաբան Ֆ. Խլդաթեանը: Իր ձեռնարկում «**Անկանոն խո-
նարհում**» խորագրի տակ նա փորձում է դասակարգել ան-
կանոնութեան դրսեւորումները՝ դրանցում առանձնացնելով
վեց «տարաձեւեր». 1. **Տալ, լալ, գալ** բայերի անկատար ներկան
կազմում են համակատար դերբայով՝ **տալիս է, լալիս է, գալիս
է**; 2. **Գալ, ուտել, լինել** բայերը անցեալ կատարեալում ունեն տա-
րաբաժանութիւն՝ **գալ – եկ-աւ, ուտել – կեր-աւ, լինել – եղ-աւ** եւ
այլն; 3. Անցեալ կատարեալում եւ նրա հիմքից կազմուող
ձեւերում պարզ բայերը վերածւում են յարադրաւորների՝ **լալ –
լաց լինել, լաց եղայ, լաց եմ եղել, լա՛ց եղիր** եւ այլն; 4. Մի
շարք բայերի անցեալի հիմքում ամօլայ է հնչիւնափոխութիւն՝
**տալ – տու-եցի, անել – ար-եցի, դնել – դր-եցի, դառնալ – դար-
ձ-աւ**; 5. Ե խոնարհման բայը դառնում է **ա** խոնարհման՝ **ասել –
ասաց-ի, ասաց-իր**; 6. Որոշ բայերի հրամայականի ձեւերը
հաւասարում են բայահիմքին՝ **գալ – ե՛կ, մի՛ գա, լուալ – լուա՛,
տեսնել – տե՛ս** եւ այլն: Առանձին ներկայացւում են նաեւ պա-
կասաւոր բայերը՝ **Պակասաւոր խոնարհում**: Սրանք բաժան-

ում են երկու խմբի. առաջին խմբից **յուսալ, ցանկալ, կենալ** բայերը ունեն անորոշ դերբայ եւ ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ձեւեր, **յուսալը**՝ նաեւ հրամայականի, **կենալը**՝ միայն ըղձական ապառնիի: Երկրորդ խմբի **եմ, կամ, գիտեմ, ունեմ** բայերը չունեն անորոշ դերբայ, խոնարհում են միայն անկատար ներկայ եւ անկատար անցեալ ժամանակաձեւերով: **Լուսալը** չունի միայն անկատար ներկայ եւ անկատար անցեալ բայաձեւերը: Ապա՝ առանձին աղիւսակներով տրւում է անկանոն եւ պակասաւոր համարուող բայերի խոնարհման ամբողջ յարացոյցը¹⁵⁴: Սա է ամբողջ պատկերը:

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ բերուած «տարաձեւեր»-ում ներառուած բայերը անկանոնութեան բոլոր դրսեւորումներով չէ, որ ներկայացուած են (երկրորդ խմբի բայերի առիթով, օրինակ, նշուում է միայն անցեալ կատարեալի մասին, մինչդեռ տարարմատութիւն ունեն նաեւ այդ հիմքից կազմուող միւս ձեւերը՝ **եղել եմ, եղած, եղող, եղի՛ր** եւ այլն), կամ՝ անցեալի հիմքում հնչիւնափոխում են (4րդ կետ) ոչ միայն յիշատակուող բայերը (օրինակ՝ նաեւ **տանելը՝ տարայ**), եւ կամ՝ հիմքի ձայնաւորի (ե>ա) փոփոխութիւն է կրում (5րդ խումբ) նաեւ **վեր կենալ** բայը՝ **վեր կացայ, վեր կացար, վեր կացաւ** եւ այլն: Կան նաեւ անճշգրիտ ձեւակերպումներ, օրինակ՝ 3րդ կետում ասւում է, որ «պարզ բայերըվերածւում են յարադրութեան»: Իհարկէ, յարադրութեան են վերածւում ոչ բոլոր պարզ բայերը. այդպիսի վարքագիծ չեն դրսեւորում **գալ, տալ, ուտել, բերել** եւ մի շարք այլ բայեր: Սա մի կողմից: Միւս կողմից՝ առաջարկուող «տարաձեւեր»ի շրջանակից դուրս են մնում անկանոնութեան մի շարք դրսեւորումներ,

¹⁵⁴ Տե՛ս **Ֆ. Խլղաթեան**, Ժամանակակից հայոց լեզու. մաս Բ. ձեւաբանութիւն, Եր., 2010, էջ 191-196:

ինչպես՝ անցեալ կատարեալում կամ հրամայականում գուգահեռների առկայութիւնը՝ **բերի/բերեցի, դրի/դրեցի, արի/ե՛կ, բա՛ց/բացի՛ր, եղող/լինող, գա՛րկ/գարկի՛ր** եւ այլն: Կամ՝ **անել, դնել, թողնել** սոսկածանցաւոր բայերի՝ անցեալ կատարեալում կանոնաւոր **ա** ձայնաւորով վերջաւորութիւնների (-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան) փոխարէն պարզ բայերին բնորոշ **ի** ձայնաւորով վերջաւորութիւններ ստանալը՝ **արինք, դրիք, թողի....; արեցի, դրեցի, թողեցի** եւ այլն: Եվ վերջապէս, անկանոն եւ պակասաւոր բայերի խոնարհման աղիւսակներում տեղ են գտել բայաձեւեր (ընդ որում, գուգահեռութիւններում՝ որպէս առաջին տարբերակ), որոնք, մեղմ ասած, այսօր գործածական չեն, ինչպէս՝ **մի՛ գայ / մի՛ գաք, մի՛ լայ / մի՛ լաք, մի՛ դնիր / մի՛ դնէք, մի՛ անիր / մի՛ անէք, մի՛ ուտիր / մի՛ ուտէք, բանալիս / բանալու է / մի՛ բանայ / մի՛ բանաք, մի՛ կենայ / մի՛ կենաք** եւ այլն¹⁵⁵:

Հանրակրթական դպրոցում գործող «Հայոց լեզու»ի դասագրքում անկանոն եւ պակասաւոր բայերը ներկայացւում են յավելուածով՝ հիմնականում կանոնակարգուած քերականութեան մէջ ընդունուած աւանդական նկարագրութեամբ¹⁵⁶:

Ինչ վերաբերում է անկանոն բայերի ուսուցմանը, ապա պէտք է ասել, որ մեզանում գրեթէ անդրադարձ չկայ հարցի, այսպէս

¹⁵⁵ Տե՛ս **Ֆ. Խլղաթեան**, Ժամանակակից հայոց լեզու. մաս Բ. ձեւաբանութիւն, էջ 193-197:

¹⁵⁶ Տե՛ս **Յ. Բարսեղեան, Փ. Մէթիխանեան**, Հայոց լեզու. դասագիրք 7րդ դասարանի համար, Եր., 2016, էջ 162-166: Առանձին կազմութիւնների եւ բնութագրումների վերաբերեալ ունենք անհամաձայնութիւններ. **բերել** բայի եզակի հրամայականի անկանոն **բե՛ր, մի՛ բեր** ձեւերի հետ մեքենաբար անկանոն են նշում յոգնակիի **բերէ՛ք, մի՛ բերէք** կանոնաւոր ձեւերը, անկանոն է համարում **գարկէ՛ք** կանոնաւորը, գործածական բայաձեւեր են համարվում **կենալ** բայի **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացէք, գալ** բայի **մի՛ գայ** հնացած, **լալ** բայի **լացի, լացար, լացինք, լացիր, լացին** խօսակցական կազմութիւնները (տե՛ս նոյն տեղը):

կոչուած, մեթոդաբանութեանը: Ուսումնասիրութեան սկզբունքները գործնականում մատուցուել են որպէս ուսուցման եղանակներ: Այսինքն՝ ձեռնարկներում եւ դասագրքերում հարցը ներկայացուել է այնպէս, ինչպէս գիտական աշխատութիւններում. իւրաքանիւր բայ իր անկանոնութիւններով նկարագրուել է առանձնաբար: Եւ վերջապէս. հրապարակի վրայ եղած ձեռնարկներում միշտ չէ, որ բացատրուում եւ նկարագրուում են բայերի այդ խմբում նկատուող տեղաշարժերը, որոնք, ինչպէս ասացինք, գզալի են:

Այս յօդուածը փորձ է հնարաւորինս համակարգուած ներկայացնելու արդի գրական արեւելահայերէնի անկանոն բայերում առկայ շեղումները, դրանցում նկատուող տեղաշարժերը՝ հարցի ուսումնասիրութեան ու ներկայացման այս եղանակը առաջարկելով միաժամանակ որպէս հանրակրթական աւագ դպրոցներում եւ բուհի մասնագիտական ֆակուլտետներում հարցի ուսուցման ընդունելի եւ յարմար տարբերակ:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՅՍՏԱԿԵՑՈՒՄ, ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ

Նախ: Ի սկզբանէ պէտք է յստակեցնել անկանոն բայերի շըրջանակը եւ ձեւակերպել անկանոն ու պակասաւոր բայեր հասկացութիւնները: Անկանոն է համարուում արդի գրական հայերէնում գործածուող իւրաքանչիւր բայ, որը բայական դիմաւոր կամ անդէմ գէթ մէկ շեղում է դրսեւորում կանոնաւոր բայերի համար ընդունուած խոնարհման կարգից: Օրինակ՝ անկանոն են նաեւ **առնել, ելնել, տեսնել** բայերը, որոնք շեղուում են կանոնաւոր խոնարհումից միայն եզակի հրամայականի դրական եւ արգելական ձեւերում՝ **ա՛ռ, ե՛լ, տե՛ս; մի՛ առ, մի՛ ել, մի՛ տես:** Բացել բայի վերաբերեալ դիտարկում կայ, թէ փոխարինելով **բառնալ** անկանոն բային՝ այն հանդէս է գալիս

որպես կանոնաւոր բայ¹⁵⁷: Մինչդեռ եթէ մի կողմ դնենք այն հանգամանքը, որ նշուած բայը անցեալ կատարեալում, կանոնաւոր ձեւերին (բերեցի, բերեցիր, բերեցինք, բերեցիք, բերեցին) զուգահեռ, ունի նաեւ անկանոն զուգաձեւութիւններ (բերի, բերիր, բերինք, բերիք, բերին), որոնք, իդէպ, ոչ բոլոր մատեաններում են նշուում որպէս խօսակցական ձեւեր (չնայած դա այդպէս է), ապա, միեւնոյնն է, **բացելը** ունի նաեւ գրական լեզուում գործածական մէկ այլ անկանոնութիւն. դա եզակի հրամայականի արմատական **բա՛ց** ձեւն է (արգելականում՝ **մի՛ բաց**), իսկ հրամայական յոգնակիում չունի ցոյական հիմքով զուգաձեւութիւն (բացեցե՛ք), որը յատուկ է **ե** լծորդութեան կանոնաւոր բոլոր պարզ բայերին (գրե՛ք//գրեցե՛ք, խօսե՛ք//խօսեցե՛ք): Այս տրամաբանութեամբ եւ այս սահմանումով արդի գրական արեւելահայերէնում անկանոն բայի յատկանիշներ է ձեռք բերել **խօսել** բայը. այս բայի՝ անցեալի հիմքից բաղադրուած յարակատար դերբայի ձեւը (խօս**աց**-ած) կիրառական մեծ յաճախականութիւն է դրսեւորում կանոնական **խօս-ած** զուգահեռի համեմատութեամբ՝ ըստ էութեան խլելով նրանից գործածութեան իրաւունքը:

Ապա: Աւանդոյթի ուժով ձեռնարկներում եւ գիտական աշխատանքներում քննարկուող բայերը անուանուել են կա՛մ միասնաբար՝ **Անկանոն եւ պակասաւոր բայեր**, կա՛մ առանձին-առանձին՝ **Անկանոն բայեր; Պակասաւոր բայեր:** Երբեմն նաեւ՝ **Անկանոն բայեր; Պակասաւոր անկանոն բայեր:** Իսկ անկանոնները երկրորդաբար անուանուել են նաեւ **արտուղի** կամ **զարտուղի**¹⁵⁸: Բոլոր դէպքերում էլ անուանումը ճշգրտման կա-

¹⁵⁷ Տե՛ս **Յ. Բարսեղեան**, Արդի հայերէնի բայի եւ խոնարհման տեսութիւն, Եր., 1953, էջ 306: «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Եր., 1974, էջ 428: **Զ. Աղաջանեան**, Ձեւաբանական նորմ եւ խօսքի մշակոյթի հարցեր, էջ 319:

¹⁵⁸ Տե՛ս **Ա. Մարգարեան**, Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն, էջ 468:

րիք ունի: Տրամաբանօրէն եւ քերականօրէն խոնարհման ընդունուած կարգից շեղում կամ անկանոնութիւն պէտք է համարել նաեւ խոնարհման ոչ բոլոր ձեւեր ունենալը, ինչպիսին պակասաւոր յորջորջուած բայերն են: Աւելին. հենց պակասաւոր բայերի մի մասը իրենց ունեցած եզակի ձեւերում դրսեւորում է շեղումներ. **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** բայերը անկատար ներկան եւ անցեալը կազմում են գրաբարաձեւ՝ շեղուելով կանոնաւոր բայերին յատուկ խոնարհման ընդունուած կարգից (անկատար ձևաբայ + **եմ** կադապարից՝ **գրում եմ, խօսում եմ, գրում էի, խօսում էի**), ինչպէս՝ **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** (անկատար ներկայ), **էի, կայի, գիտէի, ունէի, արժէի** (անկատար անցեալ): Ուստի վստահաբար կարելի է պնդել, որ պակասաւոր բայերը ընդամենը անկանոն բայերի մի տարատեսակ են եւ չեն կարող ներկայացուել դրանից առանձին (**Անկանոն բայեր; Պակասաւոր բայեր**) որպէս տարբեր հաւասարարժէք իրողութիւններ: Առաւել տրամաբանական եւ գիտականօրէն պատճառաբանուած մօտեցում է այն, որ բայերի այդ երկու խմբերը համարուեն անկանոն բայեր եւ դիտարկուեն մէկ համակարգում՝ որպէս նոյն երեւոյթի տարբեր կողմեր: Ըստ որում, դրանցից իւրաքանչիւրը կ'ունենայ իր յստակ անուանումը՝ հասկանալի իւրայատկութիւններով պայմանաւորուած: Կ'ունենանք հետեւեալ պատկերը՝ **Անկանոն բայեր**, որոնք իրենց հերթին լինում են երկու տեսակ՝ **Բուն անկանոն բայեր եւ Պակասաւոր անկանոն բայեր**: Այս տարբերակումը, կարծում ենք, կ'օգնի՝ նիւթը առաւել մատչելի ներկայացնելու լսարանին:

ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ ԴՐՄԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Յայտնի է, որ շեղումներն ու անկանոնութիւնները հիմնականում ի յայտ են գալիս **անցեալի հիմքից կազմուած բայաձեւե-**

բում: Յիշենք՝ անցեալի հիմքից կազմուող ձեւերն են վաղակատարը, յարակատարը, իսկ ժամանակաձեւերից՝ անցեալ կատարեալը եւ հրամայականի ձեւերը՝ աննշան բացառութիւններով: Ենթակայական դերբայը անցեալի հիմքից անկանոնութեամբ են կազմում սահմանափակ թուով բայեր՝ **դառնալ-դարձող, տալ-տուող, լինել-եղող, վեր կենալ-վեր կացող:** Իդէպ, Մ. Ասատրեանի ձեռնարկում որպէս գուգահեռութիւններ ներկայացուող այլ բայերի անկանոն կազմութիւնները՝ **տարող, դրող, արող** եւ այլն¹⁵⁹, գրական հայերէնում այսօր գործածական չեն:

Ներկայի հիմքից կազմուած բայաձեւերում անկանոնութիւն են հանդէս բերում միայն երեք բայ՝ **գալ, լալ, տալ**. դրանց համակատարի ձեւերը ունեն ե՛ւ անկատարի, ե՛ւ համակատարի նշանակութիւն, ե՛ւ անկատար ներկան ու անկատար անցեալը բաղադրում են համակատարով, ինչպէս՝ **գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ** եւ այլն:

Արդէն ասուեց, որ հրապարակի վրայ եղած գրականութեան մէջ անկանոն բայերի նկարագրութիւնը տրւում է ըստ առանձին բայական-բառական միատրոնների: Մեր խորին համոզմամբ՝ ներկայացման այդ կարգը ստուերում է թողնում երեւոյթի համակարգային նկարագրութիւնը: Ե՛ւ մեթոդական, ե՛ւ գուտ գիտական առումով առաւել նախընտրելի է շեղումներն ու անկանոնութիւնները տալ ըստ դրսեւորման տիպային առանձնայատկութիւնների: Իհարկէ, բոլոր այդ դէպքերում շեղումների բացայայտման համար հիմք է ընտրւում քննարկուող անկանոն բայի հետ նոյնական կազմութիւն ունեցող կանոնաւոր բայի խոնարհման յարացոյցը. վերջինից կատարուած ցանկացած շեղում յամարւում է անկանոնութիւն: Օրինակ՝ **առնելը** անկանոն բայ է՝ կազմութեամբ **և** սոսկածանցով:

¹⁵⁹ Տե՛ս Մ. Ասատրեան, Ժամանակակից հայոց լեզու. ձեւաբանութիւն, էջ 347:

Այս կամ այն բայաձևում դրա քերականական վարքագիծը պարզելու համար վերցնում ենք նոյն կազմութեան կանոնաւոր որեւէ բայ, օրինակ՝ **հագնել**, կազմում ենք նոյն այն բայաձեւը, որը դիտարկւում է: Ասենք՝ քննարկում ենք **առնել** բայի անցեալ կատարեալի ձեւը՝ **առայ**: Նոյն կազմութեամբ **հագնել** ներածանցաւոր կանոնաւոր բայը նոյն ժամանակաձեւում ունի **հագայ** ձեւը: **Հագայ** = **առայ**. երկուսն էլ կազմուած են նոյն՝ **ն** սոսկածանց ունեցող բայերին յատուկ սկզբունքով՝ **անցեալի արմատական հիմք** + **-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան վերջաւորութիւններ**: Այդպիսի պատկեր ունի այդ ժամանակաձեւի ամբողջ յարացոյցը՝ բացառութեամբ հրամայականի. եզակի հրամայականում այս երկու բայերը տարբեր վարքագիծ են դրսեւորում՝ **հագի՛ր** եւ **ա՛ռ**. երկրորդի արմատական կազմութիւնը շեղւում է **ն** ածանց ունեցող բայերի տիպային ձեւից, նշանակում է՝ **առնելը** այս ձեւում դրսեւորել է անկանոնութիւն: Ըստ որում՝ յոգնակի հրամայականում նոյն բայի դէպքում չունենք անկանոնութիւն՝ **հագէ՛ք** = **առէ՛ք**:

Նշուած սկզբունքներն ու մօտեցումները հաշուի առնելով՝ մենք արդի գրական արեւելահայերէնում կանոնաւոր բայերի համար գործող խոնարհման յարացոյցից առանձնացնում ենք շեղումների եւ անկանոնութիւնների հետեւեալ որոշակի **դրսեւորումները**.

1. **Գալ, ուտել, լինել** բայերի խոնարհման դէպքում առկայ է **տարարմատութիւն**. դրանց կատարեալի հիմքը կազմւում է համապատասխանաբար **ել-, կեր-, եղ-** արմատներով՝ **ել-այ, կեր-այ, եղ-այ, եկ-անք, կեր-անք, եղ-անք** եւ այլն:

2. **Անել, դնել, տանել, տալ, դառնալ** բայերի կատարեալի հիմքը կազմւում է բայարմատի մասնակի փոփոխութեամբ՝ **անել>ար-, դնել>դր-, տանել>տար-, տալ>տու-, դառնալ>դարձ-**: **Դառնալ** բայի «կանոնաւոր» ձեւերը (*դառայ, դառար...*) խօսակցական են:

3. **Ասել, վեր կենալ** բայերի կատարեալի հիմքում փոխում է խոնարհիչ ձայնաւորը (ե>ա)՝ *ասել>ասացի, վեր կենալ>մի՛ վեր կացեք*: **Ասել** բայի «կանոնաւոր» ձեւերը (*ասեցի, ասեցիր...*) խօսակցական են:

4. **Անել, դնել, թողնել** սոսկածանցաւոր բայերը անցեալ կատարեալում կանոնաւոր **ա** ձայնաւորով վերջաւորութիւնների (-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան) փոխարէն ստանում են պարզ բայերին բնորոշ **ի** ձայնաւորով վերջաւորութիւններ, որոնք դրւում են զուգահեռաբար թէ՛ արմատական (*արինք, դրիք, թողին* եւ այլն), թէ՛ ցոյական հիմքի վրայ (*արեցի, դրեցիր, թողեցինք* եւ այլն): Սրանցից առաջին տարբերակներն ունեն խօսակցական երանգ:

5. **Առնել, տեսնել, ելնել** բայերի անկանոնութիւնը միայն եզակի հրամայականում է, որը բայարմատն է՝ առանց վերջաւորութեան՝ *ա՛ռ, տե՛ս, ե՛լ* (վերջինս՝ կանոնաւոր *ելի՛ր* տարբերակին զուգահեռ): Առանց վերջաւորութեան է կազմւում նաեւ մի քանի այլ անկանոն բայերի եզակի հրամայականը՝ *թո՛ղ, բե՛ր, բա՛ց, լա՛ց, տա՛ր, տո՛ւր, դի՛ր, կե՛ր, զա՛րկ, ե՛կ* (*արի՛*): Սա անկանոնութեան ակնառու դրսեւորումներից է: (Այս շարքի բայաձեւերից առաջինը՝ **թողը**, չպէտք է շփոթել համանուն **թող** վերաբերականի հետ՝ «**Թող** ոչ մի զոհ չպահանջուի ինձնից բացի....» (վերաբ.), «**Թո՛ղ** նրան, ի՞նչ ես անընդհատ բռնանում» (բայ)):

6. Յաճախակի է զուգաձեւութիւնը՝ *թողեցին//թողին, ասացե՛ք //ասե՛ք, արի՛//ե՛կ, մի՛ զարկ//մի՛ զարկիր, տուին//տուեցին, դրին//դրեցին, լացեցին//լացին* եւ այլն: **Բացել, բերել, զարկել** բայերի անկանոնութիւնը արտայայտւում է զուգահեռ երկրորդ՝ յաճախ խօսակցական երանգ ունեցող ձեւերում՝ *բացեցինք* (*//բացինք*), *բերեցինք* (*//բերինք*), *զարկեցինք* (*//զարկինք*):

7. **Գալ, լալ, տալ** բայերի անկատար ձևաբայը կանոնաւոր **-ում** վերջաւորութեան փոխարէն կազմում է համակատարի նման՝ **-իս** վերջաւորութեամբ՝ *գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ*:

8. Չորս բայեր անկանոնութիւն են դրսեւորում նաեւ ենթակայական դերբայում, որը սովորաբար ձեւաւորւում է բոլոր բայերի ներկայի հիմքից: Այդ բայերն են՝ **դառնալ (դարձող), տալ (տուող), լինել (եղող, նաեւ՝ լինող), վեր կենալ (վեր կացող)**:

9. Կան նաեւ բայեր, որոնք դիմաւոր կամ անդէմ որոշ ձեւեր չունեն: Դրանք կոչւում են **պակասաւոր** բայեր: Այդ պակաս ձեւերը սովորաբար լրացւում են այլ բայերի համարժէք ձեւերով, որի պատճառով էլ պակասաւոր բայերը եւս համարւում են անկանոն: Պակասաւոր են **յուսալ, ցանկալ, լուանալ, լուալ, վեր կենալ, եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** բայերը:

10. **Եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** բայերի սահմանական ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները ունեն անկանոն՝ գրաբարաձեւ կազմութիւն՝ «բայահիմք + վերջաւորութիւն» կաղապարով (*եմ, էինք, կանք, գիտէք, ունես, արժի* եւ այլն)՝ փոխանակ կանոնաւոր «ձեւաբայ + օժանդակ բայ» կաղապարի: Դրանք չունեն նաեւ ելակետային՝ անորոշ դերբայի ձեւը: Դրանց համար որպէս ելակետային ձեւ է առնւում սահմանականի ներկայի եզակի առաջին դէմքի բայաձեւը: Ըստ որում, **գիտեմ** եւ **արժեմ** բայերը անկատար ներկայի եզակի երրորդ դէմքում ունեն զուգաձեւեր՝ **գիտի/գիտէ** եւ **արժի/արժէ**. երկրորդ տարբերակները որոշ չափով հնացած են եւ գործածութիւնից աստիճանաբար դուրս են մղւում:

Իդէպ, նշուած ձեւերը՝ **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ**, համարւում են այդ բայերի սկզբնաձեւեր: Բայց որքան էլ զարմանալի է, առանձին ուսումնասիրութիւններում **արժեմ** բայի սկզբնա-

ձեւ է ներկայացում **արժէլը**¹⁶⁰: Մինչդեռ այդպիսի բառաձեւ արդի գրական հայերէնում չկայ կամ գոնէ չի գործածւում: Բառարանները **արժէլը** տալիս են որպէս գլխաբառ (սկզբնաձեւ), բայց չեն արձանագրում դրա գործածութեան բնագրային որեւէ օրինակ. բերուածները խոնարհուած ձեւերով են¹⁶¹: Իսկ եթէ նկատի ունենանք նաեւ այն տարօրինակ իրողութիւնը, որ ժամանակակից հայերէնի բացատրական բառարաններում **գլխտեմ** բայի սկզբնաձեւ է ներկայացում **գլխտելը** (**գլխտեմը** որպէս գլխաբառ չի նշւում)¹⁶², ապա, կարծում ենք, պարզ կդառնան յիշեալ ձեռնարկներում եւ այլուր **արժէլը** որպէս սկզբնաձեւ տալու պատճառն ու հիմունքը:

Գլխտեմ, ունեմ, արժեմ բայերին հոմանիշ **գլխտենալ, ունենալ, արժենալ** բայերը կանոնաւոր են: Թէեւ իրաւացիօրէն նկատուել է, որ իրենց կերպային իմաստներով հաւասարարժէք

¹⁶⁰ Տե՛ս **Ա. Սարգսեան**, Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն, էջ 477: **Զ. Աղաջանեան**, Ձեւաբանական նորմ եւ խօսքի մշակոյթի հարցեր, էջ 323: **Ֆ. Խղաթեան**, Ժամանակակից հայոց լեզու. մաս Բ. ձեւաբանութիւն, էջ 196:

¹⁶¹ Տե՛ս **Ս. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944: «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան», Եր., 1969: **Է. Աղայեան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, Եր., 1976:

¹⁶² Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան», Եր., 1969: **Է. Աղայեան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, Եր., 1976: Իդէպ, առաջին բառարանում **ունելի** համար ասւում է **տե՛ս Ունենալ**, որի բացատրութեան մէջ էլ բերւում են միայն **ունեմ** բայի խոնարհուած ձեւերի գործածութեան օրինակներ («Քո հերը ձեռին մի աշխարհ **ունեմ**....», «Նա **ունեմ** անտառներ, հողեր, ջրաղացներ....», «Պատկերին տակը գրուի, որ այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, էշեր **ունի**»), իսկ **ունեմի** մասին որեւէ նշում չկայ: Մինչդեռ յայտնի է, որ դրանք տարբեր բայեր են՝ նրբիմաստային եւ բայականական (**ունեմ**–պարզ, **ունենալ**–ած.) տարբերութիւններով: Երկրորդ բառարանում **ունելի** դիմաց նշւում է **տե՛ս 1. Ունենալ: 2. Բռնել: Ունենալը** եւ **ունեմը** արդարացիօրէն ներկայացւում են որպէս առանձին գլխաբառեր: Ինչպէս տեսնում ենք, այս պակասաւոր բայերի վերաբերեալ բառարանային նշումները, մեղմ ասած, միօրինակ չեն:

չեն. երկրորդները ունեն ժամանակային տեւական կերպի իմաստ¹⁶³:

Յուսալ բայի պակաս ձեւերը լրացում են **հոյս ունենալ** հարադիր բայով, **ցանկալ** բայինը՝ **ցանկանալ** բայով, **կենալ** բայինը՝ **մնալ** բայով, **գիտեմ, ունեմ, արժեմ** բայերինը՝ **գիտենալ** (նաեւ՝ **իմանալ**), **ունենալ, արժենալ** բայերով, **կամ եւ եմ** բայերինը՝ **լինել** բայով, **լուալ** բայինը՝ **լուանալ** բայով, **լուանալ** բայինը՝ **լուալ** բայով:

Պիտի նկատել, սակայն, որ նշուած անկանոն բայերի շարքում աւանդաբար թուարկում ու նկարագրում են այնպիսիք, որոնք գործառական էական փոփոխութիւններ են կրել. հնացել են կամ դուրս են մղուել գործածութիւնից՝ այդ իրաւունքը փոխանցելով իրենց հոմանշային տարբերակներին:

Այսպէս: Գիտենալ բայը աստիճանաբար դուրս է մղում գործածութիւնից. դրա փոխարէն աւելի յաճախ գործածւում է **իմանալ** բայը: Գործածական աշխուժութիւնից զուրկ է նաեւ **յուսալը**՝ իր խոնարհուած ձեւերով՝ **յուսամ, պիտի յուսամ, կը յուսամ, յուսա՛, մի՛ յուսայ, յուսացէ՛ք, մի՛ յուսացեք; յուսայի, պիտի յուսայի, կը յուսայի** եւ այլն. փոխարինւում է **յոյս ունենալ** յարադրաւորով՝ **յոյս ունեմ, պիտի յոյս ունենամ, յոյս մի՛ ունեցիր** եւ այլն: Լիովին հնացած է եւ գործածութիւնից դուրս է եկել **ցանկալը**՝ փոխարինուելով **ցանկանալ** բայով: Խօսակցական-բարբառային երանգ ունի **զարկել** բայը, որին գրական լեզւում փոխարինում են **խփել** եւ **հարուածել** բայերը: **Լալ** բայը իր խոնարհուած ձեւերով (որոնք առաւելապէս խօսակցական երանգ ունեն՝ **լալիս եմ, լացել է, լացելու է, լացեց, լա՛ց/լացի՛ր, մի՛ լաց, մի՛ լացեք** եւ այլն) չունի նախկին գործածականութիւնը. գրաւոր գրական խօսքում դրանց յաճախ փոխարինում է **լաց լինել** յարադրաւոր բայը՝ համա-

¹⁶³ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Եր., 1974:

պատասխան ձեւերով՝ **լաց է լինում, լաց է եղել, լաց է լինելու, լաց եղաւ, լաց մի՛ եղիր, լաց մի՛ եղէք** եւ այլն:

Այսօր գործածական չէ նաեւ **կենալ** բայը՝ իր խոնարհման ձեւերով: Ուշագրաւ է, որ այս բայը գրեթէ բոլոր աշխատանքներում սկզբնապէս պակասաւոր անկանոն բայերի շարքում ներկայացում է առանձնաբար՝ ոչ որպէս **վեր կենալ** յարադրաւոր բայի բաղադրիչ: Եւ ապա՝ բայական ձեւերը շարադրելիս, հիմնականում տրւում է յարադրութեամբ (**վեր կացած, վեր կացող, վեր կացայ, վե՛ր կաց, վեր է կացել** եւ այլն): Համեմատաբար նոր շրջանի աշխատանքներում որպէս գործածական ձեւեր են նշում բայի հրամայական կազմութիւնները՝ **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացէք**, ինչպէս նաեւ ըղձական եղանակի **կեցցեմ, կեցցես, կեցցէ, կեցցենք, կեցցել, կեցցեն** ձեւերը, նոյնիսկ հրամայականի **մի՛ կենայ, մի՛ կենաք** հնացած տարբերակները¹⁶⁴: Այլ աշխատանքներում թուարկում են նաեւ այսօր արդէն բոլորովին անգործածական այլ կազմութիւններ՝ **կացող**¹⁶⁵, **կացած/կեցած, կացիր**¹⁶⁶ եւ այլն: Մեր խորին համոզմամբ՝ **կենալ** բայի դերբայական եւ խոնարհուած ձեւերը հնացած են, անգործածական եւ չեն կարող ներկայացուել առանձնաբար: Այդ բառի գործածութեան իրաւունքը, ըստ էութեան, փոխանցուել է **մնալ** կանոնաւոր բային: **Կենալը** պէտք է ներկայացուի եւ նկարագրուի միայն որպէս **վեր կենալ** յարադրաւոր բայի բայական բաղադրիչ՝ որպէս գործածական կազմութիւն: Եւ անկանոն բայերի շարքում այս յարադրութեան նկարագրութիւնը արդարացում է այնքանով, որ, ի տարբերութիւն անկանոն բայական բաղադրիչ ունեցող միւս յարադրա-

¹⁶⁴ Տե՛ս Մ. Միրումեան, Հայոց լեզու. տեսական եւ գործնական դասընթաց, Եր., 2012, էջ 249:

¹⁶⁵ Տե՛ս Յ. Բարսեղեան, Արդի հայերէնի բայի եւ խոնարհման տեսութիւն, էջ 306:

¹⁶⁶ Տե՛ս Ա. Մարգարեան, Հայոց լեզուի քերականութիւն. ձեւաբանութիւն, էջ 474:

ւոր բայերի (**գլուխ տալ, մօտ գալ, գործ անել** եւ այլն), դրա անկանոն բայական բաղադրիչը առանձին գործածութիւն չունի, ուստի եւ չի նկարագրւում:

Երբեմն դասագրքերում եւ այլուր, ինչպէս ասուեց, անկանոն բայերի շարքում ներկայացւում են նաեւ **բանալ, բառնալ** բայերը: Սակայն դրանք ներկայումս հնացած են եւ անգործածական: Դրանց փոխարէն գործածւում են **բացել, բարձել** բայերը, որոնցից երկրորդը կանոնաւոր է:

Երբեմն անկանոն է համարւում նաեւ **լուանալ** բայը՝ նրա որոշ ձեւերի փոխարէն իբրեւ անկանոն ձեւեր ներկայացնելով **լուալ** բայի համապատասխան ձեւերը: Իրականում **լուանալ** բայը պակասաւոր է, թէեւ նմանութեան պատճառով յաճախ խառնւում է **լուալ** բայի հետ: Վերջինս նոյնպէս պակասաւոր է, քանի որ նրա անկատար ձեւաբայի կանոնաւոր **լում** ձեւը խօսակցական է: Գրական խօսքում դրա փոխարէն գործածւում է **լուանալ** բայից կազմուած **լուանում** ձեւը (եւ համապատասխանաբար՝ ոչ թէ **լում եմ, լում էի**, այլ **լուանում եմ, լուանում էի** եւ այլն):

11. Անկանոն են նաեւ **դնել, անել, դառնալ** բայերից կազմուած **ներդնել, վերադառնալ, անդրադառնալ** բայերը, որոնք, պայմանաւորուած իրենց անկանոն բաղադրական հիմքերի անկանոնութեամբ, անցեալի հիմքից կազմուած որոշ ձեւերում եւ անցեալ կատարեալում դրսեւորւում են անկանոնութիւններ, ինչպէս՝ **ներդրած, ներդրել է, ներդրեց** (եզակի հրամայականում ենթադրուող **ներդի՛ր** կազմութիւնը չի գործածւում. դրա փոխարէն գործածւում է յարադրաւոր տարբերակը՝ **ներդրո՛ւմ արա**), **ներդրե՛ք, վերադարձած, վերադարձի՛ր, անդրադարձած, անդրադարձի՛ր** եւ այլն: Միեւնոյն ժամանակ նոյն բայերից բազմաթիւ այլ կազմութիւններ (*հակասել, բացասել,*

վերաբացել, արտաբերել, մեջբերել, մտաբերել, արտադրել, գործադրել, հակադրել, տեղադրել, նախատեսել, տնտեսել, անտեսել, ներթողել, տառադարձել եւ այլն) կանոնաւոր են:

12. Անկանոն բայերի վարքագիծ են դրսեւորում նաեւ բոլոր այն յարադրաւոր բայերը, որոնց բայական բաղադրիչը (բայանուանական յարադրութիւններում) կամ բայական բաղադրիչներից մէկը (բայական յարադրութիւններում) անկանոն բայ է, ինչպէս՝ **զլուխ տալ – զլուխ տուեց, զլուխ տուր, մօտ գալ – մօտ արի/մօտ եկ, վեր ելնել – վեր ել, բաց թողնել – բաց թող, հաշուի առնել – հաշվի առ, ծեծ ուտել – ծեծ կերաւ; բերել-տանել – բերեց-տարաւ, գալ-գնալ – եկաւ-գնաց, տանել թողնել – տարաւ թողեց, տա՛ր թո՛ղ, ասել-խօսել – ասացին-խօսեցին** եւ այլն¹⁶⁷:

Արդի գրական արեւելահայերէնի անկանոն բայերի շեղումներն ու անկանոնութիւնները ամբողջութեամբ եւ համակարգուած ներկայացնելու եւ դրանց ուսուցումը առաւել արդիւնաւետ դարձնելու համար ստորեւ ներկայացուած աղիւսակներում տալիս ենք դրանց թեք ձեւերը:

¹⁶⁷ Ներածանցաւոր անկանոն բայերի (անել, դառնալ, դնել, լինել, տանել, տեսնել, թողնել, առնել, ելնել, վեր կենալ, լուանալ), ինչպէս նաեւ **գալ, լալ, ուտել** աններածանց բայերի ներկայի հիմքից կազմուած արգելական հրամայականի իբրեւ թէ գործածական կանոնաւոր ձեւերը (մի՛ անիր / մի՛ անեք, մի՛ դառնայ / մի՛ դառնաք, մի՛ առնիր / մի՛ առնեք, մի՛ վեր կենար / մի՛ վեր կենաք, մի՛ գայ / մի՛ գաք, մի՛ ուտիր / մի՛ ուտեք, մի՛ լայ / մի՛ լաք եւ այլն), որոնք ներկայացում են նկարագրում են ժամանակակից հայոց լեզուին նուիրուած առանձին աշխատանքներում (տե՛ս, օրինակ՝ **Մ. Միրումեան**, Հայոց լեզու. տեսական եւ գործնական դասընթաց, Եր., 2012, էջ 247–248) հնացած են եւ գործածութիւնից դուրս են եկել: Բոլոր բայերի համար արգելականը գրական արեւելահայերէնում կազմում է **մի՛** արգելական մասնիկով եւ դրական հրամայականի ձեւերով՝ **մի՛ + դրական հրամայական**: Այդ մասին տե՛ս նաեւ **Եռ. Աւետիսեան**, Տեղաշարժեր արդի գրական հայերէնում, Եր., 2011:

Անկանոն ձևերն ընդգծուած են: Խօսակցական երանգ ունեցող ձևերը նշուած են մէկ աստղանիշով (*), հնացած ձևերը՝ երկու աստղանիշով (**):

Աղիւսակ 1.

			Ե խոնարհման			
			Պարզ			
Պերբայներ	անորոշ	1	ասել	ուտել	զարկել**	բացել
	յարակատար	2	ասած	կերած	զարկած**	բացած
	ենթակայական	3	ասող	ուտող	զարկող**	բացող
	համակատար	4	ասելիս	ուտելիս	զարկելիս**	բացելիս
ձեաբայներ	անկատար	5	ասում	ուտում	զարկում**	բացում
	ապակատար	6	ասելու	ուտելու	զարկելու**	բացելու
	վաղակատար	7	ասել	կերել	զարկել**	բացել
	Ժխտական	8	ասի	ուտի	զարկի**	բացի

պարզ ժամանակաձևեր	սահմանական եղանակ	անցեալ կատարեալ	եզակի	I դ.	9	ասացի, ասի*	կերայ	զարկեցի, զարկի**	բացեցի, բացի*
				II դ.	10	ասացիր, ասիր*	կերար	զարկեցիր, զարկիր**	բացեցիր, բացիր*
				III դ.	11	ասաց	կերաւ	զարկեց**	բացեց
		իողմակի	եզակի	I դ.	12	ասացինք, ասինք*	կերանք	զարկեցինք, զարկինք**	բացեցինք, բացինք*
				II դ.	13	ասացիք, ասիք*	կերաք	զարկեցիք, զարկիք**	բացեցիք, բացիք*
				III դ.	14	ասացին, ասին*	կերան	զարկեցին**, զարկին**	բացեցին, բացին*
	եղանակ	ողրական	եզակի	եզ.	15	ասա՛	կե՛ր	զարկի՛ր, զա՛րկ**	բացի՛ր, բա՛ց*
				յոզ.	16	ասե՛ք,	կերե՛ք	զարկե՛ք,	բացե՛ք

				ասացե՛ք**		զարկեցե՛ք**	
		արգելական	եգ.	17	մի՛ ասայ	մի՛ զարկիր, մի՛ ուտիր**	մի՛ բացիր, մի՛ բաց*
			յոգ.	18	մի՛ ասեք	մի՛ կերեք, մի՛ ուտեք**	մի՛ բացեք

Աղիսակ 2.

	Ե խոն.	Ա խոնարհման			Ե խոնարհման	
		Պարզ			-ն-սոսկածանցով	
1	բերել	գալ	լալ	տալ	անել	դնել
2	բերած	եկած	լացած	տուած	արած	դրած
3	բերող	եկող	լացող	տուող	անող	դնող
4	բերելիս	գալիս	լալիս	տալիս	անելիս	դնելիս
5	բերում	գալիս	լալիս	տալիս	անում	դնում
6	բերելու	գալու	լալու	տալու	անելու	դնելու
7	բերել	եկել	լացել	տուել	արել	դրել
8	բերի	գալ	լալ	տալ	անի	դնի
9	բերեցի, բերի*	եկայ	լացեցի, լացի*	տուեցի, տուի*	արեցի, արի*	դրեցի, դրի*
10	բերեցիր, բերիր*	եկար	լացեցիր, լացիր*	տուեցիր, տուիր*	արեցիր, արիր*	դրեցիր, դրիր*
11	բերեց	եկաւ	լացեց	տուեց	արեց	դրեց
12	բերեցինք, բերինք*	եկանք	լացեցինք, լացինք*	տուեցինք, տուինք*	արեցինք, արինք*	դրեցինք, դրինք*
13	բերեցիք, բերիք*	եկաք	լացեցիք, լացիք*	տուեցիք, տուիք*	արեցիք, արիք*	դրեցիք, դրիք*
14	բերեցին, բերին*	եկան	լացեցին, լացին*	տուեցին, տուին*	արեցին, արին*	դրեցին, դրին*
15	բե՛ր	արի՛, ե՛կ*	լա՛ց	տո՛ւր	արա՛	դի՛ր
16	բերե՛ք	եկե՛ք	լացե՛ք	տուե՛ք	արե՛ք	դրե՛ք

17	մի'բեր	մի'արի, մի'եկ*, մի'գայ**	մի'լաց, մի'լայ**, մի'լար**, մի'լացիր*	մի'տուր	մի'արայ, մի'անիր**	մի'դիր, մի'դնիր**
18	մի'բերեք	մի'եկեք, մի'գաք**	մի'լացեք, մի'լաք**	մի'տուեք	մի'արեք, մի'անեք**	մի'դրեք, մի'դնեք**

Աղիւսակ 3.

	Ե խոնարհման					
	-ն-ստականացով					
1	տանել	առնել	ելնել	տեսնել	թողնել	լինել
2	տարած	առած	ելած	տեսած	թողած	եղած
3	տանող	առնող	ելնող	տեսնող	թողնող	լինող, եղող*
4	տանելիս	առնելիս	ելնելիս	տեսնելիս	թողնելիս	լինելիս
5	տանում	առնում	ելնում	տեսնում	թողնում	լինում
6	տանելու	առնելու	ելնելու	տեսնելու	թողնելու	լինելու
7	տարել	առել	ելել	տեսել	թողել	եղել
8	տանի	առնի	ելնի	տեսնի	թողնի	լինի
9	տարայ	առայ	ելայ	տեսայ	թողեցի, թողի*	եղայ
10	տարար	առար	ելար	տեսար	թողեցիր, թողիր*	եղար
11	տարաւ	առաւ	ելաւ	տեսաւ	թողեց	եղաւ
12	տարանք	առանք	ելանք	տեսանք	թողեցինք, թողինք*	եղանք
13	տարաք	առաք	ելաք	տեսաք	թողեցիք, թողիք*	եղաք
14	տարան	առան	ելան	տեսան	թողեցին, թողին*	եղան
15	տա՛ր	ա՛ռ	ե՛լ, ելի՛ր**	տե՛ս	թո՛ղ	եղի՛ր

16	տաբէ՛ք	առէ՛ք	ելէ՛ք	տեսէ՛ք	թողէ՛ք	եղէ՛ք
17	մի՛ տար, մի՛ տանիր**	մի՛ առ, մի՛ առնիր**	մի՛ ել, մի՛ ելիր**, մի՛ ելնիր**	մի՛ տես, մի՛ տեսնիր**	մի՛ թող, մի՛ թողնիր**	մի՛ եղիր, մի՛ լինիր**
18	մի՛ տարէք, մի՛ տանէք**	մի՛ առէք, մի՛ առնէք**	մի՛ ելէք, մի՛ ելնէք**	մի՛ տեսէք, մի՛ տեսնէք**	մի՛ թողէք, մի՛ թողնէք**	մի՛ եղէք, մի՛ լինէք**

Աղիւսակ 4.

	Ա խոնարհման		
	սոսկածանցաւոր		պարզ
1	դառնալ	վեր կենալ	լուանալ
2	դարձած	վեր կացած	լուացած
3	դարձող	վեր կացող	լուացող
4	դառնալիս	վեր կենալիս	լուանալիս
5	դառնում	վեր կենում	լուանում
6	դառնալու	վեր կենալու	լուանալու
7	դարձել	վեր կացել	լուացել
8	դառնայ	վեր կենայ	լուանայ
9	դարձայ	վեր կացայ	լուացի
10	դարձար	վեր կացար	լուացիր
11	դարձաւ	վեր կացաւ	լուաց
12	դարձանք	վեր կացանք	լուացինք
13	դարձաք	վեր կացաք	լուացիք
14	դարձան	վեր կացան	լուացին
15	դարձի՛ր	վե՛ր կաց	լուա՛
16	դարձէ՛ք	վե՛ր կացէք	լուացէ՛ք
17	մի՛ դարձիր, մի՛ դառնայ**	մի՛ վեր կաց, մի՛ վեր կենայ**	մի՛ լուանայ մի՛ լուայ*
18	մի՛ դարձէք, մի՛ դառնաք**	մի՛ վեր կացէք, մի՛ վեր կենաք**	մի՛ լուացէք, մի՛ լուանաք** մի՛ լուաք*

Աղիւսակ 5.

Պակասաւոր անկանոն բայերի խոնարհումը (1)

			Ա խոնարհման		
անորոշ դերբ.			յուսալ	ցանկալ**	կենալ**
ժխտ. ձևաբայ			յուսալ	ցանկալ**	–
ըղձական եղանակ	ապարհի	եզակի	յուս-ամ, -աս, -ա	ցանկ-ամ, -աս, -ա**	–
		յոգն.	յուս-անք, -աք, -ան	ցանկ-անք, -աք, -ան**	–
	անցեալ	եզակի	յուս-այի, -այիր, -ար	ցանկ-այի, -այիր, -ար**	–
		յոգն.	յուս-այինք, -այիք, -ային	ցանկ-այինք, -այիք, -ային**	–
ենթադրական եղանակ	ապարհի	եզակի	կը յուս-ամ, -աս, -ա	կը ցանկ-ամ, -աս, -ա**	–
		յոգն.	կը յուս -անք, -աք, -ան	կը ցանկ-անք, -աք, -ան**	–
	անցեալ	եզակի	կը յուս-այի, -այիր, -ար	կը ցանկ -այի, -այիր, -ար**	–
		յոգն.	կը յուս -այինք, -այիք, -ային	կը ցանկ -այինք, -այիք, -ային**	–
հարկադրական եղանակ	ապարհի	եզակի	պիտի յուս-ամ, -աս, -ա	պիտի ցանկ-ամ, -աս, -ա**	–
		յոգն.	պիտի յուս-անք, -աք, -ան	պիտի ցանկ-անք, -աք, -ան**	–
	անցեալ	եզակի	պիտի յուս-այի, -այիր, -ար	պիտի ցանկ-այի, -այիր, -ար**	–
		յոգն.	պիտի յուս-այինք, -այիք, -ային	պիտի ցանկ-այինք, -այիք, -ային**	–
իր. եղ.	դրական	եզակի	յուսա՛	–	կա՛ց**
		յոգն.	յուսացե՛ք	–	կացե՛ք**
	արգելական	եզակի	մի՛ յուսայ, մի՛ յուսար**	–	մի՛ կաց**, մի՛ կենա(ր)**
		յոգն.	մի՛ յուսացեք, մի՛ յուսաք**	–	մի՛ կացեք**, մի՛ կենաք**

Պակասաւոր անկանոն բայերի խոնարհումը (2)

				Ե խոնարհման				Ա խոն.
անորոշ դերբայ				–	–	–	արժել	–
սահմանական եղանակ	ներկա	եզակի	I դ.	եմ	գիտեմ	ունեմ	արժեմ	կամ
			II դ.	ես	գիտես	ունես	արժես	կաս
			III դ.	է	գիտի, գիտէ**	ունի	արժէ, արժի*	կայ
		լոգականի	I դ.	ենք	գիտենք	ունենք	արժենք	կանք
			II դ.	եք	գիտէք	ունէք	արժէք	կաք
			III դ.	են	գիտեն	ունեն	արժեն	կան
	անցեալ անկատար	եզակի	I դ.	էի	գիտէի	ունէի	արժէի	կայի
			II դ.	էիր	գիտէիր	ունէիր	արժէիր	կայիր
			III դ.	էր	գիտէր	ունէր	արժէր	կար
		լոգականի	I դ.	էինք	գիտէինք	ունէինք	արժէինք	կայինք
			II դ.	էիք	գիտէիք	ունէիք	արժէիք	կայիք
			III դ.	էին	գիտէին	ունէին	արժէին	կային

Ամփոփում: Անկանոն բայերի ուսումնասիրութիւնը եւ յաջող ուսուցումը կարելոր խնդիր է: Այս ոլորտում կատարուած աշխատանքները պիտի պարբերական բնոյթ կրեն՝ արձանագրելու համար կատարուած փոփոխութիւններն ու զարգացումները: Պակասաւոր բայերը պէտք է դիտուեն որպէս անկանոն բայերի առանձին տարատեսակ՝ պակասաւոր անկանոն բայեր: Եղած շեղումներն ու անկանոնութիւնները պէտք է ներկայացուեն ոչ թէ առանձին բայերին բնորոշ իւրայատկութիւններով, այլ անկանոնութիւնների ընդհանուր՝ տիպար դրսեւորումներով: Այս մեթոդը հնարաւորութիւն է տալիս առաւել համակարգուած ու գիտականօրէն նկարագրելու եւ յաջողութեամբ ուսուցանելու անկանոնութիւնները:

Մ Մ Մ 2. ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ¹⁶⁸

Մեր խոսքում անդրադառնալու ենք երկու հիմնական խնդրի. նախ՝ համառոտ ներկայացնելու ենք այն փորձը, որ ունենք արևմտահայերենի դասագրքի ստեղծման ասպարեզում, և երկրորդ՝ փորձելու ենք առաջարկել արևմտահայերենի միասնական դասագրքի կազմության որոշակի սկզբունքներ:

Նախ առաջինի մասին: Դասագիրք կազմելը դժվարին գործ է: Մփյուռքի պարագայում այն դժվար է երիցս: Պետական հովանավորության բացակայությունը, մեկ կենտրոնի շուրջը համախմբվելու դժվարությունները, հայկական համայնքների հոգևոր-մշակութային կյանքի յուրահատկությունները և այլ հանգամանքներ չափազանց լուրջ խոչընդոտներ են առաջ բերում դասագրքի ստեղծման համար: Մփյուռքում այդ գործը հիմնականում իրականացվում է անձնվեր անհատների կողմից, իրականացվում է մեծ գոհողությունների գնով: Ուստի առիթը օգտագործելով՝ հայաստանյան մեր գործընկերների անունից խորին երախտագիտություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր Մփյուռքում հայերեն դասագրքերի ստեղծման գործում ներդրում ունեն:

¹⁶⁸ Նյութը՝ որպես զեկուցում, կարդացվել է Ծաղկաձորում 2010 թ. հունիսի 3-5-ը տեղի ունեցած համաժողովում. տպագրվել է «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Մփյուռքում» զեկուցումների ժողովածուում, Եր., 2011: Տպագրվում է որոշ փոփոխություններով և հավելումներով:

Արևմտահայերենի դասագիրքը կազմության ու գործածության հարուստ ավանդույթներ ունի: Այն սկսվում է 18-րդ դարից. 1727-ին Վենետիկում հրատարակվեց **Մխիթար Մեթաստացու** «Դուռն քերականութեան Աշխարհաբառ լեզուին Հայոց» գիրքը, 1736 և 1760 թթ. Պոլսում լույս տեսան **Պաղտասար Դպիրի** «Պարզաբանութիւն քերականութեան» և «Գիրք քերականութեան» դասագրքերը՝ շարադրված աշխարհի բառով: Իր երկրորդ գրքի առաջաբանում Պաղտասար Դպիրը գրում է. «Անոր համար թեքրար գայս փոքրիկ քերականութիւնս ալ նոր շարադրեցինք աշխարհի բառիւ, որ գրոց բան հասկնալու սեր ունեցող փոքրիկ տիրացուներն՝ կամ թէ՛ ով ոք և իցէ՛ ասով մտնեն ի մեծ քերականութիւն...»¹⁶⁹:

Հետագա շուրջ 300 տարիների ընթացքին ստեղծվել ու գործածության մեջ են դրվել արևմտահայերենի տասնյակ ձեռնարկներ ու դասագրքեր: Ավելորդ չեմ համարում թվել դրանցից մի քանիսը՝ **Ն. Ռուսինեան**, «Ուղղախօսութիւն արդի հայերէն լեզուին», Պոլիս, 1853, **Ն. Զօրաեան**, «Ընթերցասիրութիւն», Պոլիս, 1852, **Մ. Քիրեճճեան**, «Հայերէնի քերականութիւն», Պոլիս, 1864, **Ա. Գարագաշեան**, «Գործնական քերականութիւն», Պոլիս, 1853, **Զապէլ Ասատուր** և **Հրանտ Ասատուր**, «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», Պոլիս, 1900, **Ս. Դաւթեան**, «Նոր քերականութիւն արդի հայերէնի», Պոլիս, 1907 և այլն:

Մեծաքանակ գրականություն է ստեղծվել նաև Սփյուռքի շրջանում՝ 1920-ականներից հետո: Իրենց բովանդակությամբ և գործածության նպատակներով այդ գրքերը երբեմն իրարից էապես տարբեր են: Եվ դա ունի իր պատճառները: Դրանցից են այս կամ այն համայնքի կրթական պահանջները և ավանդույթները, գերակա լեզվի ազդեցությունները, հեղինակի որ-

¹⁶⁹ **Պաղտասար Դպիր**, Գիրք քերականութեան, Կ. Պոլիս, 1760, էջ 2:

դեգրած սկզբունքներն ու, այսպես կոչված, դպրոցը, որին դավանում է դասագրքի հեղինակը:

Ցավոք, Միյուռքում հրատարակված ոչ բոլոր դասագրքերն են հասանելի եղել հայաստանցի ընթերցողիս: Եվ այսօր խոսք կարող ենք ասել միայն այն գրքերի մասին, որոնք ունեցել ենք մեր ձեռքի տակ:

Նպատակ չունենք հանգամանորեն քննարկելու դասագրքերը: Նշելու ենք դրանցից յուրաքանչյուրի այն հիմնական հատկանիշներն ու առավելությունները, որոնցով, մեր տպավորությամբ, այս կամ այն գիրքը կարող է աղբյուր ծառայել արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման համար:

Միյուռքի շրջանում դպրոցական ամենագործածական դասագրքերից մեկը եղել է **Հովհաննես Գազանճյանի** քերականությունը, որ կոչվում է «Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի»: Այն, իհարկե, ստեղծվել է ավելի վաղ՝ 1910-ականներին Կ. Պոլսում, սակայն պարբերաբար վերահրատարակվելով՝ տասնամյակներ շարունակ իբրև դասագիրք է ծառայել տարրական, միջին և ավագ դպրոցի աշակերտների համար: 1924-ին գիրքը վերահրատարակվել է «Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի. բարձրագոյն եւ լրացուցիչ դասընթացք, Ա եւ Բ մասեր» խորագրով: «Այս գիրքը, – գրում է հեղինակը, – համեմատաբար զարգացած աշակերտներու համար է»¹⁷⁰: Գազանճյանի քերականությունը, կարծում եմ, արևմտահայերենի առաջին ամբողջական և ամփոփ դասագիրքն է: Հարուստ է քննական դիտարկումներով: Այստեղ համեմատության մեջ են գրաբարը, բարբառները և արևմտահայ գրական լեզուն: Գիտականությունը այս դասագրքի հիմնական հատկանիշներից է: Արևմտահայերենի քերականության դասական նկարագիրը

¹⁷⁰ **Յովհ. Գազանճեան**, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Պոլիս, 1910, էջ է:

ներկայացնող հավաստի վերլուծումները խիստ օգտակար կարող են լինել ստեղծվելիք դասագրքի համար:

Զարեհ Մելքոնեան, «Գործնական քերականութիւն», հրատարակվել է 1970-ին Բեյրութում: Կարծում եմ՝ տարածաշրջանում այն ընդունված ու գնահատված դասագիրք է եղել տասնամյակներ շարունակ և է նաև այսօր: Նյութի հետևողական ու ճշգրիտ շարադրանքը, դասանյութը սովորեցնելու սկզբունքները անպայման ուսանելի շատ բան կարող են տալ փորձի առումով: Նյութը գործնականում յուրացնելու համար կարևոր միջոց են դասագրքում տրվող հրահանգները:

Պետք է ասել, սակայն, որ գրքում հստակորեն չեն պահպանված դասանյութը ըստ լեզվական մակարդակների մատուցելու սկզբունքները, որով դյուրին չի դառնում տեսական մասի ընկալումը. օրինակ՝ բառագիտության մեջ խոսվում է քերականական իրողությունների մասին, կամ՝ ձևաբանական իրողություններին զուգահեռ ներկայացվում են շարահյուսական գիտելիքներ և այլն: Ուսուցման այս եղանակը սկզբունքորեն հակասում է մեզանում ձևավորված ավանդույթին:

Արևմտահայերենի դասագրքի կազմության մեջ անուրանալի վաստակ ունի **Հարություն Քյուրքճյանը**: Նրա հեղինակած «Նոր քերականութիւն հայերէն լեզուի» միջնակարգ դասարանների համար նախատեսված 450-էջանոց դասագիրքը խիստ ուշագրավ ձեռնարկում է արևմտահայերենի դասագրքի մշակման ճանապարհին: Հեղինակի որդեգրած սկզբունքը ուսանելի է. լեզվական նյութի յուրացումը տրվում է փուլ առ փուլ՝ եռամյա ուսուցման ծրագրով՝ յուրաքանչյուր տարվա համար 15-ական դաս, լեզվի բոլոր մակարդակների համար նախ՝ համառոտ գիտելիքներ, ապա՝ աստիճանաբար նույն մակարդակների վերաբերյալ հետզհետե խորացված ուսուցում: Նյութի մատուցման այս մեթոդը, որը հավանաբար եվ-

րուպական դպրոցի ազդեցության արգասիք է, միայն վերջին տարիներին է մուտք գործել հայաստանյան իրականություն, և կարծում ենք՝ ուսանելի շատ բան ունի իր մեջ: Դասագրքում յուրաքանչյուր դասից հետո ուսուցիչներին տրվող մեթոդական ցուցումները, պարբերաբար իրար հաջորդող եզրակացությունները, ծանոթագրումները կամ վերաքաղի տեսքով տրվող հիշեցումները մատուցվող դասը դարձնում են աշակերտի համար միանգամայն ընկալելի:

Հայոց լեզվի ուսուցումը միջնակարգ-երկրորդական բաժիններում չափազանց դյուրին է դառնում համապատասխան գրական նյութի զուգահեռ մատուցմամբ: Հ. Քյուրքճյանի կազմած ձեռնարկների շարքը՝ «Հայրենի աղբիւր» ընդհանուր խորագրով, որ կոչվում է նաև «Ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան», խիստ շահեկան նյութ է պարունակում արևմտահայերենի և առհասարակ հայերենի նրբություններն ու լեզվական գեղեցիկ կառույցները յուրացնելու համար: Ի դեպ, իբրև սկզբնաղբյուր են ընտրված ո՛չ միայն արևմտահայ հեղինակների գործերը: Արևմտահայերեն սովորող աշակերտը իր լեզվական գիտելիքները ամրապնդում է նաև արևելահայ դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների հենքի վրա՝ Բաճեֆի, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Գուրգեն Մահարի, Զորայր Խալափյան, Հրանտ Մաթևոսյան, Պարույր Սևակ, Վարդգես Պետրոսյան, Վախթանգ Անանյան. ահա ոչ ամբողջական ցանկը արևելահայ այն հեղինակների, որոնց գործերից ծաղկաքաղ է արել հարգարժան քերականագետը: Եվ ուշադրություն դարձնենք նաև հետևյալին. նշված հեղինակների գործերը բերված են արևելահայերենով՝ առանց փոխադրելու արևմտահայերենի: Արևելահայերենին բնորոշ բառերը բացատրվում են գրքում ներդիրի ձևով զետեղված բառացանկում: Այս փորձը, կարծում են, շատ կարևոր է: Ասենք նաև, որ նշված շարքի գրքերից յուրաքան-

յուրի համար դասագրքի հեղինակը ստեղծել է աշխատանքային տետրեր, որոնցում արևմտահայերենի վերաբերյալ գետեղված են համառոտ գիտելիքներ: Դրանցից յուրաքանչյուրը մի-մի առանձին դասագիրք է:

Ուզում եմ մեկ-երկու խոսքով անդրադառնալ Հարություն Քյուրքճյանի մեկ այլ աշխատանքին՝ ինքնուսույց-ձեռնարկներին: Առաջին ձեռնարկը կոչվում է «Ձեռնարկ հայերեն լեզուի»՝ նախատեսված ֆրանսախոս հայության համար (Փարիզ, 1982): Իր իսկ՝ հեղինակի խոսքերով՝ սա դասագիրք է, «գործնական դասագիրք մը, այսինքն՝ անպայման երկլեզու, դիրքին յուրացումի եւ անհատական, առանձին գործածումի կարելիութիւններ ընծայող, եւ այս բոլորի շնորհիւ՝ արդիւնատու»¹⁷¹: Տարիներ հետո՝ 2007-ին, Քյուրքճյանը կազմեց և հրատարակեց նույնպիսի մի ինքնուսույց-ձեռնարկ անգլախոս հայության համար (անգլ. թարգմ.՝ Վ. Փեթթի): Այս գրքի առաջաբանում, անդրադառնալով իր նախորդ ձեռնարկին, հեղինակը գրում է. «Այն լայն սպառում կը գտներ Ֆրանսայի եւ ֆրանսախօս այլ երկիրներու տարածքին եւ տարի մը ետք կ'արժանանար երկրորդ տպագրութեան: Քանի մը տարուան մէջ բազմահազար օրինակներով սպառում մը գտած՝ այս դասագիրքը այսօր կը շարունակէ գործածուիլ քիչ մը ամէն տեղ՝ Ֆրանսայի մէջ: 1978-ին Ֆրանսայի Պետական Մշակութային «Փոմփիտու» Կեդրոնը (Պօպուր) զայն կ'օժտէր, իր միջոցներով եւ հեղինակին մանկավարժական աջակցութեամբ, ամբողջական ձայնագրումով մը՝ քասեթի մը վրայ (ինը ժամ տեւողութեամբ), զայն գործածելու համար իր լեզուական գիտաշխատանոցին մէջ»¹⁷²: Անկասկած է, որ հաջողություններ

¹⁷¹ Յ. Քիւրքճեան, Ձեռնարկ հայերեն լեզուի, Գ. տպագրութիւն, Փարիզ, 1982, էջ 6:

¹⁷² Յ. Քիւրքճեան, Ձեռնարկ հայերեն լեզուի, Փարիզ-Պէյրութ-Լոս Անճելըս, 2007, էջ 8:

կունենա և իր նպատակին կծառայի նաև անգլախոս հայության համար նախատեսված այս ինքնուսույցը, քանի որ ունի պահանջարկ և ինքնուսույց ձեռնարկի համար խիստ կարևոր առավելություններ. երկլեզու է, ունի ձայնային ընկերակցություն, կարող է կիրարկվել առանց ուսուցչի:

Երկլեզու դասագրքերի մասին խոսելիս անպայման պետք է նշել **Դորա Սաքայանի** շատ հաջողված աշխատասիրությունը անգլախոս հայության համար¹⁷³: Գիտնականի և մանկավարժի բազմամյա փորձառությունը այստեղ ակնհայտ է: Գիրքը առանձին դասերով, լեզվական նյութի համակարգված և հետևողական մատուցումով օտարալեզու ուսանողի համար դյուրին ճանապարհ է ստեղծում արևմտահայերենը յուրացնելու: Գրքում գետեղված գործնական առաջադրանքները, արևմտահայերեն բնագրերը, խոսքային համագործածական կադապարները և երկլեզվյան բառացանկը աշխատանքը դարձնում են չափազանց օգտակար:

Կարծում ենք, որ երկլեզու դասագրքերի ստեղծումը պետք է լինի մեր գործի հաջորդ փուլը, այն դեպքում, երբ արևմտահայերենը կուսուցանվի իբրև երկրորդ լեզու:

Պետրոս Հաճյան: Բունեսու Այրեսում Հաճյանի հրատարակած «Պարզ քերականություն»-ը բաղկացած է երեք գրքից: Նախատեսված է եռամյա ուսուցման համար, ընդգրկում է լեզվի միայն մեկ բաժինը՝ ձևաբանություն: Հայերենի յուրացման տեսակետից հեղինակը կարևոր է համարում ձևաբանության հարցերին հանգամանորեն կամ, ինչպես ինքն է ասում, «երկարօրեն դանդաղիլը», քանի որ, ըստ նրա, հարավամերիկյան հայ աշակերտության համար «լեզուն միայն դպրոցի լեզու է դժբախտաբար եւ որուն համար ըլլա՛յ քերականական, ըլլա՛յ

¹⁷³ Տե՛ս **D. Sakayan**, *Modern Western Armenian*, Monntreal, 2010:

բառապաշարային եւ լեզուական այլ ծանօթութիւնները ենթակայ են ցնդելու ճակատագրին, դասարանի շրջագիծէն դուրս մաս չկազմելով լեզուական ընթացիկ արտայայտութեան»¹⁷⁴։ Դժվար է, իհարկէ, համաձայնել այս փաստարկումին, քանի որ բառագիտական և շարահյուսական գիտելիքները նույնքան կարևոր են հայ երիտասարդի համար իր մայրենի լեզվին տիրապետելու, այն գործածելու և հասկանալու կրկնակ առումներով. ենթակա չեն մոռացության և՛ դասարանի շրջագիծէն ներս, և՛ այդ շրջագիծէն դուրս։

Պետրոս Հաճյանի դասագրքի անուրանալի առավելություններից են մատչելիությունը, բանավոր և գրավոր վարժությունների հարուստ պաշարը, յուրաքանչյուր դասից հետո տրվող վերաքաղ նյութերի բազմազանությունը։ Այս դասագիրքը արևմտահայերենի միասնական դասագրքի ձևաբանության բաժնի համար կարող է հանդիսանալ անմիջական աղբյուր։

Կարո Առաքելյան։ Հայ սփյուռքի անխոնջ գործիչներից մեկը, ով որոշակի վաստակ ու ներդրում ունի արևմտահայերենի դասագրքերի ստեղծման գործում։ Կազմել և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկի, մասնավորաբար տիար Զավեն Եկավյանի հատկացրած նյութական օժանդակությամբ 1898-ին Բեյրութում հրատարակել է իր եռահատորը՝ «Արդի հայերենի քերականութիւն» վերտառությամբ։ Գիրքը անցել է գործածության մեկ տասնամյակից ավելի ընթացք, ձեռք է բերել կիրառության որոշակի շրջանակներ։ Հեղինակի հավաստումով՝ իր գրքերում ամփոփված են «ուսուցչական ասպարեզին մեջ երկար տարիներու փորձառութեան» արդյունքները։ Հեղինակը ջանացել է պարզ, դյուրին լեզվով շարադրել լեզվական գիտելիքները, մանավանդ վարժությունների միջոցով ամրապնդել այդ գիտելիքները աշակերտների մոքում։ Առաքելյանը

¹⁷⁴ Պ. Հաճեան, Պարզ քերականութիւն, Ա. գիրք, Պուէնոս Այրէս, 1988, էջ 3։

այն ճշմարիտ համոզումն ունի, որ «Քերականութիւնը գո՛ց չեն սորվիր, քերականութիւնը գո՛ց չեն սորվեցներ, այլ կը տրամաբանեն եւ կանոններուն էութիւնն ու բովանդակութիւնը կ'իրացնեն քերականական վարժութիւններու միջոցով»¹⁷⁵ : Գրքերից յուրաքանչյուրը ներկայացնում է լեզվի որոշակի բաժինը կամ բաժինները. առաջին գրքում համառոտ գիտելիքներ են զետեղված շարահյուսության վերաբերյալ, ապա ներկայացվում են հնչյունաբանություն, բառագիտություն ու ձևաբանություն բաժինները: Երկրորդը, որ ամենից ստվար հատորն է, ընդգրկում է միայն ձևաբանության շարունակելի նյութը, նախորդ գրքի բովանդակության վերաքաղով, երրորդը՝ դարձյալ նվիրված է ձևաբանությանը: Գրքերը նախատեսված են 5-7-րդ դասարաններում սովորող աշակերտների համար:

Առաքելյանի դասագրքի արժանիքներն են հետևյալները. ընդգրկում է հայոց լեզվի բոլոր մակարդակները, շարադրանքը հիմնականում հստակ է և դյուրընկալ, տրվում են հարուստ գիտելիքներ մանավանդ ձևաբանությունից, հիմնականում պահպանվում է նյութի մատուցման համամասնությունը, բազմազան ու հարուստ է գործնական աշխատանքների մասը: Կա հայաստանյան դպրոցի ազդեցությունը: Եվ սա բնավ թերություն չպետք է համարել:

Կարո Առաքելյանի այս գրքերի յուրօրինակ շարունակությունը, ավելի ճիշտ, լրացումը եղան 2004-2005 թթ. դարձյալ Բեյրութում հրատարակված դասագրքերը՝ «Դիւրին հայերէն» խորագրով՝ բաղկացած երեք մասից: Էջերի ընդհանուր քանակը հասնում է 500-ի: Համահեղինակ է **Աղավնի Ֆրստըզճյանը**: Այդ գրքերը միաժամանակ աշխատանքային տեսրեր

¹⁷⁵ **Կ. Առաքելյան**, Արդի հայերէնի քերականութիւն, Ա. Գիրք, Պէյրութ, 1988, էջ 5:

են՝ գրավոր նշումների և հարցումների համար հատկացված բաժիններով: Դասագիրքը հավանաբար նախատեսված է միջին դասարանների համար: Ցավոք, այդ մասին նշում չկա: Ինչևէ, շարադրանքի դյուրին կերպը, վարժությունների միջոցով դասանյութը մատուցելու եղանակը, աշխատանքային տետրի և գրքի համատեղ նկարագիրներով կազմված լինելու հանգամանքները այս դասագիրքը դարձնում են արժանի առանձնակի ուշադրության:

Եդուարդ Տասնապետեան, «Քերականութիւն». հրատարակվել է 1990 թվականին Անթիլիասում Վեհափառ Գարեգին Բ կաթողիկոսի գործուն աջակցությամբ: Սա, անշուշտ, դասագիրք չէ: Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում դասի ընթացքին մշակված նյութեր, քերականագիտական ուսումնասիրություններ, «Բագին» ամսագրում պարբերաբար հրատարակված հոդվածներ. ահա գրքի բովանդակությունը: «Յառաջաբանի» հեղինակ, արևմտահայերենի հմուտ և բժախնդիր պաշտպան (ինչպես նրան բնութագրում են գործընկերները) Արմենակ Եդիայանի հավաստումով՝ այս գիրքը օգտակար կարող է լինել հայոց լեզվի ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր դպրոցական նախնական գիտելիքներ ստանալուց հետո պատրաստվում են հայերենագիտության մեջ մասնագիտանալու¹⁷⁶: Տասնապետյանի գիրքը կարող է հետաքրքրել արևմտահայերենի քերականության ինչ-ինչ իրողությունների գիտական մեկնաբանություններով ու լեզվական փաստերի ճշգրտումներով: Սակայն այս քերականությանը ընտրողաբար պիտի վերաբերվել. վիճելի են հեղինակի գործածած առանձին տերմիններ, որոշ քերականական իրողությունների բնութագրումներ, ինչպես՝ դերանունների և դերբայների դա-

¹⁷⁶ Տե՛ս **Եդ. Տասնապետեան**, Քերականութիւն, Անթիլիաս, 1990, էջ 10:

սակարգումը, բարդ նախադասության նկարագրությունը և առհասարակ շարահյուսական կարգերի քննությունը և այլն: Բոլոր դեպքերում, միասնական դասագիրքը կազմելիս պետք է ձեռքի տակ ունենալ նաև այս գիրքը:

Դոկտոր **Հիլտա Գալֆայան-Փանոսյանի** հեղինակած «Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ»-ը մեր ձեռքի տակ եղած ամենանոր դասագիրքն է: Հրատարակվել է Երևանում 2009 թ., հրատարակության է երաշխավորված հայաստանցի պատվարժան լեզվաբանների և «Մփյուռք» գիտա-ուսումնական կենտրոնի կողմից: Գրքի ներածականում փոքր-ինչ անորոշ է ձևակերպված այն միտքը, թե ում համար է նախատեսված ձեռնարկը: Հեղինակը գրում է. «Ձեռնարկը յղում է բոլոր նրանց, ովքեր լաւագոյնս տիրապետում են հայերէնին...»¹⁷⁷: Սակայն ներածական երկու խոսքից և արևելահայերենով շարադրանքից պարզ է դառնում, որ ձեռնարկը նախատեսված է Հայաստանի հանրակրթական դպրոցների սաների և ուսուցիչների համար: Գիրքը ուշագրավ ձեռնարկում է կրկնակ առումներով, առաջին՝ ներկայացնում է արևմտահայերենի համակարգված և ամբողջական պատկերը՝ ընդգրկելով հնչյուն ու տառ ձևակերպումից մինչև շարահյուսական իրողություններ: Երկրորդ՝ հեղինակը առանձին դեպքերում չի խուսափում մատնանշելու արևելահայերենից արևմտահայերենի ունեցած տարբերությունները:

Մյուս կողմից, սակայն, գրքում զետեղված վարժությունները սակավ քանակը հնարավորություն չեն տալիս մատուցվող տեսական նյութը գործնականորեն և բավարար չափով յուրացնելու: Ձեռնարկը նաև ուշադիր խմբագրումի անհրաժեշտություններ ունի:

¹⁷⁷ Տե՛ս **Հ. Գալֆայան-Փանոսյան**, Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, Եր., 2009, էջ 3:

Հակոբ Չոլաքյան՝ Մփյուռքի ամենից ճանաչված հեղինակներից և վաստակաշատ մանկավարժներից մեկը: Նրա «Անդաստան» երկհատորյակը և վեց գրքից կազմված ձեռնարկը՝ «Հայերենի դասագիրք», Մփյուռքում ամենագործածական դասագրքերից են: Դրանք հեղինակի երկարամյա գիտամանկավարժական աշխատանքի արդյունք են և ուսանելի շատ բան ունեն: Նյութի մատուցման յուրահատուկ կերպը գրավիչ է, այն է՝ գրականության միջոցով կամ այլ դասանյութերով սովորել տալ հայերենը: Ներկայացվող դասերի բազմազանությունը աշակերտին մղում է ավելի մեծ հետաքրքրությամբ յուրացնելու մայրենին: Բացի այդ, ուսուցման այդ մեթոդը լայն հնարավորություններ է տալիս գուգահեռաբար ձեռք բերելու լրացուցիչ գիտելիքներ ոչ միայն հումանիտար, այլև բնագիտական առարկաներից: Շեշտը, իհարկե, դրվում է հայագիտական առարկաների և հայրենիքը ներկայացնող ու ազգայինը քարոզող տեղեկությունների վրա: Սա լրացուցիչ եղանակ է հայերենի միջոցով և հայերենի ուսուցմամբ հային ու Հայաստանը ներկայացնելու: Հայ սփյուռքի իրականության մեջ դասագրքերի կազմության այս եղանակը միանգամայն արդյունավետ է ու նպատակային: Մյուս կողմից, սակայն, դասավանդման կամ նյութի մատուցման այս ձևը կարծես ունի որոշ թերացումներ, քանի որ մի տեսակ երկրորդ պլան է մղվում բուն հայերենի՝ հայոց լեզվի ուսուցումը: Մեթոդը թերևս կիրառելի կարելի է համարել որոշակի համայնքների կրթական գործը կազմակերպելու համար:

Հանգամանորեն չենք անդրադառնալու Մփյուռքի հայ դպրոցներում գործածվող կամ գործածված մյուս ձեռնարկներին ու դասագրքերին՝ **Լեւոն Շանթ**, «Հայերենի գրաւոր դասեր», գրքի Ա աստիճանը հրատարակվել է Փարիզում, 1927-ին, Բ և Գ աստիճանները՝ Բեյրութում՝ 1945-ին և 1968-ին, **Շահէն Շահնուր**, «Քերականութիւն եւ ուղղագրութիւն հայերէն լեզուի»,

Իսթանպուլ, 1970 թ., **Պ. Պետիրեան**, «Եկեք ճիշդ խօսինք ու գրենք», Պոստոն, 1993 թ., **Մ. Մկրտիչեան**, «Քերականութեան դասեր», Հալէպ, 1995 թ., **Կարապետ Ճուհարեան**, «Մրգաստան, մայրենի լեզուի դասագիրք», Հալէպ, 2000 թ. և այլն: Բոլորն էլ հարգանքի ու գնահատության արժանի գործեր են և այս կամ այն հատկանիշով, այս կամ այն չափով կարող են իրապես աղբյուր հանդիսանալ ստեղծելիք միասնական նոր դասագրքի համար:

Ավարտելով Սփյուռքում հրատարակված գրքերի մասին մեր խոսքը՝ ավելորդ չենք համարում նշել, որ արևմտահայերենի դասագրքի ստեղծման փորձի առումով մեծ չափով կարող են օգտակար լինել նաև հայաստանյան դասագրքերը: Խոսքը արևմտահայերենի՝ Հայաստանում ստեղծված դասագրքերի մասին է՝ **Մերգեյ Աբրահամյան** և այլք, «Հայերեն լեզուի դասագիրք» (Երևան, 1966), **Ռուբեն Սաքապետոյան**, «Արևմտահայերենի դասագիրք» (Երևան, 2006), **Յուրի Ավետիսյան**, «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» բուհական դասագիրք (Երևան, 2007), «Զանգակ» հրատարակչության նախաձեռնությամբ կազմված և 2004-ին հրատարակված «Հայերենի աղբիւր» Ա և Բ գրքույկներով ընթերցարան-ձեռնարկները կրտսեր դպրոցի համար, որ հեղինակել են **Անժել Քյուրքճյանը** և **Լիլիթ Տեր-Գրիգորյանը** և այլն:

«Հայերեն լեզուի դասագիրք»-ը արևմտահայերենի՝ Հայաստանում ստեղծված առաջին ամբողջական դասագիրքն է, որը ներառում է լեզվի բոլոր մակարդակները: Շարադրված է, այսպես կոչված, հայաստանյան դասագրքերի կառուցվածքով և մեթոդաբանությամբ և նախատեսված է Հայաստանում արևմտահայերենը սովորող կամ ուսումնասիրող լսարանի համար:

«Արևմտահայերենի դասագիրք»-ը արևմտահայերենի առաջին բուհական դասագիրքն է: Բացի տեսական մասից, որ,

բնականաբար, ներառում է լեզվի բոլոր բաժինները, գիրքը ունի ևս երեք մաս՝ գործնական աշխատանքների և վարժությունների մաս, բնագրեր և արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան: Դասագրքում արևմտահայերենի լեզվական փաստերը դիտարկվում են արևելահայերենի տեսանկյունից, այսինքն՝ նշվում են արևմտահայերենի ունեցած տարբերությունները արևելահայերենից: Գրքում ներկայացվող տեսական գիտելիքները, վարժությունների հարուստ բաժինը աղբյուր կարող են լինել դպրոցական միասնական դասագրքի կազմության ու նյութի մատուցման ինչ-ինչ սկզբունքներ ճշգրտելու համար:

«Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» բուհական դասագիրքը ներկայացնում է արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական պատկերը. ընդգրկում է արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից: Գիրքը հարուստ է բնագրային օրինակներով, որոնք ներկայացվող տարբերությունները դարձնում են համոզիչ և տեսանելի: Այս ձեռնարկը նախատեսված է բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողության, հանրակրթական դպրոցների ուսուցիչների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են արևմտահայերենով: Գրքում քերականական իրողությունները ներկայացնելու որոշ սկզբունքներ կարող են հիմք ծառայել միասնական դասագրքի կառուցվածքը և մեթոդական ուղղվածությունը որոշելիս:

«Հայրենի աղբիւր» ընթերցարան-ձեռնարկները մեզանում արևմտահայերենի ուսուցման առաջին փորձերն են կրտսեր դասարանների համար: Մատուցվող նյութը, հարցումներով առաջադրանքները՝ տպավորիչ պատկերազարդումներով, անպայման հարուստ աղբյուր են կրտսեր դասարանի նոր դասագրքի համար: Այս դասագիրքը ունի մշտապես մշակ-

վելու և կատարելագործվելու առավելությունը. համացանցում տեղադրված նրա էլեկտրոնային տարբերակը պարբերաբար խմբագրվում և մշակվում է՝ ավարտուն և ամբողջական դառնալու հեռանկարով:

Այսպիսով, դասագրքերի ստեղծման գործում արևմտահայերենը կուտակել է մեծ փորձ, մնում է այն արդյունավոր գործածության մեջ դնել և համախումբ աշխատանքով ստեղծել միասնական դասագիրք:

Իսկ ի՞նչ սկզբունքներ պետք է դրվեն արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման հիմքում:

Մեր առաջարկությունների առաջին խումբը ունի այսպես կոչված ընդհանուր բնույթ.

1. Արևմտահայերենի միասնական դասագիրքը պետք է ստեղծվի Սփյուռքի և Հայաստանի մասնագետների համատեղ ջանքերով: Հիմնական ուժը, բնականաբար, Սփյուռքի մեր գործընկերներն են՝ իրենց փորձով, հայ համայնքների կրթական կյանքի խոր և ճշմարիտ իմացությամբ, կենդանի գրական արևմտահայերենի իրական նկարագիրը գծելու մասնագիտական շահախնդրությամբ: Վերը ներկայացված աշխատանքները այդ ուժի վառ ապացույցներն են: Օժանդակող ուժը Հայաստանի ուսուցիչն ու գիտնականն են՝ դասագրքերի կազմության իրենց բազմամյա փորձով և տարիների ընթացքում ձևավորված ու փորձություն ապրած մասնագիտական կարողություններով: Այս երկու ուժերի ճիշտ համագործակցության արդյունքում, համոզված եմ, կունենանք սպասված դասագիրքը:

2. Սփյուռքի համար յուրաքանչյուր դասագիրք կազմելիս անպայման պիտի հաշվի առնել համայնքների առանձնահատկությունները, այն, թե որքանով է կենսունակ համայնքի կրթական ընդհանուր համակարգը, որքան է արևմտահայերե-

նով հաղորդակցվող հանրության իրական քանակը, ինչպիսին է կրթական վիճակը, և ամենակարևորը՝ լեզվական ինչպիսի միջավայրի հետ գործ ունենք: Լեզվական միջավայր ասելով՝ նկատի ունենք ոչ միայն գերակա լեզվի առկայությունը, որն ինքնին կարևոր գործոն է, այլև տարիների ընթացքում ստեղծված լեզվական ավանդույթը, լեզվամտածողությունը: Այս մոտեցմամբ թերևս քննարկման առարկա կարող է դառնալ երեք կարգի դասագրքեր ստեղծելու հարցը՝ երկուսը անգլախոս և ֆրանսախոս միջավայրում ապրող հայության համար, որոնք կլինեն դասագրքեր առավելապես եվրոպական երկրների հայ համայնքների համար, և երրորդ՝ արաբախոս միջավայրում ապրող հայության համար:

3. Արևմտահայերենի դասագիրքը պետք է ստեղծվի եռաստիճան ուսուցման սկզբունքով, այսինքն՝ մենք պիտի ունենանք դասագրքեր կրտսեր, միջին և ավագ դպրոցների համար: Դասավանդվող նյութը պետք է մատուցվի աստիճանական կարգով՝ յուրաքանչյուր հաջորդ փուլում նույն թեմայի վերաբերյալ հաղորդվող գիտելիքները ավելի խորացնելով, պարզ քերականությունից դեպի բարդը գնալու ճանապարհով: Օրինակ՝ աշակերտները շարահյուսական գիտելիքներ պիտի ստանան բոլոր երեք փուլերում էլ, սակայն տարբեր խորությամբ:

4. Արևմտահայերենի դասագրքերի կազմության մասին խոսելիս առանձին հեղինակների կողմից երբեմն արձանագրվում են Սփյուռքում դասագրքերի կազմության տարբեր սկզբունքներ, որոնք ձևավորվել են իբր մի կողմից՝ արևմտահայերենի ավանդական քերականությամբ և մյուս կողմից, այսպես կոչված, հայաստանյան դպրոցի ազդեցությամբ: Արևմտահայերենի նոր դասագրքերից մեկի առաջաբանում կարդում ենք. «Այստեղ նշուած են արեւմտահայ աւանդական քերականութեան մեջ ընդունուած ձեւերը»: Փոքր-ինչ անորոշ

այս ձևակերպումը հեղինակը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Մփիւոքում լոյս ընծայուած մի շարք դասագրքերում նկատել ենք շեղումներ արեւմտահայերէնի աւանդական քերականութիւնից. աւելին, որոշ տարածում են գտնում արեւելահայ նորանոր մօտեցումներ, ինչը կարծում ենք, հետեւանք է Մփիւոքի մասնագէտների Հայաստանում ուսանածի ազդեցութեան: Սակայն տեղնուտեղը ընդգծենք, որ Մփիւոքի դպրոցների ջախջախիչ մեծամասնութիւնը հաւատարիմ է մնում իրեն աւանդաբար փոխանցուած քերականութեանը, այդ քերականութիւնը ուսուցանող դասագրքերին»¹⁷⁸:

Առաջադրված խնդիրը լուրջ քննարկումների առիթներ կարող է տալ, քանի որ սկզբունքային հակասություններ է արձանագրում ավանդական քերականության և Հայաստանում ուսանած կամ հայաստանաբնակ հեղինակների կազմած դասագրքերի միջև: Իրականության մեջ, մեր տպավորությամբ, այդ հակասությունը չկա կամ ա՛յդ չափով չկա: Կան մի կողմից գերիշխող լեզվի քերականության որոշակի ազդեցություններ, և կա Հայաստանում արդեն մշակված, ավանդական դարձած սկզբունքներով դասագիրք կազմելու փորձ, որը, բնականաբար, յուրացնում է Հայաստանում ուսանած մասնագետը: Հարցի լուծումը, կարծում եմ, հետևյալն է. դասագիրքը կազմելիս անպայման պետք է խուսափել արևմտահայերենի լեզվական կառույցը կամ, ավելի ստույգ, լեզվական յուրահատկությունները ոչ բավարար չափով ներկայացնող սկզբունքներից՝ չհակադրվելով, սակայն, մի կողմից՝ արևելահայերենում առկա սկզբունքներին և մյուս կողմից՝ գերակա լեզվի ազդեցությամբ քերականագիտության մեջ արդեն արմատացած մոտեցումներին: Ավելին, բոլոր հնարավոր դեպքերում, եթե կա ընտրության հնարավորություն, նախապատվությունը պետք է տալ

¹⁷⁸ Հ. Գալֆայեան-Փանոսեան, Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, էջ 4:

արևելահայերենին մոտ և արևելահայերենի դասագրքերի կազմության սկզբունքներին մոտ կամ նույն մոտեցումներին: Ինքը՝ հիշյալ քերականության հարգարժան հեղինակը, քերականական մի շարք իրողություններ իր գրքում ներկայացնում է հենց հայաստանյան դպրոցի ազդեցություններով:

Մեր դիտարկումների կամ առաջարկությունների երկրորդ խումբը վերաբերում է մասնագիտական խնդիրներին.

1. Տերմինների գործածության հարցը. ստեղծվելիք միասնական դասագիրքը պետք է որդեգրի տերմինային միասնական համակարգ: Ցավոք, արևմտահայերենի՝ վերը ներկայացված դասագրքերը չունեն այդ միասնականությունը: Երբեմն նույն քերականական իրողությունը մատուցվում է տարբեր անվանումներով, օրինակ՝ մի գրքում՝ **անորոշ դերբայ**, մյուսում՝ **աներևույթ**, մեկում՝ **կապ**, մյուսում՝ **առընթերադիր**, **պատմողական նախադասություն-զեկուցական նախադասություն**, **ստորոգյալ-ստորոգիչ**, **ենթակայի լրացուցիչներ**, **փոխանակ՝ գոյական անդամի լրացումներ**; **անորոշ եղանակի բայեր**, **փոխանակ՝ դերբայներ**; **տեղական**, **ժամանակական մակբայներ**, **փոխանակ՝ տեղի**, **ժամանակի մակբայներ** և այլն: Առանձին տարակարծություններ կան նաև այս կամ այն քերականական իրողության գործածության հարցում, օրինակ՝ հայտնի դասագրքերից մեկում **ան** դերանվան համար իբրև հայցականի տարբերակ նշվող **զանի** ձևը այլ քերականներ չեն ընդունում, **թողուլ** բայը մեկ ներկայացվում է իբրև կանոնավոր բայ՝ խոնարհման իր ողջ հարացույցով, այդ թվում՝ անցյալ ժամանակի համապատասխան կազմություններով՝ **թողուի**, **կը թողուի**, **պիտի թողուի** և այլն, այլ դեպքում նույն **թողուլ**-ը նշված ձևերի բացակայության պատճառով ներկայացվում է պակասավոր անկանոն բայերի շարքում:

Էական տարակարծություններ կան բայի եղանակների քանակի (այն է՝ արևմտահայերենում բայն ունի երե՞ք, թե՞ չորս

եղանակ), անկանոն և զարտուղի բայերի բնութագրման, բայասեռի քերականական կարգի, խնդրառության դրսևորման ձևերի, դերանուն խոսքի մասի ներխոսքիմասային դասակարգման, կետադրության նշանների գործածության և բազմաթիվ այլ հարցերում: Այս բոլոր խնդիրները մասնագիտական քննարկման և մեկ միասնական կարծիքի բերելու պատեհությունը ունենալու են: Եվ կողմնորոշումների համար, այս միտքը ուզում եմ հատուկ ընդգծել, ելակետը պետք է լինի կենդանի գրական լեզուն:

2. Լեզվական նյութի ուսուցման հաջող եղանակներից մեկը գեղարվեստական գրականությունից համապատասխան հատվածների ճաշակավոր ընտրությունն է: Այդպիսի փորձի հաջող օրինակ է, ինչպես նշեցինք, Հարություն Քյուրքճյանի «Հայրենի աղբիւր» շարքը: Ընտրությունը չպետք է սահմանափակվի միայն արևմտահայ հեղինակներով: Առանձին դեպքերում կարող են բերվել հատվածներ նաև արևելահայ հեղինակներից, ըստ որում, բնագրային լեզվով՝ առանց փոխադրելու արևմտահայերենի: Արևելահայերեն հատվածի և՛ բառապաշարը, և՛ քերականական իրողությունները կարող են բացատրվել տողատակում կամ ներդիր-բառացանկերով, ինչպես արված է, օրինակ, Քյուրքճյանի դասագրքում: Դա արևմտահայ աշակերտին հնարավորություն կտա դույզն չափով ծանոթանալու նաև արևելահայերենին:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ մի դիտարկում անել արևելահայերենից արևմտահայերեն փոխադրումների մասին: Բնավ էլ այն կարծիքին չեմ, որ դրա անհրաժեշտությունը կա մեր լեզվի ու գրականության դասագրքերում: Այն խորին համոզմունքն ունեմ, որ արևմտահայ աշակերտը և առհասարակ արևմտահայ ընթերցողը կարդում և հասկանում է արևելահայ հեղինակներին, և հակառակը՝ արևելահայերենին տիրապետողներս որևէ դժվարություն չունենք արևմտահայերենով

կարդալու Վարուժան ու Համաստեղ, Դուրյան ու Շահան Շահնուր: Հակոբ Օշականի պես փորձաշատ ու խորագգաց գրագետը տասնամյակներ առաջ իր կազմած «Հայ գրականություն» սովորաբաժավալ դասագիրք-ժողովածուում կողք կողքի ներկայացնում է արևելահայ և արևմտահայ հեղինակների գործերը բնագրի լեզվով՝ առանց փոխադրության: Մուշեղ Իշխանը «Արդի հայ գրականություն» եռահատոր ձեռնարկ-ժողովածուում արևելահայերեն գործերը մատուցում է բնագրի լեզվով: Այս առիթով ուզում եմ հիշեցնել Հիլտա Գալֆայանի քերականության դասագրքի առաջաբանում բերված խոսքը. «Պարզ ժողովրդի երկու հատուածները նոյնպէս երբեք դժուարութիւն չեն ունեցել հասկանալու Պարոնեանին ու Օտեանին, Չարենցին ու Բակունցին»¹⁷⁹: Այնպես որ, չխուսափենք հայ գրականության նմուշները և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում հենց բնագրի լեզվով մեր աշակերտներին մատուցելուց:

3. Դասանյութը չի կարող յուրացվել առանց վարժությունների, հակառակ դեպքում տեսական գիտելիքների փոխանցումը կմնա որպես անպտուղ աշխատանք: Դասագիրքը պետք է հագեցած լինի հաջող ու նպատակային վարժությունների բավարար քանակով: Վերը քննարկված դասագրքերը այդ հնարավորությունը լիովի ընձեռում են:

Եվ վերջապես, մեր երրորդ խումբ դիտարկումները վերաբերում են աշխատանքի կազմակերպմանը.

1. Դասագրքի ստեղծման գործը զուտ մասնագիտական աշխատանք չէ: Գրքի ձևավորումից, նկարագարողումից սկսած մինչև մասնագիտական խմբի անդամների համատեղ աշխատանքը ապահովելը կազմակերպական խնդիրներ են, որոնցով պետք է զբաղվի մեկ այլ մարմին, կազմակերպական մեկ այլ օղակ,

¹⁷⁹ **Հ. Գալֆայեան-Փանոսեան**, Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, Եր., 2009, էջ 4:

որ այս դեպքում կարող է լինել հայաստանյան որևէ հրատարակչություն:

2. Նպատակահարմար է սկզբում ունենալ դասագրքի ոչ թե տպագիր, այլ էլեկտրոնային տարբերակը: Այն սկզբնապես կտեղադրվի համացանցում՝ ընդհանուր ծանոթության և օգտագործման համար: Ըստ որում, ցանկության դեպքում գիրքը տպիչի միջոցով կարող է տպագրական տեսքի բերվել, բազմացվել և գործածվել սովորական դասագրքի տեսքով: Էլեկտրոնային տարբերակի կայքը կունենա հատուկ տեղ կարծիքներ ու առաջարկություններ գետեղելու համար: Այստեղ գրքի վերաբերյալ հավաքված տեղեկություններն ու առաջարկները ժամանակ առ ժամանակ կքննարկվեն հեղինակային խմբի կողմից: Առողջ դիտողություններն ու կարծիքները հաշվի կառնվեն գրքի հետագա մշակման ու կատարելագործման համար: Որոշակի ժամանակ անց մենք կունենանք գրքի վերամշակված, հարստացված, նորացված տարբերակը, որ կարող է առաջարկվել տպագրության համար:

3. Նոր դասագրքի ստեղծման համար հիմք կարող է հանդիսանալ հրապարակի վրա եղած և վերը ներկայացված դասագրքերից որևէ մեկը, իհարկե, առավել ամբողջականը: Այդպիսին կարող է լինել, օրինակ, բեյրութաբնակ Կարո Առաքելյանի դասագիրքը: Փույթ չէ, թե այդ բնօրինակ-դասագիրքը սկզբնապես ունենա որոշ բացթողումներ, անճշտություններ, կազմության սկզբունքի ինչ-ինչ շեղումներ: Գրքի էլեկտրոնային տարբերակի աստիճանական մշակումը հեղինակային խմբի կողմից տարիների ընթացքին ի վերջո արդյունքում կստեղծի դասագրքի պահանջված որակը:

Մեզ մնում է հաջողություն մաղթել գործի կազմակերպիչներին:

2.2. ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ¹⁸⁰

Արդի հայերենազգիտության մեջ և այլուր գրական արևմտահայերենի մշակման և պահպանման խնդիրների նկատմամբ ուշադրությունը աննախադեպ է: Եվ դա ունի հիմնավոր պատճառներ: Արևմտահայերենը հայտնվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «վտանգված լեզուներ»-ի ցանկում. այն աստիճանաբար դադարում է ընդհանուր հաղորդակցման լեզու լինելուց հենց արևմտահայերի (սփյուռքահայերի) համար: Տարբեր հաշվարկներով՝ հայկական սփյուռքում արևմտահայերենով հաղորդակցվում է ընդամենը 1,7-2 մլն մարդ: Օրեցօր նվազում է նաև այդ թիվը: Պատճառը, սակայն, մեզ բաժին ընկած ճակատագրի ու մեր լեզվի յուրահատուկ պատմության մեջ չէ միայն: Համաշխարհայնացման արդի պայմաններում հայրենի հողից տարագիր եղած հանրության համար, երբ վերջինս անմիջական ու առանձնաբար սերտ կապի մեջ չէ բնաշխարհի հետ, երբ օտար միջավայրը և արտաշխարհի հասարակական ու քաղաքական զարգացումները գնալով դառնում են պարտադրող, ազգային լեզվի ու մշակույթի պահպանությունը դառնում է դժվարին խնդիր: Խնդրի լուծումը նախ և առաջ ենթադրում է պատճառների հետևողական և մանրակրկիտ ուսումնասիրություն, ապա նաև գործունեության իրական և հստակ ծրագրի մշակում: Հարցի վերաբերյալ մեր դիտարկումները հանգել են հետևյալին:

Արևմտահայերենի նահանջի հիմնական պատճառները:
Գրական արևմտահայերենի այսօրվա վիճակը հուսադրող քիչ

¹⁸⁰ Տպագրվել է «Հայազգիտության հարցեր» հանդեսում, Եր., 2014, թիվ 2:

բան ունի: Զարգացման հեռանկարները առավել քան անորոշ են: Հայկական սփյուռքի պայմանները գնալով լեզվի համար դառնում են աննպաստ և անհեռանկար: Արևմտահայերենը ցավալիորեն նահանջում է: Պատճառները բազմազան են: Նահանջի առաջին և հիմնական պատճառներից մեկը **Մփյուռքում լեզվի պահպանումն ու զարգացումը ղեկավարող կենտրոնի չգոյությունն է**: Աշխարհի տարբեր կողմերում սփռված հայությանը ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելը դժվարին գործ է: Բայց այդ գործը երիցս դժվար է, երբ խոսքը վերաբերում է լեզվին: Կենտրոնը պիտի ուղղություն տար, համախմբեր ուժերը լեզվական մեկ և նույն նպատակի շուրջ, այն է՝ կազմակերպել արևմտահայերենի պահպանման ու մշակման գործը: **Մփյուռքը դժբախտությունը ունեցավ այդպիսի կենտրոն երբևէ չունենալու**: Եղան անհատներ՝ գործի ու գաղափարի նվիրյալներ՝ Լևոն Շանթ, Արսեն Ղազկիյան, Շավարշ Նարդունի, Հակոբ Օշական, Զարեհ Մելքոնյան, Պետրոս Հաճյան: Այսօր էլ կան ու գործում են շատերը՝ Լիբանանում՝ Անդրանիկ Կոսնյան, Արմենակ Եղիայան, Կարո Առաքելյան, Հունաստանում՝ Հարություն Քյուրքճյան, Միացյալ Նահանգներում՝ Հովսեփ Նալբանդյան, Սիրիայում՝ Հակոբ Զուլաքյան և ուրիշներ: Անհատական այդ ջանքերը, սակայն, այդպես էլ չդարձան հավաքական ուժ, չվերածվեցին նպատակային և համախումբ գործունեության:

««Հսկիչ» կեդրոնի մը» բացակայությունը Պետրոս Բեդիրյանը համարում է արևմտահայերենի «գոյութեան ու զարգացումի ճամբուն վրայ» եղած մեծագույն խոչընդոտներից մեկը. «Այս բոլորին ուղղակի հետեւանքը կ'ըլլայ անհատական ճաշակներու թելադրութիւնը,– գրում է նա,– քիչ թէ շատ դասական կրթութիւն ստացած մեկը, վստահ իր գիտելիքներուն, կը տրուի կարծել թէ ի՛ր գիտցած Հայերէնը ճիշդ է, ընդունելի, եւ այլն: Թող որ վերը յիշուածներու (Օշականներ, Թեքեյաններ,

Շահնուրներ, Վահե-Վահյաններ և այլք – Յու. Ա.) աշակերտներուն շարքերն ալ օրէ օր կը նոսրանան, եւ ասպարէզը բնականաբար կը մնայ հայերէնի ուծացող դասականդուրեանց հետեւած մարդոց»¹⁸¹:

Արևմտահայերենի նահանջի երկրորդ հիմնավոր պատճառը հայերենով կրթություն ստանալու անհետանկարն է: Հայերենով բարձրագույն կրթություն ստացած հայ երիտասարդը այսօր Սփյուռքում իր կեցության խնդիրները լուծելու մեծ դժվարություններ ունի, հետևաբար խուսափում է այդ կրթությունը ստանալուց: Սփյուռքի հայագիտական միակ բարձրագույն հաստատության՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի հայերենագիտության բաժնում ամեն տարի ուսանելու է գալիս ընդամենը մեկ-երկու հայ ուսանող: Սփյուռքահայ մտավորականների զավակները այսօր գերադասում են կրթություն ստանալ ոչ թե Երևանի պետական համալսարանում, այլ եվրոպական բուհերում: Մինչդեռ ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ պատկերը բոլորովին այլ էր. 1960-1990-ական թվականներին Հայաստանի տարբեր բուհերում անվճար ուսում են ստացել ավելի քան 1000 սփյուռքահայ ուսանողներ:

Երրորդ պատճառը կամ գործոնը երբեմնի հայաշատ և կենսունակ համայնքների աստիճանական տարրալուծումն է: 1950-1960-ականների պատերազմական գործողությունների և վերջին տարիների ռազմական ու սոցիալական խժոժությունների հետևանքով ծանր հարվածներ կրեցին **Եգիպտոսի** և **Իրաքի** հայերը: Երբեմնի հայաշատ համայնքները խեղճացան, սփռվեցին աշխարհով մեկ, թուլացավ կապը արմատների հետ:

Լիբանանը վերջին տասնամյակներին կորցրեց իր երբեմնի գերակայությունը Սփյուռքում: Հայկական սփյուռքը զրկվեց

¹⁸¹ Պ. Պետիբեան, Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Պոստոն, 1993, էջ 6:

սնուցող ու կենսունակ հզոր երակից, բայց մանավանդ ոգեշնչող կենտրոնից: 1975 թ. ծայր առած քաղաքացիական պատերազմը սկիզբ դրեց մինչև օրս շարունակվող արտագաղթի. հայության քանակը էապես նվազեց՝ 150.000-ից հասնելով 60.000-ի, պակասեց դպրոցների թիվը՝ 60-ից իջնելով 28-ի, աշակերտների թիվը՝ 25.000-ից՝ 7.000-ի: Ըստ որում, Լիբանանում դպրոցահասակ հայ երեխաների թիվը այսօր հաշվվում է մոտ 14.000, բայց հայկական դպրոց է հաճախում նրանց միայն կեսը՝ 7.000-ը: Եվ սա այն դեպքում, երբ ամենահեռավոր հայկական դպրոցը ընդամենը կես ժամվա ճանապարհի վրա է¹⁸²:

Միրիայի իշխանությունների և, այսպես կոչված, զինված ընդդիմության միջև շարունակվող պատերազմի պատճառով ծանր կացության մեջ հայտնվեց Միրիո հայկական գաղութը: Երբեմնի 80.000-անոց շեն համայնքից այսօր գրեթե խլյակներ են մնացել (ընդամենը մեկ տասնամյակ առաջ Միրիայում գործող հայկական դպրոցների թիվը երեք տասնյակից ավելի էր)¹⁸³: Միրիահայերից շատերը (մոտ 12.000) Հայաստան եկան. Հայրենիքում ապաստանած սիրիահայ աշակերտների թիվը անցնում է 1000-ից: Մյուսները գաղթեցին Լիբանան և այլուր: Շատերը հանգրվանեցին նախկին Խորհրդային Միության տարածքում՝ վերջնականապես խզելով կապը արևմտահայ արմատների հետ:

Նահանջում է նաև **Ստամբուլը**՝ արևմտահայ մշակույթի երբեմնի հզոր կենտրոնը: Ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների՝ ներկայումս արևմտահայերենով հաղորդակցվում է պոլսահայերի ընդամենը 18%-ը¹⁸⁴: Նվազում է նաև հայկա-

¹⁸² Տե՛ս «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», գիտաժողովի նյութեր, Եր., 2013, էջ 30-35:

¹⁸³ Տե՛ս **Ն. Հարությունյան**, Լիբանանի և Միրիայի հայկական դպրոցները, Եր., 2002, էջ 205-206:

¹⁸⁴ Տե՛ս «21-րդ ԴԱԲ», Եր., 2011, թիվ 4, (38), էջ 47:

կան կրթօջախներում սովորող աշակերտների թիվը: 1972-1973 ուսումնական տարում Ստամբուլում գործել է հայկական 32 վարժարան՝ 7.366 աշակերտով: 2009-2010 ուսումնական տարում վարժարանների թիվը իջել է 16-ի. կեսից ավելի չափով պակասել է աշակերտների թիվը՝ հասնելով 3.029-ի¹⁸⁵: Ֆինանսական խնդիրների և աշակերտների թվի նվազման պատճառով փակվել են նաև մի շարք մասնավոր վարժարաններ՝ Պերպերեան, Տայեան, Տիպար կրթարան (Սուլթանյան), Պեզազյան, «Նոր դպրոց» և այլն¹⁸⁶:

Լեզվական նահանջի հիմնավոր պատճառ է նաև Սփյուռքի հայ երիտասարդության շրջանում ընթերցանության և հայերենի նկատմամբ հետաքրքրության մեծ պակասը: Ավելորդ չեմ համարում այս հարցի առիթով հիշեցնել հայ սփյուռքի ճակատագրով մտահոգ լիբանանահայ մտավորական գործիչ Արմենակ Եղիայանի տագնապը. «Նոյն այս յիսնամեակին էր, որ արևմտահայերենը կորսնցուց իր հիմնական նեցուկներէն ընթերցասիրութիւնը ևս՝ թե՛ հրապարակագրական, թե՛ գեղարուեստական առումով: Կարգ մը հաշիւներ ու վկայութիւններ ցոյց կու տան, որ Լիբանանի մէջ 60-ական թուականներուն լիբանանահայ մամուլը՝ իր չորս օրաթերթերով, գրական երկու շաբաթաթերթերով և երկու ամսագրերով, չհաշուած տարեգիրքերը, պարբերաթերթերն ու պաշտօնաթերթերը, միասնաբար լոյս կը տեսներ աւելի քան 20.000 տպաքանակով և յամառօրէն կ'ընթերցուէր աւելի քան 100.000 հայու կողմէ: Այս ընթերցողները ընդհանրապէս չափահասներ էին, 18-20-ը անցածներ, որոնց համար ընթերցումը իրենց ուսումին շարու-

¹⁸⁵ Վիճակագրական այս տվյալները հեղինակը վերցրել է Պոլսո Հայոց պատրիարքարանից, Ուսուցչական միությունից և «կարգ մը վարժարաններէն»: Տե՛ս Ս. Գույումճեան, Ակնարկ մը ստամպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստամպուլ, 2010, էջ 51:

¹⁸⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 26:

նակութիւնն էր և կը լրացնէր անոր բացը: Ասոր վրայ պէտք է աւելցնել ընթերցումը գրական և այլ բնոյթի, յատկապէս թարգմանական երկերու, որոնց տպաքանակը միջին հաշուով 2-3 հազար էր և յաճախ կը կրկնուէր. Ա. Ծառուկեանի «Թուրթ առ Երևան»-ը մինչև 60-ականները ունեցած է 12 հրատարակութիւն: Արդի սերունդները անոր անունն իսկ չեն գիտեր»: Այսօր լիբանանահայ պարբերաթերթերի ընդհանուր տպաքանակը չի անցնում 5 հազարը, և եղածն էլ դժվարությամբ է իրացվում: Արևմտահայերենի նահանջի գլխավոր պատճառներից մեկը Սփյուռքում լեզվի մասնագետների պակասն է: Ավելի ստույգ՝ հայերենագիտական բարձր որակի չգոյությունը: «Կարելի չէ աչք գոցել. Սփիւռքի մէջ, ներկայիս, սով է Հայերէնի ուսուցիչներու, աւելի մեծ սով՝ ճիշդ արեւմտահայերէնի տիրապետող ուսուցիչներու»¹⁸⁷: Սփյուռքը բոլոր ժամանակներում էլ ունեցել է այդ պակասը: Սակայն վերջին շրջանում զանազան հաստատությունների փակումը (Մելքոնյան վարժարան, Նշան Փալաջյան ճեմարան, որը հիմնադրվել է 1929 թ. և ունեցել բեղմնավոր գործունեություն, Համագգային հայագիտական բարձրագույն հիմնարկ և այլն), հայեցի կրթության նկատմամբ աճող անհետաքրքրությունը, նվիրյալների մի ամբողջ սերնդի՝ ասպարեզից հեռանալը ստեղծեցին ծանր կացություն: Սիրողական մակարդակով ուսուցումը, դասագրքերի պակասը, նյութական սղությունը և մի շարք այլ հանգամանքներ դժվարացնում են մայրենիի դասավանդումը: Տակավին 1960-ական թվականներին Հայաստանի սփյուռքահայերի հետ մշակութային կապերի կոմիտեն կազմակերպում էր սփյուռքահայ ուսուցիչների որակավորման ամենամյա դասընթացներ. յուրաքանչյուր տարի մոտ 50 ուսուցիչ մասնակցում էր օգոստոսյան խորհրդակցությունների և կամընտրական դասընթացների: Վերջին երկու տարիներին Սփյուռքի

¹⁸⁷ Պ. Պետիբեան, Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Պոստոն, 1993, էջ 6:

նախարարության կազմակերպած ամառային դպրոցի դասերին արևմտահայ ուսուցիչների մասնակցության չափը (տարեկան 3 կամ 5 ուսուցիչ) շատ հեռու է գոհացուցիչ լինելուց:

Արևմտահայերենի վրա գնալով մեծանում է գերիշխող լեզուների ազդեցությունը. խոսքը մասնավորապես անգլերենի մասին է: Այս լեզվից ոչ միայն գրական արևմտահայերենին են անցնում առանձին ոճեր ու ձևեր, այլև նրա ուժեղ ազդեցությամբ էապես աղավաղվում է կենդանի խոսակցական հայերենը: Մփյուռքահայի խոսքում սովորական են դառնում անգլերենով համեմված արտահայտությունները՝ *մեկ քանի խոսք չենք ըրինք, օթոս փարքինգ ըրի, աքսիդանի մեջ ինկեր էի, ֆրիվեյը էքզիթ ըրի, մյուզիք կը լսեի*: Դա խզում է առաջ բերում արևմտահայերենի խոսակցական և գրական տարբերակների միջև, որը և խաթարում է լեզվի բնականոն զարգացումը:

Հիմնավոր պատճառ է նաև զուտ լեզվական գործոնը. վտանգված է արևմտահայերենի լեզվական որակը: Նշված արտալեզվական գործոնները և լեզվական մի շարք այլ հանգամանքներ պատճառ դարձան արևմտահայերենի՝ երբեմնի կոկիկ ու հղկված գրական լեզվի նկարագրի աղավաղումին: Նորմավորման շրջանից ի վեր՝ XX դարասկզբից սկսած, գրական արևմտահայերենը երբեք այսքան «լքուածութեան ու անտիրութեան մատնուած» չի եղել: Արտասանական գուգաձևերի բազմազանություն, երկակի ուղղագրություն ունեցող բառերի առատություն, էական խզում արտասանության և ուղղագրության կանոններում, օտար բառերի տառադարձության անորոշ ու բարձիթողի վիճակ, ամենաթողություն քերականական տարբերակների գործածության մեջ, պարբերական մամուլի լեզվի անվերահսկելի կացություն. այս բոլորը միասին գրական արևմտահայերենի բախտը համառոտրեն մղում են դեպի զարգացման տխուր անհեռանկար:

Արևմտահայերենը 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվեց վերջնականապես **վտանգված լեզու**։ Զանց եմ առնում հետնաբեմերում քննարկվող շարժառիթները։ Բայց ուզում եմ հիշել, որ այդ կարգավիճակում հայտնված լեզուները բնութագրվում են հատկանիշներով, որոնք, մեղմ ասած, տագնապ են հարուցում. այդ լեզուն երեխաները այլևս տանը չեն սովորում ու չեն գործածում որպես մայրենի լեզու, էապես նվազում է լեզուն կրողների բացարձակ թվաքանակը, ընկնում է վտանգված լեզվի կենսունակությունը, դժվարանում է միջսերնդային փոխանցումը, անկում են ապրում լրագրողական և վարչական կիրառությունները, զգալիորեն պակասում է այդ լեզվով հրատարակվող գրականությունը¹⁸⁸։

Արևմտահայերենի պահպանման հեռանկարը։ Կարելի է նշել արևմտահայերենի նահանջի նաև այլ նշաններ։ Սակայն կարծում եմ, որ ասվածը արդեն իսկ վկայում է, որ արևմտահայերենի պահպանման համար այսօր աննախադեպ ծանր պայմաններ են ստեղծվել Սփյուռքում։ Այս պարագաներում արևմտահայերենը կենդանի պահելու հիմնական կենտրոնը մնում է Հայրենիքը։

Վերջին երկու տասնամյակում Հայաստանում մեծ աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ. ստեղծվել են արևմտահայերենի դասագրքեր ու ձեռնարկներ, հրատարակվել է արևմտահայերենի նոր բառարան, արևմտահայերենին վերաբերող թեմաներով պաշտպանվել են տասնյակից ավելի ատենախոսություններ, մի շարք բուհերում բացվել են արևմտահայերենի ուսուցման դասընթացներ, Եղձ-ում հիմնարկվել է սփյուռքագիտության ամբիոն, որի ուսումնական ծրագրում

¹⁸⁸ Տե՛ս <http://azbarez.com/83944/western-armenian-in-peril-unesco%E2%80%99s-recognition-and-the-question-of-contemporary-literature-in-the-exilic-language/>

առանձնահատուկ տեղ ունեն արևմտահայերենի ուսուցումը և ուսումնասիրությունը, նույն ամբիոնում ամենայն հավանականությամբ այս տարվանից կգործի սփյուռքահայ ուսուցիչների համար նախաձեռնված արևմտահայերենի երկամյա ուսուցման ծրագիրը, ընթացքի մեջ է Սփյուռքի համար արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման գործը, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում բացվել է արևմտահայերենի ուսումնասիրության բաժին, երկու տարի է՝ ԵՊՀ-ին կից սփյուռքահայերի համար գործում է Ամառային դպրոցը՝ արևմտահայերենի արագացված ուսուցման ծրագրով: Կարելի է շարունակել թվարկումների այս շարքը: Բայց դեռ շատ բան կա անելու, ինչպես, օրինակ՝ Սփյուռքի հանրալեզվաբանական վիճակի հետազոտություն, տարբեր տիպի բառարանների ստեղծում, ուսանողների փոխանակում ու փոխալցելություններ, երկլեզվյան դասագրքերի ստեղծում և մանավանդ Սփյուռքում արևմտահայերենը որպես երկրորդ լեզու ուսուցանելու փորձի տարածում և այլն:

Վերջին շրջանում արևմտահայերենի պահպանման և մշակման համատեքստում հաճախ է խոսվում մեր գրական լեզվի երկու տարբերակների՝ **արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման մասին**: Հարցը քննարկման առարկա է եղել դեռևս գրական աշխարհաբարի նորմավորման շրջանում: Հնչել են տարաբնույթ կարծիքներ ու առաջարկներ՝ հաճախ իրարամերժ:

XIX դարի վերջին Մանուկ Աբեղյանը Էջմիածնի «Արարատ» պարբերաթերթի էջերում հանդես եկավ առաջարկներով: Երկու գրականների միության խնդիրը որակելով չափազանց կարևոր ու անհրաժեշտ՝ նա միացումը հնարավոր էր համարում միայն քաղաքական մեծ հեղափոխումների կամ «մի ուրիշ

նշանաւոր հանգամանքի» դեպքում¹⁸⁹: Հետևաբար նրա առաջարկները ուղղորդվեցին միայն երկու գրականների մերձեցման խնդրին: Դրանք, սակայն, մնացին թղթի վրա՝ ընդամենը հարուցելով արևմտահայ հատվածի մեծ դժգոհությունը, քանի որ արևելահայ երիտասարդ լեզվաբանը զիջումներ էր պահանջում միայն արևմտահայերենից: Բացի այդ, Արեղյանի առաջարկություններում չափազանց մեծ էր նորմավորող մասնագետի միջամտության չափը՝ մի բան, որ սկզբունքորեն հակասում է լեզվի բնականոն զարգացման օրինաչափություններին:

Հարցը լուրջ քննարկումների առարկա դարձավ XX դարասկզբին արևմտահայ պարբերական մամուլի էջերում («Անահիտ» (Փարիզ), «Արևելք» (Կ. Պոլիս), «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս) և այլն): 1911 թ. Պոլսի «Ազատամարտ» շաբաթաթերթը հանդես եկավ հարցարանով՝ «Հայ գրական լեզուի խնդիրը» խորագրով, որի հիմնական հարցադրումը վերաբերում էր արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերությանը: Հարցը ձևակերպված էր այսպես՝ «Բանաւոր» (այստեղ՝ տրամաբանական – *Յու. Ա.*) եւ պատեհ կը գտնէ՞ք ձուլում մը՝ Արեւելեան եւ Արեւմտեան աշխարհաբարներու միջեւ եւ ի՞նչ պայմաններով: Եթէ կը մերժէք այդ գաղափարը, ի՞նչ են ձեր պատճառաբանութիւնները»¹⁹⁰: Հարցարանին արձագանքեցին շատերը՝ շուրջ երկու տասնյակ մտավորականներ, քաղաքական և հոգևոր գործիչներ՝ Արշակ Չոպանյան, Դանիել Վարուժան, Ղազարոս Աղայան, Վրթանես Փափազյան, Հովհաննես Գազանճյան, Ռուբեն Զարդարյան, Ալեքսանդր Շիրվանզադե, Արտաշես Հարությունյան, Հակոբ Քյուֆեճյան (Հակոբ Օշա-

¹⁸⁹ Տե՛ս Մ. Արեղեան, Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արաբատ», Էջմիածին, 1897, թիւ 9-10, էջ 424-431, թիւ 11-12, էջ 494-503:

¹⁹⁰ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, էջ 626: Այս պարբերաթերթից հղումները կտրվեն շարադրանքում. փակագծերում կնշվի միայն էջը:

կան), Բարգեն Եպիսկոպոս, Միքայել Վարանդյան, Կարապետ Բասմաջյան, Ստեփան Լիսիցյան և ուրիշներ: Հնչեցին հստակ և իրատեսական գնահատումներ: Եղան նաև փոխադարձ մեղադրանքներ և անճիշտ հարցադրումներ: Հայտարարվեց, օրինակ, որ լեզուն մեզանում պառակտված է, «բաժանուած է խորթ, հակամարտ հատուածների» (689), որ արևմտահայերենը չի կարող ինքնուրույն քաղաքակրթության լեզու դառնալ, և որ «արեւմտեան հայերու գրական սկզբնաւորութիւնը ...քնաշխարհիկ աղբիւրէն չբխեցաւ» (403): Այլ տեսակետի կողմնակիցները, սակայն, մերձեցումն ու ձուլումը անհրաժեշտ համարեցին արևմտահայերենի դրական ներգործությունը արևելահայերենի վրա ապահովելու համար, քանի որ «անճիշդ կերպով «Արեւելեան» անունը կրող մեր թոյլ, մեղկ, անջիղ – հետեւաբար իսկապէս Արեւելեան – գրականութիւնը պէտք ունի «Արեւմտեան» կոչուած ցնցող, հուժկու, և՛ եթէ կարելի է ըսել՝ առնական գրականութեան պատուաստման» (626): Իրավացիորեն նկատվեց, որ որևէ մերձեցում, առավել ևս ձուլում արհեստականորեն կամ մի քանի անհատների կամքով չի կարող կատարվել. «Լեզուական երեւոյթները անկախ են փափաքներէ, կամայականութիւններէ» (Ա. Հարությունյան, 15): Դա պետք է լինի «քաղաքական հանգամանքների բարեհաջող փոփոխութեամբ և երկար ժամանակի ընթացքում» (Ղ. Աղայան, 746): Հարցի լուծման մեջ առաջնային նշանակություն տրվեց նաև տնտեսական գործոնին: «Մի շոգեկառք,– գրում է Միքայել Վարանդյանը,– Ղարսից Էրզրում, Իգդիրից դէպի Վան՝ աւելի գործ կը կատարէ լեզուների միացման տեսակետից, քան մեր բոլոր գրագէտների բաղձանքները: Մերձեցումը, ձուլումը անխուսափելիորեն կը կատարւի, երբ քաղաքական յարաճուն ազատութիւնների շնորհիւ, առեւտրական ու արդիւնաբերական յարաբերութիւնները Ռուսահայի ու Թիւրքահայի միջեւ հետզհետէ կը կենդանանան, կ'աճի նաեւ մտաւոր հաղորդակցութիւնը, շփումը երկու

տարբեր յատուածների միջեւ» (692): Ա. Շիրվանզադեն, անդրադառնալով հարցադրմանը, նշում է. «Թողնենք, որ երկու բարբառներն էլ զարգանան անկախ և ազատ: Ապագան ինքը կորոշի նրանց ճակատագիրը» (781): «Լեզուները կապրին մեր հասողութենէն ազատ,– նկատում է Հակոբ Օշականը,– ...Ձուլում մը ոչ կարելի է, ոչ ալ փափաքելի: ...Միացումի այդ անկարելիութիւնը երբեք վրդովիչ ալ չէ: Երկու բարբառները իրարմէ զանազանող տարբերութիւնը այնքան թեթեւ է, որ գրագէտներուն ինքնատիպութիւնը կը բաւէ այդ անջրպետը լեցնելու: Ահարոնեանը կը սիրենք, վասն զի իր մէջ գրական կարգ մը գեղեցկութիւններ նոյն իսկ մութի մէջ կը թողուն լեզուական յարդարումը: Շիրվանզադէի խառնակ լեզուն անգամ հաճոյքով կը ներենք իրեն, վասն զի իր գրքերը մեծ չափով գրականութեան շահեկանութիւնը ունին: Ու կը հաւատամ թէ Պոլսահայերուն լաւագոյն գրողները կը հասկցուին ու կը սիրուին Կովկասի մէջ ալ» (733-734): Եղան նաև փոխգիշումներով մեր լեզվի երկու տարբերակները իրար մերձեցնելու առաջարկներ (Վ. Փափագյան, Յ. Շահրիկյան):

1911 թ. վերջին համարներից մեկում «Ազատամարտը» ամփոփեց բանավեճի արդյունքները: Հարցադրման վերաբերյալ ընդհանուր կարծիքն այն էր, որ արևելահայերենի և արևմտահայերենի միացման և մեկ միասնական լեզվի ստեղծման հիմնական նախադրյալը քաղաքական հեղափոխումներն են: Խոսքը Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների միացման մասին է: Իսկ մերձեցումը հնարավոր է իրականացնել ոչ թե անհատների կամքով, այլ լեզվի բնականոն զարգացման ճանապարհով, որին ամենից առաջ նպաստելու է երկու հատվածների միջև տնտեսական, մշակութային և այլ կարգի հարաբերությունների ընդլայնումը:

Լեզվական այդ բանավեճից անցել է հարյուր տարի: Խնդիրը ժամանակ առ ժամանակ նետվում է քննարկումների հրապա-

րակ: Տասնամյակները, սակայն, թե՛ քաղաքական և թե՛ գուտ լեզվական առումով, շատ բան չեն փոխել: 1991 թ. տպագրված հոդվածներից մեկում ամփոփելով հայոց գրական լեզվի միասնության խնդրի վերաբերյալ իր դիտարկումները՝ Մ. Ասատրյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Արևմտահայերենը և արևելահայերենը փոխադարձորեն հասկանալի են, ուրեմն և նրանց գոյության փաստից ողբերգություն սարքելն անիմաստ է... հայ ազգային լեզվի միասնության խնդիրը սոսկ լեզվական հարց չէ, այլ միաժամանակ արտալեզվական հարց է և կարող է լուծվել միայն քաղաքական փոփոխություններով կամ հեղափոխումներով»¹⁹¹:

Լեզվական փոխազդեցությունների համար բարենպաստ պայմաններ են ստեղծել վերջին տարիներին, քանի որ անհամեմատ ընդլայնվել են Սփյուռք-Հայրենիք կապերը: Փոխազդեցության նշանները ակնհայտ են. արևելահայերենը մեծապես օգտվում է արևմտահայերենի բառապաշարից՝ իր բառային կազմը հարստացնելով հայերենի բառակազմական միջոցներով կերտված նորաբանություններով և կամ դուրս մղելով արդեն գործածության մեջ եղած օտար բառերը: Իր հերթին արևմտահայերենը նկատելիորեն կրում է արևելահայերենի քերականական համակարգի ինչ-ինչ ազդեցություններ: Թե ինչ չափով և ինչ ուղղությամբ կընթանան փոխթափանցումները, ցույց կտա ժամանակը: Ի վերջո, մեր լեզվի երկու տարբերակների գոյությունը այսօր հաղորդակցման դժվարություններ չի ստեղծում. սփյուռքահայր առանձնակի դժվարությունը չունի հասկանալու արևելահայերեն, արևելահայերս էլ առանձնապես չենք դժվարանում ընկալելու արևմտահայ խոսքը:

¹⁹¹ Մ. Ասատրյան, Հայոց գրական լեզվի միասնության խնդրի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1991, թիվ 3, էջ 104-105:

Մի կողմ թողնելով հարցի հնարավոր կարգավորման այլևայլ ուղիների վերաբերյալ քննարկումները՝ ցանկանում եմ ուշադրություն հրավիրել Մփյուռքի մի կարևոր ձեռնարկումի վրա: Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի նախաձեռնությամբ վերջերս Լիբանանում ստեղծվել է **«Արևմտահայերենի պաշտպանության հանձնաժողով»**, որի կազմում ընդգրկված են շուրջ հիսուն ազգայիններ՝ Մփյուռքի գրեթե բոլոր գաղթավայրերից ու խավերից: Հանձնաժողովը, ինչպես իրազեկվում է, գործելու է «մօտաւորապէս լեզուի ակադեմիայի կարգավիճակով»՝ նպատակ ունենալով վերացնելու կամ գեր **նվազեցնելու արևմտահայերենի զարգացումը կասեցնող խոչընդոտները**¹⁹²: Հանձնաժողովում ընդգրկված չեն հայաստանաբնակ անդամներ: Սակայն գործով մտահոգ հայաստանցիներս չենք կարող անմասն մնալ այս նախաձեռնումին: Գործակցության հարմար միջոց կարող է լինել Հայաստանում նման մի հանձնախմբի ստեղծումը, որը, սերտ կապի մեջ լինելով հիշյալ հանձնաժողովի հետ, իր փորձառությամբ և մասնագիտական կարողություններով և կամ աջակցության այլ ձևերով մեծապես կնպաստի ընդհանուր գործին՝ **արևմտահայերենի պահպանությանը**, քանզի արևմտահայերենը ոչ միայն մշակութային հարստություն է, այլև ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործիք ոչ միայն Մփյուռքում, այլև Հայաստանում:

¹⁹² Տե՛ս «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», էջ 40:

2.3. ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՑՈՒՆԱԿԱՆ, ԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹⁹³

Հնչյունական համակարգի տարբերություններ: 1. Խորհրդային Հայաստանում 1922 թ. կատարված ուղղագրության բարեփոխությամբ՝ արևելահայերենը ընդունեց նոր ուղղագրությունը, արևմտահայերենը որոշ տարբերություններով հիմնականում պահպանեց ավանդական ուղղագրությունը: Նոր ուղղագրության հիմքում ընկած է հնչյունի համապատասխանությունը տառին, այսինքն՝ գրությունը հնարավորինս մոտեցվել է արտասանությանը, սկզբունք, որ հնչյունագիր լեզուների ուղղագրության համակարգերում առաջնային է: Նոր ուղղագրության հիմնական առավելությունն այն է, որ էական խզում չի առաջացնում գրության և արտասանության միջև: Նոր ուղղագրությամբ, սակայն, փոխվում է շատ բառերի հնչյունականգրային պատկերը, խախտվում են ուղղագրության ստուգաբանական և պատմականության որոշ սկզբունքներ: Այսպես, օրինակ՝ ունենք **հեղ(ում)** (1. թափել, հոսեցնել, լցնել, դատարկել, 2. **հալել** և **յեղ(ում)** (1. փոխել, դարձնել, 2. թարգմանել) բառերը (բառարմատները). ուղղագրական փոփոխությունների պատճառով այս երկու տարբեր բառերի գրությունը նույնացել է: Նմանապես՝ **գէտ** (>գիտենալ) և **գեստ** (առու), **հօտ** (ոչխարի հոտ) և **հոտ** (բույր), **հարկ** (անհրաժեշտ պահանջ, կարիք) և **յարկ** (հարկաբաժին) և այլն: Աղավաղվել են որոշ բառերի բա-

¹⁹³ Տպագրվել է «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսում, Եր., 2014, թիվ 1-2:

ռապատկերներ՝ **հավելում** (փոխ.՝ **յ + աւելում**<ի + աւել / ում – ավելացնել, աճեցնել), **հանում** (փոխ.՝ **ի + անում**<ի + անում), **հոգուտ** (փոխ.՝ **ի + օգուտ**<ի + օգ / ուտ) և այլն: Եվ, բացի այդ, նոր ուղղագրությամբ ինչ–որ չափով խզվում է կապը հայոց հին և նոր մատենագրությունների միջև: Օգտագործելով նույն այբուբենը (մասնակի տարբերություններով՝ արևմտ. **ւ**–ն առանձին տառի արժեք ունի, **ու**–ն = **ու**, **և**–ը = **և** և այլն)՝ արևմտահայերենը և արևելահայերենը փաստորեն երևան են հանում ուղղագրական զգալի տարբերություններ:

2. Արևմտահայերենը և արևելահայերենը տարբերություններ են դրսևորում **պայթական բաղաձայնների արտասանության**, մասամբ **գրության** մեջ, ինչպես նաև փոխառյալ և օտար բառերի տառադարձության մեջ: Արևմտահայերենում պայթական խուլերի գրանշաններով արտահայտվում են ձայնեղ հրնչյուններ. **պ, կ, տ, ծ, ճ** շարքը արտասանվում է **բ, գ, դ, ձ, ջ** (**պար** – [բ]ար, **կյանք** – [գ]յանք, **տերև** – [դ]երև և այլն), ձայնեղներով՝ շնչեղ խուլեր. **բ, գ, դ, ձ, ջ** շարքը արտասանվում է **փ, ք, թ, ց, չ** (**բարձր** – [փարցր], **ձայն** – [ցայն], **ջահ** – [չահ] և այլն): Արևմտահայերենին հատուկ այս երևույթը հանգեցրել է նրան, որ այստեղ պայթականներն ունեն ոչ թե եռաստիճան, ինչպես արևելահայերենում, այլ երկաստիճան իլլագուրկ համակարգ: Պատկերն այսպիսին է.

արևելահայերեն			արևմտահայերեն	
բ	պ	փ	բ	փ
գ	կ	ք	գ	ք
դ	տ	թ	դ	թ
ձ	ծ	ց	ձ	ց
ջ	ճ	չ	ջ	չ

Բաղաձայնական համակարգի այս առանձնահատկությունը՝ ձայնեղ-խուլ տեղաշարժ-տեղափոխությունը, արևմտահայերենում պատճառ է դառնում համահունչ համանունների նոր շերտի առաջացման, ինչպես՝ **անձաւ – անցաւ, գայլ – քայլ, դաս – թաս, դաւ – թաւ, դոյլ – թոյլ, ձախ – ցախ, ձող – ցող** և այլն:

3. Արևմտահայերենը հիմնականում հետևում է ֆրանսերենի տառադարձությանը կամ պարզապես ձգտում է հավատարիմ մնալ փոխատու լեզվի արտասանական առանձնահատկություններին, այսինքն՝ տառադարձության ժամանակ պահպանում է փոխատու լեզվի պայթական բաղաձայնական համակարգը: Փոխառությունների և օտար բառերի արտասանության մեջ երկու ճյուղերում դրսևորվող այս տարբերությունները ավելի ակնառու են օտար աշխարհագրական անունների և անձնանունների արտասանություն-գրության մեջ. ներկայացնում ենք միայն արևմտահայերեն տարբերակները. *աշխարհագրական անուններ՝ Բարիզ/Փարիզ, Բթթամպուլ, Ճաբոն// Ճափոն, Ճիպրալթար, Նորվեկիա, Շուէտ, Պաքու, Տարտանէլ, Տիդիս, Քուպա, Քոնկո, Ֆինլանտա* և այլն, *անձնանուններ՝ Բուշքին, Զապէլ, Զօհրապ, Էտկար Փօ, Թուրսթոյ, Ժագ, Լոպանոֆ, Լուրֆիկ, Կի տը Մոփասան, Մակելլան, Պաղտասար, Պոտլեռ, Օլկա, Ֆլոպէր//Ֆլոպէռ* և այլն:

4. Արևմտահայերենում **ռ** բաղաձայնը բառամիջի և բառավերջի դիրքերում արտասանվում է փոքր-ինչ փափուկ՝ **ր**-ի նման. գրեթե վերացած է **ռ-ր** արտասանական հակադրությունը՝ **վառարան**-[վարարան], **բառ**-[փար], **ձմեռ**-[ցմեր], **լեռ**-[լեր] և այլն: Արտասանական այս յուրահատկությունը պատճառ է դառնում արևմտահայերենում համահունչ համանունների նոր շարքի առաջացման՝ **բառ** – **բար**→[փար], **բարք** – **փառք**→[փարք], **գերի** – **քեռի**→[քերի], **լուռ** – **լուր**→[լուր], **գառ** – **քար**→[քար], **համառ** – **յամար**→[համար], **վառել** – **վարել**→[վարել], **առատ** – **արատ**→[արադ] և այլն:

5. Արևմտահայերենը, որպես կանոն, ձևակազմության ժամանակ անփոփոխ է պահում հիմքերը. շեշտի կորստի պատճառով արևելահայերենում հնչյունափոխվող ձայնավորը արևմտահայերենում փակ դիրքում սովորաբար չի հնչյունափոխվում՝ **գիրք – գիրքերու, միտք – միտքերնիս, ուսուցիչ – ուսուցիչով, գաւիթ – գաւիթի, արժեթուղթ – արժեթուղթեր, երգչախումբ – երգչախումբեր, հարցում – հարցումի, սպասում – սպասումի**:

Բառապաշարային տարբերություններ: Հայոց լեզվի բառապաշարի մեծ մասը, իհարկե, թե՛ ձևով, թե՛ իմաստով ընդհանուր է երկու տարբերակների համար: Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ բառապաշարային տարբերությունները, ըստ նորագույն տվյալների, ընդամենը 12–15 % են: Մոտ 16 հազար բառ և դարձվածքային միավոր, արևելահայերենի հետ համեմատած, դրսևորում են ձևային կամ իմաստային գոնե մեկ տարբերություն: Ըստ այդ տարբերությունների՝ արևմտահայերենում և արևելահայերենում առանձնացվում են հետևյալ բառախմբերը.

1. Զուտ արևմտահայերեն բառեր: Այն բառերն են, որոնք **գործածվում են միայն արևմտահայերենում**. առավելապես խոսակցական լեզվից և բարբառներից գրականին անցած բառեր ու դարձվածային միավորներ են: Արևելահայերենում դրանց գործածությունը կարող է արդարացվել միայն ոճական–արտահայտչական բովանդակությամբ, այն է՝ համապատասխան լեզվական միջավայրի ստեղծում, հերոսի խոսքի տիպականացում, ոճավորում և այլն: Ոճական այդ նպատակներով են արևմտահայերեն բառերի գործածությանը դիմել մեր գրողներից շատերը՝ Վրթանես Փափագյան, Ավետիս Ահարոնյան, Վահրամ Փափագյան, Վահան Թոթովենց, Կոստան Զարյան և ուրիշներ: Այդպիսի բառերից են՝ **աղէկ** (լավ, ազնիվ, բարի, սիրուն), **աղուոր** (սիրուն, վայելուչ, պատվական), **ասանկ** (այս-

պես), **ատեն** (ժամանակ), **գոց** (անգիր, բերանացի, փակ), **լմըն-նալ** (լրանալ, սպառվել վերջանալ, ավարտվել), **խածնել** (կծել, խայթել, չարախոսել), **խորոտ** (սիրուն), **ծիրիլ** (հյուծվել), **կրոնակ** (մեջք, թիկունք, շալակ, օգնական), **հոս** (այստեղ), **մէ մը** (մի անգամ, հանկարծ), **շտկել** (ուղղել, ճշտել), **համամայր** (նույն մորից, բայց տարբեր հայրերից ծնված), **քեռայր** (քրոջ ամուսին):

2. Արևմտահայերենում և արևելահայերենում ձևով նույն, բայց իմաստային տարբերություններ ունեցող բառեր՝ արևմտահայ – արևելահայ բառային համանուններ: Սրանք կա՛մ տարբերվում են իմաստներով, կա՛մ մասամբ են միայն համընկնում: Օրինակ (տրվում են բառերի՝ արևելահայերենից տարբեր իմաստները)՝ **աներեւոյթ** – անորոշ (դերբայ), **դաշնակ** – փոքր դաշնամուր, **ծոիլ** – խոտորել, **ախոյեան** – առաջամարտիկ, չեմպիոն, **անջրպետ** – տիեզերք, հեռավորություն, **անուշ** – մուրաբա, լիմոնադ, անուշեղեն, **անսուաղ** – անոթի, **բանաւոր** – տրամաբանական, **բարեկամ** – ընկեր, բարի կամեցող, **գետին** – հիմք, հիմունք, **գնացք** – ընթացք, **գրագիտ** – գրող, մտավորական, **ընկերային** – հասարակական, **թելադրութիւն** – թելադրանք և այլն:

3. Հնչյունափոխական–ուղղագրական տարբերություն ունեցող բառեր: Այս խմբի բառերը բավականին մեծ թիվ են կազմում: Միևնույն բառի կամ արմատի՝ տարբեր հնչյունափոխություններ կրած գուգահեռներ են կամ ուղղագրական գուգաձևություններ, ինչպես (սկզբում տրվում են արևելահայերեն ձևերը)՝ **առավոտ** – առաւօտ / առտու, **այլ** – ալ, **առաջաբան** – յառաջաբան, **արգելել** – արգիլել, **ասել** – ըսել, **արձագանք** – արձագանգ, **անել** – ընել, **բաղնիք** – բաղանիք / բաղնիք, **դասընթաց** – դասընթացք, **եծան** – աժան, **քենակալ** – քենեկալ, **ընկնել** – իյնալ, **լինել** – ըլլալ, **լողարան** – լոգարան, **լողորդ** – լուղորդ / լողորդ:

4. Բառակազմական տարբեր կադապարներով կամ բաղադրիչներով կազմված բառեր: Նույն հասկացությունը արտահայտելու համար երկու գրականները ընտրել են տարբեր բառեր: Դա պայմանավորված է կա՛մ բարբառների, կա՛մ գերակա լեզուների ազդեցությամբ, ինչպես (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները)՝ թղթադրամ – **դրամաթուղթ**, առևտուր – **տուրեւառ**, խաղակես – **կիսախաղ**, հետմիջօրե – **միջօրեսք**, անդորրագիր – **ընկալագիր**, արտասահման – **արտերկիր** / **արտասահման**, բառարան – **բառարան** / **բառգիրք** (հնգ.), բացահայտ – **բացորոշ** / **բացայայտ**, բոցքամարտ – **կրոփամարտ**, գանձապահ – **գանձապահ** / **դրամապահ** (հնգ.), գեղագիտություն – **գեղեցկագիտութիւն**, գծանոց – **խենթանոց**, գործադուլ – **գործադուլ** / **բանդուլ** (հնգ.), գործարան – **գործարան** / **գործատուն** (հնգ.), դասաժամ – **դասապահ**, դերանուն – **դերանուն** / **փոխանուն** (հնգ.), ձայնային ազդանշան – **ճչակ**, Սմանորի նվերներ – **կադանդչէք** և այլն:

5. Օտար կամ փոխառյալ բառեր և հայերեն համարժեքներ: Արևմտահայերենը միշտ խուսափել է օտար բառեր ու բառաձևեր գործածելուց՝ փոխարենը ստեղծելով հայերեն նոր բառեր: Այս խմբի բառերից են (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները)՝ ակադեմիա – **կաճառ**, ակորդեոն – **ձեռնադաշնակ**, անարխիստ – **անիշխանական**, անսամբլ – **համոյթ**, ավտոմատ – **ինքնաձիգ**, ինքնագործ, ատոմ – **հիւլէ**, ատոմագետ – **կորիզաբան** / **հիւլէագետ**, ատոմային – **կորիզային** / **միջուկային**, բալլադ – **գեղօն**, բանկ – **դրամատուն**, բորսա / բիրժա – **սակարան**, դիրիժոր – **նուագավար** և այլն:

Քերականական տարբերություններ: Հայոց լեզվի երկու տարբերակներում զգալի են ձևաբանական տարբերությունները: Դրանք հատկապես առկա են գոյական, դերանուն և բայ խոսքի մասերի քերականական հատկանիշներում:

Գոյական անուն: Արևմտահայերենում մի շարք գոյականներ ունեն հոգնակիի կազմության տարբերություններ՝ **մարդ – մարդեր (տղամարդեր, այծամարդեր, նախամարդեր), կին – կիներ (տիկիներ)** (նաև՝ **մարդիկ, կանայք**), **ռուսեր, ծուկեր, մուկեր, ձուկեր, նուռեր, ծնողք, որդիք, տղաք** (նաև՝ **տղաներ, որդիներ, ծնողներ**): Արևմտահայերենում գործածական է նաև կրկնակի ստացական կազմությունը՝ **իմ զիրքս, քու պատասխանդ**, հոգնակի ստացականը կազմվում է **-նի** մասնիկով և համապատասխան հոդերով՝ **-նիս, -նիդ, -նին**, ինչպես՝ **տուն + եր + նիս, տուն + եր + նիդ, տուն + եր + նին**, **պարտեզ + նիս, պարտեզ + նիդ, պարտեզ + նին**:

Հատկացուցիչ սեռականը ձայնավորահանգ բառերում ստանում է որոշիչ հոդ՝ **ծովուն ձուկը, Զոհրապին նկարը**: Որոշյալ առման դեպքում միշտ հոդով է գործածվում բացառական հոլովը՝ **տունեն, Յակոբեն, զիւղեն**:

Մի-ն արևմտահայերենում հոդ է և գործածվում է աշխարհաբարյան հնչյունափոխված տարբերակով՝ **մը<մի**: Եմ օժանդակ բայից և **ալ** շաղկապից առաջ բարենհնչության համար ստանում է **ն** մասնիկը՝ **մըն**. «Բառարանն իսկ առանց օրինակի կմախ **մըն** է» (Շ. Շահնուր):

Արևմտահայերենում **բացակայում է ներգոյական հոլովը**: Այդ հոլովի իմաստը արտահայտվում է. 1. **սեռական–տրականով** և **մեջ** կապով՝ «**Պարտեզին մեջ** աղուոր վարդեր տեսած էի», 2. **ուղղական–հայցականով**՝ «**Երևան** հանդիպեցանք, **Ֆրանսա** կը սորվիմ», 3. առանձին քարացած կառույցներում արտահայտվում է **սեռական–տրականով**՝ «**Այս պարագային** չեմ կրնար քեզի հետ խօսիլ»:

Մովորաբար ուղղական–հայցականով է արտահայտվում ն՝ անձի, և՛ իրի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը, քանի որ

արևմտահայերենում բացակայում է անձի և իրի առման քերականական կարգը, ինչպես՝ Վահան իր **ծնողքը** կը սիրէ:

Բացառականը ունենում է **-է** և **-մէ** վերջավորությունները: **-Մէ**-ն ավելանում է **-ոջ** արտաքին և **օ** ներքին հոլովման պատկանող գոյականների վրա, ինչպես՝ **ընկերոջմէ, քրոջմէ, տալոջմէ, հորմէ, եղբորմէ, մօրմէ**: Արևմտահայերենում **-մէ**-ով բացառական է կազմում նաև **Աստուած** բառը՝ **Աստուծմէ(ն)**: Գործիականում, բացի **-ով** և **-ք** վերջավորություններից, գործածական է նաև **-մով** վերջավորությունը: Այս վերջավորությամբ գործիական են կազմում **-ոջ** արտաքին և **օ** ներքին հոլովման պատկանող գոյականները՝ **քրոջմով, հորմով, եղբորմով**, նաև՝ **Աստուծմով**:

Եզակի թվում **ի** հոլովման ոլորտը արևմտահայերենում փոքր-ինչ ընդլայնվում է, քանի որ **ի**-ով են հոլովվում նաև **ի**-ով վերջավորվող գոյականները՝ **գինիի, որդիի, այգիի, հոգիի, ուսուցչուհիի, երկաթուղիի**: Բացի այդ, **-ում** ածանցով գոյականների համար առավել սովորական է **-ի** հոլովումը՝ **ուսում – ուսումի, հարցում – հարցումի, շարժում – շարժումի, կատարում – կատարումի** և այլն: Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **-ու** հոլովման են ենթարկվում նաև մի շարք միավանկ գոյականներ՝ **այգ, գահ, դար, ժամ, ծով, կով, հայ, հաւ, հով, մահ, նաւ, շահ, պապ, պահ** և այլն: **-Ու**-ով կարող են հոլովվել նաև **արեւ, գլուխ, ամիս, տղայ, ճամբայ** և մի քանի այլ բառեր: Այս հոլովման են պատկանում նաև **-եր, -ներ** հոգնակերտներով ձևավորվող բոլոր գոյականները, այդ թվում՝ փոխանունները՝ **այգիներու, գետերու, միրգերու, ջուրերու, մեծերու, նստածներու** և այլն:

Արևմտահայերենում **-ոյ** հոլովման ոլորտը լայն է: Այս հոլովման են ենթարկվում՝ 1. **սէր, Պոլիս, Աստուած** բառերը, 2. **իա-**

Մէկ(ը) և **ամէն** դերանունները, ինչպես նաև **մէկ**-ով բաղադրված դերանունները, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում ենթարկվում են **-ու** հոլովման՝ **մէկու**: Անվանական **-ու** հոլովում ունի նաև **որ** դերանունը՝ **որ – որու(ն)**:

Բայ: **Բայի լծորդությունը և կազմությունը:** Արևմտահայերենում բայն ունի երեք լծորդություն՝ **ա – կարդալ, երթալ, խաղալ, ե – երգել, ըսել, հագնել, ի – խօսիլ, սորվիլ, փախչիլ**: Կազմությամբ, ինչպես արևելահայերենում, բայերը լինում են պարզ և ածանցավոր: Գրական լեզվում **-չ-** սուկածանցը գործածվում է միայն երեք բայերի մեջ՝ **փախչիլ, թռչիլ, դաչիլ**: Ունեն գուգաձևեր՝ **թռիլ, փախիլ, դաչնալ**: **-Ան-** սուկածանց ունեցող մի շարք բայեր արևելահայերենում հանդես են գալիս **-ն-** սուկածանցով, ինչպես՝ **հիննալ, մոռնալ, գողնալ, սննալ, հասկնալ** և այլն: Կրավորական բայերը պատկանում են ի լծորդության և ունեն **վ** (գրվում է **ու**) ածանցը՝ **գրուիլ, կարդացուիլ, մոռացուիլ**:

Պատկերն այսպիսին է.

1. Ե խոնարհման աններածանց բայեր՝ **գրել, յաղթել, յիշել**:
2. Ե խոնարհման **-ն-** սուկածանց ունեցող բայեր՝ **մտնել, իջնել, գտնել**:
3. Ե խոնարհման պատճառական բայեր՝ **մոռցնել, խօսցնել, թոցնել, հագցնել**:
4. Ա խոնարհման աններածանց բայեր՝ **կարդալ, խաղալ, երթալ, հոգալ, անալ**:
5. Ա խոնարհման **-ան-**, **-են-**, **-ն-** սուկածանց ունեցող բայեր՝ **մոռնալ, խոստանալ, մերձենալ, գիտնալ, հիմնալ**:
6. Ի խոնարհման աններածանց բայեր՝ **ապրիլ, խօսիլ, ծնիլ, ուռիլ, պայթիլ, սառիլ, սորվիլ, քրտնիլ**: Այս խմբում պետք է դասել նաև կրավորական բայերը՝ **գրուիլ, երգուիլ, մօտեցուիլ**,

որոնք խոնարհվում և բայաձևեր են կազմում **ի** խոնարհման աններածանց բայերի նման:

7. **Ի** խոնարհման **-ն-**, **-չ-** սոսկածանց ունեցող բայեր՝ **հագնիլ**, **հասնիլ**, **թոչիլ**, **դպչիլ**, **փախչիլ**:

8. **Ե**, **ի**, **ա** խոնարհման բազմապատկական բայեր՝ **պոկոտել**, **թոչտիլ**, **կոուրտիլ**, **սոտուրտալ**:

Բայի սեռը: Չեզոք սեռի բայերը արևմտահայերենում սովորաբար պատկանում են **ի** լծորդության՝ **մեռնիլ**, **բուսնիլ**, **խորհիլ**, **թոչիլ**, **փախչիլ**, բայց նաև՝ **իջնել**, **իյնալ**, **հիանալ** և այլն: Երկու գրականներում էլ ներգործական են հիմնականում **ե** խոնարհման բայերը՝ **երգել**, **ներկել**, **ջրել**, **բերել**, **ընել** (անել), **ըսել** (ասել), բայց նաև՝ **բանալ**, **մոռնալ**, **գիտնալ**, **կարդալ**, **սորվիլ** և այլն: Բոլոր լծորդությունների համար արևմտահայերենում կրավորականը ելակետային ձևում ունի բառավերջում նույն **-ուիլ** մասնիկը: Կրավորական սեռի բայերը խոնարհվում են **ի** խոնարհման աններածանց բայերի նման:

Բայի անդամ ձևեր կամ **դերբայներ**: Արևմտահայերենը չունի անկատար և համընթացական (համակատար) դերբայները: Կազմության մասնակի տարբերություններ ունեն **անորոշը**, **վաղակատարը** և **ժխտականը**: Արևմտահայերենում որոշ լեզվաբաններ առանձնացնում են նաև **ընթացակցական** դերբայը: Այսպիսով, դերբայները արևմտահայերենում յոթն են՝ **անորոշ**, **ապառնի**, **վաղակատար**, **հարակատար**, **ենթակայական**, **ընթացակցական**, **ժխտական**:

Հարակատար դերբայը արևմտահայերենում բաղադրում է ժամանակաձևեր՝ **հարակատար ներկա** և **հարակատար անցյալ**. **ի** տարբերություն արևելահայերենի՝ **հարակատար + օժանդակ բայ** կաղապարը բնորոշ է բոլոր բայերին՝ անկախ սեռից ու կազմությունից՝ **գրած եմ – գրած ես – գրած է, ըրած եմ – ըրած ես – ըրած է**:

Ընթացակցական դերբայը ցույց է տալիս դիմավոր բայով արտահայտված գործողությանը կամ եղելությանը գուգահեռ ընթացող ուրիշ գործողության կամ եղելության գաղափար: Կազմվում է դերբայական հիմքից -**էն** վերջավորությամբ՝ **աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն**: Պատասխանում է **ի՞նչ ընելէն, ի՞նչ ըլլալէն** հարցերին:

Ժխտական դերբայը արևմտահայերենում կազմվում է **ր** վերջնամասնիկով. անորոշի **լ**-ն փոխվում է **ր**-ի՝ **վազել – վազեր, կարդալ – կարդար**: **Ի** խոնարհման բայերը ունենում են գուգաձևեր՝ **խօսիր//խօսեր, ապրիր//ապրեր, փախչիր//փախչեր, գրուիր//գրուեր**:

Վաղակատար դերբայը կազմվում է -**եր** մասնիկով, որը դրվում է **ե, ի** խոնարհման պարզ բայերի **ներկայի**, իսկ մյուս բայերի՝ **անցյալի հիմքի** վրա. **ի** խոնարհումը փոխվում է **ե**-ի: Պատասխանում է **ի՞նչ ըրեր, ի՞նչ եղեր** հարցերին՝ **գրեր, խօսեր, մօտեցեր**: Միանալով օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերին՝ կազմում է սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևեր՝ **վազեր եմ, վազեր էի**:

Ենթակայական և ապառնի դերբայները կազմությամբ համընկնում են արևելահայերենի հետ:

Բայի դիմավոր կամ եղանակային ձևեր (ժամանակաձևեր): Պարզ բայերի դրական խոնարհման համադրական և վերլուծական ժամանակների ընդհանուր պատկերը այսպիսին է.

	<i>Ե խոնարհում</i>	<i>Ա խոնարհում</i>	<i>Ի խոնարհում</i>
	<i>Մահմանական եղանակ</i>		
Անկատար ներկա	կը գրեմ, կը գրենք	կը կարդամ, կը կարդանք	կը սորվիմ, կը սորվինք
Անկատար անցյալ	կը գրեի, կը գրեինք	կը կարդայի, կը կարդայինք	կը սորվեի, կը սորվեինք

Անցյալ կատարյալ	գրեցի, գրեցինք	կարդացի, կարդացինք	սորվեցայ, սորվեցանք
Ապառնի	պիտի գրեմ, պիտի գրենք	պիտի կարդամ, պիտի կարդանք	պիտի սորվիմ, պիտի սորվինք
Անցյալի ապառնի	պիտի գրեի, պիտի գրեինք	պիտի կարդայի, պիտի կարդայինք	պիտի սորվեի, պիտի սորվեինք
Վաղակատար ներկա	գրեր եմ, գրեր ենք	կարդացեր եմ, կարդացեր ենք	սորվեր եմ, սորվեր ենք
Վաղակատար անցյալ	գրեր էի, գրեր էինք	կարդացեր էի, կարդացեր էինք	սորվեր էի, սորվեր էինք
Հարակատար ներկա	գրած եմ, գրած ենք	կարդացած եմ, կարդացած ենք	սորված եմ, սորված ենք
Հարակատար անցյալ	գրած էի, գրած էինք	կարդացած էի, կարդացած էինք	սորված էի, սորված էինք
Ըղձական եղանակ			
Ըղձական ապառնի	գրեմ, գրենք	կարդամ, կարդանք	սորվիմ, սորվինք
Ըղձական անցյալի ապառնի	գրեի, գրեինք	կարդայի, կարդայինք	սորվեի, սորվեինք
Հարկադրական եղանակ			
Հարկադրական ապառնի	գրելու եմ, գրելու ենք	կարդալու եմ, կարդալու ենք	սորվելու եմ, սորվելու ենք
Հարկադրական անցյալի ապառնի	գրելու էի, գրելու էինք	կարդալու էի, կարդալու էինք	սորվելու էի, սորվելու էինք
Հրամայական եղանակ	գրե՛, գրեցե՛ք	կարդա՛, կարդացե՛ք	սորվե՛, սորվեցե՛ք

Եղանակաձևերի կազմության հիմնական սկզբունքները պահպանվում են սուկաձանցավոր, պատճառական և կրավորական բայերի դեպքում: Պատճառական բայերը անցյալի հիմքում ունենում են **-ուց** բաղադրիչ մասնիկը՝ **խօսցուց-ի, խօսցուց-է՛ք, հարցուց-ինք**: Կրավորական բայերը, անկախ այն բանից, թե որ լծորդության են պատկանում, ունենում են **ի** լծորդը և խոնարհվում են **ի** լծորդության բայերի պես՝ **կը գրուիմ, գրուեր եմ, գրուեցայ, գրուեցար, գրուեցէ՛ք** և այլն:

Անկանոն բայեր: Արևմտահայերենում անկանոն բայերին բնորոշ շեղումներն ու յուրահատկությունները, ինչպես արևելահայերենում, սովորաբար լինում են **հարակատար դերբայում, վաղակատար ձևաբայում, անցյալ կատարյալում, հրամայական եղանակում, երբեմն էլ ենթակայական դերբայում**: Արևմտահայերենում անկանոն բայերի թիվը փոքր-ինչ շատ է. անկանոն են նաև **-ի** խոնարհման աններածանց **նստիլ, սկսիլ, ծնիլ, փրթիլ, պրծիլ** բայերը, ինչպես նաև **ընկնել, երթալ, պագնել, խածնել** և մի քանի այլ բայեր: Դրանք սովորաբար անցյալի հիմքում և դրանից կազմվող ձևերում ունենում են հետևյալ հիմնական դրսևորումները՝

- տարարմատություն՝ **ուտել, հիմքը՝ կեր – կերած, կերեր եմ, կերայ** և այլն, **գալ, հիմքը՝ եկ – եկած, եկող, եկեր եմ, եկայ, հրավ՝ եկո՛ւր, եկէ՛ք, ըլլալ, հիմքը՝ եղ – եղած, եղող, եղեր, եղայ, հրավ՝ եղի՛ր, եղէ՛ք, երթալ, հիմքը՝ գաց – գացած, գացեր եմ, գացի, գնաց, գացինք, հրավ՝ գնա՛, գացէ՛ք** և այլն,

- հիմքի մասնակի փոփոխություն կամ հերթագայություն՝ **գարնել, հիմքը՝ զարկ – զարկած, զարկեր եմ, զարկի** և այլն, **ելլել, անցյալի հիմքը՝ մեկ լ-ով՝ ել – ելած, ելեր եմ, ելայ, ընել, հիմքը՝ ըր – ըրած, ըրեր եմ, ըրի, հրավ՝ ըրէ՛, դնել, հիմքը՝ դր – դրած, դրեր եմ, դրի, իյնալ, հիմքը՝ ինկ – ինկած, ինկող, ինկեր, ինկայ, հրավ՝ ինկի՛ր, ինկէ՛ք, տանիլ, հիմքը՝ տար – տարած,**

տարեր, տարայ, *հրամ.* 'տա'ր, տարէ'ք, դառնալ, *հիմքը*՝ դարձ – դարձած, դարձող, դարձեր, դարձայ, *հրամ.* 'դարձի'ր, դարձէ'ք և այլն,

• հրամայականում արմատական կազմություն՝ ուտել – կե'ր, զարնել – զա'րկ, բերել – բե'ր, ելլել – ե'լ, դնել – դի'ր, տեսնել – տե'ս, առնել – ա'ռ և այլն,

• նույն կազմության բայերում անցյալ կատարյալի ձևավորման օրինաչափություններից շեղումներ՝ *ըսել* – ըսի, ըսիր, ըսաւ, *առնել* – առի, առիր, առաւ, *պագնել* – պագի, պագիր, պագաւ, *նստիլ* – նստայ, նստար, նստաւ, *սկսիլ* – սկսայ, սկսար, սկսաւ, *ծնիլ* – ծնայ, ծնար, ծնաւ և այլն:

Արևելահայերենի անցյալ կատարյալում մի քանի բայերի գուգաձևությունը (բերի – բերեցի, տվի – տվեցի, դրի – դրեցի և այլն) արևմտահայերենին բնորոշ չէ. արևմտ.՝ բերի, բերիր, բերաւ, տուի, տուիր, տուաւ, դրի, դրիր, դրաւ:

Ժխտական խոնարհում: Արևմտահայերենում բայի ժխտական խոնարհման կազմության սկզբունքները նույնն են, ինչ արևելահայերենում: Տարբերությունները դրսևորվում են որոշակի ժամանակաձևերի կազմության և առանձին ձևերի կիրառության մեջ. սահմանական եղանակի անկատար ներկան և անցյալը բոլոր բայերի համար կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և ժխտական դերբայով, ինչպես՝ կը գրեմ – չեմ գրեր, կը գրէի – չէի գրեր, կը ստրվիմ – չեմ ստրվիր, չէի ստրվեր, չի երթար – չ'երթար, չի ըլլար – չ'ըլլար (ըդձ. ապառնին՝ չերթար, չըլլար) և այլն:

Արգելական հրամայականը կազմվում է մի մասնիկով, որ եզակի թվում ավելանում է ոչ թե դրականի ձևերի վրա, ինչպես արևելահայերենում է, այլ անորոշ դերբայի այնպիսի ձևի վրա, որի լ-ն փոխված է ր-ի (ժխտական դերբայ)՝ մի՛ կարդար, մի՛

խօսիր, մի՛ երգեր, մի՛ թողուր, մի՛ հարցուր, մի՛ մօտենար, մի՛ խոստանար և այլն:

Հոգնակի արգելականը կազմվում է՝ **մի** մասնիկը ավելացնելով ըղձական ապառնիի հոգնակի երկրորդ դեմքի վրա՝ **մի՛ գրեք, մի՛ խօսիք, մի՛ կարդաք, մի՛ մոռնաք, մի՛ գրուիք, մի՛ փախչիք**:

Շարահյուսական մակարդակ: Այստեղ արևմտահայերենի և արևելահայերենի տարբերությունները անհամեմատ քիչ են: Նշենք դրանցից մեկ-երկուսը.

1. **Ժխտական դերանուն + դրական բայ** կադապարը արևմտահայերենում օրինաչափ երևույթ է՝ **ոչ ոք ըսաւ, ոչինչ կրցաւ ընել**.

2. **Սա** դերանունը ունի որոշչային կիրառություն՝ **սա** իրիկունն ըլլայի ես, **սա** գիրքը.

3. **Հատկացուցիչը** որոշյալ հոդով է գործածվում հատկացյալի որոշյալ առման դեպքում կամ կապ գերադաս անդամով կապակցություններում՝ **թաղականին կնիկը, լոյսին համար**.

4. Ե՛վ անձի, և՛ ոչ անձի առման դեպքում **ուղիղ խնդիր-հայցականը** ձևով նման է ուղղականին, կամ այլ կերպ ասած՝ ուղիղ խնդիրը դրվում է ուղղական-հայցականով, ինչպես՝ «Այն երիտասարդը տեսաւ ֆրանսացի **աղջիկը, գերմանացին, իտալացին, հոյնը, ռուսը...**»:

2.4. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ¹⁹⁴

Հարցին առնչվող ուսումնասիրություններում հաճախ է խոսվել այն մասին, որ ի վերջո գրական արևմտահայերենը անմիջական ժառանգորդն է գրական հայերենի զարգացման միջին հայերեն կոչված շրջափուլի: Իբրև ապացույց այդ տեսակետի հաստատման՝ այլևայլ հարցերի հետ կապված՝ բերվում են լեզվական փաստերի օրինակներ՝ լեզվական տարբեր մակարդակներում արձանագրվող իրողություններ, որոնք ընդհանուր են միջին հայերենի և գրական արևմտահայերենի համար: Բայց պետք է խոստովանել, որ մինչև օրս հատուկ ուշադրության առարկա չեն դարձել իրապես այն բազմաթիվ լեզվական փաստերը, որոնք ընդհանրական կամ նույնական են միջին հայերեն-արևմտահայերեն լեզվական համակարգերում: Խնդրի ուսումնասիրությունը առավել արդիական ու, այսպես կոչված, անհրաժեշտ է դառնում այն պնդումի կամ գիտական տեսակետի համապատկերին, որ ի վերջո գրական հայերենի պատմական զարգացման ընթացքում մեր ունեցած երկու գրական լեզուների՝ գրաբարի և աշխարհաբարի կողքին միջին հայերենը ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխարհաբարի մի ճյուղի՝ արևմտահայերենի ձևավորման շրջափուլը: Տեսակետը կարող է առավել համոզիչ լինել և հաստատվել միայն այն դեպքում, եթե հիմնավոր ուսումնասիրության ենթարկվեն այդ երկու լեզվավիճակների՝ միջին հայերենի և արևմտահայերեն-

¹⁹⁴ Տպագրվել է «Հայազգիտության հարցեր» հանդեսում, Եր., 2020, թիվ 3:

նի բնորոշ լեզվական իրողությունները, քննարկվեն դրանց զարգացումներն ու փոխանցումները լեզվի բոլոր մակարդակներում: Այդպիսի աշխատանք առ այսօր չի կատարվել: Առաջադրված տեսակետը մեր նախորդ ուսումնասիրության մեջ փորձել ենք հաստատել ընդհանուր դիտարկումներով և լեզվական փաստերի միգրացե և նվազ քանակով¹⁹⁵: Հարցը, սակայն, ինչպես ասացինք, հատուկ ուսումնասիրության կարիք ունի:

Մույն հոդվածով մենք փորձում ենք ներկայացնել հարցի ամենակարևոր դրսևորումներից մեկը՝ արևմտահայերենի սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակների ձևավորման և զարգացման ընթացքը:

Դրական խոնարհում: Դասական քերականության մեջ ընդունված է արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում առանձնացնել չորս եղանակ՝ **ըղձական, սահմանական, հրամայական և հարկադրական**: Սահմանական եղանակի ժամանակաձևեր են համարվում ինը (անկատար ներկա և անկատար անցյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ, հարակատար ներկա և հարակատար անցյալ, ապակատար ներկա և ապակատար անցյալ, անցյալ կատարյալ), որոնցից ութը վերլուծական են, մեկը՝ պարզ:

Արևմտահայերենում սահմանականի **դրական խոնարհման** ներկան և անկատարը կազմվում են **կը/կ'** եղանակիչով և միջին հայերենից փոխանցված ստորադասականի համապատասխան ձևերից: Ունեն համադրական կազմություն, ինչպես գրաբարում և միջին հայերենում՝ **կը + ըղձական ապառնի** (կը կարդամ, կը գրեմ, կը խօսիմ) և **կը + ըղձական անցյալ** (կը կարդայի, կը գրեի, կը խօսեի): **Կը** է դրվում նաև **շպ, սկ, ստ, գր,**

¹⁹⁵ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը, Եր., 2016:

զգ, սթ, սք և նման հնչյունակապակցություններով սկսվող բայերից առաջ (կը զգամ, կը սպասեմ, կը շտապեմ): Ձայնավորից առաջ **կը** մասնիկի **ը** ձայնավորը սղվում է (կ'երգեմ, կ'ըսեմ, կ'ուզեմ): Երեք բայերի դեպքում ներկան և անցյալը կազմվում են **կու** մասնիկով, ինչպես միջին հայերենում էր (կու գամ, կու լամ, կու տամ, կու գայի և այլն): Ձևակազմական այս համակարգը ամբողջությամբ արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից՝ մասնակի տարբերություններով, որոնք կներկայացվեն ստորև:

Նախ՝ **կը/կու** մասնիկի մասին, որը հայ քերականագիտության մեջ համարվում է աշխարհաբարի սկիզբը ազդարարող քերականական ցուցիչ:

Այս մասնիկի ծագման վերաբերյալ եղել են բազմաթիվ կարծիքներ: Մենք նույնպես անդրադարձել են հարցին, և ավելորդ ենք համարում վերստին քննարկել այն, մանավանդ որ այս դեպքում բուն ձևավորման խնդիրը վերջին հաշվով մեր հիմնական նպատակին քիչ է առնչվում. քննարկվող հարցի տեսանկյունից առավել էական է լեզվական այդ իրողության գործածության ժամանակագրության և տարածման հարցի դիտարկումը:

Գրաբարի սահմանական անկատար ներկայի և անցյալի ձևերը տակավին ոսկեդարյան գրաբարի շրջանում բազմիմաստ էին. կիրառություններում հստակ արտահայտում էին նաև ստորադասական / ըղձական և պայմանական եղանակների իմաստներ: Բնականաբար այդ երկրորդական իմաստները միջին հայերենի հենց առաջին շրջանում առավել ընդգծվեցին: «Այսպիսով, գրաբարի սահմանական ներկան դարձավ միաժամանակ թե՛ սահմանական ներկա, թե՛ ապառնի և թե՛ ստորադասական: Երեք տարբեր պաշտոններով գործածությունը բնականաբար տեղիք պիտի տար շփոթության և իմաստի

երկդիմության: Այս խառնակության առաջն առնելու և լեզվի գոնե երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարվեց **կու** մասնիկը...»¹⁹⁶:

Կու(կը) մասնիկի գործածության առաջին դեպքերը արձանագրվում են XII դարի մատենագրության մեջ, այսինքն՝ միջին հայերենի, այսպես կոչված, սկզբնավորման շրջանից սկսած՝ այդ կազմությունը արդեն իսկ ձևավորվել էր, ու թեև այդ մասնիկը, «որն որ արդի լեզուին գլխատր կերպարանափոխն ընողն եղած է»¹⁹⁷, XII դարից առաջ մեր մատենագրության մեջ չի հանդիպում, բայց ամենայն հավանականությամբ գործածության մեջ, այնուամենայնիվ, եղած պիտի լիներ: Այդպիսի կարծիք ունի Ա. Այտընյանը. «Մենք **ԺԲ** դարու մեջ կը գտնենք առաջին անգամ այս **կու** մասնիկս. սակայն անտարակոյս է որ նոյն ատեն յանկարծ չբուսաւ, ինչպէս որ հարկաւորութիւնն ալ յանկարծ չէր զգացուած»¹⁹⁸: Նույն կարծիքին է նաև Հ. Աճառյանը. «**Կու** մասնիկի գործածությանն առաջին վկայությունները մենք գտնում ենք **ԺԲ** դարից, բայց անշուշտ նա ավելի հին էր...»¹⁹⁹: Բոլոր դեպքերում, **կու** մասնիկը «զարմանալի արագությամբ» սկսում է տարածվել «հայ բարբառների ընդգրկման գրեթե բոլոր վայրերում»²⁰⁰: Եվ ըստ էության չկա միջին հայերենով ստեղծագործող որևէ քիչ թե շատ ճանաչված հեղինակ, որը քերականական այդ մասնիկի գործածությունը չունենա իր մատենագրության մեջ: Սկզբնապես առավել տարածված էր **կու** ձևը, բայց հենց XII դարում և առավել ևս դրանից հետո լայնորեն սկսեցին գործածվել նաև **կը**-ն ու դրա

¹⁹⁶ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, Եր., 1959, էջ 389:

¹⁹⁷ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 75:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 75-76:

¹⁹⁹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 395:

²⁰⁰ Տե՛ս Գ. Զառուկյան, Զրույցներ հայոց լեզվի մասին, Եր., 1992, էջ 88-89:

հնչյունափոխված տարբերակը՝ **կ'**-ն՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ: Այս փոփոխությունների պատճառը հավանաբար արտասանական ավելի հեշտ ու բարեհունչ տարբերակների ընտրությունն էր. հազիվ թե կարելի է պնդել, որ, օրինակ, **կը խօսիմ, կը բանամ** ձևերը ավելի դյուրին չեն արտասանվում, քան **կու խօսիմ-ը, կու բանամ-ը**: Մանավանդ ձայնավորով սկսվող բառերից առաջ **կու**-ի արտասանությունը բնավ էլ դյուրին չէ (**կու անսամ, կու աշխատեք, կու ասեմ, կու ըլլամ**), առավել ևս **ու**-ով սկսվող բառերի դեպքում (**կու ուզեմ, կու ուտեմ, կու ուրախանամ**): Այդ իսկ պատճառով, ինչպես արդեն ասացինք, դեռ միջնադարից գործածության մեջ մտավ նաև **կու / կը** մասնիկի հնչյունափոխված՝ ապաթարցով տարբերակը (**կ'**)՝ ինչպես՝ *Խեւ Յովհաննէս Թղկուրանցի / Զօրն ի բուն ընդ այլ կ'ասես (Հովհաննէս Թղկուրանցի, ՄՀՔ, 204); -Ոչ կ'առնում ի ծոցս ի քուն, ոչ տեսթուր տամ, երթաս ի տուն, / Հանցեղ երերուն պահեմ, մինչ որ գայ լոյս առաւոտուն (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 217); Լաւ մարդ էս անոր կ'ասեմ, որ բանայ զբերանն համով (ն. տ., 218); Տեսայ իմ հոգուս հոգին, որ կ'երթար հետ մէկի մըն ալ. / Զեռկունքն ի վերան ձգելու գանգատ կ'անէր մէկի մ'ալ (ն. տ., 219); Կուլայ, զօրն ըզքե՛զ կ'ուզէ, չի՛ առներ այլ մարդու տօլապ (ն. տ., 224):*

Արևմտահայերենի քննարկվող ժամանակաձևերի դրական խոնարհման երկրորդ բաղադրիչը **գրաբարյան ներկայի և անցյալի ձևերն են**, որոնք միջին հայերենում կրեցին որոշակի փոփոխություններ՝ արդեն որպես ստորադասական եղանակի համապատասխան ձևեր: Վերջնականապես ձևավորված տարբերակները գրական արևմտահայերենին փոխանցվեցին աննշան փոփոխություններով: Այսպես:

Միջին հայերենի **ստորադասական ապառնին**, որից կազմվում է արևմտահայ աշխարհաբարին հատուկ անկատար ներկայի ձևը, գրաբարի անկատար ներկայից ունի մասնակի

տարբերություններ. բոլոր լծորդության բայերի համար գրաբարի սահմանական ներկայի երրորդ դեմքի **-մք** վերջավորությունը փոխվում է **-նք**-ի՝ **գրեմք – գրենք, խօսիմք – խօսինք, կարդամք – կարդանք**. Ըստ որում, այս հնչյունափոխությունը, որը կատարվել էր բառի արտասանությունը հեշտացնելու համար, Հ. Աճառյանի վկայությամբ, հանդիպում է նաև գրաբարում: Իսկ միջին հայերենի համակարգում դրանք արդեն հնաբանություններ էին, քանի որ, ըստ լեզվաբանի, եթե «բուն կիլիկյան ռճով է խոսակցությունը, միշտ գտնում ենք **նք** և ոչ **մք**: Բացի սրանից, – շարունակում է նա, – նույնիսկ այն հեղինակների մոտ, որոնք գրաբար են գրել, երբեմն երևան է գալիս **նք** ձևը, որ նշան է, թե այդ հեղինակների սովորական լեզուն **նք** ձևով էր»²⁰¹:

Պահպանվում է հոգնակի երկրորդ դեմքի՝ **-է-ով** գրությունը՝ **գրէք, երգէք**: Ի դեպ, միջին հայերենում պահպանվում են նաև լծորդությամբ պայմանավորված ընդհանրությունները գրաբարի հետ, ինչպես նաև ըղձական ապառնիի եզակի երրորդ դեմքի՝ գրաբարին հատուկ **-է** վերջավորությունը՝ **գրեմ, գրես, գրէ**, որը արևելահայերենում է լծորդության ներգործական (ներգործաձև խոնարհմամբ) և չեզոք սեռի բայերի եզակի երրորդ դեմքում դարձավ **-ի՝ գրեմ, գրես, գրի**: Այս վերջավորությամբ ձևեր սկսեցին երևան գալ **վաղ աշխարհաբարի արևելահայ բարբառների** ներկայացուցիչների երկերում:

Ա լծորդության բայերի երկրորդ դեմքի **-այք** վերջավորությունը (կարդ-**այք**, խաղ-**այք**) միջին հայերենում աստիճանաբար վերածվում է հնաբանության և **այ>ա** փոխադարձությամբ դառնում է **-աք** (կարդ-**աք**, խաղ-**աք**), որն էլ նույնությամբ փոխանցվում է արևմտահայերենին:

²⁰¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 402-403:

Ստորադասական/ըղձական եղանակի ապառնիի համար ևս միջին հայերենում գործող գրաբարյան ձևերին զուգահեռ (ինչպես այլ դեպքերում)՝ կանոնական էր նաև ստորև ներկայացված հարացույցը.

Ըղձական ապառնի

<i>գրեմ</i>	<i>գրենք(-եմք)</i>	<i>խաղամ</i>	<i>խաղանք(-ամք)</i>	<i>խօսիմ</i>	<i>խօսինք(-իմք)</i>
<i>գրես</i>	<i>գրեք</i>	<i>խաղաս</i>	<i>խաղաք(-այք)</i>	<i>խօսիս</i>	<i>խօսիք</i>
<i>գրէ</i>	<i>գրեն</i>	<i>խաղայ</i>	<i>խաղան</i>	<i>խօսի</i>	<i>խօսին</i>

Այս հարացույցը (առանց փակագծերում նշված գրաբար ձևերի) նույնությամբ փոխանցվեց գրական արևմտահայերենի խոնարհման համակարգ. միջին հայերենի ստորադասական / ըղձականի այս ձևերը կազմությամբ և իմաստով համապատասխանում են արևմտահայերենի ըղձականին։ Միջին հայերենում սրանց իմաստային առանձնահատկությունը միայն այն էր, որ բազմիմաստ էին. նույն ձևերով արտահայտում են նաև գրաբարի ներկայի և ըղձական ու պայմանական ապառնիների իմաստներ, մինչդեռ գրական արևմտահայերենում դրանք մենիմաստ են. ունեն միայն ստորադասական / ըղձականի իմաստ։ Արևմտահայերենի անկատար ներկան, որը, ինչպես արդեն ասվեց, ձևավորվեց միջին հայերենում՝ **կը** եղանակիչի և ստորադասական ապառնիի միությամբ, նույնությամբ համընկնում է միջին հայերենի նույն ժամանակաձևին։

Միջին հայերեն՝

<i>կու/կը գրեմ</i> , -ես, -է,	-ենք/-եմք, -էք, -են
<i>կու/կը խօսիմ</i> , -իս, -ի,	-ինք/-իմք, -իք, -ին
<i>կու/կը կարդամ</i> , -աս, -այ,	-անք/-ամք, -աք/-այք, -ան

Արևմտ.՝

<i>կը գրեմ</i> , -ես, -է,	-ենք, -էք, -են
<i>կը խօսիմ</i> , -իս, -ի,	-ինք, -իք, -ին
<i>կը կարդամ</i> , -աս, -այ,	-անք, -աք, -ան

Իմաստային դաշտում ունենք հետևյալը.

Ե՛վ միջին հայերենում, և՛ արևմտահայերենում այդ ժամանակաձևը ունի իմաստային նույն յուրահատկությունները:

Առաջնային կամ հիմնական իմաստն այն է, որ ցույց է տալիս խոսելու պահին հաստատապես կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն:

Արևմտահայերենում ներկայի ձևերը երկրորդաբար ունեն նաև **ապառնիի իմաստ**: Այս կիրառությունը ևս գալիս է միջին հայերենից: «Ապառնիի համար միջին հայերենում առանձին ձև չկա, – գրում է Հ. Աճառյանը. – գործածվում է սահմանականի ներկան (**կու** նախամասնիկով միացած) և կամ **կամիմ** բայի հետ միացած անորոշը: Օրինակ՝ **կու տամ** «պիտի տամ», ես **կու ասեմ** ու **կու ցուցնեմ** ավանի ու յերևան»²⁰²:

Բնագրային օրինակներ՝

միջին հայերեն՝ *Կամե՛ց դու ինձ հոգի՛ւ ես կու կամիմ քեզ, / «Հոգի» ասայ. դու ինձ. և՛ ես կու ասեմ քեզ (ՀԹՏ, 145); Մտիկ կանես այլոց ձեռնի, / Թէ՛ շալակս ո՞վ հաց կու բեռնի, Գիշեր, ցերեկ աղօթք կանես, / Թէ՛ տէր աստուած, ո՞վ կու մեռնի (ՆՀ, 137); Վաղը մերկ մարմինդ կու ծածկեն հողով, / Վերայ գերեզմանիդ դնեն դագաղն (ն. տ., 165); Այսօր ալ կու խմենք, / Վաղն ալ կու խմենք.... (Բզնատիոս Համթեցի, ՈԻՄՀԲ, 237):*

արևմտահայերեն՝ Ո՛հ, ո՛հ, սխալ է սակայն հաշիւդ: Ես կը կտրեմ այդ ծառը, կը կտրեմ արմատէն: Կը կամենամ՝ եւ դուն կը դառնաս ոչի՛նչ մը: Կը հասկնամ՝ ոչի՛նչ մը. ոչի՛նչ (Լևոն Շանթ, ՀԿԳ, 260); Վաղը, իմ բարի Անտոնիոս, այս աշունի անտառէն ճամբորդի գաւազանս կը կտրեմ, այս մենաւոր հիւղին դուռը բաց կը ձգեմ, ու ճամբայ կ'իյնանք դէպի իմ հայրենի

²⁰² Նույն տեղում:

գիւղն աւերակ – ես ու դուն: **Կ'անցնինք Մուսուլէն, Ուրֆայէն, կ'անցնինք լեռներու ճամբէն, կը քնանանք բնութեան հետ, կ'արթննանք արշալոյսէն առաջ ու կը քալենք** – ես ու դուն (Համաստեղ, ՀԳԳ, 161):

Արևմտահայերենն ունի սահմանական ներկայի մի երկրորդ ձև, այսպես կոչված՝ **շարունակական ներկա**: Ցույց է տալիս խոսելու պահին շարունակաբար կատարվող գործողություն: Կազմվում է՝ բուն սահմանական ներկային ավելացնելով **կոր** մասնիկը՝ **կը խօսիմ կոր, կ'ըսեմ կոր, կ'երթամ կոր**: Այս մասնիկի ծագման վերաբերյալ տարակարծությունները համոզիչ են առավել կամ պակաս չափով: Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից ուշագրավ է, սակայն, այն հանգամանքը, որ միջին հայերենում ծագած այս կազմությունը նույնպես փոխանցվեց արևմտահայերենին: Ճիշտ է, հավանաբար հիմք ունենալով Ա. Այտընյանի թեթև ակնարկը (իբրև թե թուրքերենի ազդեցությամբ առաջացած իրողություն է. «նոր դարերուս մէջ **էօր** տաճկ. մասնիկն եղած է **կոր**»²⁰³)՝ լեզվակիրառողները զգուշություն են դրսևորում արդի գրական գրավոր խոսքում դրա գործածության հարցում, բայց միևնույն է, այդ մասնիկը այսօր էլ շատ ակտիվ կիրառություն ունի խոսակցական արևմտահայերենում և գրական բանավոր խոսքում: Սա ևս բայական այն յուրահատուկ կազմություններից է, որը արևմտահայերեն է մուտք գործել միջին հայերենից, որտեղ հավանաբար հաստատվել և լայնորեն կիրառվել է արևմտահայ բարբառների ազդեցությամբ: Գեղարվեստական գրականության մեջ գործածվում է հերոսների խոսքի ոճավարման համար, ինչպես՝ *Օր ըստ օրէ կը տկարանաս կոր, Արշակ (Յակոբ Պարոնեան, ՀԱ 2, 64); Անդի՛ն կը դառնամ: Գիտեմ, դեռ կը նայի կոր, որպէս թէ հա՛յրս ըլլար... (Բնտրա, ՀԳԳ, 254); Հրամմե՜ցէ՛ք, հրամմեցէ՛ք, օրհորդ Արեւ, Չէ Ժանօն կը սպասէ կոր*,

²⁰³ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 76:

մերսի (Գրիգոր Պըլտեան, «Նշան», ՀԿԳ, 304); Ճի՛շդ Փառան-
 ձեմին կը նմանիս... հարկա՛ւ՝ հայ ըլլալդ քիթէդ-բերնէդ **կը վա-
 գէ կոր**։ հեմէն ըսի, քի մեր արիւնէն ես (Շահան Շահնուր,
 «Պճեղ մը անուշ սիրտ», ՀԱ, 91)։

Միջին հայերենի **ստորադասական անցյալը**, որից **կը** մասնի-
 կի հավելումով կազմվում է անկատար անցյալը, գրաբարի
 անկատար անցյալի ձևերից ունի որոշակի տարբերություն-
 ներ։ Այսպէս։

Գրաբար՝

ա լծորդության բայեր՝

կարդ-այի, կարդ-այիր, կարդ-այր

կարդ-այաք, կարդ-այիք, կարդ-ային

է և ի լծորդության բայեր (վերջ. նույնանում են)

գր-էի, գր-էիր, գր-էր

խօս-էի, խօս-էիր, խօս-էր

գր-էաք, գր-էիք, գր-էին

խօս-էաք, խօս-էիք, խօս-էին

Միջին հայերեն

ա լծորդության բայեր՝

կարդ-այի, կարդ-այիր, կարդ-այր/-ար

կարդ-այաք/-այինք, կարդ-այիք, կարդ-ային

է և ի լծորդության բայեր (վերջ. նույնանում են)

գր-էի, գր-էիր, գր-էր

խօս-էի, խօս-էիր, խօս-էր

գր-էաք/-էինք, գր-էիք, գր-էին

խօս-էաք/-էինք, խօս-էիք, խօս-էին

Ինչպէս տեսնում ենք հարացույցից, գրաբար-միջին հայերեն
 ձևակազմական տարբերությունը, ըստ էության, երկու կե-
 տում է՝

- 1) **ա լծորդության բայերի եզակի երրորդ դեմքում՝ կարդ-
 այր/-ար,**

2) **ա, ե, ի** լծորդության բայերի հոգնակի առաջին դեմքում՝
կարդ-այաք// -այինք, գր-էաք// -էինք, խօս-էաք// -էինք²⁰⁴:

Առաջինի դեպքում միջին հայերենը ի սկզբանե գործածել է երկու տարբերակներն էլ՝ **-այր** և **-ար** վերջավորությամբ²⁰⁵, ինչպես կտեսնենք ստորև բերված օրինակներում: Բայց ահա Արսեն Այտընյանը շատ հետաքրքիր բացատրություններ է տալիս մյուս լծորդությունների նշված ձևերի վերաբերյալ՝ կատարված փոփոխությունները համարելով ավելի ուշ շրջանի երևույթ և պատճառները տեսնելով միակերպության կամ

²⁰⁴ Ու լծորդությունը, ինչպես ասվել է, գրական արևմտահայերենում չունի համակարգային դրսևորում. չկա ու լծորդության որևէ բայ, որը արդի արևմտահայերենում ունենա խոնարհման ամբողջական հարացույցը: Նույնիսկ ամենից գործածական **թողուլ** բայը չունի ըզձական անցյալի (**թողուի, թողուիր, թողուաք, թողուինք** և այլն) և հետևաբար դրանից բաղադրվող անկատար անցյալի (**կու թողուի, կու թողուայր, կու թողուաք, կու թողուիք** և այլն) և անցյալի ապառնիի (**պիտի թողուի, պիտի թողուայր, պիտի թողուաք** և այլն)՝ գրաբարին և միջին հայերենի բնորոշ ձևեր: Դրանք դուրս են մղվել գրական արևմտահայերենից, դարձել են հնաբանություններ:

²⁰⁵ Որքան էլ զարմանալի է, վերջերս հրատարակված «Հայոց լեզվի պատմություն» աշխատասիրության մեջ որպես միջին հայերենի սահմանականի անկատար անցյալի եզակի երրորդ դեմքի միակ գործածական տարբերակ է նշում **կու**-ով և գրաբարյան ստորադասական անցյալի եզակի երրորդ դեմքով կազմությունը՝ **կու լայր** (տե՛ս **Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 240): Հ. Աճառյանը միջին հայերենի սահմանականի հարացույցում վստահաբար ներկայացնում է երկու գուգահեռ տարբերակները՝ **կու գողնա(յ)ր** (տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 380), ապա մեկ այլ առիթով բացատրում է, որ **ք** ձայնից առաջ երևացող **յ**-ն «...մեշյալ տառ է և գրաբարի գրության հետևողություն: Այդպիսի դեպքերում **յ** չէր հնչում, օրինակ՝ **գողնայր, գտնայր** կարդացվում կամ հնչում էին **գողնար, գտնուր**: Դրա ապացույցն այն է, որ այս կարգի բառերը գրված կան նաև առանց **յ**-ի, ինչպես՝ **կու լար** (Karst, 280), և երկրորդ՝ որ արդի հայերենում էլ հնչում ենք առանց **յ**-ի» (ն. տ., էջ 403-404): Նույն տեսակետը պաշտպանվում է միջին հայերենի պատմության ակնարկներում, և բերվում են բնագրային օրինակներ՝ **չի դիմանար** (Ամիրդովլաթ Ամասիացի, ԱՄԳՀՊ, 378), **կու որսար** (ն. տ., 382), **չի գնար** (Հովհաննես Թլկուրացի, ն. տ., 381): Շարադրանքում մենք ևս բերել ենք **-ար**-ով կազմության օրինակներ միջնադարի հեղինակներից:

«ընդհանուր պարզման» սկզբունքի մեջ: Փոփոխությունը, ըստ Այտընյանի, կատարվել է անցյալ կատարյալի և անկատար անցյալի վերջավորությունների նույնությունը կամ նմանությունը գեղջելու համար: Երևույթը, որը լեզվաբանը անվանում է **Ն յաւելլուած**, այսպես է նկարագրվում. «Հոս դարձեալ միակերպութիւն ու բացայայտութիւն իրարու գործակից գտնուած են: **Ն յաւելլուածը** սահմ. անկատարի եւ կատարեալի մէջ դէմքերու ճշդիւ զանազանութեան համար է եւ միանգամայն միակերպութիւնը պահելու համար: Քանի որ անկատարն ու կատարեալը միեւնոյն ձայնաւոր գրով պիտի սկսին ու լմննան մինչեւ ի վերջ, հարկ է որ՝ միակերպութեան սկզբանը հաւատարիմ մնալու համար եւ միանգամայն երկու յոքն. դէմքերուն մէջ խտիր մ'ընելու համար տեղ մը գիր մը աւելցուէր: Այսպէս՝ կ'ըսենք **եկանք, գործէինք**, փոխանակ՝ **եկաք, գործէաք**. (որ առանց **ն յաւելլուածոյ**՝ կամ՝ դէմքերու խառնակութիւն կ'ելլէր կամ՝ ձայնաւորաց միօրինակութիւնը կը խանգարէր:) Աւասիկ հինն ու նորը.

Հին. Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, եկին.

Նոր. Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան:

Հին. Գործէի, ծէիր, ծէր. ծէաք, ծէիք, ծէին.

Նոր. Գործէի, ծէիր, ծէր. ծէինք, ծէիք, ծէին:

Ն յաւելլուածը յետին դարերու եկամուտ է: Դեռ գաւառներու մէջ կ'ըսուի տեղ տեղ՝ Կու **նստէաք կու լայաք: Զաւակնիս կարգեցաք ու եկաք**²⁰⁶:

Ա. Այտընյանը, ցավոք, չի բերում **ա, ե, ի** լծորդության բայերի հոգնակի առաջին դեմքի գործածության բնագրային օրինակներ ո՛չ ուշ միջնադարից, ո՛չ էլ վաղ աշխարհաբարից: Մեր ձեռքի տակ եղած միջինահայերենյան մատենագրությունից

²⁰⁶ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 78:

մենք էլ համապատասխան օրինակներ չկարողացանք քաղել: Բոլոր դեպքերում, շատ հավանական է, որ Այտընյանի խոսքերով՝ **հին** ձևերի հետ գործածվել են նաև **նորերը** և ապա անցել արդեն XIX դարի գրավոր աղբյուրներ ու որպես արևմտահայ աշխարհաբարի կանոնական կազմություններ՝ արձանագրվել են լեզվաբանի քննական քերականության մեջ:

Այսպիսով՝ արևմտահայերենում ունենք հետևյալ պատկերը՝

Ըղձական անցյալ

գրէի	գրէինք	խաղայի	խաղայինք	սորվէի	սորվէինք
գրէիր	գրէիք	խաղայիր	խաղայիք	սորվէիր	սորվէիք
գրէր	գրէին	խաղար	խաղային	սորվէր	սորվէին

Այս ձևերից էլ կազմվում է անկատար անցյալը: Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն՝ *Մորուքս դեռ ի յետ կու գար.... / Քառսուն տարի ջրով կացի՝ Փառչն կու տար գերեսս ի վար... (Ֆրիկ, ՄՀՔ, 194); Հետ սեւ արպպիկ կնոջ / Կու խաղայր եւ առնէր կատակ, երբ խելքն ի վրան կու գայր²⁰⁷; Եւ ի Հնդկաց մէջ այս ուսումն քիչ էր եւ նուազ եւ վատուծ. եւ շատ չարչարանօք կու ուսանէին (Ամիրդովլաթ Ամասիացի, ՄՀՔ, 212); Ղումրին ի դաՖէսն երգէ խաղ ու պար, / Ի մէջ յորդորին բաղունք կու լողար²⁰⁸:*

Արևմտահայերեն՝ *Աստուածածնին, երբ առաջին օրինուած խաղողը կը լեցուէր սեղաններուն վրայ, կամ Վարդավառին՝ երբ ամենէն լուրջերը շէնշող կը դառնային եւ դոյլերով ջուր կը թափէին իրար վրայ: Յետոյ՝ Խաչի տօնը, աշնանամուտին, երբ*

²⁰⁷ <http://digilib.aua.am/book/2350/2800/20962/Հայրենիք?term=%D5%AF%D5%B8%D6%82+%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B5%D6%80>

²⁰⁸ <http://digilib.aua.am/book/93/93/1099/?lang=en&fbclid=IwAR0TWoCy2DBQG75XtrZU-jcMqVKhDkiOgluhpvFxBwMWoXCwpYq05yeoySMk>

ուխտի **կ'երթային** դեպի Արմաշի վանքը, եւ հոնկէ **կը բերէին** վայրի պտուղներ՝ յունապ, փշատ... (Զապէլ Եսայեան, ՀԱ 2, 38);Տխուր էի այդ հպումին, որ երեսներս **կը կրծտէր, կը շոյէր, կը գգուէր**;Անսպասելի արագութեամբ մը **կը հասէր** միջոցը, **կ'իջնէր** աստիճաններէն, հեքիաթներու մէջ թափառող պարիկի նման (Գրիգոր Պըլտեան, ՀԿԳ, 301); Գէորգ Չաուշն էր, որ պողպատեայ ձայնով հարց **կու տար** առաջնորդիս:Ես մանրամասն **կը պատմէի** գիտցածներս հաճոյքով. ինք ուշադիր **կը լսէր** (Ռուբէն Տէր-Մինասեան, ՀԱ 2, 128-129):

Ժխտական խոնարհում: Արևմտահայերենում անկատար ներկան և անկատար անցյալը խոնարհման այս ձևում ունեն վերլուծական կազմություն. բաղադրվում են **եմ** օժանդակ բայի ժխտականի ձևերից և ժխտման կամ ժխտական դերբայից:

Եմ օժանդակ բայի ժխտական խոնարհումը ձևավորվում է **չ** ժխտական մասնիկով, որը ավելանում է դրականի ձևերին՝ սկզբից: Եզակի երրորդ դեմքում դրական խոնարհման է ձայնավորը փոխվում է **ի-ի**: Այս «զարտոտութեան պատճառը» Ա. Այտընյանը բացատրում է ժխտականի **ի** նախդիրի ազդեցությամբ. «կ'ըսենք՝ կրճատմամբ՝ **Ինք չի լսեր, չի մնար**. Իբր թէ **ինք չէ ի լսեր. չէ ի մնար**. կամ իբր թէ **չ'ի լսեր. չ'ի մնար**»²⁰⁹: Այսպէս.

Դրական խոնարհում (ներկա ժամանակ) (անցյալ ժամանակ)

<i>եմ</i>	<i>ենք</i>	<i>էի</i>	<i>էինք</i>
<i>ես</i>	<i>եք</i>	<i>էիր</i>	<i>էիք</i>
<i>է</i>	<i>են</i>	<i>էն</i>	<i>էին</i>

Ժխտական խոնարհում (ներկա ժամանակ) (անցյալ ժամանակ)

<i>չեմ</i>	<i>չենք</i>	<i>չէի</i>	<i>չէինք</i>
<i>չես</i>	<i>չէք</i>	<i>չէիր</i>	<i>չէիք</i>
<i>չի</i>	<i>չեն</i>	<i>չէր</i>	<i>չէին</i>

²⁰⁹ Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 87:

Այս հարացույցը նույնությամբ միջին հայերենից փոխանցվել է արևմտահայերենին:

Ժխտական դերբայը միջին հայերենում ձևավորվում է անորոշ դերբայից և չ ժխտական մասնիկով կազմված օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերից: Վաղ շրջանի միջին հայերենում ուներ չորս արտահայտություն. կազմվում էր՝

ա) ի նախդիրով և անորոշ դերբայով՝ (չէ) ի տալ, (չեն) ի պա-կասել, (չեմ) ի հասնիլ, (չէր) ի ճաշակել և այլն,

բ) ի նախդիրով և անորոշ դերբայի լ>ր հնչյունափոխված ձևով՝ (չեմ) ի հայցեր, (չէր) ի տար, (չէր) ի լար և այլն,

գ) օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով՝ (չեն) ու-տել, (չեն) ողորմիլ, (չէր) շարժիլ, (չեմ) գտնուլ և այլն,

դ) օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի ր-ի հնչյունափոխված ձևով՝ (չես) լսեր, (չեմ) գար, (չես) ուրա-նար, (չես) ուրանար և այլն²¹⁰:

Միջին հայերենի զարգացման հաջորդ ենթաշրջանում (XV – XVII դդ.) առաջին երկու ձևերը գործածությունից դուրս են գալիս: Սա կապում են «այդ ձևերում գրաբարյան ներգոյակա-նի գաղափարի կազմության մթագնման հետ»²¹¹: Երրորդ և չորրորդ ձևերը հեղինակները գործածում են ըստ նախասի-րության, սակայն բոլոր այն հեղինակները, որոնք արևմտա-հայ բարբառների ներկայացուցիչներ են (Ամիրդովլաթ Ամա-սիացի, Նահապետ Քուչակ, Պաղտասար Դպիր և այլն), ակն-

²¹⁰ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 316-320: «Բացասական բայերու ծագումը» ներկայացնելիս վերջին ձևի մասին Ա. Այտընյանը գրում է. «Յետոյ **ԺԳ** դարու մէջ կը գտնենք հիմա-կուան բացասականը առանց նախդրի՝ **Չեմ վախնար. չես նախանձիր**» (Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 87):

²¹¹ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 378:

հայտորեն նախապատվությունը տալիս են չորրորդ ձևի գործածությանը, այսինքն՝ անորոշ դերբայի **Լ** ձայնորդի **ր**-ի հընչյունափոխված ձևին: Ի դեպ, այդ զարգացումը անցել է երկար ճանապարհ: Նույնիսկ ուշ միջնադարում աշխարհաբարին մոտ լեզվով ստեղծագործող հեղինակների մոտ հաճախ հանդիպում են այդ բայաձևի տարբեր կիրառություններ: Եվ դա հնարավոր է նույնիսկ նույն տեքստում և նույն բայի պարագայում: Բերենք ընդամենը մեկ հատված XV դարի հեղինակ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքից, որտեղ, օրինակ, ժխտական դերբայը անկատարի կազմում գործածված է երեք տարբերակներով՝ (տարբերակներով են կազմված նաև այլ բայեր. դրանք ընդգծված են). «Եւ այլ իմացիր, որ ի մէկ դեղ մըն հակառակ զաւրութիւն կու գտնուի, որ մէկ մէկի **չի նմանիր**. ի մէկտեղ կու ժողվի. եւ այս ուծս որ հակառակ է, եւ ամենայն տեղ **չի գըտնուիլ**, հակառակ մասունք կայ, որ մէկմէկի լման գործ չայնել, եւ մէկ ուծ մըն կու լինի դեղին՝ որ ամուր կու լինի բնութեամբ, եւ **չի բաժնի** մէկ մէկէ, եւ կու լինի, որ կու բաժնի. որպէս կաթն, որ զպանրին ջուրն հանես, եւ եղն եւ թանն յիրմէն կու բաժնի. եւ հենց որ պապունաճն երկու զաւրութիւն կայ, հալող եւ կապող, եւ յորժամ եփես՝ այս երկու զաւրութիւնն ի մէկ մէկէ **չի բաժնիլ** եւ **չի փոխիլ** այն պատճառովն, որ բնութիւնն ամուր է» (ՄՀՔ, 209):

Ձևավորման ու կանոնարկման երկար ճանապարհ է անցել նաև անկատար ներկայի ժխտական խոնարհման **չի** մասնիկը: Միջին հայերենում **չէ ի** ժխտական ձևի փոփոխությամբ ձևավորված **չի**-ն²¹², ճիշտ է, նշված դեմքում արդեն իսկ լայն

²¹² Ա. Այտընյանը **չի**-ի ծագումը բացատրում է XI-XII դարերում երևան ելած նոր՝ «բացասական» ձևի փոփոխությամբ. ժխտական խոնարհումը կամ, ինչպես Այտընյանն է անվանում, բացասականը կազմվում էր «էական բայով եւ **ի** նախորդով. **չէի հասանել**, (**չէի հասնիլ**), **չէ հասնիլ**, **չի հասնիր**...

գործածություն ուներ միջնադարի՝ աշխարհաբարին մոտ լեզվով ստեղծվող մատենագրության մեջ, սակայն դրա կանոնարկումը և կայուն գործածությունը տևական ժամանակ պահանջեցին: Նույնիսկ XIX դարի կեսերին էլ, ինչպես վկայում է ուսումնասիրողը, սովորական էր անկատար ներկայի՝ բայահիմքին միացած **չ** մասնիկով կազմությունը. «ստորադասական անկատարի նույն դեմքի ժխտականի համաբանությամբ՝ սահմանականի ներկան էլ լավագույն հեղինակների մոտ ունենում է ժխտականի հետևյալ ձևը՝ «Ծաղիկ հանող տղուն գլխուն ալ սաւան մը կանցընեն, կը ծխեն, ծաղիկը **չաստկանար** (փոխ.՝ **չի սաստկանար** – ՅՆԼ. Ա.) և շուտով կը չորնայ» (Բգ., 1846, էջ 106), «Բարեպաշտ ժողովուրդը այսպիսի սրբալիդ ձեռնադրութեան մը **չկրնար** (փոխ.՝ **չի կրնար** – ՅՆԼ. Ա.) ներել» (Եր., 1866, էջ 77), «Մարդս կը հետևի այս էականերուն երկրիս մէջտեղէն և մինչև երկինք, ուր կը կորնչին անոնք իրենց երիտասարդութեան մէջ, և երբ ալ **չտեսներ** (փոխ.՝ **չի տեսներ** – ՅՆԼ. Ա.) զանոնք, աչքը կարծես թէ շլացումէն կուրցած կը մնայ» (ԼՌ, 1867, էջ 38)²¹³:

Բոլոր դեպքերում, օժանդակ բայի ժխտականով (անկատար ներկայի եզակի երրորդ դեմքում՝ նաև **չի**) և անորոշ դերբայի **լ** ձայնորդի **ք**-ի փոխված ձևերով անկատարի կազմությունները ուշ միջնադարում ակնհայտորեն գերակշռող գործածություններ էին: Հենց այս ձևերն էլ դարձան արևմտահայերենի անկատար ներկայի ժխտական խոնարհման ձևեր: Այսպես՝

չեաք ի լսել, չէինք լսեր, չէինք մտիկ ըներ. չեմ ի գալ, չեմ ի գար... Նոյն ի նախդիրն է դարձեալ,– գրում է նա,– սահմ. ներկ. եզ. Յդ դեմքին զարտուրութեան պատճառը. կ'ըսենք՝ կրճատմամբ՝ **Ինք չի լսեր, չի մնար**. իբր թէ **ինք չէ ի լսեր, չէ իմնար**. կամ իբր թէ **չ'ի լսեր. չ'ի մնար**» (Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 87):

²¹³ Տե՛ս Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Եր., 1971, էջ 274:

Ժխտական խոնարհում**Միջին հայերեն** (անկատար ներկա)**Ա լծորդություն՝**

չեմ կարդար, չես կարդար, չի կարդար
չենք կարդար, չեք կարդար, չեն կարդար

Ե և ի լծորդություն՝

չեմ գրեր, չես գրեր, չի գրեր չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր
չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր չենք խօսիր, չեք խօսիր, չեն խօսիր

Արևմտահայերենի ժխտական խոնարհման անկատար ներկայի ձևերը ճշգրտորեն համապատասխանում են այս ձևերին:

Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն՝ Յայս աստնւորիս վերայ վատն իսկի մարդոյ **չի մնար** (Հովհաննէս Երզնկացի, ՄՀՔ, 168); Հրնցկուն պէլըման աղուոր **չե՛մ ստեղծեր** երկուքն ի հիտրաց (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 222); Այս իմ նենգաւոր աչերս **չի կենար** մէկ պահ մի պարապ (ն. տ., ՄՀՔ, 223); **Չեմ ելներ** ես այս այգոյս, / Այս իմ նորատունկ այգոյս (Գրիգորիս Աղթամարցի, 261); Առնում հոտոտիմ անուշս. Այլ **չեմ ելներ** ի յայգոյս, (ն.տ., 271); **չի դիմանար, չի ելաներ, չեն գիտեր, չի ուտուիր, չի նմանիր** (Ամիրդովլաթ Ամասիացի, տե՛ս **ԱՄԳՀՂ**, 378):

Արևմտահայերեն՝ Կարելորը ճիշդը չէ, կարելորը ճշմարիտն է... Մարդիկ երջանիկ չեն, Կորիւն, ու **չեն գիտեր** պատճառը... (Վահէ Օշական, ՀԳԳ, 219); Այնքան լեցուած եմ, որ **չեմ կրնար** պարպուիլ (Շաւարշ Նարդունի, ն. տ., 163); Բնաւ **չեմ սիրեր** առանձնութիւնը: ...Միկարէթ մը **չէ՞ք վատեր**... Սանկ աւելի հանգիստ **չէ՞ք նստիր** (Ռոպէր Հատէճեան, ն. տ., 174); Անծանօթ աղջկան մը ժպտիլ, գլխարկով բարեւել, եւ այլն: Այս տեսակ բաներէ բնաւ **չեմ ախորժիր** (ն. տ., 175); **Չեմ միջամտեր**.

միայն՝ չմոռնաս այդ մասին շարադրություն մը գրել ինծի (Պօղոս Մնացեան, ն. տ., 199):

Ինչ վերաբերում է արևմտահայերենի **անկատար անցյալի ժխտական կազմությանը**, ապա այստեղ նույնությամբ պահպանվում է սկզբունքը. ձևավորվում է օժանդակ բայի ժխտական (չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին) + ժխտական ձևաբայ կաղապարով:

Միջին հայերեն (անկատար անցյալ)

Ա լծորդություն՝

չէի կարդար, չէիր կարդար, չէր կարդար
չէինք կարդար, չէիք կարդար, չէին կարդար

Ե լծորդություն՝

չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր
չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր

Այստեղ դժվարանում ենք միայն մեկ ճշգրտում կատարել. արդյո՞ք միջին հայերենում **ի** լծորդության բայերը անկատար անցյալի ժխտականում փոխում են լծորդությունը և ձևով նույնանում են **ե** լծորդության բայերին, ինչպես **ի** սկզբանե գրական արևմտահայերենում էր²¹⁴: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» երկհատորանոց աշխատության հեղինակները վկայում են, որ անցյալ անկատար ժամանակով

²¹⁴ Խոսելով արևմտահայերենի անկատար ներկայի և անկատար անցյալի կազմության մասին՝ Ա. Այտընյանը նշում է, որ այդ ձևերը կազմվում են՝ «1. **Եմ** էական բային բացասականովը, եւ 2. Իւրաքանչիւր բային բացասական ձեւովը», և ապա՝ «Բայի մը **Բացասական ձեւը** կը շինուի՝ աներեւոյթին ծայրի 1 գիրը **ր**էի փոխելով. այսպէս՝ **Լսեր. սորվիր. կարդար. մոռնար**: – **Չեմ ըներ, չեն ըսեր....**», ապա ավելացնում է, որ **ի** լծորդության ժխտականը «սահմ. անկատարի մէջ **եր** կը վերջաւորի, (փխկ.՝ **իր.**) այսպէս. **չէի սորվեր, (փխկ. չէի սորվիր)**», իսկ **եմ** էական (օժանդակ) բայի եզակի երրորդ դեմքը «սովորութիւն եղած է ըսել՝ **չի լսեր. չի խաղար. չի գողնար** (փխկ. **չէ լսեր, չէ գողնար, չէ տեսներ** ըսելով)» (Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 83):

ձևեր դժբախտաբար միջնադարի մատենագրության մեջ (համենայն դեպս, իրենց ձեռքի տակ եղած աղբյուրներում) չեն հանդիպում²¹⁵, և ուստի դժվար է վստահաբար տալ այս հարցի պատասխանը: Մեր փնտրտուքը նույնպես արդյունքներ չունեցավ: Սակայն ենթադրվում է, որ ուշ միջնադարի մատենագրության մեջ այդ կազմությունները, այնուամենայնիվ, արդեն իսկ գործածական եղած պիտի լինեին, քանի որ վաղ աշխարհաբարի աղբյուրներում այդպիսի գործածության օրինակներ հանդիպում են:

Ինչ վերաբերում է արևմտահայերենի **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** պակասավոր բայերին, ապա դրական խոնարհման դեպքում դրանք միջին հայերենում պահպանել են գրաբարատիպ սահմանական ներկան և անցյալը, այսինքն՝ առանց **կը** եղանակիչի ձևերը՝ **եմ / էի, կամ / կայի, գիտեմ / գիտէի, ունեմ / ունէի, արժեմ / արժէի**: Միջին հայերենում գրաբարատիպ են նաև **կրնամ** բայի սահմանական ներկան և անցյալը՝ **կրնամ / կրնայի**: Ժխտական խոնարհման դեպքում դրանց մի մասը պահպանում է համադրական կազմությունը (**չեմ / չէի, չկամ / չկայի, չունեմ / չունէի, չարժեմ / չարժէի**), իսկ ահա **գիտեմ** և **կրնամ** բայերի ժխտականը, այլևայլ ձևերին (**չի գիտե, չի կարե, չէր ի գիտել** և այլն) զուգահեռ, կազմվում է նաև ընդհանուր սկզբունքով՝ **չեմ + ժխտական դերբայ կադապարով**, որը ուշ միջնադարում լայն տարածում է ստանում:

Անկատար ներկա

չեմ գիտեր, չես գիտեր, չի գիտեր չենք գիտեր, չէք գիտեր, չեն գիտեր
չեմ կրնար, չես կրնար, չի կրնար չենք կրնար, չէք կրնար, չեն կրնար

Անկատար անցյալ

չէի գիտեր, չէիր գիտեր, չէր գիտեր չէինք գիտեր, չէիք գիտեր, չէին գիտեր
չէի կրնար, չէիր կրնար, չէր կրնար չէինք կրնար, չէիք կրնար, չէին կրնար

²¹⁵ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 381:

Այս հարացույցը նույնությամբ փոխանցվեց արևմտահայերենին: Միջին հայերենից ունեցած տարբերությունը ըստ էության այն է, որ արևմտահայերենում սա ընդունված կանոնական հարացույց է առանց զուգաձևությունների, մինչդեռ միջին հայերենում, ինչպես ասացինք, նշված ձևերը ուղեկցվում են նաև գրաբարատիպ կամ աշխարհաբարին ոչ բնորոշ զուգաձևություններով:

Անկատար ներկայի և անցյալի ժխտական ձևերի վերաբերյալ ուզում ենք մի կարևոր ճշգրտում կատարել: Ընդունված կարծիքի համաձայն՝ քանի որ արևմտահայերենում սահմանական եղանակի անկատար ներկայի և անկատար անցյալի ժխտականի ձևերը մասնակի համանունություն ունեն վաղակատար ներկայի և վաղակատար անցյալի ժխտական ձևերի հետ, ուստի գործառական մակարդակում վերջինները փոխարինվում են հարակատարի համապատասխան ձևերով: Նորմատիվ քերականության գրքերում սովորաբար ներկայացվում է հենց այդ կարծիքը²¹⁶: Այդպիսի տեսակետ ենք արտահայտել նաև մենք բուհական ձեռնարկներից մեկում՝ ելնելով իրողության ուսուցման գործնական հարմարավետությունից²¹⁷: Սակայն քանի որ այս դեպքում խոսքը քննարկվող կառույցների ձևավորման և զարգացման մասին է, փորձենք ներկայացնել երևույթի գիտական ճշգրիտ պատկերը, որը հետևյալն է:

²¹⁶ Տե՛ս **Ռ. Մաքսպետյան**, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 162: «Հայոց լեզվի պատմություն», Եր., 2017, էջ 281: Հարցին ավելի հանգամանորեն է անդրադարձել Հ. Չոլաքյանը՝ նշելով ձևաբանական հնարավոր նույնությունները այս երկու ժամանակաձևերում, որոնք հավանաբար պատճառ են դարձել, որ «վաղակատար բաղադրեալ ժխտական ձևերը ինքնաբերաբար հետզհետե դուրս մղուին լեզուէն ու փոխարինուին յարակատարի համապատասխան ձևերով (**գրեր եմ՝ չեմ գրած, գրեր էի՝ չէի գրած**), թե եւ քիչ յաճախականութամբ կը հանդիպի տեղ-տեղ **եղեր է չէ եղեր** մարդ մը ու...» (**Յ. Չոլաքեան**, Արևմտահայերէն, Բ. գիրք, Եր., 2019, էջ 95):

²¹⁷ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Եր., 2007 էջ 237-245:

Արևմտահայերենում ժխտական խոնարհման համակարգում համանունությունը դրսևորվում է հետևյալ դեպքերում. 1) ձևով գրեթե ամբողջությամբ նույնանում են (կարելի է ասել՝ մասնակի համանուններ են)՝ **ե** լծորդության աններածանց բայերի ժխտական խոնարհման անկատար ներկան և վաղակատար ներկան, այսպես՝

Անկատար ներկա՝

չեմ գրեր, չես գրեր, չի գրեր

չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր

Վաղակատար ներկա՝

չեմ գրեր, չես գրեր, չի գրեր

չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր

Միակ տարբերությունը, ինչպես տեսնում ենք, եզակի երրորդ դեմքում է. անկատարի դեպքում դրական խոնարհման **է**-ն փոխվում է **ի**-ի, և ունենում ենք **չի** ձևը, մինչդեռ վաղակատարը պահպանում է անհնչյունափոխ տարբերակը՝ **չէ**:

2) Լիակատար համանունություն ունեն, այսինքն՝ բոլոր ձևերով համընկնում են **ե** և **ի** լծորդության աններածանց բայերի անկատար անցյալի և վաղակատար անցյալի ժխտականները, այսպես՝

Անկատար անցյալ՝

կը գրեմ՝ չէի գրեր, չէիր գրեր, չեր գրեր

չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր

կը խօսիմ՝ չէի խօսեր, չէիր խօսեր, չեր խօսեր

չէինք խօսեր, չէիք խօսեր, չէին խօսեր

Վաղակատար անցյալ՝

գրեր էի՝ չէի գրեր, չէիր գրեր, չեր գրեր

չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր

խօսեր էի՝ չէի խօսեր, չէիր խօսեր, չեր խօսեր

չէինք խօսեր, չէիք խօսեր, չէին խօսեր

Մյուս բոլոր բայերի դեպքում անկատարի և վաղակատարի ժխտական խոնարհման ձևերը տարբերվում են՝ պայմանավորված արևմտահայերենի ժխտական և վաղակատար դերբայների ձևային տարբերությամբ։ Այսպես՝

Ա լծորդության պարզ բայեր

անկ. ներկա	անկ. անցյալ	վաղ. ներկա	վաղ. անցյալ
չեմ կարդար	չէի կարդար	չեմ կարդացեր	չէի կարդացեր

Ա լծորդության ն, են, ան ներածանց. բայեր

չեմ մոռնար	չէի մոռնար	չեմ մոռցեր	չէի մոռցեր
չեմ մօտենար	չէի մօտենար	չեմ մօտեցեր	չէի մօտեցեր
չեմ միանար	չէի միանար	չեմ միացեր	չէի միացեր

Ե լծորդության ն ներածանց. բայեր

չեմ մտներ	չէի մտներ	չեմ մտեր	չէի մտեր
-----------	-----------	----------	----------

Ե լծորդության պատճառական բայեր

չեմ հագցնեմ	չէի հագցնեմ	չեմ հագցրեմ	չէի հագցրեմ
-------------	-------------	-------------	-------------

Ի լծորդության ն, չ ներածանց. բայեր

չեմ հասնիր	չէի հասնեմ	չեմ հասեր	չէի հասեր
չեմ փախչիր	չէի փախչեմ	չեմ փախեր	չէի փախեր

Ի լծորդության պարզ բայերի ներկայի ձևեր

չեմ խօսիր	չէի խօսիր	չեմ խօսեր	չէի խօսեր
-----------	-----------	-----------	-----------

Բնականաբար նույնը վերաբերում է նաև նույն կազմությունն ունեցող անկանոն բայերին և, իհարկե, տարարմատությամբ ձևերին, ինչպես՝

Անկ. ներկա և անկ. անցյալ	Վաղ. ներկա և վաղ. անցյալ
կ'ուսեմ – չեմ ուտեր / չէի ուտեր	կ'երեր եմ – չեմ կ'երեր / չէի կ'երեր
կ'ըլամ – չեմ ըլար / չէի ըլար	եղեր եմ – չեմ եղեր / չէի եղեր
կու գամ – չեմ գար / չէի գար	եկեր եմ – չեմ եկեր / չէի եկեր
կ'երթամ – չեմ երթար / չէի երթար	գացեր եմ – չեմ գացեր / չէի գացեր

<i>կը դառնամ</i> – չեմ դառնար / չէի դառնար	<i>դարձեր եմ</i> – չեմ դարձեր / չէի դարձեր
<i>կը տանիմ</i> – չեմ տանիր / չէի տաներ	<i>տարեր եմ</i> – չեմ տարեր / չէի տարեր
<i>կ'ընեմ</i> – չեմ ընեմ / չէի ընեմ	<i>ըրեր եմ</i> – չեմ ըրեր / չէի ըրեր

Կրավորական բայերը՝ **գրուիլ, երգուիլ, կարդացուիլ** և այլն, դրսևորում են քերականական նույն վարքագիծը, ինչ **ի** լծորդության աններածանց բայերը. խոնարհվում և բայաձևեր են կազմում **ի** խոնարհման աններածանց բայերի նման (խոսքում հազվադեպ հանդիպող ձևեր են), ինչպես՝

անկատար ներկա՝ կը կարդացուիմ – չեմ կարդացվիր, կը գրուիմ – չեմ գրուիր, վաղակատար ներկա՝ կարդացուեր եմ – չեմ կարդացուեր, գրուեր եմ – չեմ գրուեր:

Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն՝ *Այս կարօտուս չի՛ դիմացուիր, միշտ ըզհոզիս կու քաղէ (Պաղտասար Դպիր, ՀԴՔ, 284):*

Արևմտահայերեն՝ *Չէ՛, չէ՛, Ատիկա չի գրուիր... Բայց եթե չես ուզեր գիտնալ (Վահե Օջական, ՀԿԳ, 220); ...Եւ քան մը հրմշտկած ու եկած-հասած էր այս լորձունքին մէջ, որ չէր կլլուեր... (Վեհանուշ Թէքեան, ՀԿԳ, 222):*

Բազմապատկական բայերը, որոնք արևմտահայերենում **ի, ա, ե** լծորդության են (**թոշտիլ, կոտրատել, պատառոտել, սոտուրտալ** և այլն), ձևափոխության են ենթարկվում համապատասխան լծորդությունների աններածանց բայերի պես:

Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն՝

Անկատար. *Հանց մեծամեծ ցատումն եցոյց, / Դեռ ի մեղաց չենք վախենար (Թորոս Տարոնացի, 14-րդ դ., ՄՀՔ, 201); Չեմ ելնէր ես յայս այգոյս./ Յայս իմ նորաշեն տներոյս (ԳԱ, 281); Եւ այլ*

իմացիր, որ ի մէկ դեղ մըն հակառակ զարուրթիւն կու գտնուի, որ մէկ մէկի **չի նմանիր**. (Ամիրդովլաթ Ամասիացի, 15-րդ դար, ՄՀՔ, 209), ...որ յորժամ պիտենայ՝ տեղաց մըն այլ չի փնտռեն, կամ այլ յերկրէ բերեն, եւ հանապազ մարդն առողջ **չի կենար** (ն.տ., 212); Այս իմ նենգաւոր աչերս **չի կենար** մէկ պահ մի պարապ (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 223):

Վաղակատար. Զինչ հողածին կայր արարածս. / Որ **չէր դիպեր** այն պայային (Թորոս Տարոնացի, ՄՀՔ, 202); Նատար արար ի վրայ վարդին, / Ի մէկ տեղ **չէ հասեր** մուրատ. (ն.տ.); Կ'ասեմ խեղճ է քան կու ցաւի, Զատ **չէ կերեր**, կայ վեց տարի (Պարսամ Տաղասաց, ՄՀՔ, 226): Դեռ **չեմ կերեր** իմ յայս պտղոյս / Այս իմ նորատունկ այգոյս (ԳԱ, 282); Դեռ հոտ **չեմ առեր** վարդոյս, / Յայս իմ նորատունկ տնկոյս (ԳԱ, 282);զի այնոր համար որ ի վարպետէ չէ կարդացել, եւ թէ կարդացել է՝ նա **չէ հասկցեր** եւ կամ մոռացել է (Ամիրդովլաթ Ամասիացի, ՄՀՔ, 213):

Արևմտահայերէն՝

Անկատար. Մեկուն քոյրը, միւսին եղբայրը. ասոր մանուկն ու անոր մայրը. բայց ո՛չ մէկուն կինը – գիւղական պատշաճութիւնը **չի թոյլատրեր** (Մելքոն Կիւրճեան, ՀԱ, 102); Մարդիկ երջանիկ չեն, Կորիւն, ու **չեն գիտեր** պատճառը;այսքան տարի: Ինչպէս՞ բացատրել, եթէ արդեն **չես գիտեր** ...Ուրիշ բան **չէի կրնար** ընել;Ատիկա **չի գրուիր**... Բայց եթէ **չես ուզեր** գիտնալ... (Վահէ Օշական, ՀԿԳ, 219); Գառնիկ, տղա՛ս, որք է, մե՛ղք է, որբերը **չէ՛ն ցաւցներ**... **Չէի լար**, բայց շրթներս կը դողային (Անդրանիկ Ծառուկեան, ՀԱ 1, 116); Մաման ա՛լ **չի սիրեր** զիս (Արամ Հայկազ, ՀԱ 1, 109):

Վաղակատար. Նշանածին մայրն է եկած միայն. խրոխտ՝ կը դիտէ իր կտրիճ փեսացուն, որուն պանդխտութիւնը **չէ յաջողեր** ազդել իր ամբողջ թոյնով (Մելքոն Կիւրճեան, ՀԱ, 103);Որպէս թէ հա՛յրս ըլլար, մեռած հայրս, եւ իր այնքան ծանօթ

*նայուածքին ահեղ տառապանքով ինծի նայէր տակաւին.
Կարծես թէ չէ մեռեր այն նայուածքը... (Բնտրա, ՀԿԳ, 254);
Ուրեմն դուն բան մը չես հասկցեր (Վահէ Օշական, ՀԿԳ, 219):*

Ի դեպ, վաղակատարի ժխտականի ձևերը ուշ միջնադարի մատենագրության մեջ շատ ավելի հաճախ են գործածվել, քան դասական արևմտահայերենով ստեղծված գրականության մեջ, որտեղ արդեն չափազանց դժվար է գտնել նշված կազմությունների կիրառությունները: Դրանք, ինչպես արդեն ասվեց, փոխարինվում էին հարակատարի ժխտականի ձևերով:

Բոլոր դեպքերում, նշված ձևերը միջին հայերենում արդեն իսկ լայնորեն գործածվում էին, և համանունության վերը նշված դրսևորումները նույնպես արտահայտություն են գտել միջին հայերենում: Եվ ինչպես այսօր, այն ժամանակ էլ դրանց ձևաբանական նույնության պարագայում իմաստային ճշգրտումը կատարվել է շարահյուսական մակարդակում՝ համատեքստից ելնելով: Այսպես՝ Գրիգորիս Աղթամարցու «Տաղ պիտանի եւ հոգեշահ» բանաստեղծության մեջ **չեմ խմեր** ձևի՝ քերականական երկու իմաստներից (**չեմ խմում** և **չեմ խմել**) վաղակատարի իմաստով գործածությունը ենթադրվում է համատեքստից. դա են հուշում տաղում վաղակատար ներկայի դրական խոնարհման (**ելեր է, բերեր եմ, տնկեր եմ, շիներ եմ** և այլն) պարբերական գործածությունները.

Հնձան **եմ շիներ** այգոյս,

Կարաս **եմ շիներ** գինոյս,

Դեռ **չեմ խմեր** յայս գինոյս,

Կ'ասեն, թ' «Արե'կ է'լ, այգոյս» (ԳԱ, 262):

Իսկ ահա XVI դարի տաղերգու Պարսամ Տաղասացի «Տաղ վասն ակոռայի» երգում **չեմ ուզեր** ձևը գործածված է ներկայի նշանակությամբ, ինչպես ենթադրել են տալիս համատեքստը

և բերված հենց մեկ տողով շարադրանքը՝ *Խեղճ ակոռայեկ ողորմելի*. / Վաստ **չեմ ուզեք** ես այլ քեզի (ՄՀԲ, 226):

Նույն պատկերը ունենք նաև արևմտահայերենում, երբ շարադրանքի բովանդակությունից ելնելով միայն հնարավոր է հաստատապես պնդել՝ գործ ունենք անկատարի^օ, թե՞ վաղակատարի հետ: Այսպես. **չեմ կարծեք** ձևը արևմտահայերենում ունի երկու քերականական իմաստ՝ վաղակատար ներկայի (կարծեք եմ – չեմ կարծեք) և անկատար անցյալի (կը կարծեմ – չեմ կարծեք). Ա. Հայկազի «Մանչա կ'երթայ տունեն...» գեղարվեստական ակնարկի մեջ այն միանշանակորեն գործածված է անկատարի իմաստով (արևելահ.՝ **չեմ կարծում**), ինչպես՝ «–Բսան սենթը շա՞տ է / –Չէ՛, **չեմ կարծեք** թե՛ շա՞տ է, ընդհակառակը՝ շատ քիչ է. չե՞ որ շատ հեռու տեղեր պիտի երթաս...» (ՀԱ 1, 110):

Համանունության յուրահատուկ դրսևորում է նաև հետևյալը. անկատար ներկայի ժխտական եզակի երրորդ դեմքում օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի **չի**-ն ձայնավորով սկսվող բառերից առաջ ենթարկվում է հնչյունափոխության. **ի**-ն սղվում է, որը գրավոր խոսքում արտահայտվում է ապաթարցով, ինչպես՝ **չի ըներ – չ'ըներ, չի օգներ – չ'օգներ, չի ըսեր – չ'ըսեր**: Նույնպիսի կազմություն ունի ըղձական անցյալի եզակի երրորդ դեմքի ժխտականը՝ միայն այն տարբերությամբ, որ **չ** ժխտական մասնիկը ավելանում է ուղղակի բայափոխին, բնականաբար, առանց ապաթարցի, ինչպես՝ **ըներ – չըներ, օգներ – չօգներ, ըսեր – չըսեր** (իբրև անցյալի ձևեր՝ սրանք գրվում են **է**-ով): Արտասանական տարբերությունն այն է, որ անկատարի ձևերում շեշտվում է բառի ոչ թե վերջին (ինչպես ըղձականի դեպքում է), այլ առաջին վանկը. հմտ.՝ **եթե անիկա չըսեր** (ըղձ.՝ եթե նա չասեր), **եթե անիկա չ'ըսեր** (սահմ.՝ եթե նա չի ասում): Նշված հնչյունափոխությունը (**չի>չ'**) հավանաբար ավելի ուշ՝ աշխարհաբարյան շրջանում ձևավորված լեզվա-

կան փաստ է, ինչպես նկատում ենք XX դարասկզբի և ավելի ուշ շրջանի արևմտահայ / սփյուռքահայ գրականության մեջ («Ամուսնական կեանքին համար անբաւական յատկութիւն մըն է աւ՝ եւ չնչին անհամաձայնութիւններ, որոնց պատճառը **չ'ըմբռներ**, անպակաս են մեր մէջ...» (Գրիգոր Զոհրապ); «Եւ ալ **չ'երգէր** արիւնիս մէջ, / Կախարդ երգը Լիբանանի քնարերգակ շոճիներուն» (Լևոն Շանթ)) և պարբերական մամուլում («Վազքի մէջ ինչէ՛ր կորան, արեւը **չ'ըսէր** բարեւ ինչ տեսակ արեւ է սա... անշուշտ արեւը եւ զայն դիտողը մէկ միութիւն են: Բնական արեւը ...»; «Ամէն մարդ շնորհակալ է, մէկը **չ'ըսէր՝** մինչեւ հիմա ինչի՞ կը սպասէիք, որ ձեր հաւատարիմ փոքրամասնութեան դէմ գործուած պատմական ոճիրը...»; «Անոր խօսքով՝ առաջընթացի բացակայութեան պատճառը Հայաստանն է, որ «խաղաղութիւն **չ'ուզէր**, այլ կ'ուզէ պահպանել «ստատուս...»):

Բոլոր դեպքերում, մեր ձեռքի տակ եղած ուշ միջնադարյան մատենագրական աղբյուրներում այսպիսի կիրառության օրինակներ չեն հանդիպել: Քննարկվող ձևի նախավոր կիրառության մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս ուսումնասիրողներից Վ. Աճեմյանը իր «Գրական արևմտահայերենի ձևավորումը» աշխատության մեջ: Պարզվում է՝ XIX դարի կեսերին խնդրին անդրադարձել «Մէր» պարբերականը (Կ. Պոլիս, 1861 թ.). հաճախ հանդիպող շփոթը մեղմելու համար առաջարկվել է կանոնավորել ժխտականի նշված ձևերը. ստորադասական / ըղձականի ձևերը կազմել չ-ով՝ **չկարդար, խօսիր, չի**-ն վերապահել միայն բաղաձայնով սկսվող բայերի անկատար ներկայի եզակի երրորդ դեմքին՝ **չի կարդար, չի խօսիր**. ձայնավորով սկսվող բայերից առաջ **չի** մասնիկի ի-ի սղումով գործածել չ՝ տարբերակը՝ **չի ընդունիր>չ'ընդունիր, չի երթար>չ'երթար**: Այսպիսով՝ ստորադասական / ըղձականի համար ունենք՝ **չերթար, չըներ**, անկատար ներկայի համար՝

Ներքառ, չ'ըներ: Եղել են ընդդիմախոսներ, սակայն Ա. Այտր-նյանի, Ս. Փափազյանի և այլոց համար առաջարկված մոտեցումը եղել է միանգամայն ընդունելի²¹⁸ և, ինչպես տեսանք, հետագայում գործնական լայն կիրառություն է ունեցել նաև արևմտահայ գրավոր մատենագրության մեջ:

Ունեմ և կամ բայերի դեպքում չ-ն ավելանում է հենց բայահիմքին, ինչպես՝ *Այլ Փիլիպպոս բժշկապետն անուանեաց զայն ազգն՝ որ չունի տաքութիւն՝ ծերոց հիւանդութիւն (Մխիթար Հերացի, ՄՀՔ, 161); Գլուխ չունիս տապանճանի. / Հասրաթ լինիս փախլավայի (Պարսամ Տրապիզոնցի, ՄՀՔ, 225); Եկել եմ գերի անկել, ճար չկայ որ մէկ մի թափէ (Հովհաննես Երզնկացի, ՄՀՔ, 166); Եւ թէ յոչ կամայ լինայ՝ հնար չկայ. Զկէս գնոցն տայ ազգին՝ եւ տուգանք (Սմբատ Սպարապետ, ՄՀՔ, 191): Այն Երզրնկան ամուր քաղաք. / Իսկի չունէր առնելու ճար (Թորոս Տարոնացի, ՄՀՔ, 201); Ի՞նչ անեմ, կամ ի՞նչ լինիմ, տէր չունիմ, որ գայ զիս ձենէ (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 224):*

Ամփոփում: Միջին հայերեն-արևմտահայերեն կապը շատ սերտ է: Այն դրսևորվում է լեզվական բոլոր մակարդակներում: Սակայն այս տեսակետի ապացուցման համար հարցի ուղղորդված ուսումնասիրությունները հազիվ թե կարելի է բավարար համարել: Եղածները առավելապես ընդհանուր դիտարկումներ են և սահմանափակվում են հնչյունական, բառային և մանավանդ քերականական միայն որոշակի իրողությունների և այն էլ ոչ համակարգային վերլուծությունների շրջանակում: Մինչդեռ ինդրի լուծումը ենթադրում է գոնե լեզվական կարևոր կամ առանցքային իրողությունների հանգամանալից քննություն: Այս հոդվածում փորձ է արվել տալու այդպիսի իրողություններից մեկի՝ սահմանական եղանակի անկատար ներկայի և անկատար անցյալի ամբողջական և

²¹⁸ Տե՛ս Վ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 276:

համակարգված նկարագրությունը՝ միջին հայերեն-արևմտահայերեն առնչությունների շրջանակում, որը միտում է ցույց տալու մեր գրական լեզվի զարգացման այդ շրջափուլերի համակարգային սերտ կապն ու ընդհանրությունները:

Կարծում ենք՝ հոդվածում հանգամանորեն ներկայացվող փաստական և վերլուծական նյութը՝ արևմտահայերենի սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերի ձևավորման ու զարգացման ընթացքի վերաբերյալ, մեկ անգամ ևս վկայում է, որ նշված ժամանակաձևերը իրենց իմաստային և կառուցվածքային հիմնական հատկանիշներով գրական արևմտահայերենին են փոխանցվել միջին հայերենից: Եվ դա մեկ անգամ ևս հաստատում է այն տեսակետը, որ արևմտահայերենը իր քերականական կառուցվածքով և իմաստաբանությամբ ուղղակի և անմիջական ժառանգորդն է ու շարունակությունը գրական հայերենի զարգացման միջին հայերեն կոչված շրջափուլի՝ որպես արևմտահայ աշխարհաբարի ձևավորման ենթաշրջանի:

Համառոտագրություններ

ԱՄԳՀՊ – Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա., Եր., 1972:

ԳԱ – Գրիգորիս Աղթամարցի, XVI դ., Երևան, 1963:

ՀԱ 1 – Հայրենի աղբիւր 1. ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան, կազմ. Յ. Քիրքճեան, Մ. Գալայճեան-Քիրքճեան, Աթէնք, 2000:

ՀԱ 2 – Հայրենի աղբիւր 1. ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան, կազմ. Յ. Քիրքճեան, Աթէնք, 2003:

ՀՂՔ – Հայ դասական քնարերգություն, Եր., 1986:

ՀԿ – Հովհաննես Կարնեցի, Տաղարան. աշխատասիրությամբ՝ Շ. Նազարյան, Երևան, 1962:

ՀԿԳ – Հայ կեանք եւ գրականություն, կազմ. Յ. Քիրքճեան, Բ հատոր, Երկրորդ բաժին, Աթէնք, 2007:

ՄՀՔ – Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա, Երևան, 2019:

ՆՀ – Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Եր., 1983:

ՈՒՄՀԲ – Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ. 1, Եր., 1986:

2.5. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ²¹⁹

Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման հարցը քննարկումների առարկա է եղել ի սկզբանե՝ գրական լեզվի ձևավորման շրջանից սկսած։ Դրանք ունեցել են մի քանի փուլ՝ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի զարգացումներին զուգընթաց։

Առաջին փուլը կարելի է համարել 19-րդ դարի 50-60-ական թվականները, երբ քննարկման առարկա դարձավ գրական հայերենի միության խնդիրը։ Ստեփանոս Նազարյանցը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ այս տարբաժանումը արհեստական չէր համարում և որոշ առումով՝ նույնիսկ ընդունելի, քանի որ հայությունը, ըստ նրա, մի ծաղկի փոխարեն կունենա երկու ծաղիկ²²⁰։ Թե՛ այս կարծիքի վերաբերմամբ և թե՛ այդ շրջանի արևելահայոց լեզվաքաղաքականության մասին տարակարծություններ կան։ Ուզում ենք առանձնացնել հատկապես մի կարևոր հարցադրում։ Արևելահայ և արևմտահայ մտավորականներից շատերը՝ Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Ա. Զոպանյան, Հ. Գազանճյան, Գր. Վանցյան, հետագայում՝ Ռ. Իշխանյան և ուրիշներ, այն համոզումն ունեին, որ Լազարյան ճեմարանում ուսանող և «Հյուսիսափայլի» շուրջը համախմբված գործիչները գրական արևելահայերենի մշակման

²¹⁹ Որպես զեկուցում՝ կարդացվել է Ծաղկաձորում Մեծ հայրենադարձության 60-ամյակին նվիրված գիտաժողովում. որոշ հավելումներով տպագրվել է «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» ժողովածուում, Եր., 2008։

²²⁰ Տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1911, թիվ 3-4, էջ 92։

հարցում կարող էին ավելի նախանձախնդիր գտնվել՝ աչքի առաջ ունենալով մեր գրական լեզվի միության խնդիրը:

Անշուշտ, գրական երկու ճյուղերի առաջացումը լեզվի պատմական զարգացման հետևանք է՝ պայմանավորված լեզվական, այս դեպքում մանավանդ արտալեզվական գործոններով, ուստի արևելահայ-արևմտահայ տարբերակների առաջացման գործում մտավորական այս կամ այն սերնդին պատասխանատվության մեծ բաժին հատկացնելը գիտական չէ: Միևնույն ժամանակ, սակայն, անկասկած է, որ 19-րդ դարի 50-ականներին, երբ Աճառյանի խոսքերով ասած, երկու ճյուղերի միջև անջրպետը տակավին այսչափ չէր խորացել, եթե գրական լեզուն մշակվեր մեկ ազգային լեզվի տեսանկյունից, ապա մի շարք կարևոր կետերում, մասնավորապես քերականական տարբերությունների մեջ, պատկերը փոքր-ինչ այլ կլիներ²²¹: Մ. Աբեղյանը, խոսելով կենդանի լեզվում գործող լեզվական զուգահեռների ընտրության մասին, գրում է. «Այն որ այժմ անհնարին ենք համարում անել, 1850-ական թվականներին ոչ միայն հնարավոր էր, այլև ամենայն հեշտությամբ կարելի էր»²²²:

Արևելահայ-արևմտահայ առնչությունների վերաբերյալ քննարկումների **երկրորդ փուլը** սկսվում է 19-րդ դարի 80-90-ականներից, երբ ճշգրտվում էին գրական լեզվի կանոնարկման ու մշակման ընդհանուր սկզբունքները: 1897-ին «Արարատ» հանդեսի էջերում ծավալուն հոդվածով հանդես եկավ Մ. Աբեղյանը: Նրա առաջարկությունները, որոնք հարցը տեղափոխում էին գիտական ոլորտ, առաջացրին արևմտահայ մտավորականության, նաև առանձին արևելահայ լեզվաբանների (Գր. Վանցյան) արդարացի դժգոհությունը: Մ. Աբեղյանը, ըստ էության, զիջումներ էր պահանջում միայն արևմտահա-

²²¹ **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Եր., 1951, էջ 497:

²²² «Արարատ», հշմիածին, թիվ 11-12, էջ 494:

յերենից: Ավելի ուշ հարցին անդրադարձավ նաև Հր. Աճառյանը: Նա մասնավորապես նշում է, որ Աբեղյանի պահանջների իրականացմամբ ոչ թե տեղի կունենա երկու լեզուների փոխադարձ մերձեցում, այլ արևմտահայերենի մերձեցում արևելահայերենին²²³:

20-րդ դարի շեմին հասկանալի պատճառներով առավել սրությամբ դրվեց հարցը: Կ. Պոլսի «Ազատամարտ» շաբաթաթերթի բացած բանավեճին («Հայ գրական լեզվի խնդիրը», 1911) մասնակցեցին և՛ արևմտահայ, և՛ արևելահայ մտավորականներ՝ Դ. Աղայան, Ա. Հարությունյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Գազանճյան, Դ. Վարուժան, Ա. Չոպանյան, Հ. Քյուֆեճյան (Հ. Օշական), Վրթ. Փափագյան, Ռ. Զարդարյան և ուրիշներ:

Ընդհանուր կարծիքն այն էր, որ պետք է խոսել միայն հնարավոր մերձեցման մասին, իսկ միությունը պետք է տեղի ունենա քաղաքական փոփոխությունների արդյունքում:

Սկզբունքորեն մերժվում էր գրական լեզվի երկու ճյուղերի ամեն մի պայմանական ձուլում, որը կանտեսեր հիմք բարբառներով պայմանավորված լեզվական առանձնահատկությունները, արտալեզվական գործոնները՝ քաղաքական կացությունը, ժողովուրդը, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվող հանրությունը, որի համար տվյալ լեզուն արդեն որոշակիորեն, ձևավորված մտածողության ու հոգեբանության արտահայտություն է: Կարևոր հանգամանք էր նաև հոգևոր կյանքը, որ զարգացել էր դարձյալ տարաբնույթ մշակույթների ու քաղաքակրթության ազդեցություններով: Հարցի պատասխանը մնում էր պատմությանը, ժամանակին, ժողովրդի քաղաքական ճակատագրի հեռանկարին:

²²³ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 549:

Մեր լեզվի երկու ճյուղերի մերձեցման խնդիրը լայն քննարկումների նյութ դարձավ նաև 20-րդ դարի կեսերից, երբ ներգաղթի տարիներին հնարավորություններ բացվեցին փոխադարձ շփումների համար: Սկսվեց քննարկումների **երրորդ փուլը**: Դարձյալ հնչեցին առաջարկություններ փոխզիջումներով երկու հատվածները իրար մերձեցնելու: Դրանք, սակայն, ավելի շատ հայրենասիրական բովանդակություն ունեին և հաճախ հեռու էին գիտական հիմքից:

Այս շրջանում արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերության մասին ուշագրավ է Հրաչյա Աճառյանի տեսակետը: 1946-1948 թթ. զանգվածային ներգաղթը ազգային զարթոնքի հզոր ալիք էր բարձրացրել համայն հայության շրջանում: Ինքը՝ ճակատագրի բերումով նույնպես տարագիր Հրաչյա Աճառյանը, հայրենադարձության առիթով դիմելով սփյուռքահայությանը, «Սովետական Հայաստան» թերթի 1945 թ. դեկտեմբերի համարներից մեկում գրում է. «Ձեր սրտի իղձը կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք հայրենիք վերադառնալու: Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լուսով, մեր հոգիները անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված՝ սպասում ենք ձեզ»²²⁴: Եվ հայրենասիրական այս մտայնության հիմքի վրա հաճախ քննության էին առնվում նաև գիտության, լեզվի, մշակույթի հարցեր: Փորձում էին լուծումներ գտնել նոր ձևավորվող հարաբերությունների համակարգում: Դրանց մեջ, սակայն, ավելի շատ ընդհանուր ոգևորվածություն կար, քան գիտական մոտեցում: Հավանաբար տուրք տալով ժամանակի այս ընդհանուր տրամադրություններին՝ Հր. Աճառյանը, իբրև զանգվածային ներգաղթի արդյունք, տխուր վախճան է կանխատեսում արևմտահայերենի համար: «Հայոց մեծամասնությունը հավաքված է այժմ

²²⁴ Տե՛ս **Ն. Մելիքության**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 185:

Խորհրդային Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնակավայրը, – գրում է նա, – նրան կից է Կովկասի և Ռուսաստանի հայությունը, որ գործածում է արևելահայ գրական լեզուն: Նույնը նաև ամբողջ Պարսկաստանի հայությունը: Գաղութներից Ամերիկայի հայերը լեզուն կորցնելու նախօրյակին են: Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Տաճկաստանի և Եգիպտոսի հայ գաղութները փոքր թիվ են կազմում: Սիրիայի հայությունն էլ թեև բավական բազմաթիվ է, բայց էլի Երևանի կեսից ավելի չէ: Իսկ երբ, ինչպես ծրագրված է, սփյուռքի հայերը հայրենադարձ լինեին, կարճ ժամանակում նրանք էլ կամ նրանց որդիները կփոխեն իրենց լեզուն և արևելահայ գրականը միակ տիրույթ կդառնա»²²⁵:

Հայրենադարձած հայությունը, իհարկե, թեև ոչ կարճ ժամանակում, բայց փոխեց իր լեզուն: Սակայն մեծ գիտնականի մյուս կանխատեսումները չիրականացան: Նախ՝ հայրենադարձությունը սպասվող կամ ենթադրվող ծավալները չունեցավ: Հետո՝ Սփյուռքի հայության ջանքերը և ազգային զարթոնքը հզոր դեր կատարեցին արտերկրում հայության ինքնությունը և ամենից առաջ լեզուն պահպանելու համար: Եվ ապա՝ ավելի ուշ տեղի ունեցավ հակառակ գործընթացը՝ արտագաղթ դեպի սփյուռքահայ կենտրոններ, մասնավորապես Միացյալ Նահանգներ: Ակնհայտ դարձավ, որ արևմտահայերենը դեռ երկար ժամանակ կոչված է իրականացնելու ազգային լեզվի իր գործառնությունները Սփյուռքում և մնալու իբրև հայապահպանության ամենահզոր գործոն:

Կարծիք կա, թե մեր օրերում արտագաղթի բնական արդյունքը կլինի այն, որ Հայաստանից արտերկիր մեկնած հայությունը, գտնվելով արևմտահայ լեզվի միջավայրում, մի երկու կամ երեք սերնդի ընթացքում աստիճանաբար կթողնի արևելահա-

²²⁵ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Եր., 1951, էջ 553:

յերենը և կյուրացնի արևմտահայ գրական լեզուն (Մանվել Ասատրյան)²²⁶: Դժվար է այսօր համաձայնել այս կարծիքին: Դա հավանական կարող էր թվալ թերևս երկու տասնամյակ առաջ, երբ արտագաղթը դեռ այսպիսի ծավալներ չէր ստացել: Սակայն այժմ պատկերը փոքր-ինչ այլ է: Նման կանխատեսումները այսօր կարող են վերագրվել միայն Սփյուռքի ավանդական կենտրոններին, որտեղ արևելահայության սովորականով քիչ արտագաղթում: Բայց նույնը չենք կարող ասել Միացյալ Նահանգների, մասնավորապես այդ երկրի հայաշատ օջախների մասին: Արևելահայության արտագաղթի մեծ ծավալները Սփյուռքի այդ հատվածում ստեղծել են լեզվական մի միջավայր, որտեղ փոխադարձ և ուժեղ ազդեցության մեջ են արևելահայերենը և արևմտահայերենը, և որտեղ արևելահայերենը բնավ էլ միայն կրողի կամ ազդվողի կարգավիճակում չէ: Արևելահայերենի և արևմտահայերենի յուրօրինակ համադրությամբ այստեղ ձևավորվում է խոսակցական մի լեզու, որը, կարծում ենք, ուշադիր ուսումնասիրության կարիք ունի:

Արևմտահայերեն-արևելահայերեն փոխհարաբերությունների խնդիրը լուրջ քննարկումների առարկա դարձավ նաև վերջին տասնամյակներին: Անշուշտ, լեզվական կանոնավոր ու տնական շփումների համար այսօր ստեղծվել են նպաստավոր պայմաններ: Սփյուռք-Հայաստան փոխհարաբերությունների համապատկերում այս փաստը արձանագրում են նաև սփյուռքահայ մտավորականները:

Այսօր դարձյալ խոսվում է երկու ճյուղերի ոչ միայն մերձեցման, այլև դրանց միության մասին: «Մեկ ազգ, մեկ լեզու» կարգախոսով հնչում են մեկ միասնական ազգային լեզու ստեղծելու հայրենասիրական կոչեր: Ինչպես տեսանք, այդ գաղա-

²²⁶ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1991, թիվ 3, էջ 101:

փարը մշտապես հառնել է մեր առջև, երբ ազգային զարթոնքի առիթներ ենք ունեցել: Ցանկությունները միանգամայն ազնիվ են և, ինչպես արևմտահայերը կասեին, հայրենասիրական գետնին վրա անվերապահորեն ընդունելի: Սակայն գիտական տեսանկյունից վերն ասվածը հանգում է մեկ այլ եզրակացության. մեր գրական լեզուներից յուրաքանչյուրն ունի հնչյունական և քերականական համակարգերի իր ուրույն ամբողջությունը, հետևապես դրանց միացման ջանքերը, կրկնում ենք՝ միացման և ոչ թե մերձեցման ջանքերը հաջողություն չեն կարող ունենալ: Միությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրականանա հայ ժողովրդի դարավոր երազանքը, երբ նրա երկու հատվածներն ապրեն մի պետության կազմում:

Եվ այսպես, մերձեցման ի՞նչ հնարավորություններ ունեն այսօր մեր գրական լեզվի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը:

Դրանք, մեր կարծիքով, առկա են լեզվի բոլոր մակարդակներում՝ առավել կամ պակաս չափով:

1. Հնչյունական-արտասանական համակարգում և ուղղագրության մեջ.

Ինչպես հայտնի է, արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բաղաձայնական համակարգերը էականորեն տարբերվում են պայթական բաղաձայնների արտասանությամբ, **պ, կ, տ, ծ, ճ** շարքն արտասանվում է **բ, գ, դ, ձ, ջ**, իսկ **բ, գ, դ, ձ, ջ** շարքը՝ **փ, ք, թ, ց, չ**, ինչպես՝ **տասը – [դասը], գիրք – [քիրք], ջուր – [չուր], ձայն – [ցայն], բարև – [փարև]** և այլն: Մեր դիտարկումներով, վերջին շրջանում Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացումը, փոխադարձ շփումները, հավանաբար նաև լեզվի բնականոն ընթացքը արևմտահայ բանավոր խոսակցական լեզվում նկատելիորեն նվազեցրել են ձայնեղ-

խուլ հակադրությունը կամ փոխանցումը, և այսօր սփյուռքահայի կենդանի խոսքում հաճախ դժվար է լինում արձանագրել ձայնեղների անպայման և հստակ խլացում, և հակառակը՝ խուլերի ձայնեղացում:

Մերձեցումի իրական հնարավորություններ ունենք ուղղագրության մեջ: Արևմտահայերենը մի շարք բառերի համար ունի ուղղագրական տարբերակներ: Կարևոր քայլ կլինի այն, որ կանոններ մշակելիս (մեր կարծիքով՝ արդեն հասունացել է արևմտահայերենի կանոնական քերականություն ստեղծելու խնդիրը) նախապատվությունը տրվի ուղղագրական բոլոր այն տարբերակներին, որոնք ոչ միայն առավել տարածված են, այլև համընկնում են արևելահայերենի հետ, ինչպես՝ **ամբիծ>անբիծ, թակարթ>թակարդ, գմբեթաձև>գմբեթաձև, բամպակ>բամբակ, ծղրիթ>ծղրիդ, անոյշ>անուշ, խենդ>խենթ, հաջել>հաչել, փափաք>փափագ, փնտռել>փնտրել** և այլն: Նույնը կարող է վերաբերել բառերի հնչյունափոխական տարբերակներին, ինչպես՝ **արենակից//արյունակից, գյուղացություն//գյուղացիություն, բջիջային//բջջային, մանիշակագույն//մանուշակագույն, հասկնալ//հասկանալ, խոշորնալ//խոշորանալ, վագցնել//վագեցնել** և այլն:

Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման տեսանկյունից այսօր քննարկվում է նաև միասնական **ուղղագրության խնդիրը**: Առաջարկվում է դարձ կատարել դեպի գրաբարի կամ ավանդական ուղղագրություն: Հարցի քննարկումը, անշուշտ, ունի պատճառներ: Սակայն կարծիքը, թե մեր երկու գրականների և առհասարակ հայության երկու հատվածների մերձեցման հիմնական խոչընդոտը առկա ուղղագրական տարբերություններն են, անհիմն է: Արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բուն տարբերությունները ուղղագրությամբ չեն պայմանավորված: Դրանք առկա են լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական-արտասանական համակար-

գլից մինչև շարահյուսություն: Եվ ուղղագրության խնդիրը եղած տարբերությունների ընդամենը մի հատվածն է: Բայց, կրկնում ենք, հարցը քննարկումների կարիք ունի, և այստեղ նույնպես հնարավոր են իրական փոխգիշտումներ՝ առանց խախտելու հին կամ նոր ուղղագրության հիմնարար սկզբունքները:

2. Բառային մակարդակում մերձեցման հնարավորությունները շատ ավելի լայն են: Ակնհայտ են նաև տեղաշարժերը: Դա նկատվում է դեռևս երկու գրական տարբերակների ձևավորման շրջանում, երբ օտար բառերի հայերեն համարժեքները արևմտահայերենից արագ փոխանցվում էին արևելահայերենին: Ընդ որում, այս բնագավառում ազդեցություն կրողի դերում գերազանցապես հանդես է գալիս արևելահայերենը:

Բառապաշարային ներթափանցումները հատկապես լայն ծավալ ստացան 20-րդ դարի 50-ականներին պարբերական մամուլի և գեղարվեստական գրականության միջոցով, մեծ չափով նաև ներգաղթած հայության հետ փոխադարձ շփումների արդյունքում:

Մեր օրերում հարցի քննարկումները դրվեցին գիտական հենքի վրա: Ուշագրավ մի ուսումնասիրությամբ արևելահայ հեղինակներից Ռուբեն Սաքապետոյանը ներկայացրեց արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները՝ մասնավորապես գծելով այն հիմնական ուղիները, որոնցով ընթանում են բառապաշարային ներթափանցումները²²⁷: Ի՞նչ պատկեր ունենք այստեղ:

Բնական է, արևելահայերենը չի գործառում և չի կարող գործառել հիմք բարբառից փոխանցված և միայն արևմտահա-

²²⁷ Տե՛ս Ռ. Սաքապետոյան, Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Եր., 2004, էջ 175-184:

յերենին հատուկ բառապաշարի շերտերը, ինչպես, օրինակ՝ զուտ արևմտահայերեն բառերը՝ **քով, հոս, ասանկ, աղվոր, աղեկ** և այլն, կամ արևելահայ-արևմտահայ հնչյունափոխական տարբերակները, ինչպես՝ **ընել, ըլլալ, ըսել, իյնալ, քնանալ, մոռնալ** և այլն: Բայց ահա արևելահայերիս համար բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից են եղել և են արևմտահայերենի մի քանի այլ բառաշերտեր, ինչպես.

առաջին՝ բառակազմական տարբեր բաղադրիչներով կազմված բառեր, օրինակ՝ **հեռատեսիլ, գրատուն, ընթերցատուն, գրադատ, հրապարակագիր** և այլն,

երկրորդ՝ փոխառյալ օտար բառերի դիմաց հայերեն նորակազմություններ, որոնցից հազարավոր օրինակներ արևելահայերենում այսօր արդեն գործածության մեջ են, ինչպես՝ **տարածաշրջան, խոսնակ, ատենախոսություն, ահաբեկչություն, ինքնաձիգ, ամբոխավար, համայնավար, ենթակայական, հանրահավաք, համույթ, կաճառ, երգահան, համացանց, արժենիշ, հեռավար, նվագավար, նախարար (մինիստր իմաստով), նախագահ (պրեզիդենտ իմաստով), կարգախոս** և այլն,

երրորդ՝ արևմտահայերեն բառային միավորներ, որոնք արևելահայերենում չունեն բառային արտահայտություն և դրսևորվում են բառակապակցությամբ, ինչպես՝ **ճչակ – ձայնալին ազդանշան, տանողչեք – տանելու վարձք, օդուժ – օդային ուժեր, վերաքաղ – անցած նյութի կրկնություն, առթել – առիթ տալ, արյունել – արյուն գալ, կուսակցել – կուսակից լինել, կուսակցապետ – կուսակցության ղեկավար, շաքաթավերջ – շաքաթավա վերջին օրեր:**

3. Փոխազդեցության առանձին դրսևորումներ կարելի է արձանագրել նաև ձևաբանության մեջ: Այս դեպքում կարծես թե ազդեցություններ կրողի դերում առավելապես հանդես է գալիս արևմտահայերենը: Այսպես՝ արևմտահայերեն բանավոր

խոսակցական լեզվում գործածական է դարձել **ով** դերանվան արևելահայերենի **ովքեր** հոգնակին՝ **որոնք** ձևին գուգահեռ: Կամ՝ արևմտահայերենում **մեզի, քեզի, ձեզի** տրական հոլովածները երբեմն փոխարինվում են արևելահայերենի կազմություններով՝ **մեզ, քեզ, ձեզ**: Այս իրողությունն արդեն հանդիպում է արևմտահայ գրավոր խոսքում, ինչպես՝ Պոլսում հրատարակվող «Ակօս» թերթում մեզ հանդիպած հետևյալ օրինակը. «Աշնանային մռայլ օրը կարծես պայծառացաւ ու տաքացաւ, քանզի մեզի համար հաճելի անակնկալ մատուցուեցաւ. **մեզ** (փոխ.՝ *մեզի*) այցելեցին խումբ մը սփյուռքահայեր»²²⁸:

Կամ՝ բուն հատկացուցչի՝ որոշիչ հոդով գործածությունը, որը դասական արևմտահայերենի կանոնն է, այսօր գրավոր խոսքում հաճախ փոխարինվում է արևելահայերենին բնորոշ անհոդ գործածությամբ, ինչպես՝ **տօնավաճառի վայրը, գարիի տոպրակը, անձրևի կաթիլները, կազի ոտնակին** և այլն²²⁹:

Նմանապես՝ կանոնական է կապի խնդրի պաշտոնում սեռականի՝ որոշիչ հոդով գործածությունը, սակայն այժմ գրեթե հավասարապես գործածական են և՛ հոդով, և՛ անհոդ կազմությունները: Միևնույն հոդվածի մեջ հանդիպում են երկուսն էլ՝ **սրահի մեջ** և **սրահին մեջ**, կամ՝ **ջուրի մեջ** և **տոթին մեջ**, **նոր հատակագիծին վրա** և **մշակութային գետնի վրա**²³⁰: Իսկ հատուկ անունների դեպքում ընդհանուր միտում կա նախապատիվ համարելու առանց հոդի կազմությունը: Կարելի է նշել հոլովման ու խոնարհման համակարգի նաև այլ իրողություններ:

²²⁸ «Ակօս», Կ. Պոլիս, 2008, թիվ 657:

²²⁹ Տե՛ս նույն տեղը:

²³⁰ Տե՛ս նույն տեղը:

Բայց կուզեինք անդրադառնալ այսօր նշմարվող մերձեցման մեկ այլ հնարավորության: Արևմտահայերենի ձևաբանական համակարգը համեմատաբար հարուստ է գուգաձևություններով: Քերականական իրողությունները կանոնարկողի խնդիրը պետք է լինի գուգաձևերից մեկի ընտրության դեպքում նախապատվությունը տալ լեզվական կանոնի շրջանակներում գործող և ընդհանրական դարձած այն կազմություններին, որոնք համընկնում են արևելահայերենի իրողություններին: Այս դեպքում մի շարք կետերում մենք կունենանք ընդհանրություններ, ինչպես, օրինակ՝ **անունի/անվան, հարսեր/հարսներ, դուռեր/դռներ, թողուցեք/թողեք, մի՛ փախիր/մի՛ փախչիր, խոսցնել/խոսեցնել** և այլն:

Հասկանալի է, որ խոսքը քերականական միայն առանձին կազմությունների ընդհանրության կամ մերձեցման մասին է և ոչ թե համակարգային փոփոխությունների:

Ավարտելով մեր խոսքը՝ ուզում ենք ավելացնել հետևյալը. երկու գրականների գոյության փաստը այսօր ցավով չպետք է ընդունել: Այն պետք է ընկալել եթե ոչ մեր պատմության, ապա մեր լեզվի պատմական ընթացքի բնական արդյունք: Անհիմն են նաև այն պնդումները, թե մեր լեզվի գրական տարբերակները փոխադարձաբար անհասկանալի են, թե իբր այսօր սփյուռքահայը և հայաստանաբնակ հայը լեզվական հաղորդակցության մեջ դժվարություններ ունեն՝ նույնիսկ իրար չհասկանալու չափ: Արևելահայերիս համար այսօր էլ առանձնաբար դժվարություն չկա կարդալու և հասկանալու Վարուժան կամ Համաստեղ, իսկ Սփյուռքի հայը արևմտահայերենով լիարժեք հաղորդակցվում է արևելահայի հետ: Այլ հարց է, որ առավելագույնս պետք է ընդլայնենք շփումները, երկուստեք խորացնենք երկու ճյուղերի լեզվական իմացությունը, փոխադարձաբար օգտվենք լեզվական հարստություններից, մանավանդ բառապաշարից, իսկ մնացածը ժամանակի խնդիր է:

Մ Մ Մ 3. ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՐԺԵՔ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ

3.1. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ

(ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ)²³¹

Արշակ Զոպանյանը հայ մշակույթի մեծ երախտավորներից է: Նա իր ողջ կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդին, նրա պատմությանը, վեց տասնամյակից ավելի ծառայեց հայ գրականության զարգացմանն ու զորացմանը, եղավ հայոց դատի ամենագոն պաշտպաններից մեկը: Նրա կյանքի ու գործունեության մասին շատ է գրվել²³²: Այս հոդվածը փորձ է սեղմ ներկայացնելու մեծ մտավորականի համապատկեր գործը և տուրք է նրա ծննդյան 125-ամյակին:

²³¹ Տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (Եր., 1997, թիվ 3): Որոշ փոփոխություններով զետեղվել է մեր ««Անահիտ» հանդեսը» գրքում (Եր., 1999). այստեղ ներկայացված է հոդվածը:

²³² Մենագրություններից տե՛ս **Հ. Հապեշեան**, Արշակ Զոպանեան, կենսագրական գծեր, Փարիզ, 1924: **Գ. Ֆեներճեան**, Արշակ Զոպանեան, Փարիզ, 1938: **Տ. Ալեքսանեան**, Արշակ Զոպանեան, դիմանկարային ակնարկ, Աթենք և այլն: Ծավալուն ուսումնասիրություններ և հոդվածներ են հեղինակել Բ. Եղիայանը, Կ. Սասունին, Հ. Օշականը, Ս. Ճանաշյանը, Վ. Հայկը, Եղ. Պետրոսյանը, Գ. Ստեփանյանը, Վ. Գաբրիելյանը և շատ ուրիշներ: Վերջին տարիներին Զոպանյանի ժառանգության նկատմամբ եղած հետաքրքրության դրսևորումներից էին նրա գրական-գեղարվեստական գործի մի կարևոր մասի հրատարակությունը (**Ա. Զոպանյան**, Երկեր, Եր., 1988) և իհարկե **Կ. Դավաթյանի** շատ արժեքավոր մենագրությունը (Արշակ Զոպանյան, Եր., 1987):

Արշակ Չոպանյանը ծնվել է 1872 թ. հունիսի 15-ին Պոլսի Պեշկեթաշ արվարձանում՝ Ակնից սերված Հովիվյանների հին գերդաստանում։ Վաղ հասակում զրկվում է մորից։ Նրա դաստիարակությամբ զբաղվում են Էլպիս և Ագապի քույրերը, որոնց շնորհիվ էլ Արշակը դառնում է գրաճանաչ։ Հայրը՝ ոսկերիչ Հովհաննեսը, դժվարությամբ էր վաստակում ընտանիքի ապրուստը, թեև ճանաչված ու հմուտ արհեստավոր էր։ Արշակի մանկությունն անցնում է մայրական սիրո կարոտի, տխուր մտորումների, առանձնության և նյութական անապահով կյանքի մթնոլորտում։ Մի հանգամանք, որը ոչ միայն գեղարվեստական անմիջական արտացոլում է գտել նրա առաջին ստեղծագործություններում, այլև որոշակի ազդեցություն է ունեցել Չոպանյան անհատականության ձևավորման վրա, նրա տպավորվող հոգում ի հայտ բերել նուրբ ու զգայուն լարեր։

Կրթությունը ստացել է Մաքրուհյան (1882-1886) և Ղալաթիո նորաստեղծ Կեդրոնական (1887-1891) վարժարաններում։ Այդ տարիները Չոպանյանի համար եղան բնատուր ձիրքի հասունացման ու ստեղծագործական մտքի կազմավորման արգասավոր մի շրջան։ Ապագա գեղագետ քննադատը հաղորդակից դարձավ «գրականության քննադատական նրբակրկիտ ընկալումի առաջին»²³³ հայտնագործումներին, ձեռք բերեց տեսական գիտելիքներ։

Կրթության պակասը լրացվում էր ընթերցանությամբ. խառնվածքով ներհուն, թախճոտ, բայց և անհանգիստ ու եռանդուն պատանու վրա մեծ ազդեցություն են թողնում ռոմանտիկ բանաստեղծներ Ղ. Ալիշանը, Մ. Պեշկեթաշյանը, Պ. Դուրյանը, համաշխարհային գրականությունից՝ Հյուգոն, Բայրոնը, Ռիշբեն և Մյուսեն։ «Ահա՛ աստվածներս», – գրում է նա բարեկամ-

²³³ Ա. Չոպանյան, Իմ ուսուցիչներս, «Հայաստանի կոչնակ», Նիւ Յորք, 1930, թիվ 1, էջ 30:

ներից մեկին²³⁴։ Իր այս «աստվածների» հետ Արշակը հաճախ էր առանձնանում Ենի Մահալեի՝ մուշկ բուրոդ ծառաստանում և ժամերով ինքնամոռաց թաղվում երազների ու կապույտի գրավիչ աշխարհում։ Մանկության թախծոտ օրերի երազներով նրբացած ճաշակը հարուստ լիցքեր էր ստանում ընթերցանությունից։ Ձևավորվում էր բանաստեղծական մի խառնվածք, որը, սիրելի ուսուցիչներ Ե. Մուրատյանի, Ս. Թղյանի, Թ. Թերզյանի, Գ. Սրվանձտյանցի, Ե. Տեմիրճիպաշյանի խանդավառ հոգածությամբ իմաստավորվելով հայ գրականության ու մշակույթի նկատմամբ մեծ սիրով, հետո այնքան ներդաշնակորեն պիտի հյուսվեր հրապարակախոս-քննադատի ինքնատիպ տաղանդի հետ։

Գրական նախափորձերը բանաստեղծություններ էին, գերազանցապես սիրո ու բնության գեղեցիկ պատկերներ։ Իսկ հետո՝ արձակ էջեր, գրական-հրապարակախոսական հոդվածներ, թարգմանություններ (ֆրանսերենից հայերեն, հայերենից ֆրանսերեն) և այլն։

Պատանության օրերից Չոպանյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել եվրոպական մշակույթի նկատմամբ՝ փայփայելով Ֆրանսիայում ուսումը շարունակելու երազանքը։ Սակայն նյութական սուղ պայմանները հնարավորություն չեն տվել այն իրականացնելու։ Ավարտելով Կեդրոնականը՝ նա աշխատանքի է անցնում Կ. Պոլսի հայկական դպրոցներում, իսկ «Հայրենիք» ազգային-գրական և քաղաքական օրաթերթի հիմնադրումից հետո (1891) Արփիար Արփիարյանի կողմից հրավիրվում է աշխատակցելու թերթին՝ իբրև օգնական-խմբագիր և մնայուն աշխատակից։ «Հայրենիքի» շուրջն են համախմբվում ժամանակի արևմտահայ մտավորականության ականավոր դեմքերը՝ Գ. Զոհրապը, Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականը, Ե.

²³⁴ Ա. Չոպանյան, Նամականի, Եր., 1980, էջ 13։

Տեմիրճիպաշյանը, Թլկատինցին, Լ. Սեդրոսյանը (Շանթ), Ե. Օսյանը, Մ. Կյուրճյանը և ուրիշներ: Չոպանյանին բախտ էր վիճակվել գործելու այդ նշանավոր մտավորականների ընկերակցությամբ, նրանց բարեբախտ ազդեցությամբ կրթելու հրապարակախոս-քննադատի իր միտքն ու գեղագետի ճաշակը: Շատ շուտով «Հայրենիքի» խմբագրատունը նրա համար դառնում է «այն միակ տունը Պոլսո մեջ ուր ամենեն ազատ, ամենեն գեղեցիկ, ամենեն կենսական գործը կատարելու բաղձանքը գոյություն ուներ»: «Հայրենիք դարձավ ամենեն ժողովրդական թերթը,– հավաստում է Չոպանյանը տասնամյակներ անց,– գոր մինչև այն ատեն ունեցած ըլլար Արևմտահայությունը, աղաներու տիրապետության տեղ դրավ մտավորականներու տիրապետությունը, զարգացուց քննադատական ոգին, գեղեցիկ գրականության սերը տարածեց ժողովուրդին բոլոր խավերուն մեջ»²³⁵:

«Հայրենիքին» գուգահեռ և նույնպիսի եռանդով Չոպանյանն աշխատակցում էր նաև 1892-ից Հրանտ Ասատուրի և Գրիգոր Զոհրապի նախաձեռնությամբ Պոլսում հրատարակվող «Մասիս» գրական շաբաթաթերթին, առանձին գրվածքներ ուղարկում «Արևելքին», տպագրվում արևելահայ պարբերականներում և ֆրանսիական լրագրերում²³⁶: Մեկը մյուսի հետևից Կ. Պոլսում լույս են տեսնում նրա առաջին գիրքը՝ «Արշալույսի ձայներ» (1891), «Թրթռումներ» բանաստեղծությունների ժողովածուն (1892), «Թուղթի փառք» հոգեբանական վիպակը (1892): Չոպանյանն իր ուժերը փորձում է նաև դրամատուրգիայի ասպարեզում՝ «Հայրենիքի» էջերում երևան հանելով «Մույթ խավեր» հինգ գործողությամբ դրաման: 1893 թ. վերջերին ա-

²³⁵ Ա. Չոպանյան, Լեւոն Բաշալեան եւ իր գործը / Լ. Բաշալեան, Նորավելպեր և պատմութեան, Փարիզ, 1943, էջ ԺԷ:

²³⁶ Ա. Չոպանյանը հանդես է եկել նաև գրական ծածկանուններով՝ Ճանթազիո, Օ. Պիծակյան, Թիթեռնիկ:

վարտում է «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը» մենագրական ուսումնասիրությունը (1894, Թիֆլիս), որը նրա գրականագիտական առաջին լուրջ աշխատանքն էր, միաժամանակ՝ Դուրյանի մասին գրված քննադատական անդրանիկ ծանրակշիռ հետազոտությունը, որով հիմք դրվեց մեծ բանաստեղծի ժառանգության գիտական ուսումնասիրմանը:

Այս հրատարակությունների առիթով հեղինակի գրական տաղանդը բարձր են գնահատում Ե. Տեմիրճիպաշյանը, Գ. Զոհրապը, Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Հովհ. Հովհաննիսյանը: Իսկ հետագայում Չոպանյանի այդ օրերի գործը արևմտահայ գրականության պատմաբան Հակոբ Օշականը բնութագրում է հետևյալ տողերով. «Իրապաշտ շարժումին լիությանը մեջ իր տաղանդը կազմավորող այս պատանին սխալ չըլլար ընդունիլ մանրանկար արևմտահայ գրականություն մը»²³⁷:

Երիտասարդ Չոպանյանի գրական դաստիարակության գործում պակաս կարևոր դեր չեն կատարել Կ. Պոլսի արվարձաններում՝ Օրթագյուղում և Գատըգյուղում, արևմտահայ երիտասարդ գրողների ուժերով պարբերաբար կազմակերպվող սենյակային գրական ասուլիսները, որոնց ակտիվ մասնակիցն էր նաև ինքը՝ Չոպանյանը:

1893-ի աշնանը «Մուր խավեր» պիեսի բեմադրությունից ստացված գումարով և բարեկամների օժանդակությամբ Չոպանյանին վերջապես հաջողվում է մի կարճ ժամանակով (մոտ մեկ տարի) մեկնել Փարիզ, ինչպես ինքն է ասում՝ «ագատ էթյուտներ ընելու համար»²³⁸: Այստեղ նա ունկնդրում է Մորբոնի և Քոլեժ դը Ֆրանսի դասախոսությունները, ներկա լինում արվեստի բազմաթիվ ցուցահանդեսների ու թատերա-

²³⁷ «Միօն», Երուսաղեմ, 1938, թիվ 6, էջ 186:

²³⁸ «Յոբելեան հայ մեծանուն բանաստեղծ Ա. Չոպանեանի վաթսունհինգամեայ գրական գործունեութեան», Փարիզ, 1950, էջ 68:

կան ներկայացումների, այցելում թանգարանները, հանդիպումներ ունենում և ծանոթություններ հաստատում ֆրանսիական մտքի ականավոր ներկայացուցիչների՝ Էմիլ Զոլայի, Ալֆոնս Դոդեի, Ժան Լորենի, Հանրի Պոեի և այլոց հետ: Չոպանյանը եղավ նաև եվրոպական այլ քաղաքներում՝ Լոնդոնում, Անվերսում, Բրյուսելում և այլուր: Տպավորությունները հարուստ էին և բազմազան: Այդ մասին են խոսում այն բազմաթիվ քրոնիկները, գեղարվեստական պատկերներն ու ռեպորտաժները, որ նա Փարիզից պարբերաբար ուղարկում էր պոլսահայ թերթերին ու հանդեսներին՝ «Բարիզյան քրոնիկ», «Թատերական քրոնիկ», «Բարիզյան պատկերներ», «Լուվրին մեջ պտույտներ» և այլ խորագրերով:

Նոր միջավայրը մեծ չափով նպաստեց Ա. Չոպանյանի գեղարվեստական ճաշակի զարգացմանը, ընդլայնեց մտահորիզոնը, հարուստ գիտելիքներ տվեց եվրոպական մշակույթի և հատկապես արվեստի նորագույն ուղղությունների մասին:

Փարիզից վերադառնալուց անմիջապես հետո (1894 թ. աշնանը) Չոպանյանը փորձ է անում հրատարակելու «Հայրենիք» օրաթերթի կիրակնօրյա գրական հավելվածը: Այդ փորձը, սակայն, ձախողման էր դատապարտված «Հայրենիքի» խմբագրի չկամության պատճառով: Շատ չանցած՝ նա ձեռնամուխ է լինում «Ծաղիկ» գրական-գեղարվեստական հանդեսի հրատարակմանը (Կ. Պոլիս, 1895 թ.)՝ այստեղ լիությամբ դրսևորելով նաև իր խմբագրական տաղանդը: Միաժամանակ Չոպանյանը շարունակում է մանկավարժական գործունեությունը Պոլսի հայոց դպրոցներում: Կեդրոնական վարժարանում նրան են հանձնվում նաև ֆրանսիական գրականության դասերը:

1894-96-ի աղետալի դեպքերը շրջադարձային նշանակություն ունեցան Արշակ Չոպանյանի կյանքում: Գրականության և արվեստի հրայրքներով ապրող երիտասարդ գրագետի առջև

անսպասելիորեն բացվեց իր ժողովրդի ողբերգական կյանքի դրաման: Պոլսի փողոցներում, Բոսֆորի ափերին նա ականատես եղավ այն ահավոր սպանդին, որ անդառնալիորեն սպառնում էր քաղաքակիրթ մի ամբողջ ազգի գոյությանը: Եվ նույն ժամանակ, երբ գավառներում ու մայրաքաղաքում համիդյան կոտորածները իրենց սև գործն էին կատարում, Եվրոպական մամուլի օրգանները կա՛մ բազմանշանակ լռում էին, կա՛մ էլ հակահայ հռովաճներով էին լցնում իրենց էջերը: Իսկ Եվրոպան ողողած երիտթուրքական ընդդիմադիր թերթերն ու հանդեսները ոչ միայն ձգտում էին ջարդերի ամբողջ պատասխանատվությունը բարդել հայերի վրա, այլև հերքում էին հայ ժողովրդի անգամ քաղաքակիրթ ազգ լինելու հանգամանքը, փորձում էին իրենց ընթերցողներին համոզել, թե «հայերը վիպասաններ, բանաստեղծներ, դասական ու նոր գրականություն չեն ունեցել, որ նրանց կուլտուրան նույն թուրքական կուլտուրան է»²³⁹: Այսպիսով, դարերի վիթխարի ժառանգության կտակառու մի ժողովուրդ ներկայացվում էր քաղաքագուրկ մի տարր, որն իր հեղափոխական խռովություններով իբր պատճառ էր դառնում զանգվածային կոտորածների: Թուրք գաղափարականների ու նրանց եվրոպական համակիրների որքան էլ անհեթեթ, որքան էլ կեղծ այսօրինակ հանգաբանությունները, այնուամենայնիվ, որոշ չափով ազդեցություն էին ունենում՝ ապակողմնորոշելու եվրոպական հասարակական կարծիքը հայերի մասին:

Քաղաքական այսպիսի պայմաններում խորապես գիտակցելով իր ժողովրդի արդար դատի պաշտպանության անհրաժեշտությունը և գնահատելով Եվրոպայի առաջադիմական ուժերի աջակցությունը՝ Չոպանյանը մի կողմ է դնում գրողի ու

²³⁹ Տե՛ս **Ջ. Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Եր., 1980, էջ 142:

բանաստեղծի խաղաղ կյանքը և մտնում է հասարակական կյանքի հորձանուտը՝ իր ուղղակի և անմիջական ծառայությունը մատուցելու ազգին: «Մինչև հայկական կոտորածները գոր Սուլթան Համիտ կազմակերպեց,– գրում է Չոպանյանը,– ես իմ ազգիս հանդեպ զգացած խորին սերս կ'արտահայտեի անոր գրականությունը ճոխացնել ձգտող աշխատանքներով միայն, բանաստեղծություններ կարդալը, բանաստեղծություններու ու գրական դեմքերու վրա ուսումնասիրություններ գրելը իմ միակ հրայրքս էր ու միակ հրճվանքս: ...Ջարդերը զիս ցնցեցին, իմ մեկուսացած գաղափարականի հանդարտությունս ամոթալից ու հանցապարտ ցույց տվին ինձի. կյանքիս ամենեն խորին կերպարանափոխություններեն մեկը կրեցի»²⁴⁰:

Փորձելով ի նպաստ հայկական դատի կողմնորոշել Եվրոպայի հասարակական կարծիքը՝ Չոպանյանը Պոլսից հայրենասիրական ոգեշունչ նամակներ է հղում Փարիզի իր ծանոթ մտավորականներին՝ Ռոշֆորին, Սևոինին, Հանրի Պոերին և այլոց, Պիեռ Քիառի միջոցով, որ այդ ժամանակ Պոլսում էր, թղթակցում է ֆրանսիական մամուլին: Բայց ջանքերն ի դերն էին ելնում: Պոլսի միջավայրը, ոստիկանական հալածանքներն ու խստությունները՝ մի կողմից, ֆրանսիական մտավորական շրջանների հետ անմիջական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը՝ մյուս կողմից, ստիպում են նրան 1895-ի աշնանը հեռանալ Պոլսից: Հանգրվան է դառնում Փարիզը, հանգրվան՝ հետագա ողջ կյանքի համար: Փարիզում սկսվում է նրա կյանքի ու գործունեության նոր՝ ավելի բեղմնավոր ու նշանակալից շրջանը:

Փարիզ հասնելուն պես Ա. Չոպանյանը անմիջական կապեր է հաստատում ճանաչված մտավորականների հետ, այցելու-

²⁴⁰ «Անահիտ», Փարիզ, 1901, թիվ 2, էջ 40:

յուններ տալիս հայտնի քաղաքական դեմքերի, ձեռնարկում իր ֆրանսերեն գրքերի ու ժողովածուների հրատարակությունը: Նրան ծանոթ ֆրանսիացի մտավորական գործիչները շուտով հասկացան, որ այդ ««երիտասարդ արևելքցին» գրագիտական բարձր տաղանդով օժտված էր և այն ասպարեզը զոր սկսած էր Պոլիս, ավելի մեծ փայլով կը շարունակեր Փարիզի մեջ...»²⁴¹ (Ֆրեդերիկ Ֆեյդի):

Արշակ Չոպանյանը մշակել էր գործունեության ուրույն ծրագիր, որի բնութագրական գիծը լուսավորականությունն էր: Այդ ծրագրի հիմնական կետերը նա բնորոշել է հետևյալ կերպ. «Ճանչցնել հայը՝ հայուն, հայը՝ Եվրոպային, Եվրոպան՝ հայուն»: Անսահման հավատ ունենալով իր ժողովրդի հոգևոր ուժերի նկատմամբ՝ Չոպանյանը մտածում էր, որ բազում արհավիրքներ տեսած հայ ժողովուրդը քաղաքակիրթ աշխարհին պետք է ներկայանա ոչ միայն գերազանցապես իր տառապանքներով ու ցավերով, կոտորածներով ու ողբերով, այլև առաջին հերթին իր հերոսական պատմությամբ, բարձրարվեստ մշակույթով, մանավանդ՝ մեծերի գրականությամբ, և աշխարհից պահանջի հարգանք ու հիացում իր քաղաքակրթական ձիրքերի նկատմամբ, մտահոգություն՝ իր ճակատագրի համար: «Կ'ուզեմ ըսել,– ֆրանսիական բեմերից հայտարարում էր հայ բանախոսը,– չէ թե հայ ժողովուրդին ի՛նչպես տառապելը, այլ այդ ժողովուրդին ի՛նչ ըլլալը»²⁴²: Եվ ապա՝ «Կը մտածեմ որ ազգ մը ուրիշ բանով իրավունք չունի հպարտանալու բայց եթե իր վարդերովը, այսինքն այն ամբողջ գեղեցկությամբը զոր հոգիեն կը հանե և մարդկության կը հանձնե»²⁴³:

Ահա թե ինչու հայ մտավորականը Փարիզում ազգային-մշակութային գործչի իր կենսագրությունն սկսեց եվրոպական

²⁴¹ «Ջարթոնք», Բեյրութ, 1952, նոյեմբեր 16:

²⁴² «Նոր կեանք», Լոնդոն, 1898, թիվ 11, էջ 166:

²⁴³ Նույն տեղում, թիվ 8, էջ 113:

հասարակությանը հայ ժողովրդի պատմության ու գրականության քարոզչությամբ, 1896 թ. հայտնի հասարակական (հետագայում նաև պետական) գործիչ Ժորժ Կլեմանսոյի առաջաբանով նա հրատարակեց «Հայկական ջարդերը» ֆրանսերեն գրքույկը: Կոտորածներին զոհ դարձած և ականատես հայերի նամականերից ու այլ փաստաթղթերից կազմված այդ ժողովածուն լայն տարածում գտավ, ազդեցություն գործեց: Մեծ արձագանք գտավ նաև մեկ տարի անց նրա թարգմանությամբ լույս տեսած «Զեյթուն» գիրքը (ֆրանսերեն)՝ նվիրված 1895 թ. Զեյթունի հայտնի ապստամբությանը: Նույն թվականի (1897) մարտի 9-ին Փարիզի ընդարձակ սրահներից մեկում Զոպանյանը հանդես է գալիս իր առաջին բանախոսությամբ՝ «Հայաստանը, իր պատմությունը, իր գրականությունը, իր դերը Արևելքի մեջ» թեմայով: Անատոլ Ֆրանսը, որ պատվավոր նախագահն էր այդ հանդիսության, հայ բանախոսին ներկայացնելով իր հայրենակիցներին, ասում է հետևյալը. «Հայ մըն է որ ձեզի իր երկրին վրա պիտի խոսի... Պ. Արշակ Զոպանյան մեզի պիտի ծանոթացնե գրականությունն այն երկրին զոր դժբախտություններեն միայն կը ճանչնանք: Պիտի պարզե մեզի հայ մտածումը դարերուն ընթացքին մեջ, և պիտի լսելի ընե մերթ դյուցազնական ու մերթ ողբագին ձայնը ժողովուրդի մը որ այսքան դարե ի վեր իր հայրենիքեն այրիացած կը տնե, կը տոկա, կը հուսա»²⁴⁴: Բանախոսությունը հրատարակվեց ֆրանսերեն առանձին գրքույկով (հայերեն օրինակը տեղ գտավ Լոնդոնի «Նոր կյանք» հանդեսի էջերում): Այն մեծ ընդունելություն գտավ Եվրոպայի մտավորական շրջաններում: Համակրական հոդվածներ հրապարակվեցին Ֆրանսիայի գրեթե բոլոր նշանավոր հանդեսներում: Իսկ բանախոսի տաղանդը և նրա ժողովրդի գրական հայտնությունը հիացմունքով ողջունեցին մտավոր Ֆրանսիայի անվանի դեմքերը՝ Ժան Ժորեսը, Ստ. Մալարմեն, Ժ. Ռոտենպաքը, Պ. Ադանը, Ֆ. Գոբեն,

²⁴⁴ Նույն տեղում, թիվ 11, էջ 166:

Լ. Տիերքսը և ուրիշներ: Նրանցից շատերն առաջին անգամ էին լսում հայ գրականության ու մշակույթի մասին:

Չոպանյանը հայ գրականության համամարդկային ու գեղարվեստական արժեքները ֆրանսիացի ընթերցողներին պարբերաբար ներկայացնում էր նաև հոդվածներով ու քրոնիկներով: Նույն 1896-1897 թթ. էլ նա ձեռնամուխ է լինում հայ հին ու նոր գրականության ֆրանսերեն հատընտիր ժողովածուները կազմելուն:

Արշակ Չոպանյանի հետագա ամբողջ գործունեությունը այլևս մեկ և բարձրագույն նպատակի իրագործումն է: Հայ գրականության բազմահատոր ժողովածուներ է կազմում ու հրատարակում թե բանախոսում եվրոպական բեմերում, միջնադարյան հայ մշակույթի արժեքներն է լույսի բերում թե ժամանակակից հեղինակներին ներկայացնում, խմբագրում թե գիտական ուսումնասիրություններ հրատարակում, իր ամենաակտիվ մասնակցությունն է բերում ֆրանսահայ գաղթօջախի հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպմանը թե մտորում արվեստի հավերժական գեղեցկությունների մասին, միշտ և ամենուրեք նրան մտահոգում է հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության անհրաժեշտությունը, նրա ազգային, քաղաքական և հոգևոր վերածնության խնդիրը:

Այդ մտահոգությունների ծնունդ էր նաև «Անահիտ» ազգային, գրական-գեղարվեստական հանդեսը (Փարիզ, 1898):

Ա. Չոպանյանի **հրապարակախոսության** մեջ իրենց արտացոլումն են գտել ժամանակի գրեթե բոլոր կարևոր խնդիրները, որոնք այս կամ այն չափով առնչվել են հայ կյանքին: Օբյեկտիվ ու համակողմանի վերլուծություններով է հրապարակախոսը արձագանքել դրանց, արձագանքել է զարմանալի հետևողականությամբ. հրատարակվել է հայկական դատը ներկայացնող մի նոր գիրք՝ Չոպանյանն առաջին գնահատողնե-

րից է եղել, հայ գաղութների ազգային-քաղաքական կյանքում փոփոխություններ են տեղի ունեցել՝ Չոպանյանն արտասահմանում առաջինն է արձագանքել, եվրոպական մամուլում լույս է տեսել հայոց մասին աննպաստ մի հոդված՝ հայ հրապարակախոսը նույն եվրոպական մամուլում առաջին պատասխանողներից է եղել: 1900-ին գումարվեց խաղաղության միջազգային համաժողով. հայ մամուլում Չոպանյանը հանդես եկավ «Հայկական խնդիրը և Լա-Հեի խաղաղության համաժողովը» ծավալուն հոդվածով: 1902-ին տեղի ունեցավ երիտթուրքական համագումարը, Չոպանյանը գրեց «Օսմանցի ազատականներու համաժողովը» ուշագրավ քրոնիկը: Նույն թվականներին հայ մամուլի էջերում հարց բարձրացվեց հնչակյան և դաշնակցական կուսակցությունների համատեղ գործակցության, Չոպանյանը բուռն ոգևորությամբ պաշտպանեց այդ տեսակետը իր շատ արժեքավոր «Միության խնդիրը» հոդվածաշարով, և այսպես շարունակ՝ և՛ ռուս-ճապոնական պատերազմի ու 1905-ի հեղափոխության, և՛ երիտթուրք հեղաշրջման ու Առաջին համաշխարհային պատերազմի, Մեծ եղեռնի, Հայաստանի Հանրապետության ու այլևայլ հարցերում:

1908-ին Ա. Չոպանյանը չտեղափոխվեց Պոլիս, ինչպես ինքն է ասում, որևէ համակրություն ու վստահություն չունենալով նույն թվականի հուլիսին Թուրքիայում հաստատված սահմանադրական կարգերի նկատմամբ և Փարիզը նկատելով լավագույն միջավայրը իր ազգային ու գրական-մշակութային գործունեության համար: 1908-ի աշնանը միայն կարճ ժամանակով նա եղավ Պոլսում ու Տրապիզոնում: Տեղի հակահայկական մթնոլորտը վերջնականապես նրան համոզում է իր որոշման իրավացիության մեջ: «Այդ մեկ ամսվա միջոցին ուր հոն մնացի,– գրում է նա,– Պեշիկթաշ՝ ուր կը բնակեի, թուրք ամբողջը երիտասարդ Հույն մը բռնելով ոստիկանատուն տարավ հոն ոստիկանության աչքին տակ կտոր կտոր ըրավ... Իրի-

կուն մը որ Ատոմ Յարճանյանին տունը հյուր էի, մեզի ըսին թե հետևյալ օրը խոհեմություն պիտի ըլլար չիջնել Պոլիս, վասն զի մոլեռանդ մահամետականները մտադիր էին ջարդ փորձել: Ատոմ և ես միասին իջանք Պոլիս: Փակ էին խանութները, Սթամպուլի փողոցները գրեթե ամայի էին, սակավաթիվ անցորդներուն դեմքերը՝ մոայլ ու սպառնազին, կամ անձկոտ: ...Ջարդը տեղի չունեցավ, բայց անոր շունչը կը տիրեր քաղաքին մեջ, անոր ոգին կենդանի, համառ դարանակալ կը սպասեր մթնոլորտին մեջ: ...Կովկասեն ես ուղղակի Փարիզ դարձա, ուր մնալ ու իմ հասկցած ձևովս մեր ազգին համար աշխատանքը շարունակել ավելի քան երբեք որոշած էի Պոլիս անցուցած մեկ ամիսէս հետո»²⁴⁵: Չոպանյանը զայրույթով է հիշում, որ Պոլսի հայ բեմերից հնչում էին «հուրիեթական» թրքաշունչ ոտանավորներ: Այդ օրերի ազդեցությամբ նա գրեց «Գեղոն ի պատիվ հայ լեզվին» նշանավոր արձակ քերթվածը և ուղարկեց Թեոդիկի «Ամենուն տարեցույցին» (1909): «Գեղոնը» շատ շուտով դարձավ ժամանակի ամենասիրված բանաստեղծություններից մեկը, անցավ դասագրքերի մեջ, արտասանվեց հայ և օտար բեմերում:

Պոլսից Չոպանյանը ուղևորվում է Կովկաս՝ կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Լինելով Էջմիածնում, Երևանում, Աշտարակում, նաև Բաքվում ու Թիֆլիսում՝ մոտիկից ծանոթանում է արևելահայության կյանքին, Գևորգ Բաշինջադյանի ընտանեկան սեղանի շուրջ հանդիպումներ ու գրույցներ է ունենում Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Կոմիտասի, Ավետիք Իսահակյանի, Վրթանես Փափազյանի և այլոց հետ: Այդ հանդիպումները, իհարկե, մեծ չափով օգնեցին նրան՝ ավելի լավ ճանաչելու արևելահայ կյանքը, մշակույթն ու գրականությունը:

²⁴⁵ «Անահիտ», 1930, թիվ 3, էջ 6-7:

1910-ականների սկզբին Չոպանյանը արտոնյալ պայմաններով հրավիրվում է աշխատակցելու «Մշակին»: Այստեղ մինչև տասնամյակի վերջը նրա ստորագրությամբ հրապարակվում են բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ ու քրոնիկներ, գրականագիտական նյութեր՝ «Ճշմարտությունը», «Ապագա», «Մեծագույն ցավը», «Հայկական մարտիրոսությունը լորդերու ժողովին մեջ», «Դեպի լույսը», «Մեծ հանգրվան մը», «Հայը անպարտելի է» և այլն: Դրանցում իշխող տրամաբանությունը սկզբունքային կողմնորոշումն է դեպի Ռուսաստանը՝ մի կողմից, մյուս կողմից էլ՝ ժողովրդի ապագայի նկատմամբ բռն ու անվերապահ հավատը, մի բան, որ շատ որոշակի երևում է նաև հենց վերը նշված հոդվածների վերնագրերից:

Հոկտեմբերյան հեղափոխության հարցում Ա. Չոպանյանը միանգամից չէ, որ կողմնորոշվեց: Նա չէր համակերպվում Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրի և դրանով իսկ կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերը հետ քաշելու փաստին: Ահա թե ինչու Փարիզի «Վերածնունդ» ամսաթերթի էջերում (որ խմբագրվել է նաև նրա կողմից՝ 1917-1918 թթ.) հանդես եկավ այդ իրողությունը քննադատող հոդվածներով:

Ա. Չոպանյանը սփյուռքահայ այն մտավորականներից էր, որ որոշ տատանումներից հետո ընդունեց խորհրդային կարգերի հաստատման իրողությունը Հայաստանում՝ նորաստեղծ Հայաստանը նկատելով հանգրվան հայ ժողովրդի քաղաքական պայքարի վերջնական իրագործման ճանապարհին, միաժամանակ՝ միակ իրական հիմքը հայ սփյուռքի գոյության համար:

Շուրջ երեք տասնամյակ նա անսպառ եռանդով Սփյուռքին է ներկայացրել Հայաստանի տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի նվաճումները, գործուն մասնակցություն ունեցել

հայ գաղթականության հոծ զանգվածները հայրենիք փոխադրելու գործում, տարիներ շարունակ գլխավորելով ֆրանսահայ գրողների միության վարչության նախագահությունը, լինելով Սփյուռքի տարբեր ընկերությունների ու կազմակերպությունների անդամ՝ մեծ դեր է կատարել Հայաստանի հետ նրանց կապերը ամրապնդելու հարցում: Այս իմաստով փաստորեն Չոպանյանը ամենամեծ հարգանք ու ժողովրդականություն վայելող մտավորական գործիչն էր Սփյուռքում: Հետաքրքիր է, որ հաճախ նա բանախոսության էր հրավիրվում այս կամ այն գաղութ՝ պարզապես սրտապնդելու տեղի հայությանը: Եվ Ամերիկայի, Եգիպտոսի ու Եվրոպայի հայ գաղթօջախներում նրա բանախոսություններում մշտապես առաջին տեղ էր հատկացվում Խորհրդային Հայաստանի իրականությանը:

Տասնամյակների տքնաջան ու անձնվեր աշխատանքով ստեղծված նրա ժառանգության մեջ այսօր հստակորեն գծագրվում է ինքնատիպ բանաստեղծի, արձակագրի, դրամատուրգի, խորագգաց ու բարձրաճաշակ քննադատի, եռանդուն խմբագրի ու հասարակական գործչի, թարգմանչի, բանասերի, արվեստագետի և բազմաթիվ այլ շնորհներով օժտված մեծ մտավորականի կերպարը:

Իր գեղարվեստական արձակը և չափածոն Արշակ Չոպանյանը ստեղծել է հիմնականում գրական գործունեության առաջին մեկ-երկու տասնամյակներին (1890-1900-ականներ): Գրական հետագա գործունեության ընթացքում նա հաճախ է անդրադարձել այդ գրվածքներին՝ վերահրատարակելով դրանք առանձին ժողովածուներով. «Տղու հոգիներ» (Փարիզ, 1923), «Դեմքեր» (Փարիզ, 1924, 1929), «Պատկերներ. երկերու ամբողջական ժողովածու» (Փարիզ, 1940), «Կյանք և երազ. երկերու ամբողջական ժողովածու» (Էմիլ Վերհառնի նամակ-առաջաբանով, Փարիզ, 1945), «Բանաստեղծություններ» (Պիեռ Քիառի

առաջաբանով, Փարիզ, 1949): 1952-ին գրում է «Հրաշքը» թատերգությունը՝ հինգ արարվածով (Բեյրութ) և այլն:

Որքան էլ խստորեն է Չոպանյանը դատում իր գրվածքների մասին, այնուհանդերձ, համոզված է, որ դրանք իր համար որոշակի և հաստատուն տեղ են ապահովում հայ գրականության պատմության նոր փուլում: Մի առիթով նա գրում է. «Կը կարծեմ սակայն թե ինչ որ արտադրած եմ իբր գուտ գրական գործ մնայուն որոշ տեղ մը արդեն իսկ ապահոված է ինծի հայ մատենագրության ժամանակակից շրջանի մեջ»: Այդ իսկ պատճառով էլ Չոպանյանը կարևոր է համարել իր կողմից «իբր գուտ արվեստի գործ արտադրված» էջերը վերահրատարակելու գործը՝ սեփական ձեռքով «կարգավորված և իրենց վերջնական ձևով հատորներու մեջ ամփոփված»²⁴⁶:

Բանաստեղծ Չոպանյանը պատկանում է 1890-1900-ականներին գրական ասպարեզ իջած այն սերնդին (Ինտրա, Մալեգյան, Հարությունյան, Մեծարենց), որն իր ստեղծագործությամբ արևմտահայ բանաստեղծության մեջ պայմանավորեց գեղարվեստական մտածողության նոր տիպի ձևավորումն ու զարգացումը: Այս շրջադասության մեջ առաջնության իրավունքը վերապահվում է Արշակ Չոպանյանին: Պեշիկթաշյանի և Ալիշանի ռոմանտիկական ավանդույթներից հետո նրա պոեզիան նոր որակներ էր բերում բանաստեղծություն, հաղթահարում իրականության գեղարվեստական յուրացման երևակայական, պաթետիկ աշխարհայեցողությունը, բանաստեղծական խոսքը ազատագրում ռոմանտիզմի երանգառատ պերճանքներից, ժողովրդային-խոսակցական կենդանի լեզվի բանաստեղծական կիրարկմամբ հրաժարվում գրաբարախառն ձևերից: Չոպանյանն առօրեական, անպաճույճ, անսեթներ զեղեցկությունների բանաստեղծ է: «Մեր նոր բանաստեղծության

²⁴⁶ Ա. Չոպանյան, Բանաստեղծություններ, Փարիզ, 1950, էջ է:

պատմությունը, շրջափոխությունը ոչ ոքի այնքան բան կը պարտին որքան Արշակ Չոպանյանին»²⁴⁷։ Հայ կյանքի արյունոտ իրադարձությունները նոր շերտեր ավելացրին նրա պոեզիային։ Միամանթոյի հետ նա առաջիններից էր, որ հնչեցրեց արևմտահայ հայրենասիրական նոր բանաստեղծության առաջին նվագները։ «Օրոր Մայր Հայաստանին» (1898), «Տեսիլ», «Երգ հարության» (1909), «Հայկական դյուցազներգություն» (1915), «Վերհիշում» (1917) բանաստեղծությունները մեր հայրենասիրական բանաստեղծության ուշագրավ էջերից են։

Գրականագետ Վլադիմիր Կիրակոսյանի բնութագրմամբ՝ Չոպանյանի ստեղծագործությունը մնում է 1890-ական թթ. առաջին կեսի բանաստեղծական որոնումների ամենաբնորոշ արտահայտությունը և 20-րդ դարասկզբի բանաստեղծական բուռն տեղաշարժերի ելագիծ ու նախապատմություն²⁴⁸։

Չոպանյան արձակագիրը իր ստեղծագործությունների համար հիմնական նյութ է ընտրել ընչազուրկ խավերի կյանքը։ Նրա հերոսը իրականության դառը փորձությունների առջև հայտնված մարդն է, խեղճն ու ոտնահարվածը, մուրացկանը, կույրը, «փողոցի աղջիկը», շրջմուլիկը, աղքատը, որբը, մահամերձը, գինեմուլը և այլն։ Հենց այս անուններով էլ վերնագրված են հեղինակի շատ պատմվածքներ, նովելներ ու պատկերներ։

Ա. Չոպանյանի արձակի գեղարվեստական ամենամեծ արժանիքներից մեկը կերպավորման հոգեբանական խորությունն է, «խեղճ մարդերու» դրամատիկ ապրումների, նրանց երազանքների ու ակնկալիքների, հույսերի, ցավերի ու ողբերգության, նրանց ներաշխարհի ներքին-հոգեբանական զննություն-

²⁴⁷ **Յ. Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 258։

²⁴⁸ Տե՛ս **Վ. Կիրակոսյան**, Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907 թթ., Եր., 1987։

նր: Պատահական չէ, որ արձակի ասպարեզում Չոպանյանը նախընտրում է գեղարվեստական պատկերի ժանրը, որն ըստ էության հոգեվիճակների, կյանքի բնորոշ պահերի ու բնության տեսարանների, դրության նկարագրություն-խոհ է՝ հագեցած բանաստեղծական պատկերավոր մտածողության ձևերով: Չոպանյանը դարձավ այդ ժանրի սկզբնավորողը մեզանում: Այդ մասին ինքն էլ ուշագրավ տողեր է թողել «Պատկերներ» համահավաք ժողովածուի առաջաբանում. «Ինձի կը թվի որ իմ սկզբնավորության շրջանիս գրված այդ էջերը իմ լավագույն արտադրություններս են: ...Այս «պատկեր»ներով կը կարծեմ թե գրական նոր սեռ մըն է որ ստեղծած եմ մեր մեջ»²⁴⁹:

Արշակ Չոպանյանի ստեղծագործությունները թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներով՝ ըստ արժանվույն գնահատվելով նաև օտար գրողների ու մտավորականների կողմից՝ Ա. Ֆրանս, Ա. Դոդե, Ֆր. Միսթրալ, Պ. Ադան, Ստ. Մալարմե, Գ. Մուրե, Պ. Քիառ, Յու. Վեսելովսկի և ուրիշներ: Էմիլ Վերհառնը լավ ծանոթ էր քերթվածների ֆրանսերեն թարգմանություններին և անկեղծ ոգևորությամբ է գնահատում դրանք. «Ձեր քերթվածները հաճույքով կարդացի,– գրում է նա հայ բանաստեղծին:– Դուք այլազան, կրակոտ, հզոր, քաղցր, ահագողեցիկ քնարերգակ եք և Մայր Հայրենիքին նվիրված ձեր քերթվածները բարձր ու ողբերգական վեհություն մ'ունին: Դուք ի ծնե բանաստեղծ եք»²⁵⁰: Եվ ապա՝ «Ձեր գործը զգայությամբ ու երևակայությամբ է համակ կազմված, սիրելիդ իմ բանաստեղծ, և ձեր երկիրը ձեր մեջ կը շնչե...: Չկա ձեր ցեղին վերաբերող բան մը զոր դուք յուրացուցած չըլլաք, այնպես որ մենք ձեր ձայնին մեջ կը լսենք ամբողջ ժողովուրդի մը որ կը

²⁴⁹ Ա. Չոպանյան, Պատկերներ. երկերու ամբողջական ժողովածու, Փարիզ, 1945, էջ է:

²⁵⁰ Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1909, թիվ 9, էջ 421:

խոսի, կը սիրե, կը տառապի, կ'ոգեվարի, առանց սակայն երբեք մեռնելու»²⁵¹: «Կշռությունները կրնան Ֆրանսայեն կամ Իտալիայեն փոխ առնված ըլլալ, մտածումը և արտահայտությունը հայկական են»²⁵² (Պիեռ Քիառ): «Բանաստեղծ մը, խորունկ, պերճախոս ու ազգասեր՝ հոգիի և բնության բանաստեղծ մը»²⁵³ (Ալֆոնս Դոդե):

Այսուհանդերձ, Ա. Չոպանյանի գրական ժառանգության լավագույն և ծանրակշիռ բաժինը քննադատությունն է:

Չոպանյան քննադատի գրականագիտական հայացքների ձևավորումն ու զարգացումը նկատելիորեն կապվում են Արևմուտքում ազդեցության մեծ ոլորտներ նվաճած կուլտուրապատմական գեղագիտական դպրոցի հետ: Հետևելով դպրոցի ուսմունքին՝ հայ քննադատը պաշտպանում էր գրական երկը իրեն շրջապատող և ծնունդ տվող հասարակական-պատմական միջավայրի գործոններով և հատկապես «ցեղային խարակտերի» ու ավանդների ազդեցությամբ բացատրելու սկզբունքը: Դպրոցի հիմնադիր և տեսաբան Իպոլիտ Տենի գեղագիտական համակարգում երիտասարդ Չոպանյանին ամենից առաջ գրավում էր նրա մեթոդաբանության գիտականությունն ու վերլուծական խորությունը: «Քննադատությունը այլևս գնահատում մը չէ պայմանադրական գեղեցկագիտության մը և իմաստասիրության մը համեմատ. վերլուծություն մըն է հիմա,– գրում է Չոպանյանը 1893-ին Տենին նվիրված իր հոդվածում:– ...Քննադատությունը գիտական աշխատության մը լայնությունը կ'առնե»²⁵⁴:

²⁵¹ Ա. Չոպանեան, Կեանք և երագ, Փարիզ, 1945, էջ է:

²⁵² Տե՛ս Ա. Չոպանեան, Բանաստեղծություններ. Յառաջաբան, Փարիզ, 1950, էջ ԺԲ:

²⁵³ «Բազմավեպ», Վենետիկ, 1909, թիվ 9, էջ 421:

²⁵⁴ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1893, թիվ 409:

Անշուշտ, կողմնորոշումը դեպի կուլտուր-պատմական գրականագիտական դպրոց սուկ գեղագիտական նախասիրություն չէր. մեծ չափով պայմանավորված էր հայրենական մշակույթի զարգացման յուրահատկություններով, հայ կյանքի կարիքներով:

Տասնիններորդ դարի վերջին տասնամյակին արևմտահայ գրականության մեջ «80-ականների» իրապաշտ մտայնությունից տարորոշվում է մի նոր հոսանք, մի նոր սերունդ, որը հետո անվանվեց արվեստագետ կամ գեղապաշտ սերունդ: Որոնումների իր ճանապարհին նորագույնների այդ սերունդը անշուշտ չէր շրջանցում ռեալիստ «80-ականների» գեղագիտական փորձը: Ընդհակառակը, առաջին հերթին հենվում էր հենց այդ փորձի վրա, արդարացիորեն գնահատում նրա նշանակությունը: Բնքը՝ Չոպանյանը, որին վիճակված էր դառնալ նոր շարժման մտավոր կազմակերպիչն ու առաջնորդը, տարբեր առիթներով խոստովանում է, որ իր գեղագիտական հետաքրքրությունները դեպի գեղապաշտ արվեստի ուղին կողմնորոշելու գործում վճռական դեր է կատարել «Արևելք» – «Մասիս» – «Հայրենիքի»-ի գրական խմբակը: «Արևելք – Մասիս-ի այդ խումբին շնորհիվ է դարձյալ, – գրում է նա, – որ ես մղվեցա հեռանալ ռոմանթիզմեն (գոր, սակայն, ամբողջապես երբեք չեմ լքած և գոհ եմ ատոր համար, որովհետև անոր մեջ հավիտենական ու բարձր գեղեցկության աղբյուրներ կան) ու ձգտեցա դեպ ի իրապաշտ, ավելի լայն բանաձևով մը՝ դեպ ի կենդանի, ուղղակի, անձնական գրականությունը, դեպ ի արդիական ոգին, գոր զուտ գրական մարզին մեջ ինձի ճանչցուց նաև ու նույն իսկ ավելի լայն կերպով... Եղիա Տեմիրճիպաշյան»²⁵⁵: Բայց և հենց նման գնահատումներում էլ շատ հստակ է այն իրողությունը, որ Ա. Չոպանյանը (նաև նորագույն սերունդի մյուս ներկայացուցիչները) «80-ականների» իրապաշտ

²⁵⁵ «Անահիտ», Փարիզ, 1934, թիվ 5-6, էջ 97:

արվեստի նվաճումները նախորդ սերնդի («հին դպրոցի») կանոնիկ վարդապետության հարձակումներից պաշտպանում էր արևմտահայ գրականության 90-ականների բարձրակետից՝ այդպիսի մոտեցմամբ ընդգծելով նույն «80-ականների» գեղագիտության սկզբնական շրջանի որոշ միակողմանիություններ: Հենց այդ դիրքերից էր նա իր քննադատական հայացքի տակ առնում Ա. Արփիարյանի գեղագիտության գաղափարապաշտ կամ օգտապաշտ ուղղվածությունը: Ճիշտ է, հակադրվելով օգտապաշտ մտածողության միակողմանիությանը, երիտասարդ Չոպանյանի գրական փորձը սկզբնական շրջանում չկարողացավ անհրաժեշտ կշռույթի մեջ դնել գեղագիտական մտքի նորագույն որոնումների բանաձևումը. տուրք տրվեց «արվեստը՝ արվեստի համար» տեսության առանձին դրույթների, եղան ծայրահեղ բնութագրումներ (ինչպես Արփիարյանի հարցում. «...ինչ որ կը պակսի իրեն, – գրում է Չոպանյանը 1892 թվականին, – գեղեցկագիտական զգացումը, արվեստագետի հոգին է»)²⁵⁶: Բայց դա որոնման ճանապարհի արտահայտություն էր: Երիտասարդ քննադատի զգայուն, ուշադիր ու վերլուծող հայացքը արևմտահայ մտավոր կյանքի անհանգիստ մթնոլորտում նշմարում էր բավական արագ կերպարանափոխություն՝ «մտքի արտադրությանց համար սեր, անհագուրդ ախորժակ մը գեղեցիկ բաներ լսելու և տեսնելու, ձգտում մը դեպի ինչ որ բարձր է: Այս բաները կ'սկսեն ի հայտ գալ, թեև տակավին տարտամ ու մասնական մեր նոր սերունդին մեջ, այն երիտասարդության, որ երեկ ելավ վարժարանի սեմեն դուրս և անոր մանավանդ, որ դեռ գրասեղաններու վրա կը հակի, – ամենքն ալ արդի լրագրության ու արդի գրականության ջերմ ազդեցության տակ»²⁵⁷: Իր գրական գոր-

²⁵⁶ «Մասիս», Կ. Պոլիս, 1892, թիվ 3959, էջ 70:

²⁵⁷ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (Երևան), Արշակ Չոպանյանի ֆոնդ, ձեռագիր՝ 633:

ծունեությունն ու ջանքերը Չոպանյանը հենց սկզբից էլ ծառայեցնում էր այդ սերնդի գեղագիտական հետաքրքրություններին: Նույն՝ 1892 թվականին «Արևելքի» էջերում նրա տված սահմանումը՝ «Մեր հայացքն ու հիացումը չենք զլանար ամեն բանի որ գեղեցիկ է²⁵⁸», արտահայտում էր նոր սերնդի ընդհանուր տրամադրությունը և մի յուրօրինակ նշանաբանի իրավունք ստացավ:

Արշակ Չոպանյանը քաջատեղյակ էր գրական տարբեր ուղղություններին ու հոսանքներին, շատ խորն էր ըմբռնում դրանց նշանակությունն ու իմաստը: Եվրոպական նորագույն գրական ուղղություններին նրա ծանոթության մասին շատ խոսուն է ու հետաքրքրական ժամանակակցի՝ Ա. Շիրվանզադեի խոսքը՝ գրված 1910-ին. «Ես միայն մի մարդ եմ ճանաչում հայ մամուլի ղեկավարների մեջ, որ ի մոտո ուսումնասիրել է և՛ սիմբոլիզմ, և՛ իմպրեսիոնիզմ, և՛ «տեկատան», և՛ ուրիշ շատ եվրոպական ուղղություններ: Այդ մարդը եթե կամենար, կարող էր հայ գրականությունը հարստացնել մի հոյակապ աշխատությամբ այդ ուղղությունների մասին: Այդ մարդը Արշակ Չոպանյանն է, որ Եվրոպայի սրտում ունեցել է և ունի բոլոր հարմարությունները, և որ գլխավորն է, տաղանդ ու ճաշակ՝ գրականության ու գեղարվեստական երևույթները հասկանալու և զգալու»²⁵⁹:

Չոպանյանի համոզմամբ՝ կարևորն այս կամ այն ուղղությանը պատկանելը չէ: Ժամանակի ճաշակն ու ըմբռնումները, աշխարհայացքը, «գեղագիտությունը», անշուշտ, մեծ կարևորություն ունեն գրողի համար, բայց էականը տաղանդն է, հանճարի ուժն ու անհատական խառնվածքի բնածին ինքնատիպությունը: «Շատ մը «նոր հոսանքներ» կրնան հիմնալ, տաղանդի գործը չի հիմնար... Իսկական քննադատությունը կը

²⁵⁸ «Արևելք», Կ. Պոլիս, 1892, թիվ 2454:

²⁵⁹ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1910, թիվ 4040:

գնահատե թե Թուրքենեֆն իբր տաղանդավոր **ռեալիստ** և թե Մեթերլինքը իբր տաղանդավոր խորհրդանշական, իրարմե տարբեր, բայց հավասարապես մեծ տաղանդներ»²⁶⁰։ Եվ ապա՝ «Նորերու ամբողջ գործը դասականի տեղ իրապաշտ կոչվիլը չէ, խնդիրը տեսնելու, զգալու, խորհելու եղանակին վրա է. մենք կ'ընդունինք այն եղանակը, որ ամենեն կենդանի ու հարուստ է»²⁶¹։ Սա սոսկ տեսական դրույթ չէր, այլ հանգամանորեն մշակված մի ծրագիր, որը իրացման էր դրվում նպատակային ու բանիմաց գործունեությամբ։

Այսպիսով, 90-ականների սկզբներին արևմտահայ գրական քննադատության՝ իբրև գործունեության իր յուրահատուկ սկզբունքներն ու խնդիրները հաստատող բնագավառի ինքնորոշումը վավերացված փաստ էր։ Եվ ահա, յուրացնելով կուլտուր-պատմական ուսմունքի դրական ավանդները և «80-ականների» գեղագիտության փորձը՝ արևմտահայ գրաքննադատության այդ ինքնորոշումը Չոպանյանը մղում էր գիտական քննության ու խոր վերլուծական գնահատման ուղին, նոր չափանիշներ առաջադրում գրական նյութի վերլուծությանը։ Այս իմաստով Չոպանյանի քննադատական հայացքների վերաբերյալ, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է այն պնդումը, որ նա «սկսած է մեր քննադատությունը... սկսելով առաջին լուրջ հետաքրքրությունները արվեստի վեճերու շուրջ»²⁶², և թե՛ Չոպանյանը «առաջին անգամն ըլլալով գրական որոշ դիմագծով և արվեստի որոշ ըմբռնումներու վրա հիմնված երկարաշունչ աշխատանք մըն է որ կ'սկսի։ **Գրական քննադատության դպրոց** մըն է, որ կ'սկսի իրմով»²⁶³։

²⁶⁰ Նուն տեղը, թիվ 4078։

²⁶¹ «Արևելք», Կ. Պոլիս, 1892, թիվ 2469։

²⁶² **Յ. Օշական**, Համապատկեր..., հ. 5, էջ 307։

²⁶³ **Բ. Եղիաեան**, Արշակ Չոպանեանի գրականութիւնը, «Պայքար», Բացառիկ թիւ, Բոստոն, 1952, էջ 245։

Արշակ Չոպանյանի քննադատական մեթոդին հատուկ է լայն համադրականությունը: Հայ գրականության երևույթները նա դիտարկում է համաշխարհային գրականության առնչություններում՝ արժեքայնության չափանիշ ընդունելով համաշխարհային արվեստի գեղարվեստական զարգացման մակարդակը: Այդ դիտարկումները հիմնվում են հայ և համաշխարհային գրականությունների պատմության և գրականության տեսության խնդիրների փայլուն իմացության վրա: Քննադատության մեջ Չոպանյանի նախասիրած ժանրը դիմանկարն է: Սեղմ, ընդհանուր գծերով քննադատը շատ հստակ ու դիպուկ է բնութագրում գրողի ստեղծագործական աշխարհը, նրա տաղանդի ամենաբնորոշ հայտանշաններով, գրական գուգահեռի փորձով տալիս գրողի ստեղծագործության ազգային ու համամարդկային արժեքը: Չոպանյանի քննադատական հայացքն ընդգրկում է պատմական վիթխարի մի ժամանակահատված՝ սկսած ժողովրդական անգիր բանաստեղծություններից, միջնադարյան քնարերգությունից մինչև Խ. Աբովյան, Պ. Դուրյան, Դ. Ալիշան, Մ. Պեշիկթաշլյան, Բաֆֆի, մինչև նոր հեղինակներ՝ Վարուժան, Սիամանթո, Թեքեյան, Իսահակյան, Թումանյան, Տերյան, Մեծարենց, մինչև խորհրդահայ և սփյուռքահայ գրականություն՝ Չարենց, Նորենց, Շիրազ, Կ. Զարյան, Շահնուր, Վ. Թաթուլ և ուրիշներ: Հայ նոր գրականության մեջ հազիվ թե կարելի է գտնել որևէ նշանավոր դեմք, որին կամ որի ստեղծագործությանը Չոպանյանը անդրադարձած չլինի: Իսկ համաշխարհային գրականության պատմության առանձին շրջաններին կամ հեղինակավոր ներկայացուցիչներին նվիրված նրա քննադատականներն իրենց վերլուծական մակարդակով ոչնչով չեն զիջում եվրոպական համբավավոր քննադատների կողմից նույն արժեքներին տրված գնահատականներին: Համոզվելու համար բավական է կարդալ դրանցից թեկուզ մի քանիսը՝ «Հյուսիսի գրականությունները», «Վիկտոր Հյուգո», «Հայնրի Հայնե», «Ֆրեդերիկ Միսթրալ», «Էմիլ Զոլա»,

«Պերնար Լազար», «Ժոզե-Մարիա տը Հերետիա», «Էմիլ Վերհարն» և այլն: Արվեստագիտական բարձր մակարդակով են գրված նաև արվեստի տարբեր ճյուղերի վերաբերող նրա բազմաթիվ հոդվածները:

Ա. Չոպանյանն այն բացառիկներից է, որ գրողի հաճախ առաջին իսկ փորձերում նկատել է իսկական տաղանդի հայտնությունը, խրախուսել նրա զարգացման ուղին: Իր գրական խորհուրդներով ու դիտողություններով նա օգնել է երեք սերունդի գրողների: Ռուբեն Զարդարյանը իր նամակներից մեկում Չոպանյանին գրում է. «Շատ բան պարտական եմ ձեզի: Առաջին քաջալերությունը ձեզմե լսած եմ իմ գրական սկզբնավորությանս մեջ և Ձեր գնահատումը բարերար եղած է ինձի»: Իսկ «Ցայգալույս» ժողովածուի հրատարակության առիթով ավելացնում է. «Ձեզմե կ'սպասեի քննադատություն մը անոր մասին, որովհետև, ինչպես գիտեք, Ձեր գրական ու գեղարվեստական քննադատութենեն զատ ես ուրիշ ոչ մեկ հեղինակություն կը ճանչնամ ներկա բովանդակ հայ գրականության մեջ, ռուսահայ թե տաճկահայ: Ձեր խոսքն է, որ կշիռ ունի ինձի համար, ուրկե կրնամ օգտվիլ միշտ»²⁶⁴: Վ. Թեքեյանը «անհամբեր» սպասում էր իր բանաստեղծությունների առաջին ժողովածուի («Հոգեր») «խոստացված քննադատականին»²⁶⁵: Սիամանթոն ուզում էր մեծ քննադատի «կարծիքն առնել» իր բանաստեղծության մասին²⁶⁶: Չոպանյանի «դատաստանին մեջ» Վարուժանը տեսնում էր ժամանակի «գեղարվեստական մտավորականության դատաստանին խտացումը»²⁶⁷: 1947-ին Չոպանյանի առաջաբանով լույս տեսավ Մառի Աթմաճյանի «Գողգոթայի շուշաններ» բանաստեղծությունների

²⁶⁴ «Արևմտահայ գրողների նամականի», Եր., 1972, էջ 236, 242:

²⁶⁵ Նույն տեղը, էջ 323:

²⁶⁶ Նույն տեղը, էջ 286:

²⁶⁷ Ղ. Վարուժան, Նամականի, Եր., 1965, էջ 31:

ժողովածուն: Այդ մասին սփյուռքահայ բանաստեղծուհին իր հիշողություններում գրում է. «Կը կարծեմ, որ իր հայրական սիրող սրտին կը պարտիմ այն ներբողները, որով Ուսուցիչս կը ողջունէր իմ տրտում երգերուս այս առաջին ծաղկաքաղը»²⁶⁸: Եվ վերջապէս, Մ. Զարիֆյանին, Համաստեղին, Ե. Չարենցին նվիրված նրա հոդվածները հեղինակների գրական գործերի առաջին լուրջ և ամենաբարձր գնահատումներից են: Սփյուռքահայ քննադատին անչափ ոգևորում էր Ե. Չարենցի խորապէս ազգային ու «քնարերգականորեն հեղափոխական» կերպարը. «Չարենց մեծագույն դեմքերէն մեկն է մեր ազգային բանաստեղծության ու հզորագույն քերթողն է Խորհրդային Հայաստանին», – սա է Չոպանյանի համոզումը²⁶⁹: Հեռավոր Սփյուռքից Չոպանյանը ողջունում է նաև Հովհաննէս Շիրազի մուտքը հայ բանաստեղծություն: Լավ է նկատել Նիկոլ Աղբալյանը. «Չոպանյան՝ կորյուն իր ճիրանէն կը ճանչնա, թէ ինչ տեսակ առյուծ պիտի ըլլա աս»²⁷⁰:

Չոպանյանը արվեստագետ խառնվածքի քննադատ-գրականագետ է՝ բանաստեղծական ներշնչումով, հարուստ երևակայությամբ: Սա թերևս անհատական-հոգեբանական այն հիմքն է, որտեղ ներդաշնակ միությանը հյուսվում են բանաստեղծի, արձակագրի, հրապարակախոսի, քննադատի ինքնուրույն նկարագրերը:

Այդ անհատականության մեջ բնավ չեն հակադրվում հրապարակախոս-խմբագիրն ու քննադատ-արվեստագետը: Չոպանյանի հրապարակագրության բնութագրական գիծը հրապարակախոսական վարպետության ու գեղարվեստական մտածողության, մտքի և զգացմունքի, պատկերի և հույզի զարմա-

²⁶⁸ Մ. Աթմաճյան, Հուշեր Ա. Չոպանյանի կյանքի վերջին շրջանէն, «Սովետական գրականություն», Եր., 1972, թիվ 6:

²⁶⁹ «Անահիտ», Փարիզ, 1946, թիվ 1, էջ 64:

²⁷⁰ «Պայքար», Բացառիկ թիվ, Բոստոն, 1952, էջ 26:

նալի գուգադրումն է, որը ինքնին հրապարակախոսական արտացոլման կարևորագույն մեթոդներից է: Նրա հրապարակագրական խոսքը խիստ տրամաբանական է, փաստարկված, բայց նաև՝ պատկերավոր, գեղարվեստական: «Ես միշտ եղած եմ բանաստեղծ և հրապարակագիր միանգամայն»,– գրում է Չոպանյանը իր հատորներից մեկի առաջաբանում²⁷¹: Բնութագրական է նաև Հ. Օշականի կարծիքը. «Ըսել անմիջապես որ այդ գետնին վրա (*նկատի ունի հրապարակախոսությունը - Յու. Ա.*) անոր վաստակը իբրև ծավալ չի տկարանար ո՛չ Եղիայի, ո՛չ Մամուրյանի, ո՛չ ալ Արփիարի արդյունքներուն առջև, իր ետին ձգելով մյուս ընկերները շարժումին: ...Չոպանյանի հրապարագրական գործին առթիվ սա հաստատումը այլապես կը պաշտպանվի մանավանդ որակով: Անիկա երբեք չէ մոռցած գրագետը իր մեջ երբ կը լրագրե: Ու այս ճշդումով վաստակն ալ կը ստանա առանձին նկարագիր»²⁷²:

Ուրոյն հետաքրքրություն է ներկայացնում Չոպանյանի **բանասիրությունը**: Հայոց հին դպրության և միջնադարյան մատենագրության էջերի հավաքման, հրատարակման և ուսումնասիրման գործում Չոպանյանը փաստորեն գուտ գիտական, բանասիրական աշխատանք չէ, որ կատարում էր: Նրան ամենից առաջ հետաքրքրում էր այդ էջերի գեղագիտական կողմը, դրանց գրական-գեղարվեստական նշանակությունը: «...Անոր մեջ տիրապետողը գեղեցկագիտական ձգտումն է,– գրում է Չոպանյանը՝ նկատի ունենալով իր բանաստեղծական գործը,– ...բանասիրական հարցերու վրա խոսած ատենս իսկ, հաճախ՝ գեղեցկագիտական տեսակետեն է, որ զանոնք կը նկատեմ...»²⁷³: Եվ ապա՝ «Ես բանասեր չեմ, գրականության

²⁷¹ Ա. Չոպանեան, Քերթուածներ, Փարիզ, 1908, էջ Ե:

²⁷² Զ. Օշական, Համապատկեր..., հ. 5, էջ 378:

²⁷³ «Անահիտ», Փարիզ, 1903, թիվ 3, էջ 215:

մարդ եմ»²⁷⁴: Այս առումով «գեղագիտական» որոշակի սկզբունքների վրա հիմնված Չոպանյանի բանասիրական աշխատանքը առանձնանում է 1890-1900-ականների հայ բանասիրության մեջ: Հավանաբար հենց այս հանգամանքը նկատի ունենալով արևմտահայ գրականության քննադատը, երբ գրում էր «Չոպանյան բնագիրներու վերլուծման մեջ կարկառուն շնորհներ երևան չբերավ, բայց ըրավ ավելին: Այդ բնագիրներուն տակ թաքնված հոգին էր որ քաղեց ու նետեց մեր վայելումին: Հոս է որ կը տարբերին բանասերն ու արվեստագետը»²⁷⁵: Անտարակուսելի է, սակայն, որ Արշակ Չոպանյանի կազմած և հրատարակած միջնադարյան հայ բանաստեղծության ժողովածուները, հեղինակած հոդվածներն ու ուսումնասիրությունները ունեին նաև գիտական ամենաբարձր արժանիքներ: Խոսքը նաև «Նահապետ Քուչակի Դիվանը» (1902), «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», (1910), «Հայ էջեր» (1912), «Հատընտիր էջեր քուչակյան տաղաշարքեն» (1926), «Հայրեններու բուրաստանը» (1940) հատորների մասին է:

Գեղարվեստական ու գիտական բացառիկ նշանակություն ունեցան նաև Արշակ Չոպանյանի կազմած հայ գրականության ֆրանսերեն ժողովածուները՝ «Հայ հին ու նոր բանաստեղծներ» (1902), «Հայ ժողովրդական երգեր» (1903), «Հայ աշուղներ» (1906), «Վարդենիք Հայաստանի» (1918, 1923, 1929): Դրանք մեր գրականությունը դուրս բերեցին միջազգային նոր ասպարեզ՝ արժանանալով ամենաբարձր գնահատության թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում²⁷⁶: Իրենց հերթին այդ ժողովածուները

²⁷⁴ Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. 235, վավ. 6 ա:

²⁷⁵ Թ. Օշական, Համապատկեր..., հ. 5, էջ 340:

²⁷⁶ «Հայ ժողովրդական երգեր» ֆրանսերեն հատորը արժանացավ ֆրանսիական ակադեմիայի մրցանակին, որը սահմանված էր օտար գրականություններից կատարված լավագույն թարգմանությունների համար: Իսկ

հիմք դարձան նոր հատորների ու նոր թարգմանությունների: Դեռ 1916-ին Լեոն «Հայոց գրականության հարցերը» մեծածավալ հոդվածում, ուշադրություն հրավիրելով այս խնդրի վրա, իրավացիորեն նկատում է. «Եվ եթե վաղը մի ուրիշ օտարագլի կամենա մոտենալ հայ սրտին ու զգացմունքին, նա էլ պիտի գնա նախ և առաջ որոնելու Չոպանյանին»²⁷⁷:

Եվ այսպես, Արշակ Չոպանյանի բանասիրական ու թարգմանչական գործունեությունը զուգահեռն ու շարունակությունն էր նրա հասարակական շահագրգռությունների և գրագիտական մղումների ու նպատակների: Իսկ խմբագրական գործը՝ այն ասպարեզը, ուր ամբողջ լիությամբ դրսևորվում են նրա տաղանդի բոլոր կողմերը, և ուր գործնական իրացման են դրվում նրա հասարակական ու գեղագիտական ծրագրերը. «Ծաղիկ»-ը սկիզբ դրեց գրական-գեղարվեստական նոր շարժման, «Անահիտ»-ը հայ մամուլի պատմության մեջ գրական-գեղարվեստական և գրականագիտական հանդեսի եզակիորեն հարուստ օրինակ է:

Արշակ Չոպանյանի գրական-հրապարակախոսական վաստակը պատկառելի է: Այն կարևոր նշանակություն ունի հայ հասարակական մտքի ու գրականության շուրջ կեսդարյա զարգացման պատմության շատ առանձնահատկություններ ըմբռնելու, նրա բնութագրական կողմերը բացատրելու իմաստով:

Արշակ Չոպանյանի երկարատև կյանքը (այն ընդհատվեց 1954-ին դժբախտ պատահարով) բացառիկ նվիրումի օրինակ է իր ժողովրդին, նրա պատմությանն ու մշակույթին:

1926-ին ֆրանսիական գրականությանը մատուցած ծառայությունների համար Չոպանյանը պարգևատրվեց «Պատվո լեգեոն» շքանշանով: Պարգևատրվել է նաև «Ռումինիո աստղ» շքանշանով:

²⁷⁷ «Հորիզոն», Թիֆլիս, 1916, թիվ 43:

3.2. ԸՆԴԴԷՄ ԹՈՒՐԲ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ²⁷⁸

Արեւմտահայ կեանքում տասնամեակներ շարունակ ազգային-քաղաքական կազմակերպությունների չգոյութեան կամ եղածների անգործութեան պայմաններում պարբերական մամուլն էր այն կենտրոնը, որտեղ ի մի էին գալիս ազգի իմացական ուժերը, հայ կեանքի տազնապներն ու յոյզերը: Մշտապես գործելով հսկողութեան ու հալածանքների պայմաններում, իսկ 19րդ դարի 50-60ական թուականներից՝ նաեւ ծայր առած ու հետզհետեւ սաստկացող օսմանեան գրաքննութեան ճնշման տակ՝ արեւմտահայ մամուլն իր յետեւում թողել է անչափ հարուստ ու բազմաշխատ գործունէութեան մի պատմութիւն:

Մեզանում՝ առանձին մենագրական աշխատանքների մէջ ու յօդուածներում, տարբեր առիթներով միայն ընդհանուր խօսք է ասուել օսմանեան գրաքննութեան անհեթեթութիւնների ու խստութիւնների մասին: Առաւել եւս, ուշադրութիւնից դուրս է մնացել արեւմտահայ մամուլի իրաւական դրութեան, նրա գաղափարական, մանաւանդ քաղաքական շարժառիթների ընդհանրացուած քննութիւնը: Ալբերտ Խառատեանի «Արեւմտահայ պարբերական մամուլը եւ գրաքննութիւնը օսմանեան Թուրքիայում (1857-1908)» գիրքը (Երևան, 1989) լրացնում է մի կարեւոր պակաս հայ հասարակական մտքի ու մամուլի պատմութեան հետազօտման այս հատուածում:

Գիրքն ընդգրկում է շուրջ կէտարեայ մի ժամանակահատուած՝ 1857-1908 թթ. արեւմտահայ պարբերականների հասարակա-

²⁷⁸ Տպագրվել է «Ազատամարտ» շաբաթաթերթում, Եր., 1991, թիվ 37:

կան զարգացման ընթացքի եւ գոյութիւն ունեցող իրաւական դրութեան հետեւողական քննութիւնը՝ սկսած 1857ի Թանգիմաթի ռեֆորմներից մինչեւ կանխարգել գրաքննութեան հաստատումն ու ծաւալումը, յանգում է համոզիչ եզրակացութեան. մամուլին պարտադրուող սահմանափակումները ծաւալում էին արեւմտահայ պարբերականների հասարակական դերի աճին զուգընթաց, նրանց գործունէութեան ակտիւացմանը համապատասխան:

Բացում է մէկ այլ ճշմարտութիւն եւս. օսմանեան գրաքննութիւնը խիստ հետեւողական ու ծրագրաւորուած քաղաքականութեան մի արտահայտութիւնն է եւ իր հիմքում ունի ամենից առաջ **քաղաքական շարժառիթներ**, որոնց բացայայտման առումով գիրքը պատմագիտական անվիճելի արժէք ունի: Այստեղ հետեւողական ու հաշուեկշռուած քննութեան են դրում Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական կեանքի բոլոր այն կողմերը, որոնք իրենց անմիջական ներգործութիւնն են ունեցել մամուլի իրաւական վիճակի վրայ, պայմանաւորել նրա վերելքների ու վայրէջքների փոխաջորդող շրջանները:

Քննուող քաղաքական շարժառիթների կենտրոնում արեւմտահայոց ազատագրութեան խնդիրն է, որի ամենաաննշան արծարծումներն անգամ չափազանց հիւանդագին է ընդունել օսմանական գաղափարախօսութիւնը, հետեւաբար եւ գրաքննութիւնը: Եւ բռնութիւններն աճել են առաջին հերթին մամուլում՝ այդ խնդիրների արծարծմանը համապատասխան: Ալբերտ Խառատեանն այսպիսի ընդհանրացման է յանգում արեւմտահայ մամուլի բովանդակած նիւթերի, հասարակական առաջընթացում դրական դեր կատարելու կոչուած մամուլի գրեթէ բոլոր օրգանների գործունէութեան ու գործադրուող սահմանափակումների մանրամասն վերլուծութեամբ: Որ 1888ին հաստատուած կանխարգել գրաքննութիւնն իր բոլոր խստութիւններով յաջորդեց մամուլում հայկական հարցի ամենա-

բուն քննարկումներին եւ տարուեց ամենից առաջ այդ ուղղութեամբ, Ա. Խառատեանը ցոյց է տալիս դա՝ մէկ առ մէկ քննարկելով գրաքննութեան յատուկ ուշադրութեանն արժանացած նիւթերը:

Արեւմտահայ մամուլի իրաւական դրութիւնը քննաբանում է Կ. Պոլսում հրատարակուող եւրոպական կամ հպատակ ժողովուրդների մամուլի օրինակներով ու դրանց վիճակների համադրութեամբ: Այս սկզբունքն աւելի է ընդգծում թուրք գրաքննութեան հէնց հակահայկական ուղղուածութիւնը: Պարզվում է, որ բնաւ էլ միանշանակ չի եղել մօտեցումը եւրոպական ու թուրք մամուլի եւ հպատակ ժողովուրդների նկատմամբ. գրաքննութեան բռնադատումներն ամենից առաջ տարածւել են վերջիններիս ու մանաւանդ հայ մամուլի վրայ: Հայերէն թերթը մինչեւ հրատարակուելը անցել է գրաքննչական բազմաստիճան համակարգ՝ Ելդըզ, ոստիկանական տեսչութիւն, Բարձր դուռ, լուսաւորութեան նախարարութիւն եւ այլն: Ստեղծուել են կամայականութիւնների լայն հնարաւորութիւններ. այն նիւթերը, որոնք թոյլատրւում էին, ասենք, Ելդըզի կողմից, անմիտ քմահաճութեամբ կարող էին մերժուել գրաքննչութիւնում կամ՝ հակառակը: Պոլսահայ թերթերը լոյս էին տեսնում անկանոն, խափանման դատապարտւում մէկ աննշան բառի կամ նախադասութեան պատրուակով: Ազգային-վարչական կեանքի քննադատութիւններում իր հերթին դժվարութիւններ էր ստեղծում Հայոց պատրիարքարանը: Այս վիճակը շարունակուեց ընդհուպ 1908ի «Հուլիէթ»ը:

Այս ժամանակահատուածի վերլուծութեանը հետեւում է միանգամայն ճիշտ եզրակացութիւն. մամուլի նկատմամբ բռնադատումները, գրաքննութիւնը Օսմանեան Թուրքիայի քաղաքական գործելակերպի մի կարեւոր օղակն են, ծրագրաւորված, հետեւողական քաղաքականութիւն, պատմական ընթացքի արգասիք, նոյն բռնութեան մաս եւ շարունակութիւն:

Յատկապես յստակ է արժեւորում ատաջադիմական մամուլի առանձին օրգանների՝ «Թատրոն», «Մեղու», «Մանգումէի էֆ-քեար», «Ծաղիկ», «Ասիա» եւ այլն, գործունեութիւնը: Բայց եւ ուշադրութիւնից բնաւ դուրս չի մնում ազատական ու պահպանողական մամուլը:

Ժամանակագրական առումով յատուկ ուշադրութեան է արժանացել զարթոնքի շրջանի մամուլը, իսկ ահա 80-90-ականների թերթերի ու հանդէսների («Մասիս», «Արեւելք», «Հայրենիք», «Արեւելեան մամուլ», «Բիւզանդիոն» եւ այլն) հրապարակախօսական գործը նոյն մանրամասնութեամբ չի վերլուծուում: Թերեւս պատճառներից մէկն այն է, որ սաստկացող գրաքննութեան հետեւանքով այդ պարբերականներն այնքան էլ հաղորդակից չէին ազգային-քաղաքական խնդիրներին եւ հակուած էին առաւելապէս հոգեւոր-մշակութային հարցերի քննութեանը: Բայց մեր տպավորութեամբ՝ հէնց օսմանեան գրաքննութեան թելադրած պայմանների տեսանկիւնից մի առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այդ շրջանի մամուլի կատարած գործը հոգեւոր-մշակութային ու յատկապէս գրական ասպարեզում: Ճիշտ է դիտուած, որ հայ թերթերի «բանասիրական ու գրական մասը համեմատաբար անվթար էր թուում»: Բայց չնոռանանք, որ թուրք գրաքննութիւնը, ինչպէս միշտ, այստեղ նոյնպէս գործել է խիստ նպատակային ու հետեւողական: Այդ գրաքննութեան առանձնայատուկ «ուշադրութեանն» ու «վերաբերմունքին» են արժանացել բոլոր այն նիւթերը, թէկուզ գուտ գեղարուեստական, որոնք այս կամ այն չափով կարող էին բորբոքել ազգային ոգին, կարող էին ազգային արժանապատւութեան, հայրենասիրութեան ու ընդվզումի դասեր տալ հայ ընթերցողին: Իսկ այդ շրջանի գրականութիւնը հէնց այդպիսի միտումներ ունէր: Պատահական չէ, որ մամուլի էջերից անխնայ հալածուում էին արեւելահայ ճանաչուած գրողների ու գործիչների՝ Աբովեանի, Նալբանդեանի,

Բաֆֆու եւ այլոց անունները, ««Մշակ»ի եւ Արծրունիի անուններուն արտասանումը քաղաքական ոճրագործութիւն կը համարուէր» («Արեւելեան մամուլ», 1908): Արտասահմանում հրատարակուող հայերէն պարբերականների, այդ թւում նաեւ գրական հակուածութիւն ունեցող հանդէսների մասին խօսք լինել չէր կարող: «...Հաւատաքննական գրաքննութիւն մը մամուլն ու գրականութիւնը շղթայեց... Բիրտ խեղդում մըն էր, որ տեղի կ'ունենար... Գրաքննութիւնը բառեր, նիւթեր, սեռեր կ'արգիլէր, վերջ ի վերջոյ **ռտանաւոր գրելը արագիլեց** («Նոր կեանք», 1898): Այսպիսի պայմաններում, Արփ. Արփիարեանի խօսքերով ասած, արեւմտահայ խմբագիրներից լարախաղացի ճարպկութիւն էր պահանջում վայր չընկնելու եւ չջախջախվելու համար:

Այսպիսով, արեւմտահայ մամուլի նշուած շրջանի ամբողջական վերլուծման փորձն ինքնին, թէկուզ փոքր-ինչ համառօտ, բայց հայ մամուլի պատմութեան ընդհանուր շարադրանքում նորութիւն է եւ ունի գիտական անուրանալի նշանակութիւն:

3.3. «ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ». ՀԱՏՈՐ ԼԲ²⁷⁹

Հայագիտական հանդեսի հրատարակությունը դժվարին ու պատասխանատու գործ է: Երիցս բարդ ու դժվարին է այդ գործի կազմակերպումը Մփյուռքում: Պետական հովանավորության բացակայությունը, նյութական դժվարությունները, Մփյուռքի տարանջատ հատվածներում հեղինակներին մեկ նպատակի շուրջ համախմբելու անպատեհությունը գործոններ են, որոնք ուղղակի հերոսական ջանքեր են պահանջում կազմակերպիչներից գործը հաջողությամբ պսակելու համար: Եվ եթե նկատի ունենանք, որ «Հայկազեան հայագիտական հանդեսը» հրապարակի վրա է շուրջ քառասուն տարի, ապա պարզ կդառնա, թե ինչ հայրենանվեր ու հերոսական առաքելության են ձեռք արկանել հանդեսի աշխատակիցները: Առիթը ունենալով՝ ուզում եմ հնչեցնել նրանցից մի քանիսի անունները. **Երվանդ Քասունի**¹՝ հանդեսի հիմնադիր-խմբագիր 1970-1984 թվականներին, **Անդրանիկ Կռանյան**²՝ պատասխանատու խմբագիր 1991-ից՝ երկու տասնամյակից ավելի: Տարբեր ժամանակներում հանդեսի խմբագրական կազմի անդամներ ու պատասխանատուներ են եղել լիբանանահայ ճանաչված մտավորականներ ու գործիչներ՝ Պարույր Ադբաշյան, Ժիրայր Դանիելյան, Անդրանիկ Դաքեսյան, Արտա Էքմեքճի, Արա Սանջյան, Արմեն Յուրնեշյան և ուրիշներ:

Հանդեսը, լինելով Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի հրատարակությունը, Մփյուռքի հայագիտական հայալեզու հանդեսների շարքում ունի յուրահա-

²⁷⁹ Տպագրվել է «Մփյուռքագիտություն» տարեգրքում, Եր., 2012:

տուկ տեղ: Հայագիտական հանդեսները Մփյուռքում հինգն են՝ «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Հասկ հայագիտական տարեգիրք», «Տաթև հայագիտական տարեգիրք»: Մխիթարյանների երկու հրատարակությունները՝ Վենետիկի «Բազմավեպ»-ը և Վիեննայի «Հանդես ամսօրյա»-ն, վերջին տարիներին հանգրվանել են հայրենիքում և հրատարակվում են առավելապես հայրենի մասնագետների ջանքերով ու մասնակցությամբ և այս իմաստով մեծ չափով դադարել են ավանդական հայկական սփյուռքի գիտական միտքը ներկայացնելու հանգամանքից: Անթիլիասի «Հասկ»-ը հրատարակվում է զգալի ընդմիջումներով, ավելի հաճախ՝ միացյալ համարներով: Հալեպի «Տաթև» հանդեսը տպագրում է միայն հայալեզու հոդվածներ: Հրատարակվում է 2008-ից և ապավինում է առավելապես տեղական ուժերին. նյութերի մեծ մասը սովորաբար նվիրված է Սուրիո և հայ-արաբական հարաբերություններին:

Այս համապատկերի վրա **Հայկազյան հանդեսը** ունի իր ուրույն նկարագիրը. կայուն պարբերականությամբ (1991-ից սկսած) ներկայանում է ընթերցողին ամեն տարի և լույս է ընծայվում սովորաձավալ հատորներով. հանդեսի մինչև այժմ հրատարակված էջերի քանակը անցնում է 10 հազարից: Հոդվածներ է տպագրում հայերեն, արաբերեն և արևմտեվրոպական լեզուներով, հիմնականում՝ անգլերեն: Հանդեսին աշխատակցում են հայ և օտարազգի հայագետներ Հայաստանից և Մփյուռքի այլ համայնքներից:

Ի սկզբանե հանդեսը նպատակ է ունեցել քաջալերելու Մփյուռքի, մասնավորապես լիբանանահայ մտավորականների գործունեությունը հայագիտության բնագավառում, աջակցելու նրանց և Հայաստանի գիտնականների համագործակցությանը:

Հանդեսը հաջողություններ ունի իր հայագիտական գործունեության այս երկու ոլորտներում էլ: Միանգամայն բավարար չափով ապահովված է հայաստանյան հայագետների մասնա-

կցությունը հանդեսի վերջին տարիների հատորներում: Ներկա հատորը պարունակում է 15 արևելահայերեն և 7 արևմտահայերեն հոդվածներ կամ հաղորդում-գրախոսություններ՝ չհաշված օտարալեզու 8 նյութերը: Ավելին, «**Հոդված-ուսումնասիրություններ**» բաժնի հեղինակները միայն արևելահայեր են, ասել է թե՛ այդ բաժնի ծավալուն և հիմնարար 6 ուսումնասիրություններ գրված են արևելահայերենով: Հայաստանի գիտնականների գործակցության և ներգրավվածության առումով, ինչպես տեսնում ենք, մտահոգություն չկա: Բայց կա մտահոգություն մեկ այլ տեսակետից, որը վերաբերում է Սփյուռքում հայագիտության զարգացման հեռանկարներին: Հատորում արևելահայերեն նյութերի ակնհայտ գերակշռությունը խորհելու առիթ է տալիս: Հոդվածները արևելահայերենով կամ արևմտահայերենով գրելու խնդիրը չէ, որ քննարկում եմ, ոչ էլ մտահոգություններ ունեմ սուկ հայերենագրության նահանջի վերաբերյալ, քանի որ հայտնի է՝ սփյուռքահայ շատ մտավորականներ իրենց գիտական առաջընթացը ապահովելու համար պետք ունեն օտար լեզվով հրատարակվելու: Խոսքը հայկական սփյուռքում հայագիտական մտքի որակների և զարգացումների մասին է: Ակնհայտ է, որ սփյուռքահայ հայագետների մասնակցությունը գիտական հանդեսներին և առհասարակ սփյուռքահայ մասնագետների գործակցությունը հայագիտության ոլորտում նվազելու որոշակի միտումներ ունի: Այդ մասին է վկայում արևմտահայերենով նյութերի զգալի պակասը հանդեսի ներկայացված հատորում: «**Հայկազյան հանդես**»-ը կոչված է նախ և առաջ խթանելու հայագիտության զարգացումը հայկական սփյուռքի մեջ:

Հայագիտություն հասկացությունը այսօր էապես ընդլայնել է իր իմացական, ժամանակային և տարածական սահմանները. ներառում է ոչ միայն պատմության, արվեստի ու մշակույթի, գրականության ու լեզվի խնդիրներ, այլև ամենաբազմազան ի-

րակություններ հասարակական, ընկերային կյանքի ու տնտեսության ոլորտներից, ընդգրկում է ավանդական-դասականն ու ժամանակակիցը, ժամանակի խորքերը գնացող հինը և խիստ արդիականը, զուգահեռի ու համադրության մեջ է պահում հայրենական գիտությունը և այլ երկրների ու ժողովուրդների գիտական նորոքյա փորձը: Իրավացիորեն նկատված է, որ արդի հայագիտությունը «բազմաժամանակյա, բազմաճյուղ ու բազմամակարդակ շարունակականության մը արտահայտությունն է, որ կը կազմէ ամբողջական միավոր մը»: «Հայկազյան հայագիտական հանդեսը» հայագիտության այդ որակի կրողն է ու քարոզիչը: Դեռ ավելին, գիտական այն հանդեսներից է, որոնք իրենց քաղաքականությամբ ձևավորեցին հայագիտության այդ տեսակը հայկական սփյուռքում և հայրենիքում:

«Հայկազյան հանդեսի» բովանդակությունը խիստ բազմազան է ու ընդգրկուն: Նյութեր է ներառում հայագիտության բոլոր ասպարեզներից: Հանդեսի ստվարածավալ հատորները՝

- անդրադառնում են հայագիտությանն առնչվող բոլոր ժամանակների խնդիրներին՝ սկսած հնագույն շրջանից մինչև այսօր, մինչև սփյուռքագիտություն, Սփյուռք-Հայաստան արդի հարաբերություններ,
- գործակցության արգասավոր դաշտ են Սփյուռքի և Հայաստանի հայագետների համար,
- հյուրընկալում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակներին,
- ներդաշնակ համադրումի մեջ են պահում արևելահայերենն ու արևմտահայերենը, հայաստանյան և սփյուռքյան մշակույթն ու գրականությունը,

• քննարկումների ու վերլուծությունների դուռ են բացում հայագիտության գրեթե բոլոր ճյուղերի համար՝ պատմություն, գրականություն, քաղաքականություն, ազգագրություն, լեզու, կրոն:

Վստահաբար կարելի է ասել, որ նյութերի հարստությամբ ու բազմազանությամբ, այլև քննարկումների խորությամբ ու գիտականությամբ հանդեսը չի զիջում Սփյուռքում ու հայրենիքում հրատարակվող գիտական հանդեսներին:

Շնորհանդեսի բերված այս հատորը՝ երեսուներկուերորդը, հանդեսի բազմամյա և բազմամակարդակ գործունեության վկայություններից է: Ավելորդ չեն համարում մեկ-երկու անդրադարձով ներկայացնել հատորում ամփոփված որոշ նյութեր:

Հատորում գետեղված շուրջ մեկուկես տասնյակ հոդվածներ ու հաղորդումներ նվիրված են հայոց պատմության կամ հայերին առնչվող պատմաքաղաքական խնդիրների քննությանը: **Գրիգոր Աճեմյանի** ծավալուն հոդվածը խիստ ուշագրավ տեղեկություններ է տալիս ստալինյան բռնադատությունների մասին մամուլում տեղ գտած արձագանքների վերաբերյալ: Հասկանալի պատճառներով նույն շրջանի խորհրդահայ մամուլը պաշտոնական կցկտուր հաղորդագրություններ էր տալիս երևույթի մասին կամ տպագրում էր զանազան «գրական բանադրանքներ»: Սփյուռքահայ մամուլի այդ արձագանքների քննությունը նոր լույս կարող է սփռել հարցի վրա: **Մամվել Պողոսյանի** ուսումնասիրության նյութը բրիտանացի պետական գործիչ, դիվանագետ և արևելագետ Մարկ Սայքսի հայանպաստ գործունեությունն է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայկական պետականության վերականգնման գործում օտարազգի դիվանագետը ունեցել է կարևոր դերակատարություն, որը ոչ միայն արժանի է հիշատա-

կության, այլև փորձի յուրացման առումով միանգամայն ուսանելի է: **Արսեն Շահինյանի** հոդվածը գիտական արժեքավոր քննություն է 9-րդ դարում արաբական գերիշխանության պայմաններում ապագա ընդարձակ քաղաքական տարածության՝ Հայոց կայսրության հիմնարկումին, որի կորիզը դարձավ Բագրատունիների իշխանությունը: Հանդեսի «Քննարկումներ» բաժնում հայ և օտարազգի հայագետների՝ Զավեն Մսրրյան, Ռուբեն Սահակյան, Քորնել Նատի, Մաթիաս Պիորնլունտ և այլոց հրապարակումները պատմական ուշագրավ տեղեկություններ են տալիս հայոց ցեղասպանության, 1920 թվականի թուրք-հայկական պատերազմի նախօրյակին Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի, ՄԱԿ-ի «30-րդ պարբերության», Տրանսիլվանիայի հայ համայնքի և զանազան իրողությունների ու պատմական անցքերի մասին, մեկնում են հայոց միջնադարյան ձեռագրերի երաժշտաբուժության խորհուրդը: Երկու հետաքրքրական հաղորդումներում քննարկվում են ԺԸ դարում Արցախում ընթացող իրադարձությունները պետականության վերականգնման համար, և համոզիչ գնահատական է տրվում Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործ գորգերի նկատմամբ աղբյուրաբանական նկրտումներին:

«Գրախոսականներ» բաժնում ներկայացված են յոթ գրքեր, որոնք հայ և օտարազգի հեղինակների գործեր են՝ նվիրված ամենաբազմազան բնագավառների՝ «Հասմիկ Մարկոսյան. Էջեր հայկական Պալեի պատմութենեն», «Արծվի Բախչինյան. Հայաստան-Շուեռ. պատմական և մշակութային հարաբերություններ», «Սիրանուշ Գալստյան. Հայացք մեր կինոյին», «Վլադիմիր Բարխուդարյան. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (18-րդ դարի կես - 20-րդ դարի սկիզբ)» և այլն:

Առանձին ուշադրության են արժանի հայ գրականության զանազան հիմնախնդիրներին նվիրված մեկ տասնյակից ավելի հոդվածներն ու հրապարակումները: Բանասիրության դոկտոր **Սուրեն Դանիելյանի** մոտ 50-էջանոց ուսումնասիրությունը նվիրված է արևմտահայ-սփյուռքահայ գրականության ամենախոշոր դեմքերից մեկի՝ Հակոբ Օշականի գրական ժառանգության գնահատությանը: Քննության առարկան Օշականի քիչ ծանոթ վեպերից մեկն է՝ «Մաթիկ Մեղիքխանյան» մշակության վեպը՝ հրատարակված իր գրության թվականից շուրջ քառասուն տարի անց: Վեպում արևելահայ և արևմտահայ մշակության համակարգերի վերլուծության փորձը նոր ու ինքնատիպ որակներ է բացում այդ համակարգերի բաղադրիչ շերտերում՝ գյուղական միջավայրի ճանաչման հերոսի փորձն ու պատրանքները, Օշական-Աբովյան, Օշական-Մուրացան, Օշական-Դոստոևսկի զուգադրական քննության հարցեր ու եղանակներ, պատմագրության ու բարքագրության գծեր ու հատկանիշներ և այլն: Նույնպիսի մի երկի ծավալուն քննությանն է նվիրված բանասիրության դոկտոր **Վաչագան Գրիգորյանի** ուսումնասիրությունը: Հրանտ Մաթևոսյանի «Նանա իշխանուհու կամուրջը» վիպակը պիտի տպագրվեր 1962-ին, բայց լույս տեսավ դարձյալ 40 տարի անց, որովհետև երկի գաղափարական առանցքում խորհրդային տերության անկման տեսլականն էր: Վիպակը, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, «իրականության մասին ասված բաց, ճակատային խոսք էր, որ զայրացնում է պաշտոնական քննադատությանը: ...Բայց վիպակը նաև վկայում էր հեղինակի՝ կյանքն ընդարձակ սահմաններում ճանաչելու մեծ մղումի մասին»: Վաչագան Գրիգորյանի հոդվածը փոքրիկ հատված է Հրանտ Մաթևոսյանի գրական վաստակը ներկայացնող գրականագիտական մեծածավալ մի ուսումնասիրությունից, որը, կարծում

ենք, մոտ ժամանակներում լույս աշխարհի գալու պատեհությունը կունենա:

Հայ գրականության պատմության զանազան խնդիրներին ու գրական առնչություններին են նվիրված այլ հոդվածներ, քննարկումներ և հրապարակումներ: Հանդեսն ունի նաև հուշագրությունների և մահագրականների բաժին:

Հատուկ ուզում եմ շեշտել մի կարևոր հանգամանք: Զարմանքի ու հիացմունքի է արժանի այն ուշադիր վերաբերմունքը, որ հանդեսի խմբագրատան կազմը, մասնավորապես համարի պատասխանատուները դրսևորել են նյութերի ընտրության, խմբագրման ու սրբագրումի զանազան փուլերը անցնելիս: Դա արվել է բացառիկ խնամքով ու հոգատարությամբ:

3.4. Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ. «ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎԵԼԱՀԱ- ՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ-ՈՒՂՂԱԽՈՍՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»²⁸⁰

Վերջին շրջանում ակնհայտորեն մեծացել է հետաքրքրությունը արևմտահայերենի և առհասարակ արևմտահայ (սփյուռքահայ) մշակույթի նկատմամբ: Ապացույցը հրատարակվող մենագրական աշխատանքներն են ու գիտական ուսումնասիրություն-հոդվածները: Այդ հետաքրքրությունը թելադրվում է մեր հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժերով՝ Սփյուռք-Հայաստան հարաբերությունների ակնհայտ ակտիվացում, քաղաքական-տնտեսական-մշակութային կապերի ծավալում և այլն:

Խոսում ենք հայոց լեզվի երկու տարբերակների մերձեցման հնարավորությունների, փոխադարձ առնչությունների մասին: Փնտրում ենք հնարավոր ուղիներ, առաջարկում իրական և հավանական տարբերակներ այդ մերձեցումի համար. ուղղագրության փոփոխությունը առաջ է մղվում որպես փորձության քար:

Մտահոգությունը տասնամյակների, ավելի ստույգ՝ մեկուկես դարի պատմություն ունի: Բորբոքվում է ազգային զարթոնքի բռնկումով (հիշենք 19-րդ դարավերջի քննարկումները Մ. Աբեղյանի հոդվածի առիթով, 1910-ականներին Պոլսի «Ազատամարտ» պարբերաթերթում բացված բանավեճը և այլն):

Արևմտահայերենը չունեցավ պետական հովանավորություն:

²⁸⁰ Տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում, Եր., 2000, թիվ 3:

Տեսական-լեզվաբանական անհրաժեշտ միջավայրի բացակայությունը և արտալեզվական մի շարք գործոններ է՛լ ավելի բարդացրին գրական արևմտահայերենի մշակման գործընթացը: Այն պահպանվեց ու զարգացավ Սփյուռքի հայ մտավորականության բացառիկ նվիրումով: Այդ զարգացումի հետագա ընթացքի մեջ հետայսու մեծ բաժին ենք ունենալու նաև արևելահայերս՝ մեր գիտական ջանքով և հատուկ ուշադրությամբ:

Ռ. Սաքապետոյանի կազմած և հրատարակած բառարանը՝ «Արևմտահայերեն-արևելահայերեն բացատրական-ուղղախոսական բառարան», այդպիսի հատուկ ուշադրության և մասնագիտական ջանքի արտահայտություն է և ունի մի շարք արժանիքներ:

Սփյուռքում հրատարակված բառարանները (**Գայայեան Յ.**, «Բառարան գանձարան հայերեն լեզուի», Պէրյուք, 1983, **Կռանեան Ա.**, «Գործնական բառարան հայերեն լեզուի», Պէրյուք, 1987, **Ճերեճեան Գ., Տոնիկեան Փ., Տէր Խաչատուրեան Ա.**, «Հայոց լեզուի նոր բառարան», 2 հատորով, Պէրյուք, 1992 և այլն) առավելապես ընդգրկում են արևմտահայերենում գործածվող ընդհանուր բառազանձը: Մինչդեռ այս բառարանը ներկայացնում է մեր ազգային լեզվի երկու տարբերակների այսպես կոչված բառապաշարային զուգակշիռը, տրվում են գրական արևմտահայերենի տարբերությունները արևելահայերենից: Մեզանում մինչ այսօր գործածության մեջ եղած արևմտահայերենի միակ բառարանը (**Սարգսյան Ա.**, «Արևմտահայերենի բառարան», Եր., 1991), որը՝ իբրև առաջին փորձ, արժեքավոր է, ընդգրկում է չորս հազար բառ: Նոր բառարանը ներառում է շուրջ տասնվեց հազար բառ, թեև, ի տարբերություն նախորդի, չի տալիս բնագրային օրինակներ:

Նոր բառարանը նաև ուղղախոսական բառարան է: Այստեղ գիտական տառադարձությամբ տրվում են բառերի արևմտահայ արտասանությունները: Խնդրի արձարծումը դժվարություններ ունի, քանի որ հայկական տարբեր գաղթօջախներում գործող արևմտահայերենի ուղղախոսական նորմերը ընդհանուր և միասնական համակարգի բերելը ինքնին դյուրին հարց չէ: Ինչևէ, բառարանն այդ նպատակն ունի և իբրև այդպիսին՝ արևմտահայերենի գրական արտասանության նորմավորման առաջին և հաջողված փորձն է: Այս մարգում հեղինակին մեծավ չափով սատարել է արևմտահայերենի լեզվակիր լինելու հանգամանքը: Բացի այդ, բառի արևմտահայ գրությունն ու արտասանությունը անխարդախ ներկայացնելու և բառապատկերը չաղճատելու նպատակով հեղինակը գլխաբառերը տալիս է դասական ուղղագրությամբ, որը զուգահեռ հնարավորություն է տալիս ներկայացնելու բառի արևմտահայ և արևելահայ ուղղագրական տարբերակները:

Հայոց լեզվի բառապաշարը ընդհանուր է երկու գրականների համար: Այլ կերպ լինել չէր կարող. գործ ունենք մեկ ազգային լեզվի երկու գրական տարբերակների կամ ճյուղերի հետ: Տարբերությունները պայմանավորված են լեզվական և արտալեզվական մի քանի գործոններով՝ հիմք բարբառներով (Կ. Պոլսի և Արարատյան), հայոց լեզվի զարգացման նախորդ փուլերի նկատմամբ վերաբերմունքով և գերիշխող (դոմինանտ) լեզուների ազդեցություններով:

Հեղինակի բառընտրության սկզբունքները ենթակա են այս տրամաբանությանը: Բառարանում տեղ են գտել այն բառերը (կամ դարձվածային միավորները), որոնք արևելահայերենի բառապաշարի հետ համեմատելիս ի հայտ են բերում ձևային կամ իմաստային գոնե մեկ տարբերություն: Անտեսված չէ նաև այս կամ այն բառի գործածության նախապատիվ լինելը արևմտահայերենում: Ըստ այսմ՝ բառարանում ընդգրկված են՝

ա) զուտ արևմտահայերեն բառեր, որոնք հիմնականում գրական լեզվին են փոխանցվել բարբառներից (**հոս, աղեկ, էրիկ, խպնիլ**),

բ) հնչյունափոխական-ուղղագրական տարբերակներ ունեցող բառեր, որոնք արգասիք են հնչյունափոխական զանազան երևույթների (**ըլլալ, կեղդոն, մոռնալ, զարնել, բարտի, օճախ**),

գ) արևմտահայերենում նախընտրելի գործածություն ունեցող բառեր (**ճերմակ, հավկիթ, կակուղ, պաղ**),

դ) բառակազմական տարբեր կաղապարներով ու տարբեր բաղադրիչներով ստեղծված բառեր (**գործատուն, դեղագիր, աշխարհամարտ, հեռատեսիլ**),

ե) հայեցի նորակազմ բառեր, որոնց փոխարեն արևելահայերենը գործածում է փոխառություններ (**կաճառ – ակադեմիա, հրասայլ – տանկ, դրամատուն – բանկ, ընկերվարություն – սոցիալիզմ**),

զ) գրաբարից փոխանցված բառաշերտ, որ արևմտահայերենում անհամեմատ ակտիվ գործածություն ունի (**հանգույն, հիր, ուղիս, գուճ, հեստ, նայ, նուս, նամետ, քայո**):

Նորընձա բառարանագիրները անդիմադրելի միտում ունեն դիպվածային բառերով արհեստականորեն ուռճացնելու բառացանկը: Այդպիսի մոտեցմամբ արևմտահայ հեղինակներից, ասենք, Բնտրայի (Տ. Չրաքյան) կամ Հ. Օշականի (Հ. Քյուֆեճյան) ստեղծած այդօրինակ բառերի «համաբարբառը» կբավեր առանձին զրքերով լույսընծայումի բախտին:

Բառարանիս հեղինակը դույզն գայթակղությունը չի ունեցել անպայման բազմապատկելու բառերի թիվը այդ կարգի «դիպվածով»: «Բառարանում չեն ընդգրկվել դիպվածային բառերը, որոնք ստեղծվում են մասնավոր դեպքերի համար և ընկալելի են միայն համապատասխան շարակարգում» (էջ 3): Ընտրված

բառապաշարը մասնագետ բառարանագրի հետևողական աշխատանքի և գուսպ ընտրության արդյունք է:

Զգալի հետաքրքրություն են ներկայացնում բառարանում ընդգրկված դարձվածքները: Դրանք ուշագրավ են մի քանի առումով: Առհասարակ սփյուռքահայ բառարաններում ընդունված է դարձվածքները տալ մի գլխաբառի տակ (սովորաբար՝ բայական), որը շատ է դժվարացնում դարձվածքի որոնումը: Առաջնորդվելով ժամանակակից բառարանագրության պահանջներով՝ հեղինակը դարձվածքները դասակարգում է ըստ առաջին բաղադրիչի, իսկ այնուհետև՝ ըստ դրա հոլովական ձևերի: Բացի այդ, շրջանառության մեջ է դնում մի շարք դարձվածքներ, ինչպես նաև խոսակցական լեզվում հանդիպող կայուն կապակցություններ, որոնք արձանագրված չեն բառարաններում: Սա հնարավորություն կտա կորստից փրկելու լեզվական փաստեր, որոնք վեր են հանում կենցաղային-ազգագրական հետաքրքիր իրողություններ՝ **աչքի բաժին** – մի կտոր ուտելիք, որ ուտողները տալիս են իրենց ուտելը ախորժակով դիտողին, **մեքենան դառնալ** – մեքենան աշխատել, բանել, **պոչ բռնել** – հերթ պահել, **ակռային զարնել** – փորձել և այլն:

Քանի որ արևմտահայերենը ավանդաբար փորձում է թարգմանել նաև գիտատեխնիկական եզրաբանությունը, ուստի անհրաժեշտ է որոշակի հստություն՝ ճիշտ կողմնորոշվելու և բնութագրելու համար բնական և հասարակական տարբեր գիտությունների վերաբերյալ տվյալներն ու եզրերը: Ի պատիվ հեղինակի՝ պիտի ասել, որ նա հաջողությամբ է հաղթահարել այս դժվարությունը՝ տալով դրանց ժամանակակից բնութագրումները, ինչպես՝ **Ձայնդարձ** – Երաժշտական նշան, որը ցույց է տալիս բանալիի ձայնաստիճանը, **Ելեմուտք** – 2. Դրամական մուտք և ելք, հասույթ և ծախք, 3. Տնտեսական կացություն, **Մարդաբաշխութիւն** – Գիտություն մարդու կյանքի և մարմնի անդամների գործառույթի մասին և այլն:

Նորակազմ բառերի կողքին բառարանը տալիս է արևելահայերենին առավել ծանոթ փոխառյալ ձևերը՝ նպաստելով նորակազմության իմաստի ըմբռնմանը և այն արևելահայերենի մեջ ներմուծելուն: Դրանով բառարանը օգնում է շրջանառության մեջ դնելու հայերեն մի շարք նոր բառեր, ինչպես՝ **մրցատեան** (ժյուրի), **մրցարան** (արենա), **կրկներևույթ** (միրաժ), **գաղափարապաշտ** (իդեալիստ), **ազնվապետական** (արիստոկրատական), **բեկաբույժ** (տրավմատոլոգ), **նվագավար** (դիրիժոր) և այլն:

Բառարանագրությունը պահանջում է տևական աշխատանք և, անշուշտ, գիտական ստեղծագործ մտքի արտահայտություն է: Հաջողված լինելու պարագան ենթադրում է լեզվագիտական ուշագրավ դիտարկումներ և հիմնվում է իմացության ու փորձի վրա: Պահանջվում են ճաշակ և հատուկ լեզվագագողություն: «Արևմտահայերեն-արևելահայերեն բացատրական-ուղղախոսական» բառարանը այդօրինակ ստեղծագործ աշխատանքի ծնունդ է, որում առկա գիտական մոտեցման կերպերն ու սկզբունքները դուռ են բացում նոր վերլուծությունների: Կարծում ենք՝ սեփական դիտարկումների և գիտական փորձի արդյունք է արևելահայերենի համեմատությամբ արևմտահայերենում ուղղախոսական մի շարք նորմերի արձանագրումը. ինչպես՝ բոլոր բառերում **իւ** երկբարբառը (բացի **ուրթին** ածանցով ձևերից և բառասկզբի դիրքերից) արտասանվում է որպես քմայնացած **ու** (**ու**-ֆրանսերեն **ü** հնչյունի նման). համապատասխան բառերի արտասանությունը բառարանում տրվում է այդ հնչմամբ: Կամ՝ հայտնի է, որ արևմտահայերենում վերացել է **ռ-ը** արտասանական հակադրությունը: Զբացառելով դրանց դիրքային-արտասանական նրբերանգները, որոնք հնարավոր է ճշգրտել միայն փորձառական-հնչյունաբանական տեխնիկական միջոցներով, Սաքապետոյանը դրանք ներկայացնում է հատուկ տառանիշով՝ **ռ**:

Նույն փորձի արգասիք են փոխադրեցական հնչյունափոխության տարբեր դեպքերի մատնանշումը գաղտնավանկ ունեցող մի շարք բառերում (**բռնըկվել** – **բռնկիլ**, **անցընել** – **անց կացնել**, **անցնել** – **անց կենալ** և այլն), լծորդության փոփոխությամբ պայմանավորված սեռային տեղաշարժերը (**կանգնել** – **կանգնեցնել** – **կառուցել** (նբ.), **կանգնիլ** – **ոտքի ելնել** (չբ.), **ընկլուզել** – **խեղդել** (նբ.), **ընկլուզիլ** – **խեղդվել** (կբ.) և այլն):

Վերջինները իրավացիորեն տրվում են որպես առանձին գրվածքներ (համանուններ):

Կարելի է շարունակել թվարկումների այս շարքը: Բայց ասվածն էլ թերևս բավական է համոզվելու համար, որ այս բառարանը (ի դեպ, փորձաշատ բառարանագրի՝ Ս. Գալստյանի խմբագրական տնօրինությամբ) անհրաժեշտ և սպասված գիրք է և՛ արևելահայ, և՛ սփյուռքահայ գրագետների (արևմտահայերենի իմաստով) համար: Անհասկանալի է, որ այս կարգի բառարանը լույս աշխարհ է գալիս ընդամենը 500 օրինակով:

Ցանկալի է, որ բառարանի աշխատավոր հեղինակը շուտով արևելահայ և սփյուռքահայ լսարանին ներկայացնի նաև իր տեսական-բառագիտական փնտրտուքների արգասիքը, որի համար քննարկվող բառարանի լեզվական նյութը միանգամայն բավարար է:

Բառարանն ունի առանձին բացթողումներ: Հեղինակն ինքն էլ հավակնությունը չի ունեցել անսխալական լինելու: «Նման ծավալի աշխատանքը, – գրում է նա, – չի կարող գերծ լինել թերություններից, վրիպումներից, բացթողումներից» (եջ 9):

Երկու գրականների բառապաշարի համեմատական առավել մանրակրկիտ քննությունը, մեր կարծիքով, կպարզեր իմաստային կամ ձևային «գոնե մեկ տարբերություն» ցուցանող բառերի ավելի մեծ քանակ:

Այսպես, բառարանում տեղ չեն գտել արևմտահայերենում ուղղախոսական-հնչյունափոխական տարբերություններ ունեցող մի շարք բառեր՝ **քստմընելի, մինաուր, յառաջաբան, յառաջացեալ** (առաջ գնացած), **մրցաշարք** (մրցաշար), **ամարանոց** և այլն: Բառարանում վկայված են հատուկ անուններից բաղադրված հնչյունափոխական տարբերակներ՝ **ափրիկեան, սպանական, զուիցերացի** և այլն, բայց կարող էին լինել նաև նույն կարգի այլ բառեր՝ **պելճիքացի** (բելգիացի), **լիթվանական** (լիտվական), **արժանթինեան** (արգենտինյան), **ասորպեյճանական, ուքրանեական, սուրիացի, հռովմեական** և այլն: Տառադարձության զգալի տարբերություններ ունեցող հատուկ անունների՝ աշխարհագրական տեղանունների, անձնանունների ցանկը, որը, ի դեպ, տրվում է խիստ հաջող ընտրությամբ և երևան է հանում մինչ այսօր բառարաններում չարձանագրված մի շարք ուշագրավ տարբերություններ արևելահայերենից, կարելի էր հավելել մեր իրականության հետ առնչություն ունեցող այլ անուններով՝ **Պոսթրն, Պալքաններ, Շիքակո, Կլենտել, Քալիֆորնիա, Ալմաթի, Պանկլատեշ, Ինթերֆաքս** և այլն:

Կամ՝ եթե սկզբունք ենք որդեգրում բառարանում ներկայացնել արդի արևմտահայերենում գործածական առանձին օտար բառերի տառադարձված ձևերը՝ **օթոպիւս, մեթրո, քուերայ, ճենթըլմեն, ամպիոն, ֆուրպոլ**, ապա կարելի էր ըստ հնարավորին հարստացնել այդ բառաշերտը՝ օրինակ՝ **պենզին, գոնկրես, փարատօքս, քաուչուկ, քոնիակ, փանսիոն, փարթի** (պարտիա), **պեթոն** (բետոն), **պանք** (բանկ), **պասքեթպոլ, թաքթիք** (տակտիկա), **սերժան** (սերժանտ) և այլն:

Բառարանում երբեմն չի նշվում առանձին բառերի՝ արևմտահայերենում ընդունված այս կամ այն իմաստը, ինչպես՝ **ալ** բառը նշված երկու իմաստներից (1. մ. Այլևս: 2. շ. Եվս, նաև) զատ ունի նաև **ավելի** (է՛լ) բառ-մասնիկի իմաստ՝ «Յիշատակ-

ներս կը փախչին **ա՛լ** հեռուն» (Հ. Ա.), «....**ա՛լ** աւելի շեշտող նշանակութիւն» («Ազդակ»): **Վրայ** բառը արեւմտահայերէնում ունի նաև **մասին** կապի (վերաբերության) նշանակություն՝ «....անոր **վրայ** շատ խորհեցայ» (Շ. Շ.) և այլն:

Անշուշտ, ուշադիր ընթերցումը կարող է հայտնաբերել առանձին բացթողումներ բառապաշարի նաև այլ շերտերում, ինչպէս, ասենք՝ սեփական բառակազմական միջոցներով կամ բառակազմական տարբեր կաղապարներով բառերի շարքում (**առընթերադիր** – կապ, **հյուլէակայան** – ատոմակայան, **բոնատուն** – բանտ, **մէկ քանի** – մի քանի, **գերիքապաշտ** – սյուրճեալիստ, **առաջնախաղ** – պրեմիերա, **մեծավարպետ** – գրոսմայստեր, **դրապաշտություն** – պոզիտիվիզմ և այլն): Ըստ որում, ուշագրավն այն է, որ բառարանը սկզբունքորեն ներառում է մեր թվարկած բառերից շատերի՝ բաղադրիչներով այլ կազմություններ կամ ուղղակի արմատական ձևեր (**թօնուտ**, **Պէլճիքա**, **Արժանթին**, **հիւլէ**, **օրագրող** (չկա՝ **օրագրութիւն**) և այլն), որոնք իրենց հերթին, այնուամենայնիվ, որոշակի պատկերացում տալիս են հնարավոր այլ տարբերությունների մասին: Գրական արեւմտահայերէնը, ի տարբերություն արևելահայերէնի, անհամեմատ մերձ է իր բարբառային հիմքին: Դա ակնհայտորեն դրսևորվում է նաև բառապաշարում. գրական արևմտահայերէն են մուտք գործել խոսակցական ու բարբառային բազմաթիվ բառեր ու արտահայտություններ (դարձվածային միավորներ), որոնք այսօր դժվար են տրվում նեղբարբառային որակումի տրամաբանությամբ: Այսուհանդերձ, առանձին նման բառերի (նաև նեղ մասնագիտական եզրերի) առկայությունը կարծես այնքան էլ հարիր չէ բառարանի ընդհանուր-բացատրական բնույթին՝ **կինաբառիս** (սնդիկի ծծըմբուկ), **ակոռապլիկ** (ատամնաթափ), **ժոխք** (քրից արտադրություն), **մոլնգալ** (երերալ) և այլն: Նույն տրամաբանության հոլովույթին թերևս ավելի հեշտությամբ կտրվեին բարբառներից

(նաև գրաբարից) ավանդված մի շարք բառեր, որոնք, սակայն, չեն դարձել բառարանի սեփականությունը՝ **անքակ** (անբաժան), **թօն** (տեղատարափ), **կենդանաբանական պարտեզ** (կենդանաբանական այգի), **պան** (ոգի), **թափուր** (դատարկ), **ետին** (հետևը), **երթալով** (հետզհետե), **գլխուն զարնել** (գլխին տալ), **պիշ** (ուշադիր) և այլն: Ըստ որում, դրանց որոշ մասը (**պիշ, պան, թափուր**) ունի արևմտահայերենում նախընտրելի լինելու հատկանիշը: Մի դիտարկում ևս. բառարանի սկզբում մեզ խոստացված համառոտագրություններից մի քանիսը (բրբ., գվռ., գրք., խսկց., ոճաբ., անխր.) դժվար փնտրվող նշագրումներ են բառաշարքերում: Դրանց հետևողական պահպանումը, անշուշտ, բառարանը կդարձնե է՛լ ավելի գործածական մասնագիտական լսարանի համար:

Բառարանագրությունը դժվարին գործ է: Օրավուր փոփոխվող բառապաշարը ենթադրում է շարունակական և անընդհատ գործընթաց: Մանավանդ այսօր ամեն պահի ստեղծվում են նոր բառեր: Անհնար է դառնում ընդգրկել անընդգրկելին: Կոնկրետ բառընտրության մեջ էլ շատ հաճախ որոշիչ է դառնում անհատական լեզվագագոթությունը. տարակարծությունները դառնում են անխուսափելի և միանգամայն բնական:

Ռուբեն Սաքապետոյանի բառարանը, անշուշտ, լուրջ ներդրում է հայոց բառարանագրության մեջ, կարևոր գիրք է մասնագետների և առհասարակ հայ ընթերցողի համար: Իհարկե, նաև ազգանվեր գործ է, որը նպաստելու է ոչ միայն արևմտահայերենի, այլև սփյուռքահայ մշակույթի և Սփյուռքի հայ իրականության նկատմամբ մեր հատուկ ուշադրությանը:

3.5. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ. «ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»²⁸¹

Ալեքսանդր Մարգարյանը նոր ժամանակների այն լեզվաբաններից է, ովքեր շատ որոշակի վաստակ ունեն հայ լեզվաբանության և, առհասարակ, հայագիտության մեջ: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է՝ հայոց լեզվի բոլոր մակարդակները (հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն), աշխարհաբարի ձևավորման հարցեր, բարբառագիտություն, բառարանագիտություն և այլն:

Իր գիտական գործունեության ընթացքում Ա. Մարգարյանը կատարել է նաև ստուգաբանական հետազոտություններ, որոնք նրա կենդանության օրոք հրատարակվել են գիտական տարբեր հանդեսներում: Ստուգաբանական այդ մեկնությունները (կամ բառաքննական դիտողությունները, ինչպես ինքն է երբեմն դրանք անվանում) վերաբերում են առավելապես բարբառային բառերի և որոշ տեղանունների:

Ստուգաբանությունը թերևս ո՛չ միայն հայերենի ամենից հետմնացող գիտաճյուղերից է, քանի որ այն զարգացնելու համար հետազոտողից պահանջվում են ոչ միայն օտար լեզուների իմացություն և լեզվաբանական խորագույն գիտելիքներ, այլև ժողովուրդների պատմության, մշակույթի, հոգեբանության, աշխարհագրության և այլ ոլորտների վերաբերյալ հիմնավոր ու հաստատուն տեղեկություններ: Անհրաժեշտ են նաև լեզվական փաստերը, դրանց նախասկզբնական հնչյունական և

²⁸¹ Տպագրվել է **Ա. Մարգարյանի** «Ստուգաբանություններ» գրքում (Եր., 2015). ունեցել է «Խմբագրի կողմից» խորագիրը:

կառուցվածքային տարրերը, քերականական հատկանիշները, լեզվի պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները իրար համադրելու, մեկը մյուսով պայմանավորելու մտածական ու զգացական լուրջ կարողությունների բացահայտումը: Ստուգաբանությունը չի հավակնում անվերապահ և վերջնական ճշմարտությունների, բայց նշված գործոնների առկայությունը կատարված ստուգաբանական դիտարկումները մղում են որոշակի ճշգրտության:

Ա. Մարգարյանի ստուգաբանական մեկնությունները վկայում են հեղինակի հաստատուն և հմուտ կարողությունների մասին ու հիմնականում համոզիչ են: Հեղինակը ստուգաբանության համար հիմք է ընդունում բառերի հնչյունական և իմաստային կապն ու հարաբերությունը: Դա, նրա կարծիքով, ստուգաբանության ամենակարևոր պայմանն է: Ստուգաբանությունը առավել ամբողջական ու հավաստի է դառնում, երբ համադրվում են ստուգաբանական հայտնի՝ արտաքին համեմատության և ներքին վերականգնման մեթոդները: Լեզվաբանը շատ իրողություններ հաստատում է Գորիսի բարբառի (դրա ուսումնասիրությամբ նա զբաղվել է երկար տարիներ) լեզվական տվյալների հիմքի վրա: Կատարված վերլուծությունների մեծ մասը, հենց իր՝ հեղինակի մեկնաբանությամբ, լիակատար ստուգաբանություններ չեն, քանի որ ուղղակիորեն երևան չեն հանում արմատների ծագումը: Դրանք մեծ մասամբ քննված են «իրենց բաղադրության և հայերենի պատմական զարգացման ընթացքում կրած ձևափոխությունների տեսակետից»:

Մարգարյանի ստուգաբանական մեկնություններում կարելի է առանձնացնել երեք հիմնական շերտ.

ա) **Բառերի ստուգաբանական ճշգրտումներ** (սրանք թվով ամենից շատ են). այս դեպքում հեղինակը, հիմք ընդունելով նա-

խորդների, հիմնականում Հրաչյա Աճառյանի քննական դիտարկումները, ձեռքի տակ ունեցած նոր տվյալների հիմքի վրա կատարում է, այսպես կոչված, ստուգաբանական հաստատումներ՝ որոշ ճշգրտումներով ու հավելումներով: Այս բառերի մի մասը տեղանուններ են, որոնք տակավին լիարժեք ստուգաբանական մեկնություն չեն ստացել: Այսպես, օրինակ՝ **Գորիս** բառի ստուգաբանական տարատեսակ մեկնաբանություններից լեզվաբանը առավել հավաստի է համարում այն, որ բառի ծագումը իրապես կապվում է 13-րդ դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում հիշատակված **Գորայք** գյուղի անվան հետև «այլ բան չէ, քան հենց դրա **Գորայս** հայցականի հնչյունափոխական արտահայտությունը»:

Ստուգաբան-լեզվաբանը նմանապես շատ ուշագրավ մեկնություն է տալիս **Զանգեզուր** տեղանվան մասին: **Զանգեզուր**-ը ավանդաբար ստուգաբանել են՝ կապելով հայկական **Զագիկ** նահապետի **Զագեձոր** կամ **Զագկաձոր** («Զագերի ձոր») անվան ձևափոխությունների կամ աղավաղումների հետ: Մեկ այլ մեկնաբանությամբ՝ **Զանգեզուրը** ստեղծվել է հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորությամբ («Զանգը զոռ»): Երրորդ մեկնաբանությունը առավելապես ժողովրդական կեղծ ստուգաբանություն է, իբրև թե թուրքերի ներխուժումից հետո զանգերը զուր՝ այսինքն՝ ուշացած են հնչել («Զանգն է զուր»): Մեկ այլ տեսակետով՝ տեղանունը կապվում է մ. թ. 7-րդ դարում այդ բնակավայր ներխուժած **սկյութների** (սակերի) անվան փոփոխված ձևի (**սակ-ձագ-Զագեձոր-Զանգեզուր**) հետ: Ա. Մարգարյանը միանգամայն համոզիչ է հավաստի է համարում առաջին տարբերակը: Ասվածը հավաստելու համար նա ոչ միայն բերում է պատմական հավելյալ տեղեկություններ, այլև փորձում է դա հիմնավորել ու բացատրել նաև բառի արտասանությունը թուրքերենի

հնչյունական օրենքներին ենթարկվելու հանգամանքով, որի պատճառով **Զանգեզուր** ձևը չճանաչվելու չափ հեռացել է իր բուն՝ **Չագեձոր** ձևից:

Բառարաններում ստուգաբանվող բառերից այս շերտին են պատկանում նաև հետևյալները՝ **սմբել** (քաշվել, ցամաքել, չորանալ), **կաթ(ի)** (շիթ, կայլակ), **տեղեակ** (հմուտ, խելամուտ, գիտակ), **տրոփել** (բաբախել), **ապուպապ** (իրար հաջորդած կամ նախորդած պապերի սերունդ), **հենց** (այնպես, ուղղակի, իսկ և իսկ), **գրքույկ** (փոքր գիրք, փոքր գրքի նման տետրակ), **նան(ի)** (մայր, մայրիկ), **տերնդես** (**Տեր ընդ այս**. Տյառնընդառաջի եկեղեցական տոնը), **տկլոր** (բոլորովին մերկ, մերկանդամ), **ձվածեղ** (ծու+ա+զեղ), **հզոր**, **հլու**, **հմուտ**, **հպարտ**, **Խնածախ**, **Կոռնի ձոր**, **Քարահունջ** և այլն:

բ) **Տակավին չստուգաբանված բառերի ստուգաբանություններ**. դրանք հայերենի բարբառներում իմաստային և կառուցվածքային փոփոխությունների ճանապարհով առաջ եկած կամ մասամբ նաև գրական ծագում ունեցող բառեր են, որոնց երևան գալը «հիմնավորապես ապացուցված չէ» կամ անհայտ է մնում: Օրինակ՝ **կույզ** (**կույզ** գալ – կծկվել, մարմինը հավաքած պահել) բառի մասին մեր հին բառարանները (Հ. Աճառյան՝ «Գավառական բառարան», Ստ. Մալխասյանց՝ «Հայերեն բացատրական բառարան» և այլն): **Կույզ** ձևի ծագման մասին որևէ նշում չկա: Իր ձևերի տակ եղած փաստերի հիման վրա Մարգարյանը այս բառի ծագումը կապում է **գուճ** (ծունկ, ծնկի կոճ) ձևի հետ՝ համարելով գրաբարյան այդ բառի բարբառային տարբերակը: Հեղինակն ամենից առաջ դա փորձում է հիմնավորել դրանց միջև եղած իմաստային սերտ կապով ու հարաբերությամբ (**կուճ** բառի արտահայտած բոլոր իմաստները՝ *կծկում, ամփոփում, սեղմում* և այլն, կապվում են բացառապես **գուճ** բառի նշանակության հետ): **Գուճ**-ից **կույզ**-ի ծագումը, ըստ նրա, տեղի է ունեցել հնչյունական համապատաս-

խան օրինաչափությամբ. բառակզբի **գ>կ**, բառավերջի **ճ>չ** և բառամիջի **ու>ո** փոփոխությունները լեզվաբանը բացատրում է մի շարք բարբառներում ու խոսվածքներում առկա հնչյունափոխական իրողություններով՝ **գինի>կինի**, **փուճ>փեչ**, **հռնձ >հռնձ** և այլն: Փաստը հաստատում է ոչ միայն բարբառային իրողություններով. **գուճ>կոճ** ձևափոխության բավական վաղ սկզբնավորման և զարգացման ընթացքի մասին լեզվաբանի վկայությամբ գեղեցիկ փաստեր են հաղորդում նաև գրաբարն ու միջին հայերենը. բերվում են համոզիչ օրինակներ հայ հին մատենագրությունից, Նահապետ Քուչակի հայրեններից և Նաղաշ Հովնաթանի բանաստեղծություններից: Այս փաստերը կասկած չեն թողնում համոզվելու համար, որ այդ երկու բառերը իսկապես ծագումնաբանորեն սերտորեն կապված են միմյանց հետ:

Այս բառերի թվին պետք է դասել նաև բարբառային բազմաթիվ բառեր՝ **հավուր** (մի քիչ՝ մի որոշ ժամանակ), **արշա ընկնել** (մեծանալ, հայտնվել), **դառեալ** (կատաղած), **գամբ** (ալյուրի բարակ փոշի, որ նստում է ջրաղացի քարերին), **հորովել** (գութաներգ, վար անելու ժամանակ երգվող երգ), **սառուզար** (մեծ երկյուղ, տառապանք, տվայտանք), **լոխ** (ամբողջ(ը), բոլոր(ը)), **ճոշ** (բամբասանք, չարախոսություն), **մշուշ** (մառախուղ, մեղ, բալ), **ուղերձ** (մի բան ուղի՝ ճանապարհ դնել, ուղարկել) և այլն:

գ) **Ստուգաբանված բառերի նոր ստուգաբանություններ** (դրանք մեծ թիվ չեն կազմում). առանձին բառերի վերաբերյալ եղած ստուգաբանական մեկնությունները համոզիչ և հիմնավորված չեն թվացել լեզվաբանին, և նա փորձել է հակադրվել եղած տեսակետներին՝ բերելով իմաստաբանական, բառակազմական և հնչյունաբանական նոր փաստարկներ՝ իր տեսակետը ապացուցելու համար: Օրինակ՝ Մարգարյանին չհիմնավորված և անընդունելի է թվացել **աշան** բառի (նշանակում է կալի մեջ խրձերը ցրել, սփռել) ջահուկյանական ստուգաբանությո-

յունը, ըստ որի՝ բառը իր նշանակությամբ և ծագումով կապվում է **աշուն** բառի հետ (**աշան**-ի վերականգնված ենթադրյալ ձևը՝ *oskhon, գոթ. assns «հունձք»): Հիմք ընդունելով բառերի իմաստաբանական և հնչյունային կապն ու հարաբերությունը՝ նա գալիս է այն համոզման, որ **աշան**-ը ցույց է տալիս այնպիսի իրողություն (կա(լ)սել), որն իր նշանակությամբ կապվում է տարվա **ամռան** եղանակի հետ և հետևաբար **աշուն** բառի հետ չի առնչվում ու չի էլ կարող առնչվել: Բացի այդ, ինչպես գրում է Ա. Մարգարյանը, «**«(հ)աշան»** բառը սովորական ածանցավոր բառ է՝ կազմված **հաշ** արմատից և **ան**- ածանցից: Այդ են հաստատում ամենից առաջ հայերենի նշանավոր բառարանները, ըստ որոնց էլ **հաշ**-ը գրաբարյան **հաշել** («հալումաշ անել, մաշել, հյուծել, տկարացնել») բայի արմատն է, որ գալով շատ վաղ ժամանակներից գործածվել է անգամ անկախաբար...»: Մարգարյանը նաև մեկնաբանում է դրանց միջև եղած իմաստային կապը. «Եթե **հաշան**-ը կալի մեջ խրձերի ցրվածքն է, որ առաջ է բերվում նրանց տարաբաժանմամբ ու ցրումով, ապա նշանակում է ամբողջի մասնատում և կոպիտ ձևով ասած՝ նաև **հաշում, մաշում, հյուծում, նիհարում** է տեղի ունենում. իսկ սա էլ, անշուշտ, ցույց է տալիս, որ **հաշ** արմատը, **-ան** վերջածանցով կազմելով **հաշան** բառը, տվյալ դեպքում ոչ թե բարոյական, այլ ֆիզիկական նշանակություն է արտահայտում»: Իմաստային այդ կապը հաստատելու համար Մարգարյանը այլևայլ բառարաններից բերում է նաև համոզիչ այլ օրինակներ:

Խնձորեսկ տեղանվան մեկնությունները, թե գյուղանունը նախապես անվանվել է **Խնձոր** կամ **Խորձորսկ** և հետագայում, հնչյունափոխության ենթարկվելով, ընդունել է ներկայիս ձևը, Մարգարյանը համարում է ոչ հավաստի և բառը համարում է չստուգաբանված: Լեզվաբանի համոզմամբ՝ բառն ի սկզբանե միայն **Խնձորեսկ** ձևն է ունեցել՝ ըստ գրավոր աղբյուրների՝

Խնձորեակ, Խնձորեքսն, Խնձորէսք: Որ բառը ծագում է **խնձորեակ** նախաձևից, որն էլ ածանցավոր բառ է՝ կազմված **խնձորի** (խնձոր+ի) ծառանունից **–ակ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցից, լեզվաբանը դա պատճառաբանում և հաստատում է ինչպես իմաստապես ու արմատաբանորեն, այնպես էլ հնչյունաբանորեն:

Հեղինակի կողմից նոր մեկնությամբ ստուգաբանվում են նաև այլ բառեր՝ **պլպլալ, պսպղալ** (փայլփլել), **շկակել** (տաքանալուց շեկ գույն ստանալ, կարմրել), **աղի(ք)** (փորոտիք), **շաղախ** (ցեխ, շաղած հող, խառնուրդ, կաշուն զանգված՝ զանազան բաղադրությամբ), **լավ** (հորդ՝ տեղատարափ անձրև, հեղեղ) և այլն:

Ասենք նաև, որ գրքում մենք պահպանել ենք նյութի շարադրության՝ հեղինակի առաջադրած կառուցվածքը և ներկայացվող բառաշերտերի հաջորդականությունը: Առանձին սրբագրումներ ենք կատարել կետադրության մեջ և որոշ ձևակերպումներում՝ դրանք հարմարեցնելով ժամանակակից գիտական լեզվի կանոններին ու տերմինաբանությանը:

Մի խոսքով՝ սա այն է, ինչ, մեր կարծիքով, կուզեր հրատարակված տեսնել վաստակաշատ գիտնականը:



ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ծնվել է 1961 թ. Արտաշատի շրջանի Դեղձուտ գյուղում: 1978-1983 թթ. սովորել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում, որը գերազանցությամբ ավարտելուց հետո ուսումը շարունակել է ասպիրանտուրայում: 1987 թ. պաշտպանել է թեկնածուական («Գրականության հարցերը Ա. Զոպանյանի «Անահիտ» հանդեսում»), իսկ 2002 թ.՝ դոկտորական («Արևմտահայ բանաստեղծության լեզուն») ատենախոսություններ: 1988 թվականից մինչև այժմ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնում դասավանդում է լեզվաբանական մի շարք առարկաներ: 2008-2013 թթ. եղել է ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հիմնադիր վարիչը, 2013 թվականից ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչն է:

Գիտաուսումնական նախասիրություններն են՝ արևմտահայերեն, խոսքի մշակույթ և ոճագիտություն, ժամանակակից հայոց լեզվի քերականություն և այլն:

Հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրական աշխատանքների, ձեռնարկների ու դասագրքերի՝ ««Անահիտ» հանդեսը» (Եր., 1999), «Պաշտոնական գրագրություն» (Եր., 2001), «Արևմտահայ բանաստեղծության լեզուն» (Եր., 2002), «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» (Եր., 2007), «Արևմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկ» (Եր., 2011), «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» (Եր., 2011), «Պաշտոնական ոճ» (Եր., 2011), «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն» (Եր., 2011), «Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճա-

կան վերլուծություններ. Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան» (Եր., 2012), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. գիրք Ա» (Եր., 2014), «Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար» (Եր., 2016), «Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ» (Եր., 2019):

Համահեղինակ է երկու տասնյակից ավելի գրքերի, որոնցից են՝ «Արևմտահայերենի գործնական աշխատանքների և վարժությունների ձեռնարկ» (Եր., 1997), «Հնչյունաբանություն» (Եր., 2007), «Բառագիտություն» (Եր., 2007), «Ձևաբանություն» (Եր., 2008), «Շարահյուսություն» (Եր., 2008), «Հայոց լեզու» (Եր., 2012), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (Եր., 2016), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. գործնական աշխատանքների ձեռնարկ» (Եր., 2016), «Ուղեցույց հայոց լեզվի. հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն» (Եր., 2017), «Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն» (Եր., 2018), «Իրավաբանական գրագրության լեզուն» (Եր., 2019), «Արդի հայերենի բառապաշարը» (Եր., 2020), «Հոմանիշների առձեռն բառարան» (Եր., 2020), «Դարձվածքների, համանունների, հապավումների առձեռն բառարան» (Եր., 2020):

Հեղինակել է մոտ յոթ տասնյակ գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են լեզվի ամենատարբեր ոլորտներին:

Գիտաուսումնական գործունեության համար արժանացել է Թեքեան մշակութային միութեան «Հայկաշէն Ուզունեան» մրցանակի (Եր., 2008), ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալի (Եր., 2013), ՀՀ նախագահի շնորհակալագրի (Եր., 2014), ԵՊՀ ոսկե մեդալի (Եր., 2014):

ՅՈՒՐԻ ՍՐԱՊԻՈՆՈՎԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՆԵՐՈՒՄ

ЮРИЙ СРАПИОНОВИЧ АВЕТИСЯН

НА СТЕЗЯХ АРМЕНОЛОГИИ

YURI SRAPION AVETISYAN

IN THE PARALLELS OF
THE ARMENOLOGY

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 25.03.2021:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 21,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am